ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՇՈՒՇԱՆ ՌԱՖԱՅԵԼԻ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱՀՈՏՄԱՆ ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսություն

Թ. 00.05 – «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝
պ. գ. դ., բ. գ. դ., պրոֆ.
Սահակյան Արծրունի Սամվելի

ԵՐԵՎԱՆ-2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԴԻՐՆԵՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵՋ 19
1.1. Ցեղասպանության պատմակրոնագիտական ուսումնասիրության հարցեր 19
1.2. Ցեղասպանությունների ուսումնասիրման աստվածաբանական փորձերը 22
1.3. Կրոնի հիմնահարցը Մեծ եղեռնի ուսումնասիրություններում 36
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԿՐՈՆԱԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 51
2.1. Երիտթուրքերի գաղափարական ուղենիշները. կրոնը՝ քաղաքականության, քաղաքականությունը կրոնի մեջ 51
2.1.1. Մատերիալիզմի յուրացման փորձերը 52
2.1.2. Թյուրքական իդեալներից բխող գաղափարները 55
2.1.3. Արևմտյան հիմքից բխող գաղափարները 60
2.1.4. Իթթիհադականությունը 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո 63
2.1.5. Երիտթուրքերի կրոնափիլիսոփայությունը. կրոնը քաղաքականության մեջ 65
2.2. Իթթիհադական ջիհադը 68
2.2.1. Օսմանյան վերջին ջիհադի դրդապատճառներն ու իրականացնողները 69
2.2.2. Սկզբնաղբյուրներ՝ ջիհադի կոչերով ու հրահանգներով 76
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ 99
3.1. Ջիհադի հետևանքները 99
3.2. Բռնությունների և սպանությունների ծիսականացումը Մեծ եղեռնի ընթացքում 112
3.2.1. Հոգևորականների հանդեպ բարբարոսության դրսևորումները 120
3.2.2. Խաչի հանդեպ անարգանքները, մարդկանց խաչելը և Հիսուս Քրիստոսին անվանարկելը 125
3.2.3. Քրիստոնյաների և նրանց սրբություններ ու սրբավայրերի անարգումը 129
3.2.4. Հայերի կրոնածիսական վարքի դրսևորումներ 132
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 135
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 139

ՀԱՎԵԼՎԱԾ ..... i–xvii

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XXI դարի պոստմոդեռնիզմը հաճախ լուսանցք է մղում կրոնի դերը մարդու կենսագործունեության տարբեր ոլորտներում: Նույնը տեղի է ունենում պոզիտիվիզմի փիլիսոփայությամբ առաջնորդվող ժամանակակից գիտական աշխարհում. եթե տվյալ երևույթի մեջ առկա է լինում քաղաքական կամ տնտեսական գործոն, դրանք ուռճացվում են, դիտվում երևույթների, համընդհանուր ճգնաժամների հիմք, իսկ կրոնականը բավականին հաճախ անտեսվում է կամ բավականաչափ ուշադրության չի արժանանում, այդ թվում՝ եղեռնագիտական[1] ուսումնասիրություններում: Կրոնի տարբեր հիմնահարցերն անտեսվում են նույնիսկ պատմական հեռավորություն ունեցող իրադարձությունների մեջ, անգամ այն դեպքում, երբ աշխարհիկ (սեկուլյար) մշակույթը նորամուտ եղել տվյալ ժամանակում, և կրոնն ունեցել է հզոր դերակատարություն անձի և հանրության կենսագործունեության ու հոգեբանության մեջ: Ռետրոսպեկտիվ (հետահայաց) մեթոդաբանությունը թերի է կիրառվում, և արդյունքում տուժում է գիտականությունը:

Պարադոքսալ կերպով ժամանակակից պոստմոդեռնիստական աշխարհիկ մշակույթի հիմքերը նաև դրվել են XX դ. հոգևոր ճգնաժամի[2] արդյունք հանդիսացող ամենաաղետալի ֆենոմեններից մեկի՝ ցեղասպանության միջոցով, որը փոխել է և՛ աշխարհայացք, և՛ աշխարհագրություն, և՛ ժողովրդագրություն, և՛ քաղաքական ու տնտեսական իրադրություն, առնչվել մարդու կենսագործունեության բոլոր կետերին: Ցեղասպանությունն աղետ է, որը ժամանակակից մարդկության ամենաքննարկվող երևույթների շարքին է պատկանում: Բացի պատմագիտական ուսումնասիրություններից, Հայոց ցեղասպանության անդրադարձ

[1] **Եղեռնագիտություն** բառը մեզ առաջարկվեց գործածության մեջ դնել մեր ատենախոսության գիտական ղեկավարի՝ պրոֆ. Արծրունի Սահակյանի կողմից՝ իբրև Մեծ եղեռնի ուսումնասիրությունների ամբողջությունն արտահայտող նոր եզրույթ՝ «ցեղասպանագիտություն» արհեստական եզրույթից խուսափելու համար:

[2] XX-XXI դարերի հոգևոր ճգնաժամի մասին խոսել ու խոսում են հումանիտար և սոցիալական գրեթե բոլոր գիտությունների, մանավանդ փիլիսոփայության (հատկապես պատմության փիլիսոփայության), հոգեբանության, կրոնագիտության, աստվածաբանության ներկայացուցիչները:

է կատարվում հոգեբանական գիտության, մանկավարժության կողմից, դիտարկվում է հայոց պատմության փիլիսոփայության համատեքստում, գրականագիտությունն ուսումնասիրում է Մեծ եղեռնի գրական արտացոլումը հայ և արտասահմանյան գրողների երկերում: Նշված տեսանկյուններից կատարված ուսումնասիրությունները շատ կարևոր են ու անհրաժեշտ: Սակայն այդ կարգի հետազոտությունների կողքին նաև հատուկ ուշադրություն պետք է դարձնել Մեծ եղեռնի պատմակրոնագիտական ուսումնասիրության հարցին, որի կարիքն զգացվում է շատվաղուց: Կրոնի դերը վեր հանելը ցեղասպանությունների իրագործման մեջ միշտ դիտարկվել է որպես ամենախոցելի և ուսումնասիրողից առավելագույն ուշադրություն պահանջող հարց: Կրոն-ցեղասպանություն առնչություններն ուսումնասիրողների համար կարող են դառնալ փորձաքար այն իմաստով, որ խնդրին պատշաճ ուշադրություն առ այսօր չի հատկացվել:

Ցեղասպանությունների կանխարգելման համատեքստում կրոնի դերակատարությունն ուսումնասիրելը կարող է էական ներդրում լինել: Նշված իմաստով խնդրին անդրադարձել է ցեղասպանության հետազոտողներից Ստիվեն Լ. Ջեքոբսը՝ մտահոգություն հայտնելով, որ կրոնի գործոնի մասին խոսող, այն դիտարկող և այդ ուղղությամբ կանխարգելման մեթոդներ առաջարկող բուն կրոնագետ-մասնագետների բացակայություն կա. մեկը քաղաքագետ է, մյուսը՝ պետական աշխատող, մեկը՝ անվտանգության հարցերով զբաղվող վերլուծաբան, որոնք պրոֆեսիոնալ մոտեցում չեն կարող ցուցաբերել, և հետևաբար՝ կրոնի գործոնը լուսանցքում է մնում, որովհետև այլ մասնագետներն անուշադրության են մատնում ցեղասպանական վարքի այդ կողմը[3]: Այսինքն, ցեղասպանության կրոնագիտական ասպեկտի նշանակությունը վաղուց նկատված է, և նրա կիրառումը ցեղասպանությունների ուսումնասիրման մեջ կարող է փոխել մոտեցումներ, կարող է առաջարկել միանգամայն այլ համալիր լուծումների հանգեցնող մեթոդներ ու հետազոտություն:

Եվ քանի որ նշված դաշտը կարոտ է հետազոտման, հետևաբար կարիք կա նաև օժանդակ գիտական տարրերի մշակման ու

[3] Տե՛ս Jacobs S. L., "Genocidal Religion," *Journal of Hate Studies*, Vol. 9:22, Gonzaga University Institute for Hate Studies, 2011, էջ 229-230:

ընտրության՝ մեթոդաբանության, գիտական շարադրանքի համապատասխան ոճի և մատուցման: Եվ իսկապես, բարդանում է գիտական շարադրանքի լեզուն, հարկավոր է լինում կենտրոնանալ գիտական մեթոդի ընտրության հարցի ու եզրաբանության շուրջ՝ նյութի փաստարկվածությունն ապահովելու համար: Այս իմաստով անդրադառնանք գերմանացի ցեղասպանագետ Քրիստիան Գեռլախի տեղին դիտողությանը՝ ցեղասպանությունների ուսումնասիրության մեջ որոշ համատեքստային հարցերի ու սխալների շուրջ: Այդ սխալների թվում նա նշում է, որ ցեղասպանությունների մեջ տարածված խնդիր է այն, որ տարբեր ժամանակներում և տարբեր գաղափարական դրդապատճառներով իրականացված ցեղասպանությունների հիմքում դիտարկվում են միայն կամ գլխավորապես քաղաքական պատճառներ. «Զանգվածային բռնությունները ծագում են հասարակության մեջ կամ հասարակության կողմից գեներացված և խորը արմատացած համալիր գործընթացներից. դրանք լոկ պետական քաղաքականության և ավազակային վարչակարգերի վրա չեն հիմնվում»[4]: Ուստի նշված խնդիրները պետք է հաշվի առնել, երբ խոսքը ցեղասպանությունների, ներկա աշխատանքի դեպքում՝ Հայոց ցեղասպանության կրոնագիտական ուսումնասիրման մասին է՝ կատարելով համակողմանի ուսումնասիրություն և դիտարկելով ու հաշվի առնելով հարակից բոլոր բնագավառներում կատարված՝ առարկայի համար կարևորություն ներկայացնող ուսումնասիրությունները:

Այսպիսով, ատենախոսության նպատակը Հայոց ցեղասպանության մեջ առկա կրոնական թիրախավորման հարցը պարզաբանելն է: Ատենախոսության ուսումնասիրման խնդրի մեջ

---

[4] Gerlach Chr., "Extremely violent societies: an alternative to the concept of genocide," *Journal of Genocide Research 8(4)*, December, 2006, p. 458): Միանգամայն համաձայն ենք նրա այն պնդման հետևից, որ պետք չէ առանձնացնել իրարից ու դասակարգել քաղաքական, գաղափարախտասական, պատժիչ կամ տնտեսական ցեղասպանություններ, քանի որ «... իրականում բռնության ուժը բխում էր ճիշտ այն բանից, որ այն ամբողջի խառնուրդ էր» (*նույն տեղում*, էջ 460): Ք. Գեռլախը մեթոդական սխալներ է առանձնացնում նաև ցեղասպանագիտության հիմնական միտումների մեջ, օրինակ՝ կենտրոնացումը պետության վրա ոչ հասարակության, կամ անգլերեն 'intent'՝ վաղուց շահարկված, իրավական նշանակություն ունեցող եզրույթի, այսինքն՝ ծրագրման կենտրոնացման շուրջ՝ փոխանակ դիտարկելու պրոցեսիվ վիճակն ու ինքնավար խմբերի մասնակցությունը (*նույն տեղում*, էջ 466):

տեղավորվող հարցերից են հետևյալները. ի՞նչ ընդհանուր հարցադրումներ ու խնդիրներ կան առհասարակ կրոն–ցեղասպանություն փոխառնչություններն իբրև գիտական ուսումնասիրության առարկա դիտարկելիս, կարո՞ղ են թեմայի զարգացմանը նպաստել աստվածաբանական վերլուծությունները, որքանո՞վ են ցեղասպանության մասնագետներն անդրադարձել հայերի հանդեպ Հայոց ցեղասպանության ընթացքում դրսևորված կրոնական թիրախավորման երևույթին, ի՞նչ գնահատականներ են տրվել ու ինչպիսի՞ մոտեցումներ են առաջարկվել այդ խնդրի շուրջ, արդյո՞ք կրոնական տարբերությունը գործոն էր, թե՞ գործիք՝ Հայոց ցեղասպանությունը ծրագրելու և իրագործելու համար, որո՞նք էին Հայոց ցեղասպանությունը ծրագրողների՝ պետական վերնախավի ու անմիջական իրագործողների կրոնական թիրախավորման մոտիվներն ու արդյունքները, և մի շարք այլ հարցեր ու դրանցից բխող ենթահարցեր: Սրանցից յուրաքանչյուրն առանձին լայնածավալ ուսումնասիրությունների նյութ կարող է դառնալ: Ուստի սույն ուսումնասիրությամբ մեր նպատակը դարձավ համախմբելու, քննելու մեթոդաբանական խնդիրները, չուսումնասիրված հարցերը և ներկայացնելու դրանց հետազոտման մեջ մեր գրանցած արդյունքը[5]:

Ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք պատմահամեմատական, տիպաբանական, կառուցվածքային (պատճառականության), հետահայաց (ռետրոսպեկտիվ) և նկարագրողական մեթոդներով, ընդգրկել ենք 1914-1923 թթ.՝ որպես ուսումնասիրության ժամանակագրական տիրույթ:

[5] Աստվածաբանության ֆակուլտետում ուսանելու տարիներին ծանոթանալով որոշ հայ աստվածաբանների, ինչպես նաև Հոլոքոստի փիլիսոփայա-աստվածաբանական մեկնաբանություններին՝ ձեռնարկեցինք գրելու Հայոց ցեղասպանության աստվածաբանությանը նվիրված մագիստրոսական թեզ, որը, լինելով աստվածաբանական հայեցակետերի մի համադրում, կարող էր գիտական բազմաթիվ լրացումների ու մեթոդաբանական կուռ մոտեցման: Թեման շատերին հետաքրքրեց, ուստիև պատճառ դարձավ հետագայում այդ թեմայով մեր ուսումը շարունակելու և այն ամբողջացնելու՝ թեկնածուական թեզի տեսքով: Միաժամանակ գիտական անհրաժեշտություն դարձավ Հայոց ցեղասպանությունն ուսումնասիրել նախ պատմակրոնագիտական լույսի ներքո, որը, ինչպես վերը նշեցինք, գայսօր բացէջ է Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունների մեջ, և առանց որի հնարավոր չէ հիմնավորապես անցնել ցեղասպանության աստվածաբանությանը:

Հետազոտությունը բաղկացած է երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Ատենախոսությանը կցել ենք նաև ՀԱՎԵԼՎԱԾ, որտեղ զետեղել ենք Օսմանյան կայսրության սրբազան պատերազմի տարբեր կոչերի թարգմանությունները, դրանց առնչվող լուսանկարների ու փոստային բացիկների պատճեններ:

Առաջին գլխի վերնագիրն է «ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԴԻՐՆԵՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵՋ»: Այն ընդհանուր, ներածական հայացք է ցեղասպանությունների, մասնավորապես Հայոց ցեղասպանության, կրոնագիտական ուսումնասիրության տարբեր կողմերի ու դրանց հարակից ու օժանդակ նյութ տրամադրող աստվածաբանական մեթոդների կիրարկման վրա: Գլուխը բաղկացած է 3 ենթագլխից:

Առաջին՝ **«Ցեղասպանության պատմակրոնագիտական ուսումնասիրության հարցեր»** ենթագլխում խոսվում է պատմակրոնագիտական ուսումնասիրությունների և դրանց մեթոդաբանական առանձնահատկությունների մասին: Ըստ այդմ՝ ներկայացվում են հետևյալ թեմաները. ոչնչացումը և սպանությունները կրոններում՝ դիցաբանական համակարգերից մինչև համաշխարհային կրոններ, Քանանի ազգերի կոտորածը (որի մասին խոսվում է Հին Կտակարանում), ցեղասպանությունների ընթացքում կրոնների բախումը, թուրքական իսլամը և Հայոց ցեղասպանությունը, կրոնական փոքրամասնությունների հանդեպ երիտթուրքերի վարած քաղաքականությունը և Մեծ եղեռնը, երիտթուրքերի կրոնական պատկանելության հարցերը, նրանց որդեգրած գաղափարախոսությունը և դրանցից բխող այլ ենթակետեր:

Երկրորդ՝ **«Ցեղասպանությունների ուսումնասիրման աստվածաբանական փորձերը»** ենթագլուխը ներառում է որոշ հարցեր զոհաբերության և զոհի աստվածաբանության դիտանկյունից, չարի հիմնախնդրի և թեոդիցեայի աստվածաբանական վերլուծություն ցեղասպանության թեմայի շուրջ, ցեղասպանության զոհերի սրբադասման հարցեր, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ուղիղ առնչություն ունի կրոնագիտական հետազոտությունների հետ:

Երրորդ՝ **«Կրոնի հիմնահարցը Մեծ եղեռնի ուսումնասիրություններում»** ենթագլուխն անդրադարձ է Մեծ եղեռնի կրոնագիտական ուսումնասիրության հիմնահարցերին: Շեշտված է կրոնի գործոնը և կրոնը որպես գործիք օգտագործելու պետական քաղաքականությունը Հայոց ցեղասպանության ընթացքում: Ներկայացված են Հայոց ցեղասպանությունն այս տեսանկյունից ուսումնասիրելու հրամայականը, ինչպես նաև խնդրո առարկայի՝ մի շարք ուսումնասիրողների անդրադարձներն ու ընդհանուր մոտեցումները:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԿՐՈՆԱԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ» վերնագրով, ընդգրկում է երկու ենթագլուխ:

Առաջին՝ **«Երիտթուրքերի գաղափարական ուղենիշները. կրոնը՝ քաղաքականության, քաղաքականությունը կրոնի մեջ»** ենթագլխում ներկայացվում են երիտթուրքերի կողմից եվրոպական փիլիսոփայության և թյուրքական հին ու նոր ուսմունքների յուրացման փորձերը, որոնց արդյունքում ստեղծվեց սինկրետիկ գաղափարախոսություն՝ պանթուրքիզմ-պոզիտիվիզմ-մոդեռնիզմ խառնուրդով: Առանձնահատուկ ուշադրության նյութ է երիտթուրքերի կրոնական քաղաքականությունը, որն ուղղվեց Օսմանյան կայսրության քրիստոնյաների, առաջին հերթին՝ հայերի դեմ:

Երկրորդ՝ **«Իթթիհադական ջիհադը»** ենթագլխում ներկայացվում է 1914 թ. նոյեմբերին հայտարարված սրբազան պատերազմի դերը Օսմանյան կայսրության քրիստոնյաների, մասնավորապես՝ հայերի ցեղասպանության մեջ: Այն շարադրված է ջիհադի տարբեր կոչերի ու հայտարարությունների տեքստերի աղբյուրագիտական քննությամբ, ընդգծված են դրանց մեջ հակաքրիստոնեական քարոզչության տարրերը: Ենթագլխում ցույց ենք տալիս, որ երիտթուրքերի կողմից սուլթանին թելադրված ջիհադի հայտարարության հասցեատերերը մուսուլման զանգվածները, իսկ ջիհադի վերջնական թիրախը Օսմանյան կայսրության ներսում բնակվող քրիստոնյաներն էին:

Ատենախոսության երրորդ գլուխը «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ»-ին է վերաբերում, ընդգրկում է երկու ենթագլուխ:

Առաջին՝ **«Ջիհադի հետևանքները»** ենթագլխում՝ ներկայացվում են ջիհադի հայտարարությունների ու կոչերի՝ հայերի դեմ ուղղված լինելու մասին ականատեսների վկայությունները և ժամանակի մամուլի արձագանքները: Հակաքրիստոնեական քարոզչության առաջնային թիրախը դարձան հայերը, ջիհադը դարձավ Հայոց ցեղասպանության իրագործման կարևոր գործիք:

Երկրորդ՝ **«Բռնությունների և սպանությունների ծիսականացումը Մեծ եղեռնի ընթացքում»** ենթագլուխը վեր է հանում Հայոց ցեղասպանության ընթացքում տեղի ունեցած բռնությունների և սպանությունների ծիսականացման երևույթը, ինչպես նաև կրոնական հատուկ թիրախները (հոգևորականներ, խաչ, սրբավայր և այլն): Ծիսականացումը դիտարկվում է որպես Հայոց ցեղասպանության իրականացման կրոնական գործոնի օրինակ: Հավաքվել և թեմատիկ դասակարգման են ենթարկվել մի շարք խոսուն օրինակներ, որտեղ երևում է կրոնական գործոնի դերակատարությունը՝ որպես Եղեռնն իրագործող զանգվածների շարժիչ ուժ: Այստեղ անդրադարձ է կատարվում հոգևորականների հանդեպ բարբարոսության դրսևորումներին, բռնությունների ծիսականացմանը, ծիսական սպանություններին, Եղեռնի ժամանակ խաչն անարգելուն, մարդկանց խաչելուն, Հիսուս Քրիստոսի անունը շահարկելուն, կրոնական հայհոյանքներին, անարգանքներին, պիտակավորումներին, կոչերին, քրիստոնեական սրբավայրերի հանդեպ կրոնական վանդալիզմին: Առանձին ուշադրության է արժանի հանդիսացել հայերի կողմից իրականացված ծիսական արարքների վեր հանումը, մասնավորապես, Հաղորդության խորհրդի իրականացում-նմանակումը Մեծ եղեռնի ժամանակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ մեջ տրված են ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

Չնայած հատուկ գրաքննությանը, որը գործում էր Օսմանյան կայսրությունում, հատկապես Առաջին աշխարհամարտի տարիներին[6], մեզ հաջողվեց գտնել ներկա աշխատանքի համար կարևոր վավերագրեր:

Աշխատանքի համար աղբյուրագիտական հիմք են ծառայել կրոնական եզրաբանությամբ գրված կոչերը, հայտարարագրերը, փաստաթղթերը, վերապրողների և ականատեսների հուշերը, պատմագիրք-հուշամատյանները, ժամանակի հայալեզու և օտարալեզու մամուլը, Հայոց ցեղասպանության փաստաթղթերի ժողովածուները, ուսումնասիրությունները, հոդվածները:

Օգտվել ենք Հայաստանի ազգային արխիվի, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի և ԱՄՆ-ի ազգային արխիվի (United States National Archives) նյութերից: Հայաստանի ազգային արխիվի «Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվան»-ում պահվող ցուցակ 5-ի սույն աշխատանքի համար կարևոր փաստաթղթերից մեկը՝ «Թուրքիայում կրօնական պատերազմ յայտարարելու առթիւ հրատարակուած պաշտօնական պրօշիւրի թարգմանութիւնը» վերնագրով, Մեհմեդ V Ռեշադ սուլթանի ջիհադի հայտարարագրի արևմտահայերեն թարգմանությունն է (գ. 149, պատճենը՝ *ՀՑԹԻ-ի ֆոնդեր*, Բ-10, ֆի 1097-1098): Այս թարգմանությունը գիտական շրջանառության մեջ դրված չգտանք, ուստի առաջին անգամ է հայերեն ներկայացվում: Հայաստանի ազգային արխիվից մյուս փաստաթուղթը ֆեթվայի օսմաներեն տեքստն է (գ. 80, պատճենը՝ *ՀՑԹԻ-ի ֆոնդեր,* Բ-10, ֆի 1103): Սրբազան պատերազմի հայտարարությունների մեջ կարևոր կրոնական նրբերանգ պարունակող փաստաթուղթ է օսմաներեն ու ռուսերեն լեզուներով՝ մեկ թերթի վրա տպագրված թռուցիկը. դրա մի օրինակ պահվում է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում (Բ-31, թպ 14, ֆի 26), որի ռուսերեն տեքստից էլ կատարել ենք հայերեն թարգմանությունը:

---

[6] Տե՛ս Bryce J. and Toynbee A., *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916. Documents Presented to Viscont Grey of Falloden by Viscount Bryce*. Uncensored edition, edited and with an introduction by Ara Sarafian, Princeton, New Jersey: Gomidas Institute, 2000, էջ 29, համմտ.՝ Kaiser H., *Imperialism, Racism, and Development Theories: The Construction of a Dominant Paradigm on Ottoman Armenians.* Ann Arbor, Michigan: Gomidas Institute, 1998, էջ 24:

Մյուս կարևոր փաստաթուղթը ջիհադի հայտարարման պամֆլետ-պարսավագիրն է: Այս պամֆլետ-պարսավագրի բնօրինակ տեքստն իր կարևոր ու լույս սփռող բովանդակությամբ շատ երկար ժամանակ, համեմատաբար դեպի մեզ համար, մնում էր անհայտ, սակայն երկար փնտրելուց հետո մենք այն ձեռք բերեցինք անակնկալ կերպով, ընդորում պարսավագրի 2 պատճեններ գրեթե միաժամանակ: Դրանցից առաջինը ԱՄՆ-ի Ազգային արխիվի օրինակի պատճենն էր[7], իսկ մյուսը Փարիզի Նուբարյան գրադարանի այն օրինակի էլեկտրոնային պատճենն էր, որից օգտվել է Արամ Անտոնյանն ու լուսանկարը տեղադրել իր «Մեծ ոճիրը» գրքում: Այս բացառիկ, հազվագյուտ փաստաթուղթն իր անգլերեն թարգմանությամբ, որը կատարել է Քալեբ Ֆ. Գեյթսը, ժամանակին Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան (1913-1916 թթ.) Հենրի Մորգենթաուն ուղարկել է ԱՄՆ-ի պետքարտուղարությունն: Փաստաթուղթը գրվել է պաթետիկ կրոնական քարոզի ոճով, ներառում է կոչեր ու ցուցումներ, քրիստոնյաներին կոտորելու ուղիղ հրամաններ, կոտորածները կազմակերպելու ձևեր, որոնք հետագա կիրառություն ունեցան նաև Հայոց ցեղասպանության ընթացքում: Ինչպես փորձեցինք պարզել, այս փաստաթուղթը ևս չի շրջանառվել, համենայն դեպս, գիտական գրականության մեջ որևէ թարգմանություն ու աղբյուրագիտական վերլուծություն չկարողացանք գտնել: Միակը Սիմոն Փայասլյանի գիրքն է, որը հակիրճ հղում է կատարում այս փաստաթղթին[8]:

Աշխատանքի շարադրման ընթացքում նյութեր են օգտագործվել նաև փաստաթղթերի մի շարք ժողովածուներից (Ջեյմս Բրայսի[9], Վոլֆգանգ Գուստի[10], Արա Սարաֆյանի[11] և այլոց):

---

[7] "A Universal Proclamation to All the People of Islam," published by the National Society of Defense, The Seat of the Caliphate, printed in the Mutba'at el-Haireyet (1333), *United States National Archives*, Washington D. C., Record Group 59, No. 867.00/762, Morgenthau to Secretary of State, May 11, 1915, encl., Jackson to Morgenthau, April 8, 1915.

[8] Payaslian S., *United States Policy Toward the Armenian Question and the Armenian Genocide*. New York: Palgrave Macmillan, 2005, pp. 65-66.

[9] Բրայս Ջ., *Անգլիական կառավարության կապույտ գիրքը հայոց Մեծ եղեռնի մասին (1915-1916)*, Հայոց ցեղասպանության հարիւրամեակի մատենաշար 2, թարգմ.՝ Պետրոսեան Բ., առաջաբան՝ Վարդանեան Մ., Թեհրան, 2012:

[10] Գուստ Վ., *Հայերի ցեղասպանությունը 1915-1916, Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից*, Երևան, 2008:

[11] *United States Official Documents on the Armenian Genocide*, compiled and introduced by Ara Sarafian, Vol. I: The Lower Euphrates, Watertown, 1993; *United States Official Documents on the Armenian Genocide*, compiled and introduced by Ara Sarafian, Vol. II: The Peripheries, Watertown, 1994; *United States Official Documents on the Armenian Genocide*, compiled and introduced by Ara Sarafian, Vol. III: The Central Lands, Watertown, 1995.

Օգտագործվել են Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ֆոնդերում պահվող, չհրատարակված՝ թե՛ տպագիր, թե՛ ձեռագիր հուշեր, որոնք աչքի են ընկնում ականատեսների հաղորդած դրվագների մանրամասնությամբ, և որոնք նպաստել են համալրելու հատկապես ատենախոսության վերջին գլուխը:

Օգտվել ենք թե՛ հայ վերապրողների ու ուսումնասիրողների (Սեպուհ Ակունի[12], Սեդրակ Ավագյանց[13], Կարապետ Գաբիկյան[14], Կարապետ ավ. քհն. Գալֆայան[15], Զավեն արք. Եղիայան[16], Ներսես ավ. քհն. Թավուգճյան[17], Ավրորա Մարդիգանյան[18], Հովհաննես եպս. Նազլյան[19], Վերժինե Սվազլյան[20], Գառնիկ Ստեփանյան[21] և այլք), թե՛ այլազգի ականատեսների (Մարիա Յակոբսեն[22], Յակոբ Կյունցլեր[23], Յոհաննես Լեփսիուս[24], Ֆայեզ ալ-Ղուսեյն[25], Ալմա Յուհաննսոն[26] և այլք) հուշագրություններից, հուշերի տպագիր հավաքածուներից, հուշամատյաններից ու վկայագրություններից:

---

[12] Ակունի Ս., *Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը*, Կ. Պոլիս, 1920:
[13] Աւագեանց Ս., *Կոտորածը Սալ մաստու մ (Ականատեսի Պատմուածք)*, Թիֆլիս, 1915:
[14] Գաբիկեան Կ., *Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ*, Պոսթըն, 1924:
[15] Գալֆաեան Կ. աւագ քահանայ (Հովիւ Եդեմի), *Գիրք ելից հայոց: Յիշատակ անշիրիմ նահատակաց, հնուց եւ նորից, յայտից եւ անյայտից*, Պէյրութ, 1955:
[16] Զաւէն արքեպիսկոպոս, *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ*, Գահիրէ, 1947:
[17] Թաւուգճեան Տ. Ներսէս Աւագ քհնյ., *Տառապանքի օրագիր*, խմբ.՝ Թ. Թորանեան, Պէյրութ, 1991:
[18] Մարդիգանյան Ա., *Հոշոտված Հայաստան*, պատմ. գրի է առել Հարվի Լ. Գեյթսը, թարգմ. անգլ.՝ Գ. Սարգսյանի, Երևան, 2015:
[19] Նազլեան Յ. Եպս., *Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը Մերձաւոր Արեւելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին*, Ա հատոր, թարգմ. ֆրանս.՝ Ստեփանեան Հ., Պէյրութ, 1960:
[20] Սվազլյան Վ., *Հայոց ցեղասպանություն: Ականատես վերապրողների վկայություններ*, Երկրորդ համալրված հրատարակություն, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 2011:
[21] Ստեփանյան Գ., *Մղձավանջային օրեր*, Երևան, 1945:
[22] Ճէյքըպսըն (Եագոպսըն) Մ., *Օրագրութիւն: 1907-1919: Խմբերդ*, դանիերէն ձեռագիր բնագրէն թարգմանեցին՝ Բախտիկեան Ն. եպս., Սիմոնեան Մ., Անթիլիաս, 1979:
[23] Կյունցլեր Յ., *Արյան և արցունքների երկրում: Հրադարձությունները Միջագետքում՝ համաշխարհային պատերազմի ժամանակ*, թարգմանեցին՝ Հայրունի Ա., Մարտիրոսյան Հ., Միրզոյան Ա., Երևան, 2011:
[24] Լեփսիուս Յ., *Հայկական ջարդերը. Տոքթ. Եոհաննէս Լեփսիուսի տեղեկագիրը*, Բ տպագր., Մատենաշար «Ազդակ» թիւ 98, Պէյրութ, 1965:
[25] *Միրիացի արաբ ականատես Ֆայեզ ալ-Ղուսեյնի հուշերը Հայոց ցեղասպանության մասին*, թարգմ. արաբ. բնագրից, առաջաբանը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Փոլադյանի և Լ. Սարգսյանի, Դամասկոս, 2017, Гуайта Дж., *Шейх Файез эль-Гусейн о геноциде армян: "Ислам непричастен к их деяниям!"*, пер. с итал. и англ. А. Рыжевской, с араб. А. Муса, ред. Р. Адамянц, Москва, 2007.
[26] Յուհաննսոն Ա., *Աքսորյալ ժողովուրդ: Մեկ տարի հայոց պատմությունից*, առաջ.՝ Դաուն Օ., շվեդ. թարգմ.՝ Դաուն Մինասյան Լ., խմբ.՝ Դեմոյան Հ., Երևան, 2008:

Նյութեր ենք գտել հայերեն ու այլալեզու պարբերական թողարկումներից, մամուլից («Ազատամարտ» օրաթերթ, «Մշակ» հասարակական-քաղաքական, գրական թերթ, ռուսերեն „День" թերթ, անգլերեն՝ "Buffalo Morning Express and Illustrated Buffalo Express", "The Brooklyn Daily Eagle", "The New York Times" և թուրքերեն "Yeni Şafak" թերթեր և այլն): Մի շարք լեզուներով հոդվածներ ենք օգտագործել տարբեր ժամանակ տպագրված ամսագրերից ու ժողովածուներից:

Կրոնի հիմնահարցին անդրադարձներ ունեն Հայոց ցեղասպանության վերաբերյալ մի շարք կարևոր աղբյուրագիտական արժեք ներկայացնող աշխատությունների հեղինակներ, որոնց գործերը մեկնակետ դարձան մեզ համար՝ ատենախոսությունը շարադրելու ընթացքում: Կարևոր ենք համարում բառացիորեն մեջբերել մտքեր Հայոց ցեղասպանության վերաբերյալ առաջին աղբյուրագիտական աշխատություններից: «Մեծ ոճիրը» գրքի հեղինակ Արամ Անտոնյանի շեշտադրումներից մեկն այն է, որ Եղեռնի ոճիրը ծանրացած է ոչ միայն թուրք պաշտոնյաների վրա, ովքեր ծրագրեցին այն, այլև թուրք ժողովրդի վրա[27], ավելին, ըստ նրա «.... նոյնիսկ տեղ տեղ՝ ժողովուրդը սրբագրեց ու լրացուց կառավարութեան գործը»[28]: Անտոնյանն իր դիրքորոշումը, որպես ականատես և վերապրող, ձևակերպում է հետևյալ կերպ. «Այս անգամ՝ իթիհատականներն էին. անոնցմէ առաջ՝ Համիտն էր. անկէ առաջ՝ Մահմուտ Բ-ը, եւ անկէ առաջ ալ միւս բոլոր Սուլթանները, գրեթէ ամէնքն ալ: Եւ մեքենան՝ թուրք ժողովուրդը՝ այս բոլոր մեքենավարներուն ձեռքին տակ միշտ նոյնը մնաց...: Եւ քանի՛ օսմանեան կայսրութիւնը գոյութիւն պիտի ունենայ քրիստոնեայ հպատակներով, այդ մեքենավարները միշտ պիտի ստիպուին նոյն հրամանը տալու, եւ այն մեքենան ալ միշտ պիտի գործէ, միշտ պիտի ջարդէ ճակատագրականապէս»[29]:

Մեկ այլ՝ սույն աշխատանքի մեջ մեր կողմից բազմիցս մեջբերված կարևոր հուշագրություն-աղբյուրի հեղինակ, Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն

[27] Տե՛ս Անտոնեան Ա., *Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա*, Երևան, 1990, էջ 241:
[28] *Նույն տեղում*:
[29] *Նույն տեղում*, էջ 241-242:

շեշտում է, որ բոլոր սլաքներն ուղղված էին հենց քրիստոնյաների դեմ. «Բոլոր քրիստոնյաները պաշտոնապես ենթարկվում էին բոյկոտի և ոչ միայն Փոքր Ասիայում, այլև Կոստանդնուպոլսում»[30]: Նա Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածների մեջ տեսնում է կրոնի դերակատարությունը միայն իսլամադավանների զանգվածային մասնակցության մակարդակով. «Եթե ավելի վաղ անցյալում կատարված բոլոր ջարդերը համեմատենք թուրքերի արածի հետ, ապա կնկատենք՝ դրանց հատուկ է մի հատկանիշ, որը կարելի է հիշատակել որպես գրեթե արդարացում. դրանք կրոնական ֆանատիզմի հետևանք էին, և այն հրահրող կանանց ու տղամարդկանց մեծ մասն անկեղծորեն հավատում էր, որ իրենք այդպես ծառայում են Արարչին»[31]: Սակայն հավելում է, որ ցեղասպանությունը ծրագրողները նման շարժառիթով չէին առաջնորդվում[32]:

Պատմագիտական բազմալեզու գրականությունից կարողացանք ծանկաքաղել ատենախոսության համար գործածելի ուսումնասիրությունները, հոդվածները ակնարկները և այլ նյութեր: Այն աշխատանքները, որոնք առնչվում են ուսումնասիրվող նյութին, հիմնականում օգտագործված են լուսաբանման մեջ: Խորհրդահայ պատմագիտությունը մեր խնդրո առարկա հարցի առնչությամբ կոնցեպտուալ հարցեր չի առաջադրում այն պարզ պատճառով, որ խորհրդային աթեիզմը կրոնի միանշանակ բացասական ընկալմամբ, ինչպես նաև՝ խորհրդային ազգերի եղբայրության դիրքերից չէր հանդուրժում միջկրոնական հարաբերությունների քննարկում: Խորհրդահայ պատմագետների գործերն այս իմաստով խիստ կարևոր են՝ փաստագրական տեղեկատվություն տրամադրելու տեսանկյունից: Օգտվել ենք Մակիչ Արզումանյանի[33] Ջոն Կիրակոսյանի[34], Հրաչիկ Սիմոնյանի[35], Ռաֆֆի Կոնդակչյանի[36] աշխատություններից:

---

[30] Մորգենթաու Հ., *Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը*, Երևան, 2012, էջ 44:
[31] *Նույն տեղում*, էջ 241:
[32] Տե՛ս *նույն տեղում*:
[33] Արզումանյան Մ., *Հայաստան 1914-1917*, Երևան, 1969:
[34] Կիրակոսյան Ջ., *Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.)*, Գիրք առաջին, Երևան, 1982:
[35] Սիմոնյան Հր., *Թուրք ազգային բուժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը*, Երևան, 1986:
[36] Кондакчян Р., *Турция: внутренняя политика и ислам*. Ереван, 1983.

Երիտթուրքերի գաղափարաբանությունը շարադրելիս օգտվել ենք Թեքին Ալփի[37], Էռնեստ Ռամզորի[38], Ջեքոբ Լանդաուի[39], Շուքրու Հանիօղլուի[40], Արսեն Ավագյանի[41] և այլոց գործերից:

Քանի որ Հայոց ցեղասպանության իրագործման մեջ կրոնի դերակատարության տարատեսակ հարցերի վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություններ չկան, արտահայտված գիտական մոտեցումների մասին մեր կողմից առանձին ենթագլուխ (1.3) է շարադրվել, որտեղ ներկայացվում են ցեղասպանության մի շարք տեսաբանների (Ռաֆայել Լեմկին[42], Լեո Կուպեր[43], Վահագն Դադրյան[44], Լեոնարդ Գլիկ[45], Ռիչարդ Լ. Ռուբենշտայն[46], Սթիվեն Լ. Ջեքոբս[47], Ռոնալդ Գ. Սյունի[48], Թաներ Աքչամ[49], Ջեյմս Ջ. Ռեյդ[50] և Բեն Կիերնան[51]) գործերը: Օգտագործվել են բոլոր այն հեղինակների գործերը, որոնք այս կամ այն կերպ անդրադարձել էին մեր խնդրո առարկայությանը:

---

[37] Alp T., *The Turkish and Pan-Turkish Ideal*. London: Liberty Press, 1993.

[38] Ramsaur E. E. Jr., *The Young Turks: Prelude to the Revolution of 1908*. New York: Russell & Russell, 1970.

[39] Landau J. M., *Pan-Turkism: From Irredentism to Cooperation*. Bloomington and Indianapolis: Indiana University Press, 1995.

[40] Hanioğlu M. Ş., *The Young Turks in Opposition*. New York, Oxford: Oxford University Press, 1995.

[41] Авакян А., *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений*. Ереван, МИГА, 2013.

[42] *Raphael Lemkin's Dossier on the Armenian Genocide: Turkish Massacres of Armenians* (Manuscript from Raphael Lemkin's Collection, American Jewish Historical Society), with a foreword by prof. Michael J. Bazyler, Glendale: Center for Armenian Remembrance (CAR), 2008.

[43] Kuper L., *Genocide: It's Political Use in the Twentieth Century*. New Haven, Conn.: Yale University Press, 1981. Kuper L., "Theological Warrants for Genocide: Judaism, Islam and Christianity," *Terrorism and Political Violence, 1990, 2:3*, pp. 351-379.

[44] Dadrian V. N., *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*. Providence, RI: Barghahn Books, 1995. Dadrian V. N., *Warrant for Genocide. Key Elements of Turko-Armenian Conflict.* New Brunswick, New Jersey: Transaction Publishers, 1999.

[45] Glick L., "Religion and Genocide," *Confronting Genocide: Judaism, Christianity, Islam*, edited by Steven Leonard Jacobs, Lexington Books, 2009, pp. 95-118.

[46] Rubenstein R. L., "Jihad and Genocide: The Case of the Armenians," *Confronting Genocide: Judaism, Christianity, Islam*, edited by Steven Leonard Jacobs, Lexington Books, 2009, pp. 119-137.

[47] Jacobs S. L., "Genocidal Religion," *Journal of Hate Studies*, Vol. 9:22, Gonzaga University Institute for Hate Studies, 2011, pp. 221-235.

[48] Suny R. G., "Religion, Ethnicity, and Nationalism: Armenians, Turks, and the End of the Ottoman Empire," *In God's Name. Genocide and Religion in the Twentieth Century*, edited by Omer Bartov and Phyllis Mack, Barghahn Books, 2001, pp. 23-61.

[49] Akçam T., *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility*. New York: Henry Holt and Company, 2006. Աքչամ Թ., *Հայերի բռնի իսլամացումը. լռություն, ժխտում և ուծացում*, թուրք. թարգմ.՝ Անումյան Մ., Երևան, 2016:

[50] Reid J. J, "Philosophy of State –Subject Relations, Ottoman Concepts of Tyranny, and the Demonization of Subjects: Conservative Ottomanism as a Source of Genocidal Behaviour, 1821-1918," *Studies in Comparative Genocide*, edited by Levon Chorbajian and George Shirinian, New York, 1999, pp. 60-91.

[51] Kiernan B., "Twentieth-Century Genocides: Underlying Ideological Themes from Armenia to East Timor," *The Specter of Genocide: Mass Murder in Historical Perspective*, ed. by Robert Gellately & Ben Kiernan, Cambridge University Press, 2003, pp. 29-51.

Բացի նշված գրականությունից՝ զանգվածային սպանությունները, դրանց մեջ կրոնի դերակատարությունը, ամբոխի վարքային մոդելները հասկանալու և համապատասխան եզրակացություններն անելու համար օգտվել ենք մի շարք միջգիտակարգային հեղինակների՝ Արթուր դե Գոբինոյի[52], Գուստավ Լը Բոնի[53], Ռենե Ժիրարի[54], Չառլզ Քիմբալի[55], Բարբարա Էհրենռայխի[56] և այլոց մենագրություններից:

Ցեղասպանությունների և հատկապես Հայոց ցեղասպանության պատմակրոնագիտական քննությունը խիստ այժմեական ու անհրաժեշտ հարց է: Խնդրին քիչ տեղ է հատկացվել՝ ելնելով տարբեր գործոններից՝ պոստմոդեռնիստական աշխարհայացքից, միջկրոնական հարաբերությունների էթիկական նուրբ խնդիրներից, մասնագետների ներգրավվածության պակասից և այլն: Սակայն գիտական ճշմարտությունը վեր հանելը պետք է դիտարկվի առաջնային խնդիր՝ միաժամանակ առանց մեղանչելու միջկրոնական էթիկայի հանդեպ՝ պահպանելով գիտականության բոլոր սկզբունքներն ու մեթոդները, դրսևորելով հավասարակշռություն սահմանումների ու եզրակացությունների մեջ: Առաջին հերթին՝ ուսումնասիրության թեման արդիական է՝ ցեղասպանությունների հետագա կանխարգելման խնդրից ելնելով, քանի որ անցյալի ցեղասպանությունները համակողմանի բացատրելով և հասկանալով ամենատարբեր գործոնների առկայությունն ու դերը, համապատասխան քայլեր ձեռնարկելով, հետագայում կարելի է խուսափել մարդկության ցանկացած հանրույթում նման աղետների կրկնությունից: Համոզված ենք, որ այդ գործում առաջին օղակն ապահովողը գիտական աշխարհին է՝ տարբեր գիտակարգերում կատարվող ուսումնասիրություններով: Հայոց ցեղասպանության առնչվող պատմակրոնագիտական հարցերը քննելը ժամանակակից հրամայականներից է, քանի որ Հայաստանի Հանրապետության, համայն հայության կարևորագույն օրակարգային խնդիրներից է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, հետևաբար

[52] де Гобино Ж. А., *Опыт о неравенстве человеческих рас.* Москва, 2000.
[53] Лебон Г., *Психология народов и масс.* Москва, 2012.
[54] Жирар Р., *Насилие и священное*. Москва, 2000.
[55] Kimball Ch., *When Religion Becomes Evil: Five Warning Signs*. HarperCollins Publishers, 2009.
[56] Ehrenreich B., *Blood Rites: Origins and History of the Passions of War*. New York: Henry Holt and Company, 1998.

համակողմանի ուսումնասիրությունները նոր ու լրացուցիչ ազդակներ են այդ ճանապարհին: Եվ վերջապես, ժամանակակից աշխարհում նկատվում են նոր ցեղասպանությունների առաջացման օջախներ. Մերձավոր Արևելքում, Աֆրիկայում և այլ վայրերում արձանագրվում են քրիստոնյաների դեմ ուղղված զանգվածային բռնություններ, և եթե քրիստոնյաների դեմ ոչ հեռու անցյալում՝ XX դարասկզբին իրականացված ամենամահաբեր զանգվածային սպանություններից մեկը դեռ վերջավոր կերպով չի դատապարտվել, ապա աշխարհը կանգնած է ցեղասպանությունների ու զանգվածային հալածանքների կրկնվելու վտանգի առջև:

ԳԼՈՒԽԱՎՈՐ
ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԴԻՐՆԵՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵՋ

Այս գլխում հակիրճ կներկայացվեն պատմակրոնագիտական և աստվածաբանական ուսումնասիրությունների նյութ հանդիսացող և ցեղասպանություն երևույթի հետ առնչվող որոշ օրակարգային թեմաներ՝ իբրև ուղենշային հարցեր՝ հետագա վերլուծությունների ու մեթոդական մոտեցումների համար, ինչպես նաև Հայոց ցեղասպանության ընթացքում կրոնի դերակատարության այս կամ այն հիմնահարցին անդրադարձ կատարած, ցեղասպանություններն ուսումնասիրող տարբեր գիտական ուղղությունների ներկայացուցիչների հետազոտությունները:

1.1. Ցեղասպանության պատմակրոնագիտական ուսումնասիրության հարցեր

ա. Ոչնչացումը, սպանությունները կրոններում. դիցաբանական համակարգերից մինչև համաշխարհային կրոններ

Դիցաբանական մտածելակերպը բարդ երևույթ է: Բացի հեքիաթների, լեգենդների, մետաֆորիկ կերպարների և հերոսների աշխարհ համարելուց՝ կրոնագետները, մարդաբանները, հոգեբանները և այլք այն արժևորել ու արժևորում են որպես տվյալ ժողովրդի հոգեբանություն, արքետիպային մտածողություն, որպես ազգի ինքնության ենթագիտակցական համակարգ[57]: Այնպես որ, եթե ցանկանում ենք պարզել ցեղասպան գաղափարների հիմքը, անհրաժեշտ է նաև հետադարձ հայացք նետել տվյալ ազգի կրոնական՝ սկզբնական, դիցաբանական համակարգին, թուրքերի դեպքում՝ մինչ միաստվածային կրոնի առանձնահատկություններին. ինչպիսի՞ հերոսներ է ունեցել այդ ժամանակ, արդյոք ազգի իդեալ համարվող

[57] Տե՛ս Jung C. G., *The Archetypes and the Collective Unconscious*. Princeton University Press, 1990, էջ 156, 172, հմմտ. Ellwood R., *The Politics of Myth. A Study of C. G. Jung, Mircea Eliade and Joseph Campbell*. State University of New York Press, 1999, էջ 24, 33, 129, 176:

հերոսները եղել են արդարության մարտիկնե՞ր, թե՞ ագրեսիվ ուժի մարմնավորումներ:

Հանրահայտ է, որ և՛ բազմաստվածային, և՛ միաստվածային կրոններն անխտիր ունեն հատուկ բարոյական նորմեր: Յուրաքանչյուր կրոնի մեջ աշխարհայացքային վերաբերմունքն այլ կրոնների ներկայացուցիչների հանդեպ կարող է լինել և՛ բացասական, ընդհուպ նրանց ոչնչացնելու կոչերը, և՛ դրական, ինչպես, օրինակ, գթասիրտ լինելը մարդկանց հանդեպ: Բարոյականության դերի ուսումնասիրությունը տվյալ կրոնում կարող է լույս սփռել ցեղասպանության ուսումնասիրությունների վրա:

բ. Թուրքական իսլամը, երիտթուրքերը և Հայոց ցեղասպանությունը

Կրոնագիտական վերլուծությունները քննարկում են իսլամ-քրիստոնեություն առճակատումը Հայոց ցեղասպանության ընթացքում: Կրոնների բախումը ցեղասպանության մեջ ակնհայտ է և խթանող կարևորագույն գործոններից մեկն է: Պետք է ընդգծել, որ Հայոց ցեղասպանությունը կրոնական հողի վրա կատարված ցեղասպանություն չէ, սակայն կրոնական առճակատումը և կրոնական այլադավանությունն այն կարևորագույն գործոններից էին, որ հնարավոր դարձրին ցեղասպանության իրագործումը:

Այս համատեքստում պետք է ուսումնասիրել, թե ինչպես կրոնը քաղաքական վերնախավի կողմից օգտագործվեց որպես բախում առաջացնող միջոց: Իսլամի գաղափարախոսությունն իր բնույթով չի կարող անջատ լինել պետությունից ու քաղաքականությունից, հետևաբար նաև՝ պատերազմներից, զինված բախումներից: Օսմանյան կայսրության սուլթանը նաև *խալիֆ* էր՝ բոլոր մուսուլմանների կրոնական առաջնորդը, իսկ իսլամը կայսրության պետական կրոնն էր մինչև Թուրքիայի Հանրապետության՝ աշխարհիկ պետության հռչակումը (1923-ին): Ազգային պատկանելությունը որոշվում էր դավանանքով:

Այս նյութի լուսաբանումը կարող է ընթանալ հետևյալ հարցերի ուսումնասիրության միջոցով.

1. իսլամի յուրահատկությունը թյուրքաթաթարական մշակութային տարածքում,
2. իսլամական մարդաբանությունը, բարոյագիտությունը, ջիհադը և Հայոց ցեղասպանությունը,
3. իսլամի ի՞նչ կրոնական ուղղություններ կային Օսմանյան Թուրքիայում Հայոց ցեղասպանության տարիներին. սուֆիական-միստիկ ուղղությունները և նրանց դերակատարությունն Օսմանյան կայսրության քաղաքականության և հասարակական կյանքի մեջ (*նակշիբանդի, մևլևի, բեկթաշի* միաբանությունները):

Ցեղասպանության մերօրյա մասնագետ Բեն Կիերնանը[58] գրում է, որ երիտթուրքական, նացիստական և կիմերական ռեժիմները ցեղասպանության ենթարկեցին հենց կրոնական փոքրամասնություն հանդիսացող ազգերին[59]:

Երիտթուրքերի գաղափարական կորիզը կարելի է համարել աթեիզմը՝ չմոռանալով նրանց կողմից որդեգրված օժանդակ գաղափարախոսությունները, ինչպիսիք էին՝ պոզիտիվիզմը, կենսաբանական մատերիալիզմը, սոցիալական դարվինիզմը և այլն, որոնցից յուրաքանչյուրն ունի հստակ ոչ քրիստոնեական, ավելի ստույգ՝ հակաքրիստոնեական աշխարհայացք: Երիտթուրքերը, սեփական գաղափարները ձևավորելիս, ի թիվս այլոց, օգտվել էին հատկապես պոզիտիվիզմի հիմնադիր փիլիսոփա Օգյուստ Կոնտի և սոցիալական հոգեբան Գուստավ Լը Բոնի տեսություններից: Այդ փիլիսոփաների ազդեցությունը երիտթուրքերի աշխարհայացքի վրա կարոտ է մանրամասն ուսումնասիրման: Քանի որ մամուլը Օսմանյան կայսրությունում ահռելի դերակատարություն է ունեցել ուսյալ խավի վրա, երիտթուրքերն ակտիվ կերպով տպագրել են արաբատառ թուրքերեն թերթեր ու ամսագրեր՝ համեմված ժամանակի փիլիսոփաների գաղափարներով, կարիք կա դրանք մանրամասն ուսումնասիրելու և վեր հանելու նրանց գաղափարական հիմքերը:

---

[58] **Բեն Կիերնանը** (ծն. 1953թ.) Յելի համալսարանի Ցեղասպանության ուսումնասիրության ծրագրի տնօրենն է, հեղինակ է մասնավորապես Կամբոջայի ցեղասպանությանը նվիրված մի շարք գրքերի ու հոդվածների:
[59] Տե՛ս Kiernan B., "Twentieth-Century Genocides…", էջ 29:

Միակ դժվարությունն այստեղ լեզուն է. և՛ բուն Թուրքիայում, և՛ այլուրքիչ են օսմաներենին տիրապետող մասնագետները:

գ. Հայերի կրոնափոխության հարցը Ցեղասպանության տարիներին

Բռնի կրոնափոխությունը՝ որպես ցեղասպանության գործիք, զատում է Հայոց ցեղասպանությունը մյուս մի շարք ցեղասպանություններից:

Այս խնդիրը մշակութային ցեղասպանության մաս է: Այն պետք է ուսումնասիրվի ամենայն մանրամասնությամբ՝ ընդգրկելով կրոնափոխության ծրագիրը, վերաբերմունքը Օսմանյան կառավարական վերնախավի շրջանում և դրա նշանակությունը Եղեռնը շարքային իրագործողների հոգեբանության, կրոնական մղումի համատեքստում: Կրոնափոխությունը պետք է դիտարկվի համալիր ու հաջորդական գործընթացներով՝ նվիրագործման ծեսով, կրոնափոխ եղածների սոցիալական ինտեգրման փուլերով, կրոնասոցիալական նշանակությամբ և ունեցած հետևանքներով՝ Հայոց ցեղասպանության ընթացքում ու հետագայում: Այս հարցին սույն աշխատանքի մեջ նպատակահարմար չգտանք անդրադառնալ, քանի որ այն պահանջում է առավել ազնիս լայն ու համակողմանի դիտարկում, ժամանակագրորեն զբաղեցնում է ավելի լայն տիրույթ, քան Հայոց ցեղասպանության ընդունված տարիներն են՝ 1915-1923 թթ.: Բացի այդ, կրոնափոխության կերպը տարբեր թիրախային խմբերում հաճախ տարբեր սկիզբ, ընթացք, նպատակային իմաստ է ունեցել. կրոնափոխությունը այլ առանձնահատկություններ է ունեցել հայ երեխաների դեպքում, այլ՝ հայ կանանց ու տղամարդկանց դեպքում:

1.2. Ցեղասպանությունների ուսումնասիրման աստվածաբանական փորձերը

Ցեղասպանությունների աստվածաբանական ուսումնասիրությունները կրոնագիտական ուսումնասիրություններին մեծապես օժանդակող, լրացուցիչ

մեթոդ, միջգիտակարգային հետազոտությունների նյութ տրամադրող ու փոխանցող կարող են լինել: Հատկապես երբ կրոնագիտությունը կարիք է զգում տվյալ կրոնի ներսում տրվող բացատրությունների ու աստվածաբանական նրբություններին առնչվող խնդիրների համադրմանը՝ պատմակրոնագիտական վերլուծություններ անելու, նոր խնդիրներ բարձրացնելու և ուսումնասիրելու նպատակով[60]: Օրինակ՝ աստվածաբանության տեսակետից ցեղասպանությունը ներառում է և՛ մարդկային էթիկական չարը, և՛ կրոնական չարը: Այս առումով Հոլոքոստի աստվածաբանական մեկնաբանությունները շատ են. աստվածաբանական աշխատանքներ են տպագրվել անմիջապես Հոլոքոստից և Իսրայելի պետության հռչակումից (1948թ.) հետո: Հոլոքոստի աստվածաբանությունն առանձին մտածողների տեսակետների համախումբն է, իսկ այդ տեսակետները տարբեր հեղինակների մոտ հաճախ իրարամերժ են լինում, հետևաբար աստվածաբանական միահամուռ տեսակետ գոյություն չունի: Հարցերը, որոնք արծարծվում են Հոլոքոստի մասին աստվածաբանելիս, բազմաթիվ են ու առնչվում են հրեական աշխարհայացքի հիմքերին, որտեղ կրոնը՝ հուդայականությունը, առանցքային տեղ է զբաղեցնում: Ուստի այդ հայեցակետերի ամբողջությունը նաև կրոնագիտական նյութ է, քանի որ արտացոլում է տվյալ կրոնի վերաբերմունքն ու բացատրությունները տվյալ խնդրի շուրջ, առնչվում մեկ այլ կրոնի՝ քրիստոնեության հետ և դիտարկում հուդաքրիստոնեական դիսկուրսի շրջանակներում:

Ներկայացնենք աստվածաբանության ու կրոնագիտության համար ընդհանուր այդպիսի մի քանի՝ հետագա ուսումնասիրության նյութ հանդիսացող հիմնակետեր՝ առանձին վերնագրերով:

ա. Ցեղասպանությունների թեոդիցեան

[60] Ցեղասպանության աստվածաբանության՝ մեր կողմից սույն ատենախոսության մեջ ներկայացրած հարցերն ավելի մանրամասն տե՛ս մեր հետևյալ հոդվածում. Խաչատրյան Ծ., «Ինչպե՞ս դիտարկել ցեղասպանությունն աստվածաբանության տեսանկյունից», *«Էջմիածին» ամսագիր ԺԲ*, դեկտեմբեր, 2012, էջ 7-21:

Թեոդիցեան այն հարցերի ու տեսությունների ամբողջությունն է, որը քննարկում է բարու և չարի դերակատարումը մարդկային տառապանքի մեջ, առաջադրում բազմաթիվ «ինչո՞ւ»-ներ՝ կապված Աստծու ամենակարողության, բարեգութ ողորմած լինելու հետ՝ մի կողմից, և մյուս կողմից չարի «զորությանը» և ներկայությանը մարդկության պատմության ընթացքում: «Թեոդիցեա» եզրն առաջացել է հունարեն «թեոս» (Աստված) և «դիկե» (օրենք, արդարություն) բառերից: Այս եզրը կանոնակարգել և շրջանառության մեջ է դրել գերմանացի փիլիսոփա Գոտֆրիդ Լայբնիցը (1646-1716), որից հետո այն սկսել է կիրառվել նաև աստվածաբանական եզրաբանության մեջ:

Եղեռնը վերապրած հայերի շրջանում ամենից հաճախ տրվող հարցերից էին.

«Ինչպե՞ս բացատրել Աստծու սարսափեցնող լռությունը Եղեռնի ժամանակ»[61],

«Ինչո՞ւ Աստված չփրկեց իր քրիստոնյա ժողովրդին»,

«Ինչպե՞ս կարող է մարդու աշխարհայացքը նույնը մնալ Եղեռնից հետո»,

«Ինչպե՞ս հասկանալ չարի դերակատարումը քրիստոնեական Ամենակարող Աստծու կողքին»,

«Արդյո՞ք նույնը պետք է մնա Աստծու և մարդու մասին ընկալումը»,

«Ինչո՞վ կարող է օգնել թեոդիցեայի ցանկացած փորձ այն բանից հետո, երբ չարը իրեն դրսևորեց որպես ծայրահեղ հզոր ու ակներևորեն անկախուժ» և այլն:

Ցեղասպանության ուսումնասիրությունը կատարվում է թեոդիցեայի՝[62] և՛ աստվածաբանական, և՛ փիլիսոփայական հայեցակարգերի հետ համատեղ: Այս հարցերն իրենց թե՛ փիլիսոփայական, թե՛ աստվածաբանական ուղղվածությամբ ստանում են պատասխաններ ամենատարբեր տեսանկյուններից: Այս իմաստով

[61] Թեոդիցեայի մասին խոսվում է Հայոց ցեղասպանությունը վերապրածների վկայություններին վերաբերող հետևյալ գրքում. Miller D., Miller L., *Survivors: Oral History of the Armenian Genocide*. Berkeley and Los Angeles: University of California Press, 1993, pp. 177-186.

[62] Եզրի հայերեն թարգմանությունը կանոնակարգված չէ, ուստի նախընտրում ենք օգտագործել «թեոդիցեա» հունարեն եզրը (կազմված է հուն. Θεός՝ «Աստված», և δίκη՝ «արդարություն», «իրավունք» բառերից) հայերեն «աստվածարդարացում» մոտավոր թարգմանության փոխարեն:

բավականին աշխույժ են հուդայական կրոնի տեսաբան-ուսուցիչները, որոնց մի մասը մեծապես ազդվել է հայազգի աստվածաբան Գաբրիել Վահանյանի աստվածաբանական մեկնաբանություններից ու դրանք կիրառել Հոլոքոստի փիլիսոփայաաստվածաբանական հայեցակետերը մշակելիս: Այս ուղղության բռնած գիծը հաշվի առնելը կարևոր է կրոնագիտական և աստվածաբանական հայեցակետեր մշակելիս:

Նախորդ դարի հիսունական թվականներից սկսած՝ մեծ աղմուկ բարձրացրեց «Աստծո մահվան» աստվածաբանությունն ու համապատասխան արձագանքներ ունեցավ փիլիսոփայության մեջ[63]: Այս տեսությունն առաջադրողներից էր հայազգի բողոքական, ռադիկալ աստվածաբանության ներկայացուցիչ Գաբրիել Վահանյանը (1927-2012), որը ցեղասպանությունը վերապրած ծնողների զավակ էր և ծանոթ էր Եղեռնի գործած դեստրուկտիվ ազդեցությանը ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեբանական ու հոգևոր մակարդակներում: Նա առաջադրեց այն գաղափարը, որ ժամանակակից աշխարհը «հետքրիստոնեական» (անգլ. post-Christian) դարաշրջան է ապրում: Անդրադառնալով մարդու աշխարհընկալման և բարոյական փոփոխություններին և այդ ամենի մեջ Աստծու ներկայության գաղափարին՝[64] Վահանյանը կարծում է, որ մշակույթը կորցրել է ամեն տեսակ «սրբազան» տարր, իսկ ժամանակակից մարդու գիտակցության մեջ «Աստված մահացել է»: Հոլոքոստի առաջին աստվածաբաններից մեկը՝ Ռիչարդ Ռուբենշտայնը (1924-2013), այս ուղղությունից ազդված, իր «Աուշվիցից հետո» գրքում կարծում է, որ հրեաների Աստվածը մահացել է, այլևս հոգ չի տանում իր ազգի մասին, հետևաբար, ըստ նրա, իմաստ չունի ո՛չ աղոթելը, ո՛չ էլ Պասեք տոնելը, քանի որ դա այն տոնն է, որը խորհրդանշում է Աստծու հոգածությունը հրեա ժողովրդի հանդեպ. Հոլոքոստի ժամանակ Աստված, իբր, չհոգաց, մոռացավ իր ազգի մասին: Ըստ նրա՝

[63] «Աստծո մահվան աստվածաբանությունը» կոչվում է նաև ռադիկալ աստվածաբանություն, որի ներկայացուցիչներն էին նաև Պոլ վան Բուրենը, Ուիլյամ Համիլտոնը, Ջոն Ռոբինսոնը, Թոմաս Ալտիցերը, Ջոն Կապուտոն, ռաբբի Ռիչարդ Ռուբենշտայնը և Պիտեր Ռոլինզը: Այս ուղղությունը գաղափարական հիմքեր է քաղել Դիոնիսիոս Արիոպագացու, Նիկողայոս Կուզանացու, Մայստեր Էկհարտի, Հովհան Խաչի աստվածաբանական գործերից, ինչպես նաև Ֆրիդրիխ Հեգելի և Ֆրիդրիխ Նիցշեի փիլիսոփայությունից:

[64] Տե՛ս Vahanian G., *The Death of God: The Culture of Our Post-Christian Era*. Wipf & Stock Publishers, 2009.

«Աստված Սուրբ Չգոյ է»՝ անտարբեր արարածի ճակատագրի հանդեպ. դա, ըստ Ռուբենշտայնի, հատկապես երևաց Հոլոքոստի ժամանակ[65]:

Հոլոքոստի առավել հայտնի աստվածաբաններից է Էլիզեր Բերկովիցը (1908–1992), որի աստվածաբանությունը կարելի է կոչել պատմամաստասիրական, քանի որ իր «Հավատքը Հոլոքոստից հետո» գրքով նա փորձում է ուրվագծել Աստծու միջամտությունը մարդկության պատմությանը, իսկ տեղի ունեցող մարդածին աղետները պարզապես համարում է մարդու ազատկամային բացասական դրսևորումներ: Հրեաների կոտորածը ամենևին էլ հակասեմական պոռթկում չէր, այլ, ինչպես նա է համոզված, նացիստների մետաֆիզիկական վախն էր «իշխանություն չունեցող» Աստծուց, որը միաժամանակ ներկա է պատմության ընթացքում[66]: Նացիստները, այդպիսով, վախենում էին հրեաների պարադոքսալ Աստծուց և ցանկանում էին վերացնել այդ Աստծու «վկաներին»՝ հրեաներին:

Այսինքն, կարևոր նյութ տրամադրելու տեսակետից անգերագնահատելի են Գաբրիել Վահանյանի ու նրանից ազդված տարբեր ուղղությունների պատկանող հրեա աստվածաբանների մեկնությունները և մեթոդաբանական լայն նյութ կարող են տրամադրել նաև Մեծ եղեռնը համապատասխան դիտանկյունից ուսումնասիրելու ուղղությամբ:

Մեծ եղեռնի թեոդիցեայի տարատեսակ հարցերի անդրադարձ են կատարել հայ գրողներից շատերը: Կարծում ենք, որ թեոդիցեայի շուրջ հարցերն ուսումնասիրելիս, ականատեսների կողմից արված հարցադրումները ու դրանց տրված պատասխանները քննելիս պետք է ուշադրություն դարձնել հայ գրողների ու հրապարակախոսների՝ հարուստ նյութ տրամադրող մտորումներին, արժևորումներին ու բարձրացրած հարցերին՝ թե՛ արձակ, թե՛ չափածո, թե՛ հրապարակախոսական: Կարծում ենք, որ Մեծ եղեռնի թեոդիցեայի մշակումն անհրաժեշտ է կատարել նախ գրողների ստեղծագործությունների հիման վրա, որոնք հաճախ

[65] Տե՛ս Rubenstein R. L., *After Auschwitz: Radical Theology and Contemporary Judaism.* Indianapolis, New York, Kansas City: The Bobbs-Merrill Company, Inc., 1966.

[66] Է. Բերկովիցի կենսագրականն ու գործունեությունը տե՛ս հետևյալ էլ. հասցեով՝ "Berkovits Eliezer," http://www.jewishvirtuallibrary.org/jsource/judaica/ejud_0002_0003_0_02688.html (դիտված 05.I.2017 թ.): Լրացուցիչ տե՛ս Morgan M. L., *Beyond Auschwitz: Post-Holocaust Jewish Thought in America*. New York: Oxford University Press, 2001, էջ 109-118:

աստվածաբանական ու փիլիսոփայական մտորումների մեկտեղում են լինում՝ միաժամանակ զուգահեռներ տանելով ականատեսների ու վերապրողների թեոդիցիոն հարցերին[67]:

բ. Զոհի կամ զոհաբերության աստվածաբանություն. զոհաբերության իմաստը ցեղասպանության մեջ

Պատմագիտության, հոգեբանության, իրավագիտության բնագավառներում «զոհ» եզրն ունի տվյալ ոլորտներին բնորոշ բացատրություն: Օրինակ՝ հոգեբանության մեջ առանձին բնագավառ՝ վիկտիմալոգիան, զբաղվում է զոհի վարքի, նրա կրած հոգեբանական ձևափոխությունների ուսումնասիրմամբ, իրավաբանության մեջ քրեագիտության առանձին կատեգորիա է զոհը: Սակայն բառի ծագումը հուշում է, որ ոլորտը, որին պատկանում է բառը, կրոնականն է[68]: Նույնը կարող ենք ասել նաև «հոլոքոստ» եզրի մասին, որի ոլորտը ևս կրոնականն է՝ ամբողջովին այրվող զոհը, որի ողջակիզումը կատարվում էր Սողոմոնի տաճարում[69]: Սակայն «զոհ» բառն օգտագործելիս պետք է լինել առավելագույնս զգույշ, որպեսզի «զոհ» ասելիս պիտակավորման կամ արժևորման երևույթ չնկատվի: Այս դիտանկյունից խնդիրն ուսումնասիրելն իր բնույթով ֆենոմենոլոգիական է և չի ենթադրում տուժող կողմին որպես հավերժական զոհ ներկայացնելը:

---

[67] Ավելի մանրամասն տե՛ս մեր հետևյալ հոդվածը. Խաչատրյան Ծ., «Եղեռնի թեոդիցեան հայ գրողների (Պարույր Սևակ, Հովհաննես Շիրազ, Հովհաննես Թումանյան, Վահան Թեքեյան) գործերում», *Հայոց ցեղասպանություն – 100. ճանաչումից՝ հաստուցում: Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու*, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2016, էջ 733-747:

[68] Զոհի կամ զոհաբերման աստվածաբանությանը (անգլ. "theology of sacrifice") նվիրված են բազմաթիվ գործեր, դրանց կարելի է ծանոթանալ օրինակ՝ հետևյալ հոդվածում. Daly R. J., "New Developments in the Theology of Sacrifice," *Liturgical Ministry 18* (Spring 2009), Ohio, Institute for Liturgical Ministry at Maria Stein Center, pp. 49-58: Տե՛ս նաև Eberhart C. A, *The Sacrifice of Jesus: Understanding Atonement Biblically*. Minneapolis: Augsburg Fortress, 2011 գիրքը:

[69] «Հոլոքոստ»-ը ծագում է Ὁλοκαύτωμα հունարեն բառից, որը նշանակում է «ողջակիզում»: Խոսքը վերաբերում է Ղևտ. Ա. 3-17, Զ. 1-6, 8-13 համարներում նկարագրված զոհաբերության կարգին, երբ զոհաբերվող կենդանին այրվում էր ամբողջությամբ: Անվանումը ծագում է עֹלָה «օլա» եբրայերեն բայից, որը նշանակում է «բարձրանալ», «վեր հառնել»: Հին Կտակարանի Ղևտացվոց գրքում չեն նշվում այն հանցանքները, որոնց պատճառով պետք է մատուցվեր այս տեսակի զոհը, սակայն այն պետք է մատուցեին մարդիկ, ովքեր չէին կատարել դիտավորյալ հանցանք, այլ անզգուշորեն էին մեղք գործել: Արու զոհն ամբողջությամբ այրվում էր՝ բացի մորթուց և արյունից: Կարևոր պայման էր, որ զոհաբերողը ձեռքը դներ կենդանու վրա՝ որպես խորհրդանիշ այն բանի, որ իր մեղքերը փոխանցում է կենդանուն:

Զոհաբերությունը կրոններում համարվում է անտինոմիկ երևույթ: Կրոնական աշխարհայացքը թույլ է տալիս դիտել զոհաբերության երևույթը որպես սակրալ՝ ամեն տեսակի պարտադրանք ու անխուսափելիություն՝ ընդհուպ մինչև մահը, պատերազմի ընթացքը, անել անելիդրությունը փոխելու իզորու[70]:

Քրիստոնեական աստվածաբանության համաձայն՝ բոլոր զոհաբերությունների կիզակետը Քրիստոսի զոհաբերությունն էր, որը կատարվեց մեկ անգամ և ընդմիշտ: Ապա դրանից հետո ինչպե՞ս պետք է ընկալվի անմեղների մահը զանգվածային սպանությունների ընթացքում. արդյո՞ք զոհի ու զոհաբերման աստվածաբանական ու կրոնագիտական բացատրությունները պետք է ներառվեն ցեղասպանությունների միջգիտակարգային ուսումնասիրությունների ոլորտ: Նշելի է, որ նման երևույթ արդեն իսկ տեղի ունի, օրինակ, Աստվածաշնչում՝ Կայենի կողմից Աբելի սպանության ու Քանանի ազգերի նկատմամբ իրականացված զանգվածային սպանությունների նկարագրության մեջ:

Կապը ցեղասպանության ու զոհաբերության միջև, ինչպես նշվեց, երևում է նույնիսկ անվանումների մեջ. հրեաների դեմ իրագործված ցեղասպանության դեպքում այդ կապը «հոլոքոստ» բառն է՝ որպես հինկտակարանյան ողջակիզման զոհի հունարեն անվանում: Աստվածաբանական մեկնություններում ասվում է, որ այդ անունը պատահական չէ ընտրված: Հիմք ընդունելով սեփական ազգի ընտրելականությունը՝ հատկապես կրոնատած հրեաները կարծում են, որ իրենց՝ գազախցիկներում այրվելը՝ ողջակիզումը, մոտենում է Թանախում՝ նույն Հին Կտակարանում նկարագրված այդ իմաստին: Այստեղից էլ կարող են առաջանալ այլ ենթահարցեր՝ կապված կրոնական ինքնընկալման, ցեղասպանության ենթարկվելը՝ ոչ իբրև պատիժ, այլ որպես զոհաբերություն մեկնաբանելու հետ: Միաժամանակ ուշադրության արժանի է այն փաստը, որ հրեաների Հոլոքոստից տասնամյակներ առաջ 1909 թ. Ադանայի կոտորածներն աստվածաշնչյան «հոլոքոստ» եզրույթով է բնորոշել անգլիացի ականատես Ֆերիման Դաքեթն իր՝ «Երիտթուրքերը և

[70] Տե՛ս Ehrenreich B., *նշվ. աշխ*, էջ 159-163:

ճշմարտությունն Ադանայի ողջակիզման վերաբերյալ Փոքր Ասիայում 1909 թ. ապրիլի ընթացքում» վերնագիրը կրող գրքում[71]:

Քննարկումներ են ընթանում, օրինակ, թե ինչո՞ւ ցեղասպանությունների մեջ աստվածաբանական-կրոնագիտական քննարկումները հաճախ են հանգում զոհ-զոհաբերության երևույթներին[72], և որոնք են դրանց առանձնահատկությունները:

Զոհաբերություն-ցեղասպանություն քննարկումները կենդանի քննարկումներ են մեր օրերում: Օրինակ՝ Հոլոքոստը որպես զոհաբերություն չի ընկալում ռուս ուղափառ աստվածաբան Անդրեյ Կուրաևը՝ նշելով, որ իր համար պարզ չէ, թե ում էր ուղված այդ զոհաբերությունը՝ Աստծուն, թե՞ սատանային, քանի որ զոհաբերող-նացիստները ծայրահեղ անմաքուր էին և սպանելիս միանշանակ չէին մտածում Աստծու մասին. «Տարօրինակ է, որ նացիստական աղտեղությունները, որոնք չունեին ոչ մի աստվածաշնչային-քրիստոնեական հիմք, և հետապնդումները, որ տարածվեցին նաև քրիստոնյա հրեաների վրա, կոչվեցին զուտ կրոնական տերմինով: Եթե նացիզմի տարիներին եվրոպական հրեությունը ողջակիզման զոհ է, ապա ո՞վ է զոհաբերողը և ո՞ր աստծուն է մատուցվել այդ զոհը: Աստվածաշնչում ողջակիզման զոհը մատուցվում էր Աստծուն հրեաների կողմից: Բայց Երրորդ Ռայխում զոհը հենց հրեաներն էին, որ նացիստները զոհաբերում էին իրենց արյունալի ուտոպիաներին: Սա նշանակում է, որ այդ զոհը ծայրահեղ անմաքուր է. Հոլոքոստի զոհերը դառնում են կուռքերին մատուցված զոհեր: Դժվար թե այսպիսի հետևությունը դուր գա հրեաներին, բայց չէ՞ որ այն տրամաբանորեն բխում է իրենց կողմից ընտրված եզրի բացատրությունից....»[73]:

Փաստորեն, զոհաբերության խորհրդի ընկալումը չի հնացել մինչ օրս, և դրա ապացույցը ցեղասպանություն–զոհաբերություն կապը տեսնելն է նույնիսկ XXI դարում:

---

[71] Գիրքն առաջին անգամ հրատարակվել է 1913 թ.՝ անգլերեն լեզվով. Duckett Z. Ferriman, *The Young Turks and the Truth about the Holocaust at Adana in Asia Minor, During April, 1909*. London, 1913.

[72] Տե՛ս Allport G. W., *նշվ. աշխ*, էջ 42-50:

[73] Кураев А., "Как делают антисемитом" http://predanie.ru/kuraev-andrey-protodiakon/book/218537-kak-delayut-antisemitom/ (դիտված 26.I.2017 թ.):

գ. Քանանի հեթանոս ազգերի ոչնչացման խնդիրն աստվածաբանության մեջ

Այժմ աստվածաբանական լայն քննարկումների առարկա է դարձել հինկտակարանյան ժամանակագրության մեջ ուրույն մի դրվագ՝ Քանանի յոթ ազգերի արդեն իսկ բազում աստվածաբանների կողմից «ցեղասպանություն» եզրով որակված ոչնչացումը հրեաների կողմից: Բուն աստվածաբանական հարցն այստեղ այն է, թե ինչպես կարող է համատեղվել հինկտակարանյան 10 պատվիրանների կրոնը, որտեղ սահմանվում է «Մի՛ սպանիր»-ը, այժմյան Իսրայելի և Պաղեստինի տարածքում Ք. ա. ապրող տեղաբնիկների՝ պարբերաբար իրականացվող ոչնչացման հետ: Խնդրի մասին խոսվում է հենց Հին Կտակարանում, Քանանի ազգերի կոտորածները պատմականորեն ապացուցվում են հնագիտական պեղումներով (պահպանված սեպագրերով, հնագույն տաճարների ու կոթողների հետքերով և այլ փաստերով)[74]:

Քննարկումների տեղիք տվողն այստեղ այն է, որ Հին Կտակարանի համապատասխան հատվածներում Աստված ինքն է կոչ անում, հրամայում կոտորել այն ազգերին (Երկր. Օր. Ի, 16), որոնք ապրում էին այն երկրում, որը Աստված ուխտ էր արել տալ Աբրահամին (Ծննդ. ԺԵ, 18, Ելք Գ, 8): Հեսուի գրքում (Զ-Ժ գլուխներ) նկարագրվում են հրեաների կողմից կատարված 7 քաղաքների բնակչության զանգվածային սպանությունները. Հեսուն, ըստ հինկտակարանյան պատումի, ոչնչացնում է այն ամենը, ինչ շնչում էր (Հեսու Ժ, 40): Քանանի իսրայելյան նվաճումը սկսում է հետևյալ հատվածից. «Երբ քո Տեր Աստվածը քեզ տանի այն երկիրը, ուր պիտի մտնես այն ժառանգելու համար, և քո առջևից հալածի մեծ ու բազմաթիվ ազգերին՝ քետացիներին, գերգեսացիներին, ամորհացիներին, քանանացիներին, փերեզացիներին, խևացիներին ու հեբուսացիներին՝ քեզանից մեծ ու հզոր յոթը ազգերին, և քո Տեր Աստվածը նրանց մատնի քո ձեռքը, կհարվածե՛ս, կոչնչացնե՛ս նրանց: Նրանց հետ ուխտ չդնե՛ս և նրանց չխնայե՛ս: Նրանց հետ

[74] Տե՛ս Тантлевский И. Р., *История Израиля и Иудеи до разрушения Первого Храма*, СПБ., 2005, էջ 51, 80; Kiernan B., *Blood and Soil: A World History of Genocide and Extermination from Sparta to Darfur*. New Haven & London:Yale University Press, 2007, էջ 2-3:

խնամություն չհաստատե՛ս. քո աղջկան նրա որդուն չտա՛ս, նրա աղջկան քո որդու համար կին չառնե՛ս, որովհետև քո որդուն իմ դեմ կապստամբեցնեն. նա օտար աստվածներ կպաշտի, և Տերը սաստիկ կբարկանա ձեզ վրա ու անմիջապես կկոտորի ձեզ: Այսպես կվարվեք նրանց հետ. քարուքա՛նդ կանեք նրանց բագիները, ջարդուփշուր՛ կանեք նրանց արձանները, կկոտորե՛ք նրանց անտառները, կրակի՛ կմատնեք նրանց կուռքերը» (Երկր. Օր. Է, 1-2): Որպեսզի Իսրայելը կասկած չունենա ոչնչացման հրամանի առնչությամբ, Մովսեսը հետագայում նույնը կրկնում է ու պատճառաբանում. «....որպեսզի սրանք ձեզ չսովորեցնեն անել իրենց այն բոլոր գարշելի բաները, որ նրանք անում են իրենց աստվածների համար: Դրանով դուք մեղանչած կլինեք ձեր Տեր Աստծու առջև» (Երկր. Օր. Ի, 16): Թե՛ առաջին, թե՛ երկրորդ հատվածներում ազգերի կոտորման պատճառաբանությունը մեկն է. եթե նրանք կենդանի մնան, Իսրայելին դարձնելու էին իրենց կրոնին, կրոն, որը հայտնի էր իր մարդկային զոհաբերություններով ու դաժանություններով: Եվ Իսրայելն էլ սուրբ չէր, որ Աստված որոշեց քանանացիներին նրանց ձեռքը հանձնել, այլ, ինչպես երևում է Երկր. Օր. Թ, 4-ից՝ «Երբ քո Տեր Աստվածը քո առջև սպանի նրանց, քո մտքում մի ասա, թե՝ «Իմ արդար լինելու համար է, որ Տերը ինձ բերել է այստեղ, որպեսզի ժառանգեմ այս երկիրը»: Ոչ թե քո արդար լինելու, այլ այդ ազգերի ամբարիշտ լինելու համար է, որ քո Տեր Աստվածը կոտորում է նրանց քո աչքի առջև: Ոչ թե քո արդար լինելու և քո հոգու մաքուր լինելու համար ես մտնում նրանց երկիրը....., այլ այդ ազգերի անօրենության համար է քո Տեր Աստվածը վերացնում նրանց քո առջևից....»:

Ինչպե՞ս է այս ամենը համերաշխում նորկտակարանյան Աստծու կերպարի հետ, ինչպե՞ս է Քրիստոսի միջոցով հայտնված Աստվածը, որ Սեր է կոչվում, հրամայում կոտորել նրանց, ում Ինքն էր ստեղծել:

Քանանացիների կոտորածը երկրագործների ու անասնապահների կացութակերպերի պայքարի հետևանք է համարում ցեղասպանության մասնագետ Բեն Կիերնանը: Այս խնդրին նվիրված իր գրքերից մեկում նա հասնում է ընդհուպ մինչև Կայենի ու Աբելի ժամանակներն ու

աշխատանքի սոցիալական բաժանումը համարում նաև Քանանի հայտնի ճակատագրի նախապայմանը: Չուտ աստվածաբանական խնդիրներ հեղինակը չի շոշափում, բայց նրա նշված գործը հետաքրքիր զուգահեռներ է գտնում առաջին մարդասպանության հետ. նա միմյանց ի սկզբանե ներհակ է համարում անասնապահներին ու երկրագործներին. «Օրենքի թիրախներից էին ամորհացիները, որոնց շումերները կոչում էին «անասնապահ ժողովուրդ», որոնք «չէին աճեցնում սերմ»: Հիմնականում քաղաքաբնակ Քանանի երկրում հրեաների հայտնվելը իր հետ բերեց երկրագործական սանդղակավորում և նստակեցություն ....»[75]: Հրեաները և՛ քոչվոր էին, և՛ անասնապահ, ուստի նրանց համար անընկալելի էր երկրագործի նստակյաց կենսակերպը, հետևաբար նաև՝ նրանց երկրագործական պաշտամունքը, հողի ֆետիշացման հետ կապված ծիսական արարողություններն ու աշխարհայացքը:

Առանց խորամուխլինելու կրոնապատմական պատճառների մեջ՝ Բ. Կիերնանը զարմանքով մատնաշում է մի հաստատուն պատմական փաստ. թե՛ հնագույն ժամանակներում, թե՛ միջնադարյան Եվրոպայում հողագործների նկատմամբ ձևավորվել էր ընդգծված բացասական վերաբերմունք, նրանց համարում էին մոգությամբ հաց վաստակողներ և «մայր հողի» վտանգավոր ու հիմնականում դիվապաշտական ծեսեր կատարողներ. «Հողագործությամբ զբաղվելը հարաբերականորեն գաղափարական հռչակ գտավ միայն ժամանակակից շրջանում»[76],– գրում է Բ. Կիերնանը: Նա իր գրքի ներածականում հակիրճ ձևով սահմանում է բոլոր ժամանակներում ցեղասպանությունների ընդհանուր պատճառը՝ որպես Աբելի ու Կայենի, հողագործի ու անասնապահի, քաղաքաբնակի ու գյուղաբնակի հարատև հակամարտություն: Ըստ հեղինակի՝ «ժամանակակից ցեղասպանությունների գաղափարական գլխավոր գծերը ծագում են, մի կողմից, կրոնական կամ ռասայական ատելության հետ տարածքային էքսպանսիայի միախառնումից և, մյուս կողմից, անտիկ պաշտամունքի ու հողագործության համախմբումից»[77]:

[75] Kiernan B., *Blood and Soil...*, էջ 2:
[76] *Նույն տեղում*, էջ 3:
[77] *Նույն տեղում*, էջ 4:

Ահա այս հարցերը վերջին երկու տասնամյակում գրավում են ինչպես աստվածաբանների ու կրոնագետների, այնպես էլ ցեղասպանության մասնագետների ուշադրությունը:

դ. Կաթոլիկ և բողոքական միսիոներների աստվածաբանական խորհրդածությունները հայերի կոտորածների մասին

Միսիոներները, որոնք Եղեռնի ականատեսն են եղել, աչքի են ընկնում համամարդկային ճգնաժամի հատուկ ընկալմամբ՝ այդ երևույթը կապելով առաջին հերթին կրոնական և բարոյական անկման հետ, հաճախ՝ ապոկալիպտիկ (վախճանաբանական) սպասումներով: Նրանց օրագրերում կարելի է գտնել բազմաթիվ խորհրդածություններ՝ համեմված յուրօրինակ պատմափիլիսոփայությամբ, դեպքերը կապելով քրիստոնեական ընդհանուր վախճանաբանությանը հատուկ ուսմունքների հետ: Հաճախ, եթե անգամ միսիոները կամ միսիոներուհին իր դավանաբանական պատկանելության մասին ոչինչ չի հաղորդում, կարելի է դրա մասին պատկերացում կազմել նրա յուրահատուկ աստվածաբանական դիրքորոշումից, որն արտացոլվում է օրագրի էջերում: Ականատես լինելով Հայոց ցեղասպանության վայրագություններին՝ նրանցից շատերը համոզված են, որ հայերը նահատակվում են քրիստոնյա լինելու պատճառով, իսկ դեպքերը հաճախ ընկալվում են որպես աշխարհի վախճանի նշաններից մեկը: Նրանց հուշերում մեջբերվում են Աստվածաշնչից համարներ՝ անելով համեմատություններ հայերի կրած տառապանքների հետ (Հայտն. ԺԲ, 11, Հուդիթ Ը, 15, Առակ. Գ, 12, Սաղմ. ՃԻԵ, 5)[78], ուշադրություն են դարձնում ցեղասպանություն իրագործողների կողմից սպանություններին ծիսական երանգավորում հաղորդելու դեպքերին, ընդգծում կրոնափոխ չլինելու հայերի հաստատակամությունը: Այս իմաստով աբբաժյուլ Շապեռոնի, Մարիա Յակոբսենի, Ալմա Յոհաննսոնի, Բոդիլ Բյոռնի, Ռութ Փարմլիի, Հենրի

[78] Չոմմեր Է., *Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին*, Երևան, 2002, էջ 9, 75: Տե՛ս օրինակ Մարիա Յակոբսենի օրագրության դանիերեն բնագիրը. Ճեյքըպսըն (Եագոպսըն) Մ., *նշվ. աշխ*, էջ 747-748:

Ռիգգի, Ջեյմս Բարթոնի և բազում այլ միսիոներների վկայություններն անգերագնահատելի են:

ե. Զանգվածային սպանությունների իմաստաբանական (սեմանտիկ), կապը կրոնական նշանաբանության հետ

Այս տեսանկյունից հետազոտության նյութ կարող են դառնալ սպանության վայրերը (եկեղեցի, անապատ, գետ, դաշտ, բնակարան և այլն), ձևերը (բնակավայրից տեղահանվելը, մահվան շարժակազմը, կտտանքները, խաչելությունները, ծիսական սպանությունները, բռնաբարությունները և այլն)՝ որպես նշաններ և այդ ամենի վերաիմաստավորումը՝ իբրև մարտիրոսություն:

զ. Եղեռնի զոհերի սրբադասման թեման

Հոլոքոստի ժամանակ սպանված հրեաներն ուղղադավան հուդայական հեղինակների կողմից *«կեդոշիմ»*-ի (եբր. «սրբեր»)՝ հանուն հավատի մահացածների, հասկացության մեջ չեն դասվում[79]. Հոլոքոստի ընթացքում մահացան հրեաներ՝ լինելով թե՛ աթեիստներ, թե՛ հուդայականներ, թե՛ քրիստոնյաներ: Սակայն Մեծ եղեռնի ընթացքում շատեր որպես քրիստոնյա մարտիրոսվեցին՝ մերժելով կրոնափոխությունը, որն առաջարկվում էր հայերին՝ որպես մահվանն այլընտրանք: Ե՛վ անցյալում, և՛ ներկայում ազգային լայնորեն տարածված մտայնության համաձայն՝ Եղեռնի ընթացքում հայերը սպանվում էին, քանի որ քրիստոնյա էին[80]:

Էթնիկ ինքնության հարցը հայերիս համար արդեն մեկ դար է, ինչ ուղիղ կապ ունի Եղեռնի հետ[81]: Եղեռնի հայ մարտիրոսների

---

[79] Այս տեսակետը կիսում են նաև սիոնիզմը որպես հրեա ազգի վրա «ծանրացած մեղք» ընկալող ուլտրաօրթոդոքս ռաբբիները: Մանրամասն տե՛ս Пилкингтон С. М., *Иудаизм*, пер с. англ. Богдановой Е. Г., Москва, 2001, էջ 346:

[80] Այս մտայնությունն անգամ արտահայտված է վերապրողների երգերում: Դրամի օրինակ է հետևյալ երգը, որի բնօրինակ տարբերակը երգվել է թուրքերենով.
«Մշուշն է պատել Դեր Զորի անապատին,
Վա՛յ, մայրիկ, վա՛յ, մեր վիճակն է ողբալի.
Մարդիկ, կանայք երյունով ներկվեցին,
Հայերն են մեռնում հանուն հավատքի» (թ. 464՝ Սվազլյան Վ., *նշվ. աշխ*, էջ 589):

[81] Այս մասին առավել մանրամասն տե՛ս Սահակյան Ա., «1915 թ. Հայոց ցեղասպանությունը և հայ մանկանց դաստիարակության խնդիրները» (հավելված),

քրիստոնեական սխրանքի շուրջ պետք է կատարվեն աստվածաբանական մեկնաբանություններ՝ մանրակրկիտ աղբյուրագիտական վերլուծություններով, որպեսզի ձևավորվի գիտական և ստեղծագործական մտավորականության լիարժեք վերաբերմունքը՝ հանրային պահանջով Եկեղեցու կողմից Եղեռնի սրբադասված զոհերի նկատմամբ:

Է. Մեծ եղեռնի աստվածաբանական վերլուծությունները

Եթե «ցեղասպանությունը» իրավական լեզվով հանցանքների հանցանքն է, ապա աստվածաբանության լեզվով այն «մեղքերի մեղք» կարելի է կոչել, քանի որ ներառում է բոլոր մեղքերը և դրանց հետևանքները: Հայոց ցեղասպանությունը աստվածաբանության դիտանկյունից փորձել են ներկայացնել մի քանի աստվածաբաններ: Հայր Համազասպ Գլընճյանն իր աստվածաբանական կարծիքն է արտահայտել Գաբրիել Վահանյանի «Աստծո մահվան» տեսության շուրջ[82]: Հայր Լևոն Զեքիյանն ունի մենագրություն՝ նվիրված հայ ինքնությանը,[83] և Հայոց ցեղասպանության բարոյագիտական և աստվածաբանական հարցերին առնչվող հոդվածներ[84]: Վիգեն Գուրոյանը՝ Վիրջինիայի համալսարանի աստվածաբանության դասախոս. դիտարկում է Եղեռն–Եկեղեցի–ժողովուրդ զուգահեռները[85], «Ինչպե՞ս մենք պետք է հիշենք» հոդվածների ժողովածուի մեջ խոսում է ազգի կրած հոգեբանական ու հոգևոր ճգնաժամերի շուրջ, անցում կատարում հայոց պատմության փիլիսոփայությանը, ինչպես և Սփյուռքում ցեղասպանությունը

«Հայոց» ՀՀ Լուսավորության Նախարարության պաշտոնաթերթ, թիվ 5, ապրիլի 25, 1995 թ.:

[82] Տե՛ս Գլընճեան Հ. Համազասպ, «Աստուծոյ եզական յուղարկաւորը», *«Բազմավէպ»* հայագիտական-բանասիրական-գրական հանդես, թիւ 1-2, Վենետիկ – Ս. Ղազար, 1975, էջ 202-223:

[83] Տե՛ս Զէքիեան Հ. Պօղոս-Լեւոն, *Հոգիի եւ ինքնութեան հետքերով*, Երեւան, 2000:

[84] Տե՛ս հետևյալ հոդվածները՝ Zekiyan B. L., "Metz yeghern, il genocidio armeno, Paradigma di sradicamento e di esilio irreversibile," *Nel Suo Nome. Conflitti, riconoscimento, convivenza delle religioni,* EDB, Bologna 2005, էջ 213-224; Zekiyan B. L., "Riflessioni sulla trasposizione semantica del concetto di "giusto" nel contesto del "Metz Yeghern" armeno," *Sì può sempre dire un sì o un no: I Giusti contro i Genocidi degli Armeni e degli Ebrei,* Convegno Internazionale, Padova, 30 novembre-2 dicembre 2000, էջ 216-243; Zekiyan B. L., "Reflections on Genocide: The Armenian Case: A Radical Negativity and Polyvalent Dynamics," *Annali di Ca' Foscari,* XXXVII, 3, 1998 (Serie orientale 29), էջ 223-241:

[85] Տե՛ս Guroian V., "Armenian Genocide and Christian Existence", *CrossCurrents*, Vol. 41, No. 3, 1991, էջ 322-342:

հիշելու և ոգեկոչելու երևույթին[86]: Գրական և փիլիսոփայական զուգահեռներով, ժամանակակից խնդիրների դիտարկմամբ հոդված է տպագրել Վենետիկի Մխիթարյան միաբան Հայր Գրիգորիս Սիրանյանը[87]: Եղեռնի մասին խոսել է նաև անգլիկան աստվածաբան Ֆլորա Քեշգեգյանը՝ դիտարկելով տառապանքի, բռնության ու պատերազմների ժամանակաշրջանում Եկեղեցու նպատակն ու պարտականությունները, որոնց մեջ առաջնային է դիտարկում հիշելը՝ վերափոխվելուն միտված «փրկող հիշողությունը»[88]:

1.3. Կրոնի հիմնահարցը Մեծ եղեռնի ուսումնասիրություններում

Չնայած Հայոց ցեղասպանության ընթացքում կրոնի դերակատարությունը պատշաճ հետազոտման չի ենթարկվել, կրոնի դերակատարության այս կամ այն հիմնահարցին անդրադարձել են մի շարք մասնագետներ՝ տարբեր գիտական ուղղությունների ներկայացուցիչներ: Այդ բաց դաշտը կարոտ է կրոնագետ-եղեռնագետների ուսումնասիրմանը, որպեսզի խնդրին ցուցաբերվի համակողմանի մոտեցում: Կրոնագետների կողմից առանձին ուշադրության առարկա է եղել կրոն-բռնություն ընդհանուր հիմնախնդիրը, որտեղ դիտարկվել են կրոնները և դրանց այն գծերն ու բնորոշիչները, որոնք հիմք են դիտվել տարատեսակ բռնությունների տարբեր ժամանակաշրջաններում, և առաջարկվել են տարբեր տեսություններ ու մեկնաբանություններ[89]:

---

[86] Տե՛ս Guroian V., *How Shall We Remember? Reflections on the Armenian Genocide and Church Faith.* (ԲԱՆ ԵՒ ԳԻՐ ՄԱՏԵՆԱԾԱՐ, ԹԻՒ 3), Montreal, 2005, տե՛ս նույնը նաև՝ Guroian V., "How shall we remember?" http://web.archive.org/web/20050220164111/http:/sain.org/WINDOW/Genoci3.txt կայքում (դիտված 26.XI.2017 թ.):

[87] Տե՛ս Siranian R., "Dov'era Dio? Una lettura spirituale del genocidio armeno", *Il Regno*, n. 4, 2007, էջ 121-137:

[88] Տե՛ս Keshgegian F. A., *Redeeming Memories: A Theology Of Healing And Transformation.* Nashville: Abingdon Press, 2000 մենագրությունը:

[89] Տե՛ս օրինակ հետևյալ ուսումնասիրությունները. Kimball Ch., *When Religion Becomes Evil: Five Warning Signs.* HarperCollins Publishers, 2002 գիրքը, որը թվարկում է 5 քայլերը, երբ կրոնը վերածվում է չարիքի՝ ա. Բացարձակ ճշմարտացիության պնդումներ, բ. Կույր հնազանդություն, գ. Պատեհ առիթի ընտրություն, դ. Նպատակը արդարացնում է միջոցները, ե. Սրբազան պատերազմի հայտարարություն: Ինչպես նաև շահեկան են հանրահայտ կաթոլիկ աստվածաբան և միջկրոնական հարցերի մասնագետ Հանս Քյունգի հետևյալ հոդվածը. Küng H., "Religion, violence and "holy wars"," *International Review of the Red Cross*, Volume 87, No. 858, June 2005, pp. 253-268, միջգիտակարգային հայտնի տեսաբան Ռենե Ժիրարի հետևյալ գիրքը. Girard R., *Violence and the Sacred.* New York: Continuum, 2005, կրոնի փիլիսոփայության լույսի ներքո գրված Roth J. K., "Easy to

Ստորև մեջբերված հեղինակների ուսումնասիրություններն ու մոտեցումներն ընտրվել են հետևյալ սկզբունքով. քանի որ կրոնի հիմնահարցն առհասարակ չուսումնասիրված դաշտ է Հայոց ցեղասպանության պարագայում, ապա մենք առանձնացրել ենք այն հեղինակներին՝ առանց գիտակարգային տարանջատման, ովքեր առհասարակ իրենց աշխատություններում կամ հոդվածներում որևէ կերպանդրադարձել են այդ հարցին: Կրոնի դերակատարումը մերժող ու հիմնավորումներ բերող հեղինակներին ևս կցանկանայինք անդրադառնալ, սակայն ներկա ուսումնասիրության ընթացքում բառացիորեն մերժող ու դրան գիտական գրավոր հիմնավորում տված ցեղասպանության որևէ մասնագետի՝ ցանկացած գիտակարգի ներկայացուցչի, չհայտնաբերեցինք, քանի որ իրենք իրենց գործերում կենտրոնանում են Հայոց ցեղասպանության մի որոշակի կողմի վրա ու կրոնի հիմնահարցին պարզապես չեն անդրադառնում: Մեր դիտարկմամբ ցեղասպանության տարբեր մասնագետների հետ բանավոր շփումից միայն հնարավոր եղավ եզրակացնել, որ ոլորտն իրենց համար մութ է և նոր, երբեմն՝ զարմացնող ու ավելի հաճախ՝ անհասկանալի: Առաջարկներ են հնչել այն ուսումնասիրելու ու շրջանառելու, հակադիր վերաբերմունք ևս եղել է, երբ հնչել են պարզապես դիմադարձ կարծիքներ կրոնների բախումը, կրոնական տարբերությունը որպես գործոն կամ գործիք դիտարկելու շուրջ: Սակայն ցեղասպանության մասնագետների ճնշող մեծամասնությունը պատմագետներ ու քաղաքագետներ են, ավելի քիչ են մարդաբանները, փիլիսոփաները, ընկերաբանները (սոցիոլոգները) և հոգեբանները, իսկ կրոնագետները չունեն հետևողական կոնցեպտուալ ներդրում Հայոց ցեղասպանության կրոնագիտական ուսումնասիրության մեջ[90]:

---

remember?: genocide and the philosophy of religion," *International Journal for Philosophy of Religion*, Vol. 68, No. 1/3, December 2010, pp. 31-42 հոդվածը և կրոնաէթիկական հարցեր քննարկող հետևյալ ժողովածուն՝ *The Religious Responses to Mass Atrocity: Interdisciplinary Perspectives*, Edited by Thomas Brudholm and Thomas Cushman, Cambridge University Press, 2009.

[90] Այս իմաստով պատկերն այլ է Հոլոքոստի պարագայում, բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել՝ հիմնականում հրեա ուսումնասիրողների, այդ թվում՝ ռաբբիների կողմից, հակասեմականություն–քրիստոնեություն–Հոլոքոստ կապերը դիտարկելով: Որոշ ուսումնասիրողներ կրոնական տարբերության գործոնը կարևոր են համարում օրինակ՝ Բոսնիայի կոտորածների, Կամբոջայի ցեղասպանության ժամանակ:

Ուստի հարկ համարեցինք ներկայացնել և մեկնաբանել ցեղասպանության ոլորտի այն մասնագետների մտքերը, ովքեր կա՛մ հակիրճ վերլուծություններ են նվիրել նշված թեմային, կա՛մ արտահայտել են իրենց ընդհանուր դիրքորոշումը կրոն-ցեղասպանություն խնդրի մասին:

Ցեղասպանություններն ուսումնասիրողների շարքում առաջինը հենց «գենոցիդ»՝ «ցեղասպանություն», եզրույթի հեղինակն է՝ հրեա փիլիսոփա, իրավագետ **Ռաֆայել Լեմկինը**: Նա Հայոց ցեղասպանության մանրամասները քննելիս **ցեղասպանական մտադրության (անգլ. intent) պահից իսկ տեսնում է կրոնական տարբերությունը՝ առավել ստույգ ասած՝ հայերի քրիստոնյա լինելը՝ որպես դրդապատճառ**: Սկսելով հայերի դարձից քրիստոնեությանը՝ երկար պատմական էքսկուրսով նա հասնում է մինչև Հայոց ցեղասպանության շրջանին: Առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հայերի՝ մահմեդական լծից կրած հալածանքներին. «Մահմեդականության պատմությունը քրիստոնեության դեմ ուղղված անհողդողդ պատերազմի պատմություն է, և հայերը կոտորվել ու հալածվել են սկսած այն պահից, երբ ընդունեցին քրիստոնեություն: 1890-ականների կոտորածները բնույթով կրոնական էին...»[91]: Հայոց ցեղասպանության ծրագրի վերաբերյալ վերնագիրը նա սկսում է հետևյալ մեկնակետից. «Հայերի՝ մահմեդական կրոնի սրտում գոյակցող հզոր քրիստոնեական տարրի հալածանքն անխուսափելի էր, քանի որ Ղուրանի հիմնարար սկզբունքները Քրիստոսի ուսմունքի ուղիղ հակադրությունն էին»[92]: Նա նույնիսկ առանձնացնում է «անհավատների» վերաբերյալ մի շարք հրահանգներ, այդ թվում՝ ոչնչացնելու կամ պատժելու ուղիղ հրաման պարունակող մի շարք *այաթներ* Ղուրանի հետևյալ *սուրահներից*՝ 8.57 («Ահա՛ գազաններից չար են Աստուծոյ առաջին նրանք, որ անհաւատներ են եւ չեն հաւատում»), 9.29 («Պատերազմեցէ՛ք նրանց հետ, որ չեն հաւատում Աստուծուն եւ ոչ էլ վերջին օրւան եւ պիղծ չեն համարում Աստուծոյ եւ նրա մարգարէի պիղծ հրատարակածը ...»), 9.74 («Ո՛վ մարգարէ, կռի՛ւ արա

[91] *Raphael Lemkin's Dossier on the Armenian Genocide*..., p. 75.
[92] *Նույն տեղում*, էջ 73:

անհաւատների եւ կեղծաւորների դէմ եւ խի՛ստ եղիր նրանց դէմ. եւ նրանց բնակարանը դժոխքն է»), 9.124 («Ո՛վ հաւատացեալներ, պատերազմեցէ՛ք այն անհաւատների հետ, որոնք ձեզ դրացի են. թող ձեր խստութիւնը տեսնեն, որ հասկանան թէ Աստուած երկիւղածների հետ է»), 47.4 («Ուրեմն երբ դուք հանդիպէք անհաւատներին, կտրեցէ՛ք նրանց վիզերը մինչեւ նրանց ջարդէք, գերեալների կապերը պնդացրէ՛ք»)[93]:

Բերելով ականատեսների մի շարք վկայութիւններ՝ Լեմկինը համոզված հաստատում է, որ քրիստոնեական հավատի անձինք տեղ չունեին Օսմանյան կայսրությունում[94]: Սակայն Ռաֆայել Լեմկինը ցեղասպանական գործողությունների միակ պատասխանատվությունը չի վերագրում քաղաքական վերնախավին և, նշելով, որ չնայած Հայոց ցեղասպանությունը քաղաքական դրդապատճառներից սնված որոշում էր՝ ստեղծելու երկար փայփայված միացյալ թուրքական պետություն, այդուհանդերձ, «...մարդկանց գրգռում էին կատարելու ոճրագործություններ՝ «սրբազան պատերազմի»՝ «ջիհադի», մղմամբ»[95]: Լեմկինն այս միտքն արտահայտում է իբրև որոշակի անհամաձայնություն Ջեյմս Բրայսի այն դիրքորոշմանը, որ Հայոց ցեղասպանությունը կրոնական ֆանատիզմի հետևանք չէր: Իր ինքնակենսագրականում Ռ. Լեմկինի մոտեցումը հարցին առավել խտսուն է. «Թուրքիայում ավելի քան 1.2 միլիոն հայեր սպանվեցին միայն այն պատճառով, որ քրիստոնյա էին»[96]:

Ցեղասպանության դասական մասնագետներից **Լեո Կուպերը** ցեղասպանությունները դասակարգում է տարբեր չափումներով: Իր կողմից տարբերակված խմբերում ռասայական, էթնիկական, գաղութացման և ապագաղութացման, հավաքչությամբ զբաղվող, նախաինդուստրիալ և բյուրոկրատական մեխանիզմով կատարված

---

[93] Գրքի անգլերեն տեքստում սուրահների այաթները երբեմն տարբերվում են Ղուրանի հայերեն թարգմանություններից: Մենք այս և մյուս համարներն ատենախոսության մեջ դուրս ենք գրել՝ համաձայն Ղուրանի հետևյալ հայերեն տպագրության. *Ղուրան*, թարգմ. արաբ. հայ.՝ Աբր. Ամիրխանյանց, Վառնա, 1909:

[94] Տե՛ս *նույն տեղում*, էջ 77:

[95] *Նույն տեղում*, էջ 78:

[96] *Totally Unofficial: The Autobiography of Raphael Lemkin*, edited by Donna-Lee Frieze. New Haven & London: Yale University Press, p. 19.

ցեղասպանությունների շարքում որպես առաջին գործոն թվարկվածների մեջ նշում է կրոնականը[97]:

Լեո Կուպերը առանձին հոդվածով տեսական քննության է ենթարկել սրբազան տեքստերի պոտենցիալը ցեղասպանությունների իրագործման ուղղությամբ[98]: Այդ հոդվածում նա գրում է, որ մոնոթեիստական կրոնները՝ այն կրոնները, որ ունեն հավատքային համակարգ միակ Աստծու հանդեպ և հայտնութենական են, ունեն ցեղասպանական պոտենցիալ: Այսինքն՝ կարող ենք եզրակացնել, որ հայտնության ընկալումը, որից բխում է սեփական կրոնական համակարգը միակ ճշմարիտը համարելը, պարունակում է հնարավոր բռնություն՝ մյուսների ճշմարտացիության ընկալման հանդեպ, հետևաբար՝ ողջ կրոնական համակարգի հանդեպ: Սակայն երեք միաստվածային կրոնների՝ հուդայականության, քրիստոնեության և իսլամի սրբազան տեքստերը, ըստ Կուպերի, անպայման չէ, որ աստվածաբանական հիմք են տալիս ցեղասպանության համար: Կուպերը, օրինակ՝ քրիստոնեության մեջ իսպառ բացակաե դիտում այլոց կոտորելու սուրբգրային օրինականացումը[99]: Իսլամական սրբազան տեքստերում, ըստ նրա, կա այդ տարրի առկայությունը՝ աստվածաբանական մի քանի կռվաններով միասին վերցրած՝ իսլամը՝ որպես բացարձակ, վերջնական և կատարյալ հայտնություն դիտելով, իսլամադավանի կողմից իսլամ տարածելու առաքելությամբ և բոլոր գործոններից վեր՝ ջիհադով՝ որպես այդ նպատակին առաջնորդող միջոց[100]: Նրա համոզմամբ հուդայականությունը ևս զերծ չէ այդ պոտենցիալից. հուդայականությունն ունի խորհրդապաշտական ընկալում, օրինակ՝ ամաղեկացիներին կոտորելու հարցում, և այն փնտրել է ու գտել կրոնի և Աստծու թշնամիներ՝ հավաքական անվամբ՝ «ամաղեկացիներ», տարբեր վայրերում և ժամանակաշրջաններում[101], որոնց կոտորելու պատվիրանն արձանագրված է հենց Թանախում, որը նույն Հին Կտակարանն է:

Կրոնական տարբերությունը նա համարում է ցեղասպանական ծրագրի շարժիչ ուժ. օրինակ՝ կրոնական հեղինակություն

[97] Տե՛ս Kuper L., *Genocide: It's Political Use …*, էջ 9:
[98] Տե՛ս Kuper L., "Theological Warrants for Genocide…", էջ 351-379:
[99] Տե՛ս *նույն տեղում*, էջ 372:
[100] Տե՛ս *նույն տեղում*:
[101] Տե՛ս *նույն տեղում*, էջ 373:

վայելող անձը կարող է հրահրել ցեղասպանություն՝ անգամ այն դեպքում, երբ ցեղասպանությունը հակասում է նրանց աստվածաբանությանը. մղիչ ուժը կրոնական եռանդը կամ ջանքն է, որը շրջանառության մեջ է դրվում՝ ցեղասպանություն իրագործելու լիազորության համար[102]: Նա կարծում է, որ գաղափարական ու կրոնական պատերազմները բնորոշ են ժամանակակից աշխարհին[103], և չնայած կրոնական պատերազմը լայնորեն տարածված երևույթ չէ, **կրոնական տարբերությունը XX դարի մի շարք ցեղասպանությունների հիմքն է, որոնց մեջ դասում է Հայոց ցեղասպանությունը, Ուկրաինայում և Հնդկաստանում տեղի ունեցած կրոնական բախումները՝ ցեղասպանության ելքով, ինչպես նաև հրեաների ցեղասպանությունը նացիստական Գերմանիայում**[104]:

Խոսելով կրոնական տարբերության հիմքի վրա առաջացած հակադրություններից՝ Կուպերն ասում է, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամները կրոնական մոլեռանդներ չէին, բայց, այդուհանդերձ, նրանց այն հայտարարությունը, որ իսլամադավանները պետք է ներգրավվեին սրբազան պատերազմի մեջ՝ ի պաշտպանություն իսլամի, հաշվարկված էր՝ նպաստելու կրոնական կրքերի բորբոքմանը, ինչը և տեղի ունեցավ: Եվ թուրքերի մասնակցությունը հայերի տեղահանություններին, բռնություններին ու սպանություններին, եկեղեցիների պղծմանը, քրիստոնյա հոգևոր սպասավորների հանդեպ գործված բռնությունները, բռնի կրոնափոխությունները՝ այդ բոլորը միասին, մատնացույց են անում հնուց եկած կրոնական ատելության առկայությունը: Համաշխարհային պատերազմին միանալու երիտթուրքերի որոշումը թելադրված էր Օսմանյան կայսրության սահմանները պահպանելու, այն փլուզումից փրկելու հրամայականով, և հայերին հայտարարելով իսլամական օրենքը դրժած, օրենքից դուրս հանրույթ՝ օրինական կռվան տվեցին դեռևս

[102] Տե՛ս Kuper L., *Genocide: It's Political Use…*, էջ 12:
[103] Տե՛ս *նույն տեղում*, էջ 14:
[104] Տե՛ս *նույն տեղում*, էջ 16:

կրոնական օրենքով շարժվողներին իրականացնելու ցեղասպանություն[105]:

Կրոնի գործոնի ահռելի դերակատարումը Հայոց ցեղասպանության ընթացքում ընդունում և վերլուծում է անվանի եղեռնագետ **Վահագն Դադրյանը**: Նա համարում է, որ Օսմանյան կայսրության տարածքում ազգամիջյան հակամարտությունների բնույթը պարզելու անհրաժեշտ պայման է նախ՝ իսլամի դերակատարության ուսումնասիրությունը: Ըստ նրա՝ իսլամը հանդես էր գալիս ոչ միայն որպես անվերջանալի ազգամիջյան հակամարտությունների աղբյուր և՛ Բալկաններում, և՛ Արևմտյան Հայաստանում, այլև այն Արևելյան հարցն ու Հայկական հարցը միմյանց կապող օղակն էր, որի շնորհիվ ազգամիջյան հակամարտություններ էին ծագում[106]:

Դադրյանը կոնֆլիկտների հետ իսլամի առնչությունը պայմանավորում է նրանով, որ այն իր դրույթները տարածում է ազգի սոցիալական և քաղաքական ոլորտների վրա ևս. իսլամի ինքնընկալումը որպես գերակա և բացառիկ կրոն էական է՝ բացատրելու համար Օսմանյան Թուրքիայի մուսուլմանական համակարգը և դրա գերիշխանության հարցերն այլ կրոնների ներկայացուցիչների հանդեպ: Դադրյանն ասում է, որ Օսմանյան կրոնապետությամբ պայմանավորված պետական համակարգը նաև Օսմանյան օրենսդրական համակարգի հիմքն էր, և ամեն փոխհարաբերություն պետք է կարգավորվեր կամ պայմանավորվեր այդ օրենսդրական յուրահատկություններին համապատասխան: Էական գործոն է Օսմանյան կայսրության բնակչության՝ իսլամադավանի և ոչ իսլամադավանի բաժանումը՝ վերջինիս համար ապահովելով կախյալ վիճակ, սոցիալական և քաղաքական կարողությունների սահմանափակումներ: Դադրյանը ներածական մասից հետո անդրադառնում է այն փաստին, որ ոչ իսլամադավանի իրավական վիճակը և սոցիալական դիրքը չփոխվեցին երիտթուրքերի կառավարության ժամանակ. նրանք վերահաստատելով պահեցին ոչ իսլամադավանների հանդեպ իրենց «իշխող ազգ» (թուրք. millet-i hakime) դրույթը՝ խոստանալով ազատություն, արդարություն և

[105] Տե՛ս *նույն տեղում*, էջ 118:
[106] Տե՛ս Dadrian V. N., *The History of the Armenian Genocide…*, էջ 3:

հավասարություն, բայց փաստացի գերակայության ու ստորակարգության դիխտոմիան՝ երկատումը, ոչ միայն պահպանվեց, այլև հատուկ գաղափարախոսական լծակներով ընդգծվեց երիտթուրքական հրապարակախոսական օրգաններում, որոնք հայտարարում էին, որ թուրք ազգը է՛ և կմնա՛ Թուրքիայի իշխող ազգը[107]:

Վ. Դադրյանը համամիտ է ժամանակի աղբյուրների, ինչպես նաև ուսումնասիրողների այն գերակայող կարծիքի հետ, որ երիտթուրքերն անկրոն մարդիկ էին կամ աթեիստ, սակայն նրանք ընդունում էին իսլամի համոզիչ, ազդու դերակատարությունը երկրում և վճռում նրա շատ դրույթներ ենթարկել իրենց նպատակներին՝ լուծելու ներպետական ազգամիջյան կոնֆլիկտները: Եվ որպեսզի կողմնակիցների ստվար բանակ ունենային, ստիպված թթիհադականության մեջ ներդրեցին իսլամականություն, քանի որ Օսմանյան կայսրությունում կրոնը պետական համակարգից չէր կարող անկախ ընկալվել: Այդ պատճառով մինչև Օսմանյան կայսրության վերջին օրերը պետական գործերն իրականացվեցին իսլամի կանոնական իրավունքի ոգուն համահունչ[108]:

Վ. Դադրյանը եզրահանգում է, որ **Հայոց ցեղասպանությունը պետք է դիտարկել թուրք-հայկական կոնֆլիկտի համատեքստում, որի հիմքում ընկած և հետագա բորբոքմանը նպաստող կրոնական տարբերությունը որոշիչ էր**[109]: Արհամարհանքը, որ մուսուլման թուրքերը տածում էին *ռայա-գյաուր* հայերի նկատմամբ, ըստ նրա՝ բավական էր, որպեսզի դուրս պոռթկար ատելության ու թշնամության տեսքով, երբ ի հայտ եկավ Հայկական հարցը, որն ազգերի հավասարության, այդ թվում՝ իրավահավասարության դիրքերից էր խոսում: Դադրյանն ասում է, որ ո՛չ իսլամի կրոնապետական կանոնները, ո՛չ էլ կրոնավորության շահերը չէին կարող թույլ տալ այդպիսի հավասարություն. սուր կողմերը հետզհետե էլ ավելի սրվեցին, և թուրք-հայկական կոնֆլիկտը զարգացում ապրեց՝ չթողնելով հետագա լուծման

[107] Տե՛ս *նույն տեղում*, էջ 5:
[108] Տե՛ս *նույն տեղում*, էջ 5, 6:
[109] Տե՛ս *նույն տեղում*, էջ 377:

հնարավորություններ[110]: Անդրադառնալով իսլամի սուրբ գրքին՝ նշում է, որ իսլամի դոգմատիկան ու ընկալումները՝ Ղուրանի պատգամները[111], որոնք հաճախ իրարամերժ էին, մեկը մյուսին անհամապատասխան, հնարավորություն էին ստեղծում ցանկացած աշխարհիկ կամ հոգևոր առաջնորդի ընտրելու, անջատելու կամ ուռճացնելու իսլամի կանոնական իրավունքի դրույթները և հատկապես կենտրոնանալու այն տեղիների վրա, որոնք ուղղված էին ոչ մուսուլմանների դեմ: Արդյունքում իսլամի կանխամտածված ու բացասական մանիպուլյացիան, շահարկումը թուրք–հայկական կոնֆլիկտը դարձրեց պայթունավտանգ ու ի վերջո մահաբեր՝ հայերի համար[112]:

Մշակութային մարդաբան **Լեոնարդ Գլիկի՝** Հայոց ցեղասպանության ընթացքում կրոնի գործոնին նվիրված անդրադարձը հակիրճ է, սակայն ուշագրավ: Լ. Գլիկը ուղենշող ու կարևոր հարցադրում է կատարում, որի շուրջ համոզված ենք, որ օգտակար կլինի կառուցել հետագա ուսումնասիրությունների մեթոդաբանական մեկնակետերը: Նրա այդ հարցադրումը հետևյալն է. արդյո՞ք Հայոց ցեղասպանության իրագործումը պետք է առաջնայնորեն վերագրել կրոնական հիմքի վրա ստեղծված թշնամանքին, թե՞ ավելի ճշգրիտ կլինի ասել, որ զոհերի քրիստոնեական ինքնությունը լրացուցիչ գործոն էր՝ ցեղասպանությունն իրագործելու համար[113]:

Ըստ նրա, չնայած Հայոց ցեղասպանությունը ծրագրվել էր ոչ թե կրոնական մոլեռանդների, այլ հասարակության տարբեր շերտերի պատկերացմամբ առաջադեմ գաղափարների տեր քաղաքական վերնախավի կողմից[114], ոճրագործությունը ծրագրողների համար իսլամն իրենց կոլեկտիվ ինքնության անբաժանելի տարրերից էր: Նույնկերպ էլ քրիստոնեությունը նրանց զոհերի ինքնության որոշիչ տարրերից էր: Եվ այդպիսով, ըստ նրա, **Հայոց**

[110] Տե՛ս *նույն տեղում*, էջ 378:
[111] Այն այաթները, որոնք անհավատների դեմ պատերազմելու կոչեր էին անում, Դադրյանը ևս առանձնացրել է. տե՛ս Dadrian V. N., *Warrant for Genocide…*, էջ 6-7, 10-11:
[112] Տե՛ս *նույն տեղում*:
[113] Տե՛ս Glick L., "Religion and Genocide," *Confronting Genocide: Judaism, Christianity, Islam…*, էջ 106, նույն հոդվածը տե՛ս նաև հետևյալ գրքում. *The Widening Circle of Genocide, Vol. 3*, edited by Israel W. Charny, Transaction Publishers, 1994, էջ 53-54:
[114] Տե՛ս Glick L., "Religion and Genocide," *Confronting Genocide: Judaism, Christianity, Islam…,* էջ 105:

ցեղասպանություն իրողություն է, որի նպատակն էր ոչնչացնել այն ժողովրդին, որի «հանցանքը» էթնիկ և կրոնական տարբերություն էր[115]:

Հոլոքոստի աստվածաբանությամբ զբաղվող պրոֆեսոր **Ռիչարդ Լ. Ռուբենշտայնն** առանձին հոդվածով անդրադարձել է Հայոց ցեղասպանության մեջ կրոնական գործոնի ամենատարբեր կետերի: Նա ընթերցողի ուշադրությունը հրավիրում է այն փաստի վրա, որ շատ քիչ է գրվել իսլամի ցեղասպանական պոտենցիալի մասին՝ չնայած այն բանին, որ XX դարի ամենավաղ իրագործված ցեղասպանությունը՝ Հայոց ցեղասպանությունը, իրագործվեց մուսուլմանական պետության կողմից իր քրիստոնյա հայ բնակչության հանդեպ[116]: Օսմանյան *դհիմմի (զիմմի)* համակարգի պատմության ու նշանակության մեջ պատմական էքսկուրս կատարելով, անդրադառնալով ջիհադի տարրերին, հայերի հանդեպ մինչև Մեծ եղեռնն իրականացված զանգվածային հալածանքներին ու կոտորածներին՝ Ռուբենշտայնն իր հոդվածում կարևոր ընդգծում է անում. «Երբ ես առաջին անգամ գրեցի Հայոց ցեղասպանության մասին, շեշտը դրեցի ոճիրի արդիական լինելու վրա՝ իր տնտեսական, քաղաքական և զինվորական դրդապատճառներով: Ես հաշվի չառա, որ ոճրագործների մոտիվների մեջ կարող էր լինել կարևոր կրոնական բաղադրիչ: Արդիականացվող երիտթուրք վերնախավը մեծամասամբ դավաճանել էր սեփական կրոնական ժառանգությանը: Այսօր ես կհաստատեի, որ կրոնն անհրաժեշտ, սակայն վերջնական պատճառ չէր ցեղասպանություն իրագործելու համար: Ես կհաստատեի նաև, որ հայերի դեմ գործված ոճիրը թուրքերի կողմից դիտվում էր որպես օրինական պաշտպանական մեթոդ՝ ընդդեմ *դհիմմի*ների, որոնք խախտել են *դհիմմայի* դրույթները և հետևաբար՝ օրենքից դուրս էին, և որոնցից ամեն ինչ՝ կյանքը, սեփականությունը, ստրկությունից ազատ լինելը և ընտանիքը, բռնագրավված պետք է լիներ»[117]: Ռուբենշտայնը հենց այս վերջին հանգամանքի հետ է կապում Եղեռնի՝ մինչ օրս

[115] Տե՛ս *նույն տեղում*, էջ 106:
[116] Տե՛ս Rubenstein R. L., "Jihad and Genocide: The Case of the Armenians," *Confronting Genocide: Judaism, Christianity, Islam*…, էջ 122:
[117] *Նույն տեղում*, էջ 132, 133:

շարունակվող թուրքական ժխտողականությունը, քանի որ գտնում է, որ թուրքերի պատկերացմամբ իրենք ոչ մի սխալ բան չեն արել հայերին կոտորելիս, համոզմունք, որն ամբողջովին հիմնված էր ջիհադի և *դհիմմի* համակարգի ավանդական պատկերացումների վրա[118]:

Կրոնական գործոնի դիտարկման մեջ նա հատուկ ուշադրություն է դարձնում բռնի կրոնափոխության երևույթին[119] և, որպես եզրափակիչ խոսք, ընդգծում, որ Հայոց ցեղասպանությունը, կրոնափոխության ծրագիրը, հույների կոտորածները՝ բոլորը միտված էին մեկ ընդհանուր խնդրի իրագործմանը՝ **վերացնել քրիստոնեական դեմոգրաֆիկ ներկայությունը Թուրքիայից**[120]: Հավելենք, որ դեմոգրաֆիկ ներկայությունից զատ, ցեղասպանական ծրագրի մեջ քրիստոնեական հոգևոր-մշակութային ոչնչացում ևս իրականացվեց, այսինքն՝ **այն միտված էր վերացնելու քրիստոնեական ամբողջական ներկայությունը՝ դեմոգրաֆիկ, հոգևոր ու մշակութային բաղադրիչներով:**

Հրեա ռաբբի, պատմաբան և կրոնագետ **Սթիվեն Լ. Ջեքոբսն** իր կրոնագիտական վերլուծության շրջանակներում ընդհանուր գծերով քննության է ենթարկել ցեղասպանությունների իրագործման մեջ կրոնի դերն ու նշանակությունը: Հատկապես ընդգծելով ցեղասպանությունն իրագործողների՝ «մենք»-ի և ցեղասպանության ենթարկվող խմբի՝ «նրանք»-ի հակադրությունը՝ որպես կարմիր թել բոլոր ցեղասպանությունների իրականացման մեջ, նա ձևակերպում է. «...**կրոնը ոչ թե անհրաժեշտ կամ բավարար պայման է ցեղասպանությունների իրագործման համար, այլ շատ զորավոր և ունակ գործոն է, որին կարող է հղում կատարել ոճիրը կատարող կողմը՝ իր նպատակն իրականացնելու համար**»[121] (ընդգծումը մերն է-Ծ. Խ.): Ինչպես Լեո Կուպերը, Ջեքոբսը ևս քննարկում է երեք միաստվածային կրոնները ցեղասպանական պոտենցիալ պարունակելու համատեքստում, առանձնացնում է չորս գործոններ, որոնք պարունակում են ցեղասպանական պոտենցիալ.

[118] Տե՛ս *նույն տեղում*, էջ 133:
[119] Տե՛ս *նույն տեղում*:
[120] Տե՛ս *նույն տեղում*, էջ 135:
[121] Jacobs S. L., "Genocidal Religion," *Journal of Hate Studies*, Vol. 9:22…, p. 225.

1. ցեղայնություն,

2. կրոնական էքսկլուզիվիզմ՝ բացառիկություն,

3. սեփական առանձնաշնորհվածության հանդեպ հավատք՝ աստվածայինին մոտ լինելու հարցում,

4. սրբազան գրվածքների առանձնահատուկ նեղ ընկալում:

Ըստ նրա՝ այս գործոնների դերակատարության մասին դեռևս աննշան պատկերացում կա, չնայած այն փաստին, որ այդ գործոնների ներկայությանը մենք ականատես ենք կրոնական համայնքներում: Հետևաբար ցեղասպանությունները կանխելու ուղղությամբ մեծ քայլ անելու համար պետք է ներառել կրոնական անձանց ու համայնքներին, քանի որ նրանք են և՛ խնդրի ծագման բաղադրիչներից մեկը, և՛ լուծման մասնակիցներից մեկը: Սակայն ինչպես արդեն մեջբերեցինք, նաև նշում է, որ կրոնի գործոնի մասին խոսող, այն դիտարկող և այդ ուղղությամբ կանխարգելման մեթոդներ առաջարկող բուն կրոնագետ-մասնագետների պակաս կա, և այդ բացը պետք է լրացվի[122]:

Ամերիկահայ պատմագետ **Ռոնալդ Գ. Սյունին** նշում է, որ ինչպես **Հայոց ցեղասպանությանը նախորդած, այնպես էլ ցեղասպանության ընթացքում տեղի ունեցած կոտորածների ժամանակ զոհերն ու զոհարկուները (անգլ. victimizer) տարբեր կրոնների ներկայացուցիչներ էին, սակայն**, ըստնրա, **զանգվածային սպանություններն առաջնային կերպով չէին բխում կրոնական տարբերությունից կամ կրոնական համոզմունքներից**[123]: Միլլեթների մեջ դասվելը, ըստիր համոզման, տարբերակող կարևոր ցուցիչներից էր, և կրոնն էլ ազգային պատկանելությանը սերտ կապված բաղադրիչ էր, սակայն **սպանության դրդապատճառը կրոնից չէր բխում, այլ տարատեսակ ազդակների համախումբ էր, որի ընդհանուր անվանումը «նրանք»-ի՝ ուրիշի, այլի կամ որնէ՝ թշնամու կերպարն էր**[124]: Նա հավելում է, որ **կրոնական տարբերությունն անկասկած դերակատարում ունեցավ, և կրոնն էր տարբերակման գլխավոր ցուցիչը հայերի կոտորածների ընթացքում, որն աստիճանաբար փոխարինվեց ազգային տարբերակմամբ**: Կարևոր է

[122] Տե՛ս *նույն տեղում*, էջ 230, 231:
[123] Տե՛ս Suny R. G., "Religion, Ethnicity, and Nationalism ...," էջ 24:
[124] Տե՛ս *նույն տեղում*, էջ 24, 53:

նրա օգտագործած «կրոնաազգային ինքնություն» արտահայտությունը, որը նահամարում է ցեղասպանության պատճառ, սակայն մեր կարծիքով նրա արտահայտած հաջորդող միտքը չի ապացուցում այդ, կամ համենայն դեպս լրացուցիչ հիմնավորման պահանջ է առաջացնում ընթերցողի մեջ: Այդու՝ նա կարծում է, որ հայերի ինքնությունը օսմանյան ոճրագործների կողմից այնպես կուռ չէր ընկալվում, ինչպես որ նացիստական Գերմանիայում ընկալվում էր հրեաների ինքնությունը: Ըստ նրա՝ հայերը հավաքական կարծրատիպով ընկալվում էին որպես ագահ, ընչաքաղց, վնասակար, անհնազանդ ազգ՝ օտար, որոնց կարելի էր ոչնչացնել [125]:

Ժամանակակից թուրք պատմաբան **Թաներ Աքչամն** ասում է. «... առանց հայացք նետելու մուսուլման–ոչ մուսուլման փոխհարաբերությունների առանձին հանգամանքների վրա՝ չենք կարող հասկանալ այն պրոցեսը, որը հանգեցրեց Հայկական հարցի վերջնական լուծման որոշումը կայացնելուն»[126]: Աքչամը պատմական զարգացումներով է բացատրում օսմանյան *դհիմմի* համակարգը՝ *միլլեթ* խմբերով՝ որպես Օսմանյան կայսրությունում ղուրանյան հիմք ունեցող սոցիալական երևույթ[127]: «Միություն և առաջադիմություն» կոմիտեի վերաբերմունքը կայսրության քրիստոնյա համայնքների հանդեպ նա չի պայմանավորում զուտ գաղափարախոսական նախընտրություններով, այլ քաղաքական առաջնահերթություններով, այն պետական փիլիսոփայությամբ, որ նրանք ժառանգել էին 600 տարվա ժամանակամիջոցում, որը խոր կնիք էր թողել: Ըստ Թ. Աքչամի՝ օսմանյան առաջնորդները կարող էին հագուստի նման փոխել գաղափարախոսությունները, եթե իրադրությունը դա պահանջեր. երիտթուրքերին չէին հետաքրքրում փիլիսոփայական գաղափարները[128]: Եվ արդյունքում. **«... երիտթուրքերի թշնամությունն ու անվստահությունը քրիստոնյա փոքրամասնությունների հանդեպ և նրանց մեջ գերակայող բռնությունների քաղաքական մշակույթը դրդեցին խմբին իրագործել Հայոց ցեղասպանությունը»**[129] (ընդգծումը մերն է–Ծ. Խ.):

[125] Տե՛ս *նույն տեղում*, էջ 54:
[126] Akçam T., *A Shameful Act...*, p. 20.
[127] *Նույն տեղում*, էջ 23, 24:
[128] Տե՛ս *նույն տեղում*, էջ 53:
[129] Տե՛ս *նույն տեղում*, էջ 56:

Մյուս կողմից ուսումնասիրողը պնդում է, որ երիտթուրքերի փիլիսոփայության մեջ կենտրոնական դերը կատարում էր գիտության հանդեպ հավատը, իսկ իրենք իրենց ընկալում էին որպես հասարակության բժիշկներ՝ օսմանյան հասարակությունը բուժելու տեսլականով, աստվածատուր, մեսիական առաքելությամբ օժտված մարդիկ և, հետևաբար՝ իրենց դիմադարձելն իրենց իսկ մտայնության համաձայն՝ հավասարազոր էր աստվածային կամքին ու նախախնամությանը դիմադարձելուն[130]:

Թաներ Աքչամն առանձին աշխատությամբ անդրադարձ է կատարում Հայոց ցեղասպանության ընթացքում կատարված կրոնափոխության լայն տարածում ստացած երևույթին՝ դիտելով այն որպես համակարգված իրականացվող երևույթ Հայոց ցեղասպանության սկզբում[131]:

Ոչ այնքան ուղղակիորեն կրոնի դերը, որքան հայերի հանդեպ կատարվող բոլոր վայրագությունների ակունքում թուրքական իսլամի մի առանձնահատկություն է առանձնացնում **Ջեյմս Ջ. Ռեյդը:** Նա վերլուծում է քրիստոնյաների կարգավիճակն Օսմանյան կայսրությունում և հանգում այն մտքին, որ ոչ իսլամադավանների ծանր վիճակը գալիս էր օսմանյան սոցիալական կառուցվածքից: Չարի և բարու պայքարի աստվածաբանության կոսմոլոգիական մոդելը, ըստ այդ պատկերացումների, հետևյալն է. երբ բարին չարին հաղթում է, ոչ մուսուլմաններն ընկնում են մուսուլմանների տիրապետության տակ: Եվ քանի դեռ ոչ մուսուլման «անհավատները» ընդունում են հնազանդվում են իսլամական օրենքին, արգելվում է նրանց սպանելը: Սակայն քանի որ իսլամադավանների կառավարական հովանու ներքո ապրող ոչ իսլամադավաններն այդ նույն միջնադարից եկած մտայնության համաձայն ընկալվում էին որպես Իբլիսի՝ սատանայի խաբեություններին հեշտությամբ ենթարկվող խմբեր, նրանց հանդեպ կատարված բռնությունները համապատասխանաբար համարվում էին պայքար Իբլիսի դեմ: Ոչ մուսուլմանների հետխիստ դաժան վարվելը բարեպաշտության, Իբլիսի դեմ պայքարելու և Ալլահի կամքն իրագործելու նշան էր

[130] Տե՛ս *նույն տեղում*, էջ 57:
[131] Տե՛ս Աքչամ Թ., *Հայերի բռնի իսլամացումը…*, 2016:

համարվում[132]: Այսինքն, եթե հայերը հայտարարվեին օրենքից դուրս, նրանց կոտորելը որևէ դժվարություն չէր առաջացնի, ընդհակառակը՝ կրոնական սխրանք կլիներ: Այս մոդելը բավականին մոտ է Հայոց ցեղասպանության ընթացքում կատարված կրոնական բռնություններին, դրանց հրահրմանը՝ քրիստոնյաներին կոտորելու հետևանքով հետմահու դրախտային երանության արժանանալու կրոնական կոչերով հանդերձ:

Ցեղասպանության ամերիկացի մասնագետ **Բեն Կիերնանն** ասում է. «**Չնայած բոլոր երեք ռեժիմները** (երիտթուրքականը, նացիստականն ու կիմերը – Ծ. Խ.) **պեհիստական էին, յուրաքանչյուրն էլ հատկապես թիրախավորեցին կրոնական փոքրամասնություններին (քրիստոնյաներին, հրեաներին և մուսուլմաններին)**»[133] (ընդգծումը մերն է – Ծ. Խ.): Սակայն կրոնը որպես բանալի տարր դիտելուց զատ՝ նա նաև որոշիչ է համարում ռասիզմը[134]: Ցեղասպանությունների ծրագրման և իրագործման պատճառների մեջ գաղափարական տարրերից ռասան, կրոնը, էքսպանսիան և կացութաձևը պայթունավտանգ խառնուրդ համարելով՝ Բ. Կիերնանն ասում է, որ Հայոց ցեղասպանությունը կարելի է մասամբ ներկայացնել որպես քրիստոնյա ոչ թուրքերին ոչնչացնելու փորձ՝ նոր տարորոշված թուրք մուսուլման ազգի կողքից նրանց վերացնելուն միտված, բայց միաժամանակ ռասայական գերակայության՝ թուրքերի պատկերացումները դիտարկելով որպես նշանակալի դեր կատարող[135]: Մեր համոզմամբ, սակայն, կենսաբանական ռասիզմի այն բաղադրիչը, որ տեղ ուներ Հոլոքոստի ընթացքում, տեղ չուներ Հայոց ցեղասպանության ընթացքում՝ զանգվածային մակարդակով: Ճիշտ հակառակը՝ պետական քաղաքականության մաս եղավ հայերի՝ հատկապես ֆիզիկական տվյալներով պայմանավորված սելեկցիան՝ իսլամացմամբ և թրքացմամբ: Հայերի հանդեպ իրարամերժ վերաբերմունքն ավելի ընդգծված էր, մի կողմից՝ նրանք «մակաբույծ» էին հայտարարվել, մյուս կողմից՝

[132] Տե՛ս Reid J. J, "Philosophy of State –Subject Relations, Ottoman Concepts of Tyranny, and the Demonization of Subjects: Conservative Ottomanism as a Source of Genocidal Behaviour, 1821-1918," *Studies in Comparative Genocide*…, էջ 62-65:
[133] Kiernan B., "Twentieth-Century Genocides…," p. 29.
[134] Տե՛ս *նույն տեղում*:
[135] Տե՛ս *նույն տեղում*, էջ 30:

իսլամադավանների մտայնության մեջ հայերի հետ գենետիկորեն խառնվելուց խորշելու որևէ միտումչկար, ճիշտհակառակը:

***

Եզրափակենք հետևյալ ընդհանրացումներով. Հայոց ցեղասպանության կրոնագիտական քննարկումները պետք է անդրադառնան մասնավոր խնդիրների՝ դիտելով Օսմանյան կայսրության միջկրոնական կառույցը, թուրքական իսլամ–քրիստոնեություն փոխհարաբերությունները, ներհակություններն ու հակամարտությունները, այդ ամենի դերը ոճրագործությունը ծրագրողների և իրականացնող զանգվածների կրոնահոգեբանական վարքագծի մեջ: Կարևոր են նաև Մեծ եղեռնի աստվածաբանական հարցերը՝ կրոնագիտականին միահյուսվող բազմաթիվ թեմատիկ ու մեթոդական կողմերով: Մեր կողմից առանձնացված հեղինակների անդրադարձները մեկտեղելն առանցքային նշանակություն ունի խնդրի ուսումնասիրվածության աստիճանի շուրջ պատկերացում կազմելու, ուսումնասիրության համակարգվածություն տալու, կրոնագիտական հարցադրումներ ու համապատասխան վերլուծություններ կատարելու համար:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԿՐՈՆԱԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Այս գլուխը նվիրված է Հայոց ցեղասպանությունը ծրագրողների գաղափարախոսության մեջ կրոնին հատկացված դերին ու վերաբերմունքին: Երիտթուրքական գաղափարախոսությունը թե՛ անջատտարրերով ու որոշ ուսմունքներից վերցված դրույթներով, թե՛ միասնական համակարգ դիտելու դեպքում կրում էր հակաքրիստոնեական բնույթ: Այս գլխումնաև ցույց է տրվումէ, թե ինչպես կրոնը և կրոնական տարբերության գործոնը կիրառվեցին սրբազան պատերազմի կոչերի մեջ՝ քրիստոնյաներին թիրախավորելու համար:

2.1. Երիտթուրքերի գաղափարականուղենիշները. կրոնը՝ քաղաքականության, քաղաքականությունը կրոնի մեջ

Իթթիհադական գաղափարախոսությունը կյանքի կոչվեց՝ փրկելու համար «Եվրոպայի հիվանդ մարդուն»[136]՝ Օսմանյան կայսրությունը: Ունենալով զարգացման մի քանի փուլ՝ իթթիհադականությունը դարձավ բաղադրյալ, երբեմն էլ հակոտնյա գաղափարների մի ամբողջություն: Երիտթուրքերի գաղափարախոսության մեջ օգտագործվեցին թե՛ որոշ եվրոպական քաղաքական, թե՛ փիլիսոփայական տարբեր դպրոցների և թե՛ թուրքական իսլամին ու ազգայնականությանը բնորոշ ուսմունքներ: Դրանք՝ որպես մշակված առանձին միավորներ (ինչպես, օրինակ, Օգյուստ Կոնտի պոզիտիվիստական մարդաբանությունը), յուրացվեցին երիտթուրքերի կողմից՝ ստեղծելու համար իթթիհադականության տեսությունը:

2.1.1. Մատերիալիզմի յուրացման փորձերը

Խնդիրը, որը ծառացել էր Օսմանյան կայսրության մտավորականության առջև, իրենց երկրի՝ թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական և թե՛ առհասարակ մշակութային առաջադիմության հասնելու հրամայականն էր: Սկսած XIX դարից՝ առաջադիմելու ձգտումը, հատկապես ժամանակի եվրոպական հասարակության նիստուկացին համապատասխանելու պահանջն էր փորձում լուծվել: Հենց այդ մթնոլորտում էլ XIX դարի վերջերին ստեղծվեց «Միություն և առաջադիմություն» կոմիտեն[137]:

---

[136] Օսմանյան կայսրությանը վերաբերող այս բնորոշումն առավել հաճախակի շրջանառվել է XIX դ. կեսերից: 1853թ. անգլիացի քաղաքական գործիչ, Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջոն Ռասելը Օսմանյան կայսրությունը կոչում է «հիվանդ մարդ, ծայրահեղ հիվանդ մարդ»: Այս խոսքերի սկզբնաղբյուրն անհայտ է, երբեմն վերագրվում է ռուսաց ցար Նիկոլայ I-ին, սակայն Նիկոլայ ցարին պատկանող խոսքերը փոքր-ինչ այլ ձևակերպմամբ էին՝ «մարդ, որը հասել է զառամյալության», տե՛ս de Bellaigue Chr., "Turkey's Hidden Past", *The New York Review of Books* http://www.nybooks.com/articles/2001/03/08/turkeys-hidden-past/#fnr1 (դիտված 05.I.2018 թ.):

[137] Մասնագիտական գրականության մեջ ընդունված է «Միություն և առաջադիմություն» կոմիտեն կոչել նաև կուսակցություն: Մենք նախընտրում ենք այն կոչել «կոմիտե» և ոչ թե «կուսակցություն»՝ հաշվի առնելով և՛ թարգմանական (թուրք. *"İttihat ve Terakki Cemiyeti"*), և՛ բովանդակային ճշգրտության հարցը:

Ամենայն «արևմտյան»-ի հետ օսմանյան ինտելեկտուալները կապում էին գիտելիքի և առաջընթացի մասին իրենց տեսլականները: Արդեն XIX դ. կեսերից սկսեցին ակտիվորեն թարգմանվել և քննարկվել մատերիալիստ փիլիսոփաների գործերը: Սեփական պետության ապագայի ընթացքը արևմտասեր օսմանյան մտավորականները (հիմնականում ազգությամբ թուրք) տեսնում էին Արևմուտքի՝ իրենց ժամանակին բնորոշ գիտական պաշարները յուրացնելու, օսմանյան կրոնապետությամբ թելադրված բացերը լրացնելու մեջ: Օսմանյան կայսրություն այցելած օտարազգի ուսումնասիրողները զարմանքով էին ընդունում Օսմանյան կայսրությունում տիրող այդ «մատերիալիստական պայթյունը»[138]: Սակայն եվրոպական լուսավորականության հանդեպ այդ սերն առաջին հերթին ոչ թե հանուն գիտության էր, այլ քաղաքական նպատակների, և մատերիալիստ փիլիսոփաների գրվածքներն էլ քննարկվում էին քաղաքական ոճաբանությամբ ու նպատակներով:

Գովաբանվում էին Բենեդիկտ (Բարուխ) Սպինոզայի նատուրալիզմը, Չառլզ Դարվինի էվոլյուցիայի տեսությունը, քաղաքական դիսկուրսում թեժ քննարկումների էին արժանանում Մոնտեսքիոյի, Ժան-Ժակ Ռուսոյի, Վոլտերի գրվածքները: Սպինոզան և Վոլտերը համարվում էին ամենանշանավոր փիլիսոփաները. Սպինոզան՝ իր կրոնական ազատախոհության, իսկ Վոլտերը կրոնի հանդեպ իր բացասական տրամադրվածության համար[139]: Պատմաբան Շուքրու Հանիօղլուն ասում է, որ Ժ.-Ժ. Ռուսոյի հանդեպ վերաբերմունքը մի կողմից դրական էր, քանի որ նա հակաեկեղեցական ճաշակ ուներ, և մյուս կողմից բացասական էր այն պատճառով, որ Ռուսոն գիտության «ամենակարողության» մտքի հետ համաձայն չէր[140]:

Արդիականացման և առաջադիմելու այս ուղու հանգրվաններից էին «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ստեղծումը և նրա

[138] Հունգարացի գիտնական Արմինիուս Վամբերին այս առնչությամբ գրում է, որ Օսմանյան կայսրության այդ գրագետ զանգվածն ակտիվորեն յուրացնում էր մատերիալիստական առաջխաղացման պտուղները, մեծ ձգտում կար ուսում ստանալու եվրոպական համալսարաններում, նմանվելու եվրոպացիներին: Տե՛ս Vâmbèry H., *Der Islam im Neunzehnten Jahrhundert, Eine Culturgeschichtliche Studie*. Leipzig: F. A. Brockhaus, էջ 101:

[139] Տե՛ս Hanioğlu M. Ş., *նշվ. աշխ*, էջ 12-13:

[140] Տե՛ս Hanioğlu M. Ş., *նշվ. աշխ*, էջ 13:

գաղափարախոսության մշակումը: XIX դ. մատերիալիստական այս արթնացումը կայսրության մեջ դժգոհություններ առաջացրեց ավանդական իսլամական օրենքներով առաջնորդվող հասարակության մեջ, և արդյունքում օսմանյան մտավորականությունը բաժանվեց երեք ճամբարի.

1. առաջին խումբը արդիականացման, արևմտականացման կողմնակիցներն էին և ցանկանում էին ամենայն «արևմտյանը» ներդնել Օսմանյան կայսրության բազմազան բնագավառներ: Սա ամենաբազմաքանակ հետևորդներ ունեցող հոսանքն էր:
2. Երկրորդ խմբի անդամները պահպանողականներն էին, որոնք օսմանյան *ուլեմայի*[141] դիրքորոշումը համարում էին առաջնային և մոդեռնիստներին մեղադրում էին սեփական մշակույթից, ավանդական արժեքներից, կրոնից օտարվելու և դրա հանդեպ թշնամանալու մեջ: Ավանդականի կողմնակիցների այս ուղղությունը չնայած գոյատևեց մինչև Օսմանյան կայսրության մայրամուտը, որևէ էական քաղաքական և մտավոր ներդրում չունեցավ կայսրության վերջին շրջանի համար[142]:
3. Երրորդ ուղղությունը հարաբերականորեն միջին դիրք էր զբաղեցնում. օգտագործվում էին իսլամական խորհրդանշաններ, սակայն իրական ուղղվածությունն ավելի շատ դեպի արևմտամետ ուժերի կողմն էր: Միջին գիծը հմտորեն բռնած մտավորականների այս ճյուղը կարողացավ հասնել իր առջև դրված նպատակներին, ընդունվել հասարակության տարբեր շերտերի կողմից: Այս ուղղությունը հետագայում «Նոր օսմանցիների»

[141] ***Ուլեմա*** կամ ***ուլամա*** բառն արաբերեն է, նշանակում է ուսյալ՝ իր ամենալայն իմաստով: Այս դասի մեջ ընդգրկվում են իսլամի ուսյալ անձինք՝ աստվածաբանները *(մութակալիմուն),* կանոնական իրավունքի մասնագետները՝ մուֆթիները, դատավորները՝ կադիները, ուսուցիչները և բարձրաստիճան կրոնական հեղինակություն վայելող անձինք, ինչպես օրինակ՝ *շեյխ ուլ-իսլամը*: Տե՛ս *Encyclopædia Britannica,* Vol. 22, Chicago-London-Toronto, 1962, էջ 671:
[142] Hanioğlu M. Ş., *նշվ. աշխ,* էջ 13-14:

շարժման[143] հիմքը դարձավ, որն էլ իր հերթին՝ «Միություն և առաջադիմություն» («Երիտասարդ թուրքերի») կոմիտեի:

Ավելի ուշ, երբ կոմիտեն շրջադարձ կատարեց դեպի պանթուրքական-ազգայնական գաղափարախոսություն, հենման կետեր հայտնաբերեց նաև իրրեդենտիզմի մեջ[144], Ֆրիդրիխ Նիցշեի, Հերբերտ Սպենսերի, Էմիլ Դյուրկհայմի և Անրի Բերգսոնի տրակտատներում. «.... իրենց քաղաքական իդեալները վերցրել էին եվրոպական մտքից, այնպիսի մտածողներից, ինչպիսիք են Բերգսոնը, Դյուրկհայմը, Նիցշեն և այլք՝ հաստատելով, որ նրանք պետք է համախմբեն իրենց ժողովրդի տաղանդները, կառուցեն սեփական ինտելեկտուալ կյանքը և ազգային ավանդույթները՝ Եվրոպայից վերցնելով մեթոդն ու տեխնիկան»[145]: Միախառնելով լուսավորականների և XIX-XX դարի սկզբի որոշ փիլիսոփաների գաղափարները՝ ստեղծվեց իթթիհադական փիլիսոփայության առանցքը[146], որը հետագայում լրացվեց թուրք հեղինակների մեկնաբանություններով:

2.1.2. Թյուրքական իդեալներից բխող գաղափարները

Երիտթուրքերը, որոնք հիմնականում ցածր դասի ունևորներ և ուսանողներ էին, իրենք իրենց ընկալում էին որպես բարենորոգիչ և իրենց բարենորոգումների պատմական գիծը հասցնում էին ընդհուպ Մահմուդ II-ի ռեֆորմներին, հաջորդաբար՝ Թանզիմաթի ռեֆորմին, նոր օսմանցիների և Միդհատ փաշայի գլխավորած բարենորոգական շարժումներին:

---

[143] Պատմաբան Շուքրու Հանիօղլուն այս խմբի ներկայացուցիչ է համարում նաև հանրահայտ գրող Իբրահիմ Շինասիին և Նամըք Քեմալին. Hanioğlu M. Ş., *նշվ. աշխ*, էջ 14:

[144] Զարեւանդ, *Միացեալ, անկախ Թուրանիա կամ ի՞նչ կը ծրագրեն թուրքերը*, «Յեղափոխական գրադարան» թիւ 2, Աթէնք, 1987, էջ 60, հմմտ. Manenti L. G., "Massoneria italiana, ebraismo e movimento dei Giovani Turchi," *La Rassegna Mensile di Israel*, vol. LXXVIII, N. 3, Unione delle Comunità Ebraiche Italiane, Settembre-Dicembre 2012, էջ 161-175: **Իրրեդենտիզմը** միջազգային հարաբերությունների ոլորտում ընդունված է կոչել մի երևույթ, երբ ազգի մի հատվածը՝ նույն լեզվով, մշակույթով ու պատմությամբ, զատված է մյուսից և հանրային մտայնության մեջ ձգտում կա դրանք միավորելու: Իրրեդենտիզմի դասական օրինակ է նացիստական Գերմանիայի կողմից Ավստրիայի *անշլյուսը*՝ միակցումը 1938 թ.: Եզրույթը ծագել է *Italia irredenta* (իտալ. թարգմ.՝ «չմիավորված Իտալիա») արտահայտությունից և համապատասխան գաղափարախոսությունից՝ կապված Ավստրո-Հունգարական կայսրության կողմից գրավված իտալական հողերը վերադարձնելու հետ, տե՛ս *Dictionary of Genocide*, by Totten S., Bartrop P. R., Greenwood Press, 2008, էջ 227:

[145] Alp T., *նշվ. աշխ*, էջ 13, հմմտ. *Memoirs of Halidé Edib.* New York: The Century Co., 1926, էջ 319:

[146] Տե՛ս Զարեւանդ, *նշվ. աշխ*, էջ 61:

Երիտթուրքերն ազդվել էին 1860-ականների սահմանադրական ընդդիմության հոսանքից և հատկապես Նամըք Քեմալի[147] ռեֆորմիստական և հայրենասիրական գաղափարներից: Ուսանողները գաղտնի միմյանց էին փոխանցում կայսրությունում արգելված գործիչների և գաղափարախոսների մտքերը, իսկ 1896-ից հետո՝ նաև երիտթուրքական ամսագրերը ("Meşveret" (Փարիզ), "Osmanlı" (Ժնև), "Muhbir" (Լոնդոն), "Tanin" (Փարիզ)), որոնք, փաստորեն, տպագրվում էին Օսմանյան կայսրությունից դուրս, սակայն օրենքը շրջանցելով՝ տարածվում էին համալսարաններում: Այդ ամսագրերն արգելված էին արևմտամետ գաղափարներ տարածելու, դրանց մեջ առկա սահմանադրականության, ռացիոնալիզմի և գիտության առաջընթացի գաղափարների պատճառով[148]:

1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից շատ չանցած՝ կառավարությունը սկսեց առաջ մղել կայսրության բնակչության միատարր դարձնելու գաղափարը՝ թրքացումը և համաթրքականության իդեալները[149]: Պատմաբան Ջոն Կիրակոսյանը նշում է գաղափախտսների մի շարք անուններ, որոնք այդ իդեալների կազմավորման մեջ մեծ դերակատարություն ունեցան՝ սկսելով թուրքերի ծագման վարկածներից և հասնելով մինչև համաթրքականության՝ պանթուրքիզմի, ծրագիրը. «Արմինիուս Վամբերիի, Լեոն Կահունու, Կոստանդին Բորժեսկու (Մուստաֆա

---

[147] **Մեհմեդ Նամըք Քեմալ** (1840-1888), թուրք գրող, ազգայնական շարժումների ղեկավար: Նրա գրվածքները մեծ ազդեցություն են թողել երիտթուրքերի վրա, թուրքական գրականությունն արևմտականացնելու կողմնակիցն է եղել: 1873-1876-ին բանտարկված է եղել՝ "Vatan yahut Silistre" («Հայրենիք կամ Սիլիստրիա») թատերական դրաման գրելու պատճառով: Համոզված էր, որ կրոնը համահունչ կլինի նորացված Թուրքիայի արժեհամակարգին այն դեպքում, եթե հաստատվի սահմանադրական կառավարում՝ անգլիական տարբերակով: Տե՛ս *Encyclopædia Britannica,* Vol. 13, Chicago-London-Toronto, 1962, էջ 319, տե՛ս նաև «Բրիտանիկա» հանրագիտարանի էլ. տարբերակը՝ http://www.britannica.com/biography/Namik-Kemal (դիտված 05.I.2018 թ.):

[148] Zürcher E. J., *The Young Turk Legacy and Nation Building: From the Ottoman Empire to Atatürk's Turkey*. London, New York: I. B. Tauris and Co., 2010, p. 113.

[149] **Պանթուրքիզմը** կամ **համաթրքականությունը** ծագեց Ռուսաստանում՝ թյուրքագիտների շրջանում, և այնտեղից անցավ Անկարա և Պոլիս: Պանթուրքիզմին ուղղորդողը Յուսուֆ Աքչուրան (1876-1935) էր: Արդեն 1889-ին պանթուրքիզմը Հուսեինզադե Ալի Բեյի (1864-1940) միջոցով թափանցում է Թուրքիա, տարածվում է երիտթուրքերի մեջ: Պանթուրքիզմի գաղափարի հանրայնացման պատասխանատուն հաճախ համարվում է հունգարացի, ծագումով հրեա Արմինիուս (Հերման) Վամբերին, որը կապեր ուներ երիտթուրք գործիչների հետ. տե՛ս Landau J. M., *նշվ. աշխ*, էջ 2: Օսմանյան կայսրության տարածքում պանթուրքիզմը քաղաքական ուսմունքի վերածողը համարվում է ծագումով քուրդ երիտթուրք գաղափարախոս Զիյա Գյոքալփը: Հմմտ. *Memoirs of Halidé Edib…*, էջ 314-315, Զարեւանդ, *նշվ. աշխ*, էջ 62:

Ջալալէդդին փաշա) նման ծառայամիտ թուրքագետներն ու կեղծարարները շատախտսում էին օտոմանյան թուրքերի «թուրքո-արիական» ծագման մասին: Սրանք լրացնում էին համաթուրքական ծրագրի ջատագովներ Յուսուֆ Աքչուրային (Կազանից), Ալի Հուսեին Զադեին, Ահմեդ Աղաևին (Կովկասից), Գասպրինսկուն (Ղրիմից) և այլոց, որոնք Օսմանյան կայսրության հիմքի վրա ապագա մեծ թուրքական տերություն ստեղծելու հնարավորությունն էին որոճում»[150]: Պարզ է, որ համաթրքացման այդ ամբողջ ծրագիրը պետք է ուղղված լիներ կայսրության քրիստոնյաների դեմ, նրանց դավանած կրոնի, մշակույթի և կենսակերպի դեմ: Թրքացման գաղափարախոսների հակաքրիստոնեական տրամադրություններն էլ առաջին հերթին ուղղվեցին հայերի դեմ՝ մշակելով Հայոց ցեղասպանության ծրագիրը[151]: Պատմաբան Արսեն Ավագյանը նշում է, որ երիտթուրքերի ռադիկալ ներկայացուցիչներն էին՝ դոկտոր Նազըմը, դոկտոր Բեհաէդդին Շաքիրը, Զիյա Գյոքալփը, Էյուբ Սաբրին, Քյուչյուկ Թալաթը, Իսմայիլ Ջանփոլադը, որոնցից առանձնացնում է հատկապես երկուսին՝ Բեհաէդդին Շաքիրին և Նազըմին (երկուսն էլ մասնագիտությամբ բժիշկ)[152]: Պատմաբանը նրանց զատում է կառավարական եռապետներից, դոկտոր Նազըմին կոչում իթթիհադականության գաղափարախոս, իսկ Բեհաէդդին Շաքիրին ներկայացնում Նազըմից գաղափարապես ազդված[153]:

Երիտթուրքերի գործունեությունն առաջին ուսումնասիրողներից Էռնեստ Ռամզորն առանձնացնում է մեկ այլ գաղափարական դաշտ. նա գրում է, որ միաժամանակ երիտթուրքերի թվում կային *բեքթաշի*[154] սուֆիական միաբանության անդամներ՝

---

[150] Կիրակոսյան Ջ., *նշվ. աշխ*, էջ 233:
[151] Авакян А., *նշվ. աշխ*, էջ 53:
[152] Авакян А., *նշվ. աշխ*, էջ 48-50, 53-56:
[153] *Նույն տեղում*, էջ 48:
[154] Սուֆիական (թուրք. *թասավվուֆ*) միաբանությունները (թուրք. *թարիքաթ*) կարևոր դերակատարություն են ունեցել օսմանյան քաղաքականության մեջ և հասարակական կյանքում: ***Բեքթաշի* միաբանությունը *(բեքթաշիյյա)***՝ որպես XV դ. Հաջի Բեքթաշի Վալիի կողմից հիմնադրված սուֆիական միստիկ միաբանություն, տարածում է գտնում ողջ Օսմանյան կայսրությունում, հատկապես Բալկաններում: Չնայած սուֆիական ուղղություններից էր՝ սուննի իսլամի հետևորդներից կազմված, ուներ Ալիի պաշտամունք, ինչպես շիաները: Բեքթաշիները որդեգրել էին որոշ քրիստոնեական տարրեր, օրինակ՝ հաց բեկանելը և մեղքերի ապաշխարության կարգը: Բեքթաշիների և՛ կանայք, և՛ տղամարդիկ նվիրագործման ծեսերի ժամանակ կարող էին մասնակցել գինի խմելու արարողությանը և պարերին: 1826 թ. ենիչերիների բանակի ոչնչացումից հետո

նրանց շարքում նշելով նաև Թալեաթին, Ռիզա Թևֆիկին և շեյխուլ-իսլամ Մուսաքյազիմ էֆենդիին[155]:

Օսմանյան կայսրության մեջ պանթուրքիզմի հիմնադիրը ծագումով քուրդ երիտթուրք գաղափարախոս Զիյա Գյոքալփն է, որը, լինելով «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գործուն տեսաբան, մասնակցել է Հայոց ցեղասպանության ծրագրի մշակմանը: Նա իր աշխատությունները հանրայնացրել է երիտթուրքական հեղափոխությունից հետո՝ 1911-1918 թթ. և 1922-1924 թթ.: Գյոքալփը գտնում էր, որ երիտթուրք եռապետները պետք է ընտրություն կատարեն օսմանականության և թրքականության միջև, իսկ իր սեփական նորարար գաղափարներն օսմանիստական չէր կոչում, այլ արևմտյան: Դուրս թողնելով ավելի վաղ, սակայն շատ թույլ զարգացած պանիսլամիզմի գաղափարը՝ նա կենտրոնանում է պանթուրքիզմի վրա, իսկ Օսմանյան կայսրության պետական կրոնը՝ իսլամը, մղվում է հետնաբեմ[156]: Սակայն Գյոքալփը, գիտակցելով իսլամի արթնությունն օսմանյան իսլամադավան հասարակության մեջ, զիջումներ և մանյովրներ է կատարում: Միաժամանակ, ինչպես բոլոր ազգայնականները, այնպես էլ Գյոքալփը ցեղի «պաշտամունքը» գերադասում է ընդունված կրոնից, հետևաբար զգուշորեն միակցում է երեք իդեալներ՝ իսլամը, թուրքիզմը և մոդեռնիզմը, ստեղծում թուրքական ազգայնական գաղափարախոսությունը[157]: Պարզ է, որ քրիստոնյա բնակչությունը թրքացման քաղաքականության մեջ կարող էր երկու դերակատարություն ունենալ. կա՛մ պետք է թրքացվեր, կա՛մ էլ դիմադրելու դեպքում՝ ոչնչացվեր:

Գյոքալփի բացասական նախատրամադրվածությունը քրիստոնեության հանդեպ ակնհայտ է. դա երևում է կայսրության քրիստոնյաների նիստուկացը՝ որպես եվրոպականի չհաջողված կրկնօրինակում, և քրիստոնեությունը՝ որպես հակապետական և

փակվեց նաև այլախոհական համարվող բեքթաշիների միաբանությունը, որից շահեցին նաքշբանդիները: Թանզիմաթի շրջանում նրանք աստիճանաբար վերադարձան հասարակական ակտիվության. տե՛ս http://www.britannica.com/topic/Bektashi: Հմմտ. Ռութվեն Մ., *Իսլամն աշխարհում*, Երկրորդ հրատ., Երևան, 2004, էջ 283:

[155] Տե՛ս Ramsaur E. E. Jr., *նշվ. աշխ*, էջ 113:

[156] Ճերեճեան Ե. Տօքթ., *Փանթուրանիզմը*, Պէյրութ, 1998, էջ 25:

[157] Gökalp Z., *Turkish Nationalism and Western Civilization.* New York: Columbia University Press, 1959, pp. 233, 267.

գիտության զարգացումը խոչընդոտող կրոն ներկայացնելուց[158]: Նա նշում է, որ օսմանյան ոչ մուսուլման իր հայրենակիցները, քանի որ Եվրոպայի հետընդհանուր *ումմեթ*՝ կրոն ունեին, հեշտությամբ էին յուրացնում ամենայն եվրոպականը, իսկ մուսուլմանները չէին կարողանում, որի պատճառով հետ էին մնում արևմտյան ձեռքբերումներից: Եվ նա առաջարկում է ստեղծել մի նոր կենսակերպ, բայց չկրկնօրինակել եվրոպականը, այնպես, որ նոր արժեքներն էլ լինեն տնտեսական, ընտանեկան, էսթետիկական, փիլիսոփայական, բարոյական, օրինական և քաղաքական բարձր արժեքներ, որոնք կբխեին օսմանցիների սրտից[159]: Այդ արդիականացումը պետք է իրագործվեր ազգային առանձնահատկությունների հետ հաշվի նստելով, հետևաբար մուսուլմաններին կոչ է անում ստեղծել նոր սինթեզ[160]: Նա Եվրոպան ոչ առանց դիտավորության չի դիտարկում որպես քրիստոնեական քաղաքակրթության մաս և իր մտքերը շարադրում է այնպես, իբր քրիստոնեությունը խոչընդոտել է գիտության զարգացմանը և ժամանակակից պետական համակարգերի ստեղծմանը: Դրան հակառակ՝ նաիսլամը դիտարկում է որպես ժամանակակից կրոն և բարենպաստ գործոն՝ նոր պետություն ստեղծելու և Եվրոպայի գիտական պաշարներն ազգայինի հետ սինթեզելու հարցում[161]: Սակայն նա իր ուտոպիստական Թուրքիան միաժամանակ տեսնում էր աշխարհիկ պետական համակարգով՝ իր այդ միտքը զգուշորեն քողարկելով իսլամի հանդեպ հոգածությամբ, որպեսզի կրոնը չտուժի պետության միջամտություններից[162]:

Գյոքալփը Թանին թերթի 1914 թ. օգոստոսի 8-ի համարում՝ Գերմանական կայսրության հետ դաշնակցելու պայմանագրից օրեր անց տպագրում է իր հանրահայտ բանաստեղծության՝ Կարմիր երգի առաջին հատվածը, որտեղ հստակ արտահայտված ենք տեսնում

---

[158] *Նույն տեղում*, էջ 222-223: Նշելի է, որ նրա այդ վերաբերմունքն ուղղված էր միայն ավանդական քրիստոնեական՝ կաթոլիկ, ուղղափառ և արևելաուղղափառ եկեղեցիների դեմ, և բողոքականությունը դուրս էր մնում այդ շրջանակից, քանի որ Գյոքալփը, համակրանքով խոսելով բողոքականության մասին, ասում է, որ այն «քրիստոնեության իսլամականացված ձևն է», և, ըստ նրա, հենց բողոքականությունն է գիտություն ստեղծող քրիստոնեության տեսակը Եվրոպայում:

[159] Տե՛ս Gökalp Z., *նշվ. աշխ*, էջ 59:

[160] Տե՛ս *նույն տեղում*:

[161] Տե՛ս *նույն տեղում*, էջ 143:

[162] Տե՛ս *նույն տեղում*, էջ 214-223:

երիտթուրքերի կողմից դրվատված ու ընդունված, գաղափարներ մշակող ու զարգացնող այս անձնավորության կողմից արտահայտված հակաքրիստոնեական մրցակցության ու հակամարտության ոգին: Դա, մասնավորապես, կարելի է տեսնել պատերազմի կոչ անող այդ բանաստեղծության հետևալ հատվածներից, որտեղ կան առանձին մտքեր՝ ընդգծված հենց Զիյա Գյոքալփի կողմից.

«.... *Խաչը ըսաւ՝ «Ա՛լ գութ չկայ Գուրանին,*
Մահմետական ազգեր պիտի կորսուին,
Եւ սուտըլլայ ներկայ էջն այս պատմութեան»:
....Արհամարհեց Անգլիան Սուլթանն օսմանեան,
Անով պիտի պահէ Օսմն, Հնդկաստան.
Իսլամութիւնն իր թշնամին ճանչցաւ վատ.
Պիտի ըլլայ ուրախութիւն չանցած շատ
Եւ Գուրանն իր ոսոխին տայ դատաստան»[163]:

Կրոնական թշնամանքի ու ատելության տարրերն այս և բանաստեղծության մյուս տողերում ակնհայտ են և հետագայում էլ՝ մի քանի ամիս անց, կյանքի կոչվեցին ու հատուկ քարոզչության հետևանքով ներկայացան սրբազան պատերազմի՝ արդեն պետական կոչերի ու հայտարարագրերի տեսքով:

2.1.3. Արևմտյան հիմքից բխող գաղափարները

1889 թ. Թագավորական բժշկական ակադեմիայում ստեղծված «Միություն և առաջադիմություն» կոմիտեի առաջին խմբակցության՝ «Օսմանյան միացյալ» կոմիտեի (թուրք. "İttihadi Osmani Cemiyeti") հիմնադիրը՝ Աբդուլլահ Ջևդեթը, արևմտականացման մոլի պաշտպաններից էր: Նա պնդում էր. «.... կա միայն մեկ քաղաքակրթություն՝ եվրոպականը: Եվ հետևաբար մենք պետք է եվրոպական քաղաքակրթությունից փոխառենք և՛ նրա վարդը, և՛ նրա փուշը»[164]: Պատմաբան Էրիկ Յ. Յուրխերը նշում է, որ պատահական չէ

[163] Լեւոն Վարդան, *Հայկական տաճիհինգը եւ հայերու լքեալ գոյքերը* [քննական ակնարկ ըստ թրքական վաւերագիրներու], Պէյրութ, 1970, էջ 27: Լևոն Վարդանն այն հայերեն է թարգմանել հետևյալ գրքից. Kazim Karabekir, *Cihan Harbine Neden Girdik, Masil Girdik, Nasil Idare ettik?*,Kitab 1, Istanbul, 1937, ss. 206-207.
[164] Hanioğlu M. Ş., *նշվ. աշխ,* էջ 17:

կոմիտեի հիմնադրման տարեթիվը՝ 1889 թվականը, որը Ֆրանսիական մեծ հեղափոխության 100-րդ տարելիցն էր[165]: Միևնույն թվականին նոր շարժման հայրերից մեկը՝ Ահմեդ Ռիզան[166], մեկնում է Փարիզ՝ մասնակցելու Ֆրանսիական մեծ հեղափոխության 100-ամյակի միջոցառումներին:

Եվրոպական հասարակությունն իթթիհադականներին ընկալում էր որպես լիբերալների, որոնք տոգորված էին ժամանակի հայտնի եվրոպական փիլիսոփաների տեսություններով՝ այդպիսով փորձելով ոչ միայն ստեղծել սեփական գաղափարական հիմքեր, այլև ներդնել այն օսմանյան հասարակության մեջ, համապատասխանել եվրոպական գիտական ու մշակութային նորություններին ու ուղղություններին:

Տրապիզոնի կաթոլիկ թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Նազլյանն իր հուշերում բնութագրում է երիտթուրքերի աշխարհայացքը պոզիտիվիստական հիմքով՝ նրանց համարելով Օգյուստ Կոնտի դպրոցի հետևորդներ[167]:

Եվ իսկապես, երիտթուրք ինտելեկտուալները գովաբանում էին Օգյուստ Կոնտի[168] պոզիտիվիզմը՝ շեշտը դնելով վերջինիս ստեղծած համակարգի լայնորեն շրջանառվող ապակրոնականության վրա, Արթուր դե Գոբինոյի՝[169] ստորակարգ ու բարձրակարգ ազգերի

---

[165] Տե՛ս Zürcher E. J., *նշվ. աշխ*, էջ 98:

[166] **Ահմեդ Ռիզա** (1859-1930), «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հիմնադիրներից, եվրոպաֆիլ, կրթական գործիչ, տեսաբան, 1908-1918 թթ. Օսմանյան խորհրդարանի ներկայացուցիչների պալատի նախագահող, սակայն սկսած 1910թ. համարվում է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հետ առնչություն չունեցող գործիչ: Կենտրոնացած էր Օսմանյան կայսրության ռեֆորմացիայի գաղափարի վրա, լայնորեն օգտվում էր պոզիտիվիստական սոցիալական կառուցվածքի մոդելներից և նպատակահարմար էր գտնում դրանք կիրառել Օսմանյան կայսրության մեջ:

[167] Նազլեան Յ. Եպս., *նշվ. աշխ*, էջ 10-11:

[168] **Օգյուստ Կոնտ** (1798-1857), ֆրանսիացի փիլիսոփա, պոզիտիվիզմի և սոցիոլոգիայի՝ որպես ինքնուրույն գիտության, հիմնադիրն է: Պոզիտիվիստական համակարգն անջատում է գիտությունը մետաֆիզիկայից և աստվածաբանությունից, հասարակությունը խիստ դասակարգված է ներկայացվում, որի գաղափարական հիմքը «պոզիտիվիստական եկեղեցու հոգևոր այրերի» կողմից մշակված պոզիտիվիստական բարոյագիտությունն է: Կոնտն իր փիլիսոփայությունն անկրոն է ստեղծել, բայց այն իր հիմքում նախ քրիստոնեությունը քննադատող ու քրիստոնեությանը հակադրվող փիլիսոփայություն է:

[169] **Արթուր դե Գոբինո** (1816-1882), ֆրանսիացի գրող, դիվանագետ, գիտական ռասիզմի առաջին տեսաբաններից մեկը, որը հայտնի դարձավ իր «Մարդկային ցեղերի անհավասարության մասին» աշխատությամբ: Դե Գոբինոն ուներ որոշակի հակատրամադրվածություն քրիստոնեության հանդեպ, համարում էր, որ քրիստոնեությունը քաղաքակրթության ստեղծելու ու փոփոխելու ունակ չէ

ու ռասաների բաժանման ուսմունքը, ինչպես նաև՝ Գուստավ Լը Բոնի[170] տեսությունները: Ֆրանսիացի այս փիլիսոփաների հանդեպ համակրանքն ու նրանց գաղափարներից ազդված լինելը մասնավորապես արտացոլվում են Աբդուլլահ Ջևդեթի կողմից Գուստավ Լը Բոնի գաղափարների յուրացման մեջ[171]: Ամբոխի և ազգերի հոգեբանությանը վերաբերող Լը Բոնի հեղինակած գործերը, ըստ նրա, թույլ կտային փոխել մուսուլմանի հոգեբանությունը, սակայն այս հեղինակների գրվածքները հրամցվում էին իսլամի կողմնակից էլիտային փոքր-ինչ այլ լույսով. նշված մտածողների վերաբերյալ երիտթուրքերը ձևավորում էին այնպիսի կարծիք, որ նրանք երևան ավելի շատ իսլամի ոգուն հարազատ հեղինակներ են, քան ուղղակի եվրոպական փիլիսոփաներ, ընդգծվում էին նշված հեղինակների հակաքրիստոնեական ուղղվածությունը: Օրինակ՝ Ահմեդ Ռիզան ասում էր, որ քրիստոնեություն քարոզել մուսուլմանների մեջ անհնարին խնդիր է, այն կրոնափոխությունը, որ պիտի կատարվի մուսուլմանների մեջ, պոզիտիվիզմի կրոնափոխությունն է[172]:

Ի վերջո, երիտթուրքերի հակաքրիստոնեությունն ուներ մի կարևոր հիմնարար պատճառ, քանի որ վերաբերում էր և՛ գաղափարախոսությանը, և՛ քաղաքական հայացքներին, և՛ ընդհանուր կառույցին: Հաճախ գիտական շրջանակներում շրջանցվում է երիտթուրքերի՝ եվրոպական ծագում ունեցող ազատորմնադրության մոդելով գործելու իրողությունը: «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ազատորմնադրական

(տե՛ս де Гобино Ж. А., *նշվ. աշխ* էջ 68-78)): Դե Գոբինոն գործածում էր «արիացի» եզրույթը՝ նկատի ունենալով հնդեվրոպական մշակույթը կրող անհատին, սակայն ավելի ուշ նա այն սկսեց օգտագործել գերմանական ցեղի (‘la race germanique’) առնչությամբ: Այս տեսաբանի աշխատանքներն օգտագործվել են նաև Ադոլֆ Հիտլերի և նացիստների կողմից՝ ի սպաս դնելով իրենց քաղաքական ուտոպիաներին. տե՛ս օրինակ՝ Fortier P. A., "Gobineau and German Racism," *Comparative Literature*, 1967, Vol. 19, No.4, pp. 341-350; McDonough F., *Hitler and the Rise of the Nazi Party.* New York: Routledge, 2012, p. 56.

[170] **Գուստավ Լը Բոն** (1841-1931), ֆրանսիացի հոգեբան, սոցիոլոգ, մարդաբան և պատմաբան: Հանրաճանաչություն ձեռք բերեց մարդկային բազմության, ամբոխի հոգեբանության ուսումնասիրություններով: Հիմնական մտքերը վերաբերում են ամբոխի հոգեբանությանը (որպես կարևոր քաղաքական ու սոցիալական միավորի), արական սեռի դոմինանտությանը, ինչպես նաև նկարագրել է ամբոխի վրա ազդելու եղանակները տե՛ս Лебон Г., *նշվ. աշխ*, էջ 17-27, 179-201:

[171] Hanioğlu M. Ş., *նշվ. աշխ*, էջ 201:

[172] Տե՛ս *նույն տեղում*, էջ 202:

գիծն սկիզբ էր առնում իտալական կարբոնարիներից[173], և հետևաբար այն, ինչպես նշում է պատմաբան Արսեն Ավագյանը, «.... դասական կուսակցություն չէր, այլ գաղտնի կազմակերպություն՝ անօրինական կառույցներով»[174]:

2.1.4. Իթթիհադականությունը 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո

Թեմայի վերաբերյալ եղած գրականությունը համադրելով՝ կարելի է պնդել, որ երիտթուրքերի գաղափարախոսությունը՝ իթթիհադականությունը, չնայած բաղադրյալ գաղափարախոսություն էր և կազմակերպության գործունեության սկզբում ողողված էր իրարամերժ գաղափարներով, սակայն իր գոյության վերջին փուլում՝ 1908-1918-ին, անհողդողդ էր քրիստոնյաներին և հատկապես հայերին կոտորելու հարցում: Նրանք սկզբնապես որդեգրած եվրոպական շատ սկզբունքներ հեղափոխությունից հետո արագ մի կողմ դրեցին՝ միաժամանակ պահպանելով պոզիտիվիստական շատ գաղափարներ ու ազգերի անհավասարության մասին ընկալումներ: **«Ազատություն, հավասարություն և արդարություն»**[175] սկզբունքը ձևական դարձավ և մոռացվեց, երբ, սկսած 1908-ից, որպես ազգայնականներ որդեգրեցին **«Թուրքիան՝ բացառապես թուրքերի համար»**[176] բանաձևը:

Իթթիհադականությունն իր պանթուրքականությամբ «սրբազան» էր հռչակված, և երիտթուրքերի մշակած ցեղասպանական ծրագիրն այդ «սրբազան նպատակին» հասնելու կարևոր «ծիսակատարություններից էր»[177]: Դրա մասին են վկայում մի քանի աղբյուրներից քաղված տեղեկությունները: Մասնավորապես, Արամ Անտոնյանի «Մեծ ոճիրը» գրքում ասվում է. «....մեկը միւսէն

[173] Տե՛ս Ramsaur E. E. Jr., *նշվ. աշխ*, էջ 103-108, Авакян А., *նշվ. աշխ,* էջ 10, Sciarrone R., *L'Impero ottomano e la Grande Guerra: Il carteggio dell'addetto militare italiano a Costantinopoli (1914-1915).* Collana Storia d'Europa, Sapienza Università di Roma, Roma: Edizioni Nuova Cultura, 2015, էջ 94:
[174] Авакян А., *նշվ. աշխ,* էջ 10-11:
[175] Թուրք. "Hürriyet, Müsavat, Adalet". սա «Միություն և առաջադիմություն» կոմիտեի պաշտոնական կարգախոսն էր:
[176] Մորգենթաու Հ., *նշվ. աշխ,* էջ 44:
[177] Տե՛ս Akçam T., *նշվ. աշխ*, էջ 57-58:

արիւնարբու պաշտօնեաներու բազմութիւն մը, ոգուով նուիրուած էին այդ «սուրբ գործ»ին,–ինչպէս կը հռչակուէր պաշտօնական տօքիւմաններու մէջ»[178]: Յատկանշական են հայերի վերջին մնացորդներին կոտորել չցանկացող կայմակամին ուղղված Վանի, Բիթլիսի և այլ վայրերի կոտորածները կազմակերպող Ջևդեթ բեյի խոսքերը. «–Ուրեմն չե՞ս գիտեր թէ ի՞նչ ծրագիր կը հետապնդէ կառավարութիւնը....»[179]:

Արքեպիսկոպոս Յովհաննես Նազլյանը վերաշարադրում է Ռընե Պինոնի[180] հայտնի արտահայտությունը («Ոճը՝ գերմանական, գործը՝ թրքական»[181]) և որակավորում է Եղեռնի իրականացման մեխանիզմը, որպես՝ «Ոճը աղանդաւորական–գործը երիտասարդ–թրքական»[182]: Նա առանձնացնում է երիտթուրքերի գաղափարախոսությունը նկարագրող կետեր, որոնց մեջ խտացվածը հետևյալն է. «Կրօնական եւ փիլիսոփայական վարդապետութեան ամբողջ դրութիւն մը, որ զարդ կաղապարած է Սուլթան–Հալիֆէներուն քաղաքականութիւնը, ոչ մէկ կերպով բարեփոխուած է Երիտասարդ–Թուրքերու կողմէ, քանի որ աշխարհիկ յեղափոխութեան եւ հակակրօնական այս միեւնոյն լարակապերը, միշտ պահած են հետք մը՝ իրենց նախնիքներուն հաւատքէն, ինչպէս նաեւ անոնց բոլոր ատելութիւնը՝ ընդդէմ քրիստոնէութեան, որ կ'ամփոփուի բարբարոսութեան սա սկզբունքներուն մէջ «Միայն Թուրքը մարդ է, մարդկութեան մնացեալ մասը, ուրիշ բան չի ներկայացներ, եթէ ոչ բնութեան խեշերանքը. միայն Թուրքը ապրելու եւ իշխելու իրաւունք ունի, բոլոր ոչ–թուրքերը ճճանալու եւ կամ Թուրքին ծառայելու սահմանուած են»[183]:

---

[178] Անտոնեան Ա., *նշվ. աշխ*, էջ 41:
[179] *Նույն տեղում*, էջ 53:
[180] **Ռընե Պինոն** (1870-1958), ֆրանսիացի հրապարակախոս, գրող, Առաջին աշխարհամարտից հետո եղել է *"La Voix de l'Arménie"* ամսագրի խմբագիրը, հեղինակ է Օսմանյան կայսրությանը և Հայոց ցեղասպանությանը վերաբերող մենագրությունների՝ Pinon R., *L'Europe et l'Empire Ottoman. Les aspects actuels de la Question d'Orient.* Paris: Librairie académique Perrin et Cie, Libraires - Editeurs, 1913, Pinon R., *L'Europe et la Jeune Turquie. Les aspects nouveaux de la Question d'Orient.* Paris: Librairie académique Perrin et Cie, Libraires - Editeurs, 1911, Pinon R., *La suppression des Arméniens, méthode allemande, travail turc*. Paris: Librairie académique Perrin et Cie, Libraires - Editeurs, 1916:
[181] Ռընե Պինոնի՝ Եղեռնին նվիրված գրքի վերնագրի մի մասն է. Pinon R., *La suppression des Arméniens, Méthode allemande, travail turc*. Paris: Librairie académique Perrin et Cie, Libraires - Editeurs, 1916.
[182] Նազլեան Յ. Եպս., *նշվ. աշխ*, էջ 8-9:
[183] *Նույն տեղում*, էջ 14:

Համաձայն երիտթուրքական օրաթերթերի հրապարակումների՝ նրանք թուրքերին համարում են իշխող ցեղ, իսկ պատերազմը, ըստ նրանց, իշխող ցեղերի ուժի արտահայտություններից է՝ հանդեպ թույլ ցեղերի, ովքեր պետք է կրեն դրա հետևանքները, որքան էլ դրանք ծանր լինեն[184]: Այս ամենը, ինչպես վերը նշվեց, արքեպիսկոպոսը մեկնաբանում էր որպես պոզիտիվիստական գաղափարներով տոգորված լինելու արդյունք: Եվ արդեն 1911 թ. Սալոնիկում կայացած երիտթուրքերի IV ժողովում (սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 9-ը) ընդունվում է բնակչության իսլամացման մասին դրույթը, որը նախատեսում էր ուծացում, իսկ անհաջողության դեպքում՝ ոչնչացում[185]: Այդ որոշումների գործադրումն արտոնվեց ու հանրայնացվեց 1914 թ. նոյեմբերի 14-ին ջիհադի հայտարարմամբ:

2.1.5. Երիտթուրքերի կրոնապիլ իսոփայությունը. կրոնը քաղաքականության մեջ

Իհարկե, երիտթուրքական գաղափարախոսության՝ կրոնականի հետառնչվող և միաժամանակ չառնչվող երևույթներն են՝ աթեիզմը և ագնոստիցիզմը, սակայն, ինչպես նշվեց, դրանք միահյուսված էին այլ գաղափարական դաշտերին՝ կենսաբանական մատերիալիզմին, պոզիտիվիզմին, ազատորմնադրությանը, սոցիալական դարվինիզմին և այլն: Երիտթուրքերից կազմված կառավարությունը պաշտպանում էր մուսուլման ազգաբնակչության շահերը, քանի որ կրոնը սոցիալական տեղական ուժի քաղաքական կառույցին միավորող գործոնն էր[186]: Երիտթուրքերն աջակցում էին մուսուլմանական բոլոր խմբավորումներին, բացառությամբ նաքշբանդիների[187]:

---

[184] Տե՛ս *նույն տեղում*, էջ 10-16:
[185] Авакян А., *նշվ. աշխ*, էջ 43-45:
[186] Տե՛ս Mardin Ş., "Ideology and Religion in the Turkish Revolution," *International Journal of Middle East Studies*, 2 1971, էջ 205:
[187] Տե՛ս Кондакчян Р., *նշվ. աշխ*, էջ 34: **Նաքշբանդի միաբանություն (նաքշբանդիյա)**, առաջացել է Աբու Յաքուբ ալ-Համադանիի (մահացել է 1140 թ.) *թարիքայից*, իսկ հետագայում իր անունը վերցրել է տաջիկ խորհրդապաշտ Բահա ալ-դին ալ-Նաքշբանդիից (մահացել է 1389թ.), ռադիկալ *սուննի* խումբ, որը հակադրվում էր բեկթաշիների լիբերալ իսլամին:

Երիտթուրք եռապետների՝ աթեիստ[188] լինելու մասին է խոսում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն, ով հաճախ առնչվել նրանց հետ նաև ոչ պաշտոնական հանդիպումների ընթացքում: Ահա թե ինչ է ասում նա Թալեաթի մասին. «Թալեաթի ծագումն այնքան մշուշապատ էր, որ դրա շուրջ բազում պատմություններ էին պտտվում: Ըստ վարկածներից մեկի՝ նա Բուլղարիայի գնչուներից էր, համաձայն մեկ այլ պատմության՝ պոմակ էր. պոմակ էին կոչում բուլղարական ծագում ունեցող այն անձանց, ում նախնիները դարեր առաջ մահմեդականություն էին ընդունել: Ըստ վերջին վարկածի, որը, ըստ իս, համապատասխանում էր իրականությանը, Օսմանյան կայսրության այս տիրակալը ազգությամբ ամենևին էլ թուրք չէր: Ես անձամբ կարող եմ հավաստել, որ իսլամը նրան բոլորովին չէր հուզում, քանզի իր կուսակցության բազում առաջնորդների նման նա էլ էր արհամարհանք տածում ցանկացած դավանանքի հանդեպ: Մի անգամ նա ասաց ինձ. «Ատում եմ բոլոր քահանաներին, րաբբիներին ու խոջաներին»[189]: Էնվերի մասին Մորգենթաուն ասում է, որ նա ուներ երկու պատմական կուռքեր՝ Նապոլեոնն ու Ֆրիդրիխ Մեծը, հիացած էր ամենայն գերմանականությամբ և պրուսականությամբ, հավատում էր, որ ինքը «ճակատագրի մարդ է»[190], ուներ համեստ ծագում, սակայն նրա կինը սուլթանական տոհմից էր[191]: Ջեմալը՝ եռապետության երրորդ անձը, մինչև պատերազմը ֆրանկոֆիլ էր, համաձայն Հենրի Մորգենթաուի[192]:

1908 թ. ընդունված սահմանադրությամբ հայտարարվում էր կայսրության բոլոր հպատակների հավասարությունն օրենքի

---

[188] Չնայած դրան, երիտթուրքերի հիմնի համաձայն, սուլթանը մեղադրվում էր աթեիստ լինելու մեջ, իսկ սկզբնական շրջանի քարոզչական պամֆլետներում Աբդուլ Համիդ II-ը դատաստանի է ենթարկվում Մուհամեդ մարգարեի, հայտնի խալիֆների, օսմանյան սուլթանների կողմից և մահվան դատավճռի է արժանանում. տե՛ս Hanioğlu M. Ş., *նշվ. աշխ,* էջ 200: Սակայն երիտթուրքերի աթեիստ լինելը չէր նշանակում, որ իրենք չէին կարող կրոնական տարբերության հիման վրա թիրախավորել քրիստոնյաներին: Քրիստոնյաների հանդեպ բացասական վերաբերմունքն ակնառու էր, և դա արտացոլված է ականատեսների, միսիոներների, վերապրողների հուշերում: Մասնավորապես Ավրորա Մարդիգանյանի պատմության մեջ ասվում է. «Թալեաթ բեյն ուղարկեց իր հայտնի պատասխանը, որ հիմա այրում է յուրաքանչյուր հայի սիրտ, որտեղ էլ նա գտնվելիս լինի: Այդ պատասխանը բոլորն են լսել: Ահա Թալեաթ բեյի հեռագիրը. «Ինչ էլ քրիստոնյաների հետ անեք, զվարճալի է...» (Մարդիգանյան Ա., *նշվ. աշխ,* էջ 101):

[189] Մորգենթաու Հ., *նշվ. աշխ,* էջ 21: Հմմտ. *Memoirs of Halidé Edib...*, p. 319.

[190] Տե՛ս *նույն տեղում,* էջ 30:

[191] Տե՛ս *նույն տեղում,* էջ 36:

[192] Տե՛ս *նույն տեղում,* էջ 81:

առջև՝ առանց ազգային պատկանելության ու կրոնի տարբերակման[193]: Սակայն սահմանադրության II հոդվածով միաժամանակ իսլամը հայտարվեց պետական կրոն[194]:

Դեպքերի քննությունը ցույց է տալիս, որ երիտթուրքերը քրիստոնյաների հանդեպ սկզբում առերես որդեգրել էին համագործակցելու քաղաքականությունը, իսկ հետագայում՝ ոչնչացնելու: Երիտթուրքերը միահյուսել էին պանթուրքիզմի ու պանիսլամիզմի գաղափարախոսությունները, սակայն պանիսլամիզմին ապագա դերակատարություն չէին տալիս: Ցեղասպանության համար թիրախդարձան կայսրության գրեթե բոլոր քրիստոնյաները, առաջին հերթին՝ հայերը (առաքելական, կաթոլիկ և բողոքական)[195], ապա՝ ուղղափառ պոնտացի հույները, ասորի հակոբիկյանները, քաղդեացիները[196]: Եղեռնի իրականացման կրոնական նրբերանգը, ատելության խորը զգացմունքները քրիստոնյաների հանդեպ հատկապես երևում են քրիստոնյաների ստեղծած կրոնամշակութային արժեքները ոչնչացնելու մեջ. ավերվում էին եկեղեցիները, փակվում էին կրթական հաստատությունները, սպանվում էին հոգևորականները, առաջարկվում էր իսլամանալ՝ մահանալու փոխարեն. բռնի իսլամացման էին ենթարկվում հատկապես հայ կանայք ու երեխաները:

Կրոնական տարբերությունը որպես գործիք օգտագործելը երիտթուրքերի ցեղասպանական ծրագրի էական տարրերից էր և այդ իմաստով առաջնահերթ էր իսլամադավան երկու կարևոր շերտերի՝ նախ՝ հոգևոր խավի, ապա՝ կայսրության մուսուլմանների համաձայնությունն ստանալը: Դա, ինչպես պարզվեց, այնքան էլ դժվար չէր, քանի որ կայսրության իսլամադավանները 1914 թ.

---

[193] Տե՛ս Кондакчян Р., *նշվ. աշխ*, էջ 34:
[194] Տե՛ս *նույն տեղում*, էջ 34-35:
[195] Տե՛ս *United States Official Documents on the Armenian Genocide*, compiled and introduced by Ara Sarafian, Vol. I…, էջ 117, 143; *United States Official Documents on the Armenian Genocide*, compiled and introduced by Ara Sarafian, Vol. II…, էջ 19, 62, 91; *United States Official Documents on the Armenian Genocide*, compiled and introduced by Ara Sarafian, Vol. III…, 1995, էջ 57, 137:
[196] Հատկապես քրիստոնյաներին սպառնացող վտանգներից են խոսում մի շարք օտարերկրյա դիվանագիտական կորպուսների աշխատողներ. տե՛ս *United States Official Documents on the Armenian Genocide*, compiled and introduced by Ara Sarafian, Vol. I…, էջ 54, 55, 137, 153; *United States Official Documents on the Armenian Genocide*, compiled and introduced by Ara Sarafian, Vol. II…, էջ 51:

նոյեմբերի 14-ին ջիհադի հայտարարմամբ ստացել էին այդ արտոնությունը՝ աստվածաբանորեն ընկալելով որպես կրոնական պարտականություն:

2.2. Իթթիհադական ջիհադը

1914 թ. նոյեմբերի 14-ին Օսմանյան կայսրությունը պաշտոնական հայտարարությամբ մտավ Առաջին համաշխարհային պատերազմի թատերաբեմ: 1914 թ. նոյեմբերյան ջիհադի կոչերի շարքը աղետաբեր եղավ օսմանյան քրիստոնյաների, առաջին հերթին՝ հայերի համար: Ջիհադի գաղափարի անմիջական հեղինակը երիտթուրքական կառավարությունն էր՝ այդ հարցում ակտիվ աջակցություն ստանալով նաև Կայզերական Գերմանիայից[197]: Սակայն ի վերջո օսմանյան ջիհադը՝ որպես ռազմավարական զենք, չծառայեց գերմանական ծրագրերին ու շահերին, այն է՝ չուղղվեց Անտանտի դաշինքի երկրների դեմ, այլ ներքին կիրառություն ու ավերիչ ներգործություն ունեցավ Օսմանյան կայսրությունում բնակվող քրիստոնյաների համար:

Ջիհադի կոչերը, դրանց հրապարակման հետ կապված որոշ մանրամասներ, կոչերի տեքստային թարգմանությունները, թշնամու ստեղծումն ու թիրախավորումը կներկայացնենք ու կվերլուծենք այս ենթավերնագրի շրջանակներում: Ջիհադի կոչերի, պարսավագրի և թռուցիկի տեքստերը ներկայացված, ինչպես մի մասն առհասարակ հայերեն թարգմանված են առաջին անգամ. համենայն դեպս, երկար գիտական փնտրտուքից հետո մեզ չհանդիպեցին տվյալ տեքստերի մեկտեղում, ամբողջական թարգմանություն կամ բովանդակային լիակատար նկարագրություն, ինչպես նաև՝ ուսումնասիրություններ՝ թե՛ հոդվածի, թե՛ մենագրության

[197] Որոշ գերմանացի մտավորականների ջանքերով տպագրված սրբազան պատերազմի գրքույկ-պարսավագրերի մասին տե՛ս հոլանդացի իսլամագետ Քրիստիան Ս. Հուրգրոնյեի հետևյալ աշխատությունը՝ Hurgronje C. S., *The Holy War Made in Germany*. New York & London, The Knickerbocker Press, 1915՝ էջ 34-ից սկսած, իսկ առհասարակ ջիհադի կոչի մշակման մեջ Գերմանիայի մասնակցության վերաբերյալ տե՛ս հետևյալ ուսումնասիրությունը՝ Lüdke T., *Jihad Made in Germany: Ottoman and German Propaganda and Intelligence Operations in the First World War*, (Studien zur Zeitgeschichte des Nahen Ostens und Nordafrikas, 12). Münster: LIT Verlag, 2005:

տեսքով: Ուստի ստորև կմեկտեղվեն օսմանյան ջիհադի պրոպագանդման համար տպագրված՝ օսմանյան ամենաազդեցիկ՝ աշխարհիկ ու հոգևոր առաջնորդների կողմից հեղինակված կամ հաստատված կոչերի հայերեն թարգմանված տեքստերը, կխոսվի դրանց տեքստուալ կրոնական երանգավորման մասին, ինչպես նաև ուղիղ մեջբերումներով կներկայացվեն դրանց մասին հիշատակումներ՝ թե՛ հայ, թե՛ արտասահմանյան մամուլի մեջ ու ժամանակակիցների վկայություններում: Ուսումնասիրության այս հատվածի նպատակն է ապացուցել ջիհադի կոչերի կրոնական ենթատեքստը, դրանց շարադրմանն ուղեկցող պատմական հանգամանքները, ինչպես նաև հայտարարությունների կապը, ազդեցությունն ու հետագա կիրառումը հայերի դեմ իրականացված ցեղասպանության մեջ:

2.2.1. Օսմանյան վերջին ջիհադի դրդապատճառներն ու իրականացնողները

Մուսուլմանի ամենանվիրական պարտականություններից մեկը՝ կրոնի հիմնադիր Մուհամեդի կողմից ամրագրված ջիհադին մասնակցելն է: «Ջիհադ» բառն արաբերեն (արաբ. جهاد) նշանակում է «պայքար», «ջանք», Ղուրանում գտնում ենք նաև բառի «պատերազմ» համարժեքը: Բառն ընդգրկող և հավատքային իմաստը բացատրող ղուրանյան ամենաընդունված հիմնարար այաթներից են՝ 9.24 («Ասա՛, «եթէ ձեր հայրերը եւ ձեր որդիքը եւ ձեր եղբայրները եւ ձեր կնիկները եւ ձեր ցեղը եւ այն ստացուածքը, որ դուք վաստակել էք, եւ առուտուրը, որի համար վախենում էք թէ չի ծախւի, եւ ձեր բնակարանները որոնց հաւանում էք, ձեզ համար աւելի սիրելի են քան թէ Աստուած եւ նրա մարգարէն եւ նրա ճանապարհում պատերազմելը, այն ժամանակ սպասեցէ՛ք մինչեւ որ Աստուած իր հրամանովը կը գայ, եւ Աստուած անզգամ մարդոցը չի առաջնորդի»»), 9.29 («Պատերազմեցէ՛ք նրանց հետ, որ չեն հաւատում Աստուծուն եւ ոչ էլ վերջին օրւան եւ պիղծ չեն համարում Աստուծոյ եւ նրա մարգարէի պիղծ հրատարակածը ...») և 60.1 («Ո՛վ հաւատացեալներ, դուք իմ եւ ձեր թշնամին բարեկամի՛ ընդունէք, որ նրանց սէր էք

ցոյց տալիս, բայց նրանք արդէն չեն հաւատում այն բանին, որ եկել է ձեզ համար ճշմարտութիւնից. նրանք դուրս են արել մարգարէին եւ ձեզ, որովհետեւ հաւատում էք ձեր Տէր Աստուծուն: Եթէ դուք դուրս էք եկել, որ պատերազմէք իմ ճանապարհումը եւ ուզում էք իմ հաճութիւնը, բայց նրանց հետ ծածուկ բարեկամութիւն էք անում. Ահա՛ ես գիտեմ ինչ որ ծածկում էք եւ ինչ որ յայտնում էք: Ձեզնից ով անէ այս, նա արդէն խոտորած է ուղիղ ճանապարհից»):

Օսմանյան կայսրության պատմության ընթացքում բազմիցս եղել են ջիհադի կոչեր ու արշավներ, սակայն 1914-ի ջիհադի կոչերը տարբերվում էին թե՛ ջիհադի գաղափարը հղացողների ինքնության ու զբաղեցրած դիրքի իմաստով, թե՛ վերջնական արդյունքով: Իսլամադավանի համար պատերազմ մղելը միշտ ենթադրում է ջիհադի դուրս գալ, այն է՝ իսլամի դեմ ոտնձգություններ կատարած այլադավանների դեմ պայքար մղել կամ, որ նույնն է, որպեսզի իսլամադավանը պատերազմ մղի, անհրաժեշտ է, որ այն համապատասխանի ջիհադի վերաբերյալ ղուրանյան սկզբունքներին[198]: Օրինաչափ է, որ հաճախ անկրոն երիտթուրքերը պետք է օսմանյան իսլամադավանների հետ խոսեին իրենց իսկ լեզվով՝ արտոնելով կրոնական պատերազմ մղել, հաստատված բոլոր կանոնների համաձայն՝ օգտագործելով օսմանյան հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների հեղինակությունը: Մինչև Գերմանիայի կողմն անցնելը Օսմանյան կայսրությունից Անտանտի երկրները պահանջել էին չեզոք դիրք բռնել, մինչդեռ գերմանական կողմը հանդես էր եկել ոչ թե պահանջներով, այլ առաջարկներով ու խոստումներով, ինչպես նաև, գիտակցելով ջիհադի կոչի կարևորությունը, մասնակցել էր տեքստերի խմբագրմանը, իր ձեռքն էր վերցրել կայսրության պատերազմական գրաքննությունը[199]: Պատմաբան Մեհմեդ Բեշիքչին ասում է, որ եթե սուլթանը պաշտոնապես 1914 թ. նոյեմբերի 14-ին չհայտարարեր սրբազան

[198] Տե՛ս օրինակ՝ Гилязов И. А., «Священная война–джихад» как инструмент военно-политической стратегии Германии в годы Первой мировой войны», *Сборник статей участников Международной конференции "Тюрко-мусульманский мир: идентичность, наследие и перспективы изучения"* (Казань, 27-28 мая 2014г.), 2015, էջ 317, էլ. տարբերակը տես՝ http://dspace.kpfu.ru/xmlui/bitstream/handle/net/113189/_Holy_War__and_jihad_as_part2014_310_321.pdf?sequence=-1&isAllowed=y (դիտված 08.XII.2017 թ.):

[199] Այս մասին տե՛ս օրինակ՝ Миллер А. Ф., *Краткая история Турции*. ОГИЗ, Государственное издательство политической литературы, 1948, с. 150.

պատերազմ, ապա Օսմանյան կայսրությունն ի վերջո դրա կարիքը պիտի ունենար ու պիտի գործածեր հատկապես ջիհադի հռետորաբանություն, քանի որ դա էր մարդկանց ներքին կենտրոնացումն օրինականացնող հիմնական լծակը՝ հավելելով «... ջիհադի այս հռետորաբանությունը չհայտնագործվեց Առաջին աշխարհամարտ մտնելու համար, այն արդեն գոյություն ուներ, գրեթե առօրյա ֆենոմեն էր, երբ պետությունը կրկնաբար գործածում էր ջիհադը... Սակայն Առաջին աշխարհամարտում ուժի կենտրոնացման աստիճանը դրդեց Օսմանյան կայսրությանը ուժգնացնել ջիհադի հռետորաբանությունը՝ ներգրավելով նոր կրոնական քարոզչական մոտիվներ ու գործիքներ և վերակենդանացնելով նրանք, որոնք արդեն իսկ գոյություն ունեին»[200]:

Արդյունքում ջիհադը, որպես կարևոր լծակ, գործածելի եղավ երիտթուրքերի պատերազմ մղելու ցանկության համար, ուղղվեց ողջ աշխարհի իսլամադավաններին, սակայն լսելի եղավ հիմնականում ու լայնորեն միայն Օսմանյան կայսրության տարածքում, և ջիհադի թիրախը եղան օսմանյան քրիստոնյաները: Այս և մյուս հարցերին կանդրադառնանք՝ որպես մեկնակետ ընդունելով հետևյալ տրամաբանությունը. քանի որ գերմանական կողմի քաղաքական սպասելիքները, այն է՝ Անտանտի երկրների դեմ ոտքի հանել իսլամադավաններին, ջիհադի կոչերի արդյունքում չիրականացան, մենք չենք դիտարկի գերմանական մասնակցությունը, որին նախկինում նվիրվել են շատ ուսումնասիրություններ, այլ միայն կկենտրոնանաք ջիհադի իթթիհադական իրականացման վրա և կանդրադառնանք քրիստոնյաների՝ հատկապես հայերի հետկապված հարցերին:

Ինչպես նշվեց, 1914 թ. օսմանյան ջիհադը բնույթով յուրահատուկ թուրքական քաղաքական ջիհադ էր, քանի որ ջիհադի կոչերը միանշանակ չընկալվեցին ամբողջ իսլամական աշխարհում, շատերն այն ընդունեցին որպես երիտթուրքերի քաղաքական

[200] Beşikçi M., "Domestic Aspects of Ottoman Jihad. The Role of Religious Motifs and Religious Agents in the Mobilization of the Ottoman Army," *Jihad and Islam in World War I. Studies on the Ottoman Jihad on the Centenary of Snouck Hurgronje's "Holy War Made in Germany"*, edited by Erik-Jan Zürcher, Leiden University Press, 2016, p. 96.

ուտոպիաների արդյունք: Սակայն ցեղասպանության ֆենոմենի ուսումնասիրության կարևոր դրույթներից է այն, որ ցեղասպանություն իրագործելու հարցում միայն քաղաքական վերնախավի ծրագիրը դիտարկելը սխալ է, քանի որ այն համալիր ու բաղադրյալ գործընթաց է:

Ջիհադի այս կոչերն այն խթանն էին, որով երիտթուրքերի հաշվարկով պետք է ոտքի կանգնեցնեին իսլամադավան զանգվածներին[201] ընդդեմ քրիստոնյաների՝ այն կայսրության տարածքում, որտեղ դարերով դժվարին փոխհարաբերություններ էին հաստատվել քրիստոնյա տեղաբնիկ ազգերի և իսլամ ընդունած թյուրքական քոչվորների սերունդների միջև: Իսլամադավան որոշ հոգևոր առաջնորդներ իրենց մտահոգությունն էին հայտնում առ այն, որ իթթիհադականներն իսլամը տանում են կործանման՝ զանց առնելով իսլամի հիմնադրույթները պետական կառուցվածքի ու ղեկավարման մեջ[202]:

Իսլամական աշխարհայացքն աշխարհը բաժանում է երկու տիրույթի՝ պատերազմ մղելու տիրույթ, որը պատկանում է ոչ իսլամադավաններին, և իսլամի տիրույթ՝ այն տարածքները, որտեղ ապրում են իսլամադավանները՝ որպես միակ ճշմարիտ աստծուն՝ Ալլահին հավատացողներ: 1914-ին հայտարարված ջիհադի լայն քարոզչության անհրաժեշտությունն այն պատճառով էր, որ ուղղորդվեր այն տարածքների վրա, որոնք համարվում էին ջիհադի՝ պատերազմ մղելու տարածք՝ *դար ուլ-հարբ*՝ «պատերազմի տուն»: Սակայն մեր դիտարկմամբ ստացվեց հետևյալ պատկերը. այն դեպքում, երբ Օսմանյան կայսրությունն ամբողջությամբ համարվում էր *դար ուլ-իսլամ*՝ «իսլամի տուն», նրա ներսում կային այլադավաններ, որոնց տիրույթն իսկ *դար ուլ-հարբ* էր՝

---

[201] Զանգվածների դերակատարության գործոնին հետևյալ ձևակերպումն է տալիս պատմաբան Սուրեն Մանուկյանը. «Հայոց ցեղասպանության պատմությունը իսկական մարդկային զանգվածներին ոճրագործության մղող գործընթաց ներգրավելու պատմություն է» (տե՛ս Մանուկյան Ս., «Հայոց ցեղասպանության ժամանակ զանգվածային մասնակցության «մշակութային» նախադրյալները», *Ցեղասպանագիտական հանդես 4(1)*, ՀՑԹԻ, Երևան, 2016, էջ 151):

[202] Մուֆթիներ կային, ովքեր վախենում էին Ալլահի պատժից, որ կարող էր ընկնել մուսուլմանների վրա՝ քրիստոնյաներին կոտորելու պատճառով, և հանդիմանում էին քաղաքական իշխանություններին. տե՛ս թ. 186 հղումը հետևյալ գրքում՝ Гуайта Дж., *նշվ. աշխ*, էջ 213-214, համմտ. Վերֆէլ Ֆ., *Մուսա Լերան Քառասուն Օրը (ՎԷա)*, Պէյրութ, 2010, էջ 608:

«պատերազմի տուն»: Ստացվում է անհարիր ու ոչ բնականոն իրավիճակ. *դար ուլ-իսլամի* տարածքի ներսում կան *դար ուլ-հարբեր*: Ի տարբերություն ջիհադի մտահղացմանը կողմնակից մյուս կողմի՝ գերմանացիների, երիտթուրքերի շեշտադրումը տարածվեց առաջին հերթին ներքին «թշնամիների» դեմ մղվող ջիհադի վրա: Ջիհադը որպես կողմնակալ էին մեկնաբանում շատ իսլամադավան հոգևորականներ, քանի որ պատերազմի մեջ Օսմանյան կայսրության դաշնակիցները ևս այլադավան ու «անհավատ» էին, սակայն նրանց դեմ մղվող պատերազմ չկար. «Հոգևորականներն իրենց դժգոհությունն էին արտահայտում, որ երիտթուրքերն ընկերական հարաբերություններ էին հաստատել կայզերական Գերմանիայի հետ, այսինքն՝ գյավուրների հետ....»[203]: Փորձելով կառավարելի դարձնել իսլամական հոգևոր դասին՝ երիտթուրքերը որոշեցին հարցի լուծումն ապահովել ահաբեկմամբ՝ ընդունելով այնպիսի որոշումներ, որոնք կխախտեին իսլամի դիրքը հասարակական և քաղաքական կյանքում, օրինակ՝ անջատելով քաղաքացիական դատարանները կրոնականից: Բայց նրանք փորձում էին զգույշ լինել իսլամադավան հոգևորականների հետ առճակատումից, քանի որ վախենում էին մուսուլման խավի հզոր աջակցությունից զրկվել՝ իրենց նպատակներն իրականացնելու ճանապարհին[204]:

Ապամարդկայնացումը կամ **դեհումանիզացումը** ցեղասպանությունների ամենաբնորոշ գծերից մեկն է. դրա հետևանքով թիրախավորված խումբը պետք է կա՛մ հավասարեցվի կենդանական մակարդակի, կա՛մ պիտի դեմոնիզացվի՝ դիվականացվի, այսինքն, նրան վերագրվեն ոչ մարդկային ստորակարգ կամ ծայրահեղ բացասական բարոյական գծեր[205]: Այս իմաստով ընդունված է պիտակավորելը համարել հոգեբանորեն թշնամանքի ստեղծման և ամրապնդման տարրերից մեկը: Օսմանյան կայսրությունում քրիստոնյաներին կոչում էին «անհավատ»՝ *գյավուր* (թուրք. *Gâvur,* ծագում է արաբերեն كافر (*kāfir*) բառից): Սա կրոնական գործոնի վճռական դերակատարության մասին վկայող լայն դիսկուրսի թեմա

[203] Кондакчян Р., *նշվ. աշխ,* էջ 38.
[204] Տե՛ս *նույն տեղում:*
[205] Համմ. Piven J. S., "Lord of the Flies as Parable of the Invention of Enemies, Violence and Sacrifice," *Jihad and sacred vengance: Psychological Undercurrents of History*, edited by Piven J. S., Boyd Chr., Lawton H. W., Bloomusalem Press, 2002, p. 135; Жирар Р., *նշվ. աշխ,* էջ 8-10:

է: *Գյավուր*ի ենթատեքստը կրոնականն է, և դրա գործածումն ավելի ընդունված էր, քան քրիստոնյա ազգերի էթնոնիմները՝ *Էրմենի*, *յունան*, *ասուր* և այլն: Պետք է ուշադրություն դարձնել այն փաստին, որ *Էրմենի*ն առանց *գյավուր*ի չէր ընկալվում թուրքերի կողմից, այսինքն՝ եթե ոմն մեկը *Էրմենի* էր, նշանակում է՝ *գյավուր* էր, իսկ *գյավուր*ը, ըստ Ղուրանի, թշնամի է, իսկ *Էրմենի*ն բովանդակային ամրություն չուներ այս իմաստով, քանի որ *Էրմենի*ն կարող էր մուսուլման դառնալ ու դադարել *գյավուր* լինելուց: Այն դեպքերում, երբ հայերը մահվան սպառնալիքով մուսուլմանություն էին ընդունում, թուրքերի համար դադարում էին *գյավուր* լինելուց, իսկ արդեն մուսուլմանին սպանելը մեղք է համարվում ըստ Ղուրանի[206]: Մինչև Եղեռնը հայերին տրվող *"Millet-i Sadıka"* («Հավատարիմ ժողովուրդ» ընդհանուր անվանումը տրվել է Օսմանյան կայսրության ոչ իսլամադավան երեք ազգի՝ հայերին, հրեաներին և հույներին) անվանումը վերացել էր, և արդեն ջիհադի կոչին հետևած մոտակա ամիսներին թուրքերն սկսել էին հայերին կոչել այլ կերպ, ինչպես ասում է Յակոբ Քյունցլերը. «.... շուտով մահմեդականները հայերի մասին խոսելիս նրանց միայն «դավաճան հայ ազգ» էին կոչում (թուրք. *"Melun ermeni Millet")*[207]»:

Հայտնի է, որ իսլամական ուսմունքի համաձայն՝ ջիհադը երկշերտ է՝ ներքին և արտաքին[208]: Արտաքին ջիհադը կարող է պսակվել հաջողությամբ, երբ ներքին ջիհադն իրականացվել է լավագույնս[209], այսինքն, առաջին հերթին ջիհադը պետք է ուղղվի ներքին թշնամիների դեմ: Եվ այդ ներքին թշնամիներն Օսմանյան կայսրության քրիստոնյաներն էին՝ հայերը, հույները,

---

[206] Տե՛ս օրինակ՝ «....ասկյարներն սպանեցին իմ փոքրիկներին՝ նրանց գլուխներն իրար խփելով: Նրանք բռնաբարեցին Շիրինին, հետո կտրեցին նրա կրծքերը: Նա տանջամահ լինելով հոգին ավանդեց իմ աչքի առջև, իսկ ինձ կենդանի թողեցին՝ ասելով. «Դու կրոնափոխ ես եղել, դու մուսուլման ես» (Մարդիգանյան Ա., *նշվ. աշխ*, էջ 69, հմմտ. Гуайта Дж., *նշվ. աշխ*, էջ 213-214):

[207] Քյունցլեր Յ., *Արյան և արցունքի երկրում: Տպավորություններ Միջագետքից՝ աշխարհամարտի տարիներին (1914-1918)*, թարգմ.՝ Սաքայան Դ., Մակարյան Է., Երևան, 2011, էջ 29:

[208] Տե՛ս Streusand D. E., "What Does Jihad Mean?" *Middle East Quarterly*, September 1997, էջ 9-17:

[209] Տե՛ս *նույն տեղում*, նաև հմմտ. Burkholder R., "*Jihad -- 'Holy War', or Internal Spiritual Struggle?*" http://www.gallup.com/poll/7333/jihad-holy-war-internal-spiritual-struggle.aspx (դիտված 19.XI.2017):

ասորիները: Հետևաբար ջիհադի հայտարարությամբ երիտթուրքերը, այդ թվում երիտթուրք գործիչ շեյխ ուլ-իսլամ[210] Հայրի էֆենդին[211], հեշտացրին ու արտոնեցին շարքային մուսուլմանների[212] մասնակցությունը ցեղասպանական ծրագրի իրագործմանը՝ ապահովելով ծրագրի ամենաազդեցիկ գործոններից մեկի՝ կրոնական գործոնի ներկայությունը և դրա արդարացումը միաժամանակ: Սակայն այդ ներքին ջիհադը ևս «կողմնակալ էր», քանի որ ուղղված էր ոչ բոլոր ոչ մուսուլմանների դեմ. օրինակ, հրեաները, ի բարեբախտություն իրենց, չէին ենթարկվում բռնաճնշումների, քանզի պետական հակաքարոզչությունը, ջիհադը և բռնաճնշումներն ուղղված էին օսմանյան քրիստոնյաների և հատկապես հայերի դեմ: Այս առիթով Հենրի Մորգենթաուն գրում է. «Բոլոր քրիստոնյաները պաշտոնապես ենթարկվում էին բոյկոտի և ոչ միայն Փոքր Ասիայում, այլև Կոստանդնուպոլսում: Այս մեթոդը, սակայն, չէր տարածվում հրեաների վրա, ովքեր միշտ շատ ավելի ընդունելի են եղել թուրքերի համար, քան քրիստոնյաները»[213]:

Մյուս կողմից, քանի որ իսլամը, ի տարբերություն քրիստոնեության, ճակատագրապաշտական հստակ հիմքեր ունի[214], կարող է մուսուլմանին տալ այն հավաստիացումը, որ Ալլահն է կանգնած եղել յուրաքանչյուր մուսուլմանի արարքի հետևում, կամ էլ՝ հայերի կոտորվելը Ալլահի կամքն է եղել. «Իսլամական

---

[210] ***Շեյխ ուլ-իսլամ-*** Մինչև Մահմուդ Բ.-ը (1808-1839) մահմեդական հոգևորականության ամենաբարձր պատվո տիտղոսը: Հետագայում շեյխուլ-իսլամը դարձավ սուլթանական դիվանի բարձր պաշտոնյաներից մեկը՝ Մեծ վեզիրից հետո ամենաբարձր պաշտոնյան (Տե՛ս Փափազյան Ա., *Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ-մահմեդական ժողովուրդների մասին [1839-1915թթ.]*, Երևան, 2002, էջ 241):

[211] **Ուգրուփլու Մուստաֆա Հայրի էֆենդի** (Հայրի բին Ավնի Էլյուրգաբի, 1867-1921), երիտթուրք գործիչ, 1914-1916 թթ. եղել է Օսմանյան կայսրության շեյխ ուլ-իսլամը: Ջիհադի ֆեթվաները թողարկող այս շեյխ ուլ-իսլամը 1915 թ. սեպտեմբերին հրաժարական է ներկայացնում, որը հետագայում մեկնաբանվում է՝ իբր նա դեմ էր օսմանյան քրիստոնյաների կոտորածներին: Սակայն որոշ մասնագետներ գտնում են, որ Հայրի էֆենդին այլ պատճառով հեռացավ, նա ուղղակի դեմ էր ապագայում՝ 1916 թ., սպասվող իրավաբանական ռեֆորմին և հետագայում մնաց երիտթուրքերի բարեկամը (տե՛ս Ջ. Գուայտայի մեկնաբանությունը. Гуайта Дж., *նշվ. աշխ*, էջ 53):

[212] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս հետևյալ ուսումնասիրությունը. Գրիգորյան Հ., *Ջանգվածները և ջանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը*, Հիշողության ազգագրություն 6, Երևան, 2017:

[213] Մորգենթաու Հ., *նշվ. աշխ*, էջ 43-44:

[214] *Ալ-Քադայի* կամ *ալ-Քադարի* ուսմունքն իսլամում. տե՛ս Ղուրան, 2:255, 9:51, 25: 2, 10.61, 87:1-3 և այլն:

ավանդույթը, ի տարբերություն քրիստոնեականի, չի ճանաչում այլ պատմություն, քան սրբազան պատմությունը. բոլոր իրադարձությունները մարդկության պատմության մեջ, արարչագործության առաջին օրերից սկսած մինչև ահեղ դատաստան, մուսուլմանի համար սակրալ են»[215]: Կրոնական տեքստի նպատակային օգտագործումն այդպիսով թեթևացրեց վիճակը, ինչի հետևանքով առավել ագույնս հեշտ դարձավ չպատերազմող խաղաղ անզեն բնակչության հանդեպ կիրառել կրոնական բռնություններ, որոնք մուսուլմանի աչքին բռնություններ չէին, այլ միսիոներություն[216]: Պետությունը նաև կանխեց այն դեպքերը, երբ հնարավոր կլիներ որևէ կերպ օգնել հայերին՝ պատժի կամ մահվան սպառնալիքով. «Ալանին մունետիկը գիւղի բոլոր փողոցներուն մէջ շրջեցաւ, պոռալով, թէ՝ ոեւէ մէկը որ ոեւէ ձեւով կ'օգնէ հայերուն, անոնց ուտելիք, դրամ կամ ոեւէ բան տալով, ծեծի պիտի ենթարկուի ու բանտ նետուի»[217]: Քրիստոնյաներին ապաստան տվող մուսուլմաններին կոտորածների սկզբում ցուցադրաբար սպանում էին, որպեսզի մյուս մուսուլմանները չփորձեն փրկել որևէ քրիստոնյայի[218]:

Փաստորեն, երիտթուրքերն օգտագործում էին իսլամի կրոնական առանձնահատկությունները՝ հօգուտ սեփական քաղաքական նպատակների: Ջիհադը պատրվակ էր և զենք երիտթուրքերի ձեռքին, այն համախոհներ չգտավ ողջ իսլամական աշխարհում, բայց խոր արմատներ գցեց Օսմանյան կայսրության մեջ:

2.2.2. Սկզբնաղբյուրներ՝ ջիհադի կոչերով ու հրահանգներով

[215] *Ислам Классический* (Энциклопедия), сост., общ ред. и пред. К. Королева. М., СПб., 2005, сс. 77-78: Տե՛ս մուսուլման հոգևորականի խոսքերը, որը հայերի տառապանքները մեկնաբանում է որպես Ալլահի կամքը, որը չի խղճում հայերին. *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, edited by Wolfgang Gust, Published in association with the Zoryan Institute, New York, Oxford: Berghahn Books, 2014, էջ 47:

[216] Սրա ապացույցներից է հայերի կոտորածներին ծիսականություն հաղորդելու միտումը բազմաթիվ վկայություններում:

[217] Քասունի Ե., *Քննական ակնարկ «Միշըլըրի հերոլտ»ի 1915-1918 թթ. հայ ժողովուրդի ցեղասպանութեան եւ վերածնունդի մասին արձանագրած վկայագրութիւններուն*, Պէյրութ, 2012, էջ 67:

[218] Տե՛ս Ussher C. D., "The Armenian Atrocities and the Jihad," *The Moslem World*, Vol. 6, Issue 2, April, 1916, էջ 141-142.

Ջիհադի իրամայականով բացի հանրահայտ 5 ֆեթվաներից կրոնական պատերազմ հայտարարելու առթիվ հրապարակվեց նաև պաշտոնական բրոշյուր, մի լայնածավալ արաբերեն պամֆլետ, ռուսախոս մուսուլմանների համար թողարկվեցին երկլեզու թռուցիկներ՝ ռուսերեն և արաբերեն և այլ նյութեր: Քիչ թե շատ ամբողջական տեղեկություն ջիհադի վերաբերյալ տպագրված գրականության՝ գրքույկների, թռուցիկների և այլ քարոզչական նյութերի մասին, կարելի է քաղել Հենրի Մորգենթաուի հուշերից. նա այդ մասին խոսում է իր հուշերի XIV գլխում՝ նվիրելով դրանց 6–7 էջ: Ստորև ներթով կանդրադառնանք ջիհադի կոչերի գրավոր արձանագրություններին՝ մի քանիսն առաջին անգամ թարգմանելով հայերեն, վեր հանելով դրանց բովանդակային նշանակությունը, անդրադառնալով այլ հայտնաբերված աղբյուրներում դրանց հիշատակություններին, կատարելով համապատասխան դիտարկումներ ու եզրակացություններ: Բացի այդ՝ առանձին ենթակետով կմատնանշենք ջիհադի ազդեցությունն ու կապը Հայոց ցեղասպանության իրագործման ընթացքում մուսուլման զանգվածների մասնակցության մեջ:

ա Սուլթանի պատերազմական կոչերը. հայտարարագիր-կոչը և հրովարտակը՝ ուղղված օսմանյան բանակին ու նավատորմին

1914-ի նոյեմբերի 11-ին սուլթանի հատուկ հայտարարագրով Օսմանյան կայսրությունը պատերազմ հայտարարեց Ռուսական կայսրությանը. «Նոյեմբերի 11-ի սուլթանական հայտարարագիրը գալիս էր միայն ետին թվով հաստատելու պատերազմի սկսվելը... Դեռևս հոկտեմբերի 27-ին և 29-ին գերմանաթուրքական միացյալ նավատորմը Սև ծովում հարձակվել էր ռուսական նավերի, ինչպես նաև Օդեսա, Սևաստոպոլ, Թեոդոսիա և Նովոռոսիյսկ նավահանգիստների վրա: Նույն օրը միաժամանակ հրապարակվեց սուլթանի դիմումը բանակին և նավատորմին»[219]: Մեհմեդ V Ռեշադի

[219] Սիմոնյան Հր., *նշվ. աշխ*, էջ 329:

այդ երկու կոչերն էլ առաջինն էին սրբազան պատերազմի կոչերի շարքում:

1914 թ. նոյեմբերի 14-ին սուլթանի ընդհանուր հայտարարագիր-կոչը՝ 5 ֆեթվաների հետ միասին ընթերցվեց Ֆաթիհ մզկիթի դիմաց՝ Ալի Հայդար Էֆենդիի կողմից, իսկ շատ տեքստերում նշվող նոյեմբերի 11-ը մեր կարծիքով՝ մեշիխաթի[220] կողմից ջիհադի հրապարակային հայտարարությունը պատրաստելու օրն է[221]: Քսանինը իսլամական աստվածաբանների ստորագրությունը կրող այդ կոչի արևմտահայերեն թարգմանության մի փորձ տեղադրել ենք հավելվածում[222]: Այս կոչի մեջ հստակ երևում են հակաքրիստոնեական տրամադրություններ բորբոքելու միտված մի քանի հատվածներ: Օրինակ՝ կոչի հենց սկզբում սուլթանի, Օսմանյան կայսրության իսլամական հոգևոր և երիտթուրք առաջնորդների կողմից ձևակերպված տեքստն սկսում է հետևյալ խտսուն արտահայտությամբ, որով ի սկզբանե ծայրահեղ թշնամական ու հատկապես կրոնի թշնամի են ներկայացվում հակառակորդ երկրները. «Կրօնակիցնե՛ր, այսօր անհաւատներու հետ մուհամեդականութիւնը վերջին անգամ լինելով դէմ դիմի եկած է, դարերէ ի վեր Անգլիո, Ռուսիո միւսլիմանները ճնշելու կրօնքի ազատութիւնը աշխարհէն վերցնելու համար բոլոր ուժով կ'աշխատին»[223]:

Շեշտադրվում են ֆրանսիացիների ռազմական գործողություններն ընդդեմ տարբեր երկրներում բնակվող

---

[220] ***Մեշիխաթ***՝ շեյխուլ-իսլամի գրասենյակը:

[221] Տե՛ս «*Յենի Շաֆաք*» թերթի՝ "Osmanlı'yı savaşa sokan fetva" «Օսմանյան պատերազմը բռնկող ֆեթվան» վերնագրով հոդվածը նույն թերթի պաշտոնական կայքում՝ http://www.yenisafak.com/gundem/osmanliyi-savasa-sokan-fetva-2027939 (դիտված 21.XI.2017 թ.): Տե՛ս նաև Հավելված, ՊԱՏԿԵՐ 1, էջ i:

[222] Տե՛ս Հավելված, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ 1, էջ ii-iv: Արևմտահայերեն **«Թուրքիայում կրօնական պատերազմ յայտարարելու առթիւ հրատարակուած պաշտօնական պրօշիւրի թարգմանութիւնը»** ընդհանուր վերնագրի ներքո կատարված այս թարգմանությունը տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 149, էջ 2-4, պատճենը՝ *ՀՅԹԻ-ի ֆոնդեր*, Բ-10, ֆի. 1097-1098: Համմտ. հետևյալ կայքում տեղադրված ֆրանսերեն ավելի ընդարձակ մի տեքստի հետ. "Proclamation de la Guerre Sainte (Djihad) à Constantinople le 14 (23) novembre 1914", http://www.imprescriptible.fr/documents/djihad.htm (դիտված 16.XI.2017 թ.): Կոչի անգլերեն տարբերակը տե՛ս A "Jihad" Appeal to Moslems: Translation of a Recent Call Distributed to the Millions of Islams, *The Missionary Review of the World,* Vol. 38, New York-London, July, 1915, էջ 520:

[223] Սույն կոչի արևմտահայերեն **«Թուրքիայում կրօնական պատերազմ յայտարարելու առթիւ հրատարակուած պաշտօնական պրօշիւրի թարգմանութիւնը»** վերնագրով այս և մյուս մեջբերումները տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 149, էջ 2-4, պատճենը՝ *ՀՅԹԻ-ի ֆոնդեր*, Բ-10, ֆի 1097-1098:

կրոնասեր ու երևելի մուսուլմանների, որոնք իսլամադավան լսարանին ներկայացվում են իբրև հատուկ մտածված արշավ ընդդեմ իսլամի: Իսկ մյուս թշնամու՝ Ռուսական կայսրության մասին ասվում է. «Ռուսները, ոխերիմ, Կաւկազը, Թուրքեստանը ու Պարսկաստանը իրար խառնեցին. իսլամի արիւնը երկու հարիւր տարիներէ ի վէր գետի նման հոսեցուցին. ուր որ մի լուսամիտ, իր ազգն ու հայրենիքը սիրող իսլամ մը տեսան ճզմեցին, միլիոնաւոր իսլամներու մուխը մարեցին»:

Ապա նշվում է, որ «անհավատների» ձեռքով մուսուլմանների սպանությունները մեծագույն հաճույքով կատարվեցին, իսկ Մուհամեդ մարգարեի Ղուրանն ամեն տեղ ճնշված է ու անարգված, հետևաբար հրաման է տրվում, որ յուրաքանչյուր մուսուլման «անհավատ» կոչվող հակառակորդի բռնությունները պետք է վերացնի: Եվ ապա արվում է կոչի բանալի արտահայտությունը. «Ահաւասիկ ակնկալուած օրը հասաւ, մեր տէրն ու իսլամութեան վեհափառ խալիֆան Աստուծոյ հրամանին ու մեր սուրբ Մարգարէի բարոյական ցուցմունքներուն հպատակելով, միւսիւլմաններուն կրօնական պատերազմ մղելու կը հրաւիրէ»:

Անդրադարձ է կատարվում այդ սրբազան կոչվող պատերազմից սպասվող արդյունքներին. մուսուլմանները գերությունից ու թշվառությունից կազատվեն, Ղուրանը պիտի պահպանվի, իսկ կրոնական կոչվող պատերազմին չմասնակցողը նզովյալ է հայտարարվում՝ Ալլահի բարկության ու պատիժներին ենթակա: Իսկ նրանք, ովքեր իրենց սրբազան պարտականությունը կկատարեն՝ ռուսներին ու նրանց օգնող ժողովուրդներին ոչնչացնելով, հավիտենական երանության պիտի արժանանան. «.... դուք ալ ներքուստ մեր կրօնքի հիման համաձայն Ճիհատի (կրօնական պատերազմի) սկսեցէք, ... Աստուծոյ հրամանն, Մարգարէի կամքը, ու խալիֆայի բաղձանքը կատարեցէք...: Ոչ մի ժամանակ վասն Աստուծոյ, մի մոռնաք որ դուք էք կրօնական պատերազմի վարիչները. վազեցէք յաւիտենական երջանկութիւն վաստկելու օրերը հասած են»:

Հարկ է նշել, որ այս հայտարարագիր-կոչի մեկ այլ հայերեն թարգմանություն հնարավոր չեղավ գտնել մեր ուսումնասիրության ընթացքում: Կոչի ամենավերևում գրված է

Մեհմեդ Ռեշադի անունը, որը ցուցիչ է այն բանի, թե ումանունից է եղել տվյալ կոչը, այն թողարկվել է 4 Մուհարրեմ [1]333 թվականին, այն է՝ 22 նոյեմբեր, 1914-ին:

Սուլթանի կոչի հրապարակման մասին տարբեր ամսաթվեր են շրջանառվում՝ դրանից մեկը 1914 թ. նոյեմբերի 11-ն է, իսկ ըստ Հենրի Մորգենթաուի հաղորդման՝ սուլթանն այն հրապարակեց նոյեմբերի 13-ին[224]: Համեմատելով արևմտահայերեն ներկայացված թարգմանությունը, արաբերեն փաստաթուղթն ու նշված կայքի ֆրանսերենով լույս տեսած՝ նոյեմբերի 14-ի ջիհադի կոչի թարգմանությունը, առաջարկում ենք հետևյալ նախնական կարծիքն առ այն, որ առաջինը հատված է՝ շեյխուլ-իսլամ Հայրի էֆենդիի հեղինակությամբ տպագրված մի բրոշյուրից, որտեղ տեղադրվել են Մեհմեդ Ռեշադի այս կոչը, ինչպես նաև 5 ֆեթվաները, իսկ բուն՝ նոյեմբերի 14-ին ընթերցված հայտարարության տեքստն ավելի ընդարձակ է եղել, սակայն դրանից մոտ 10 օր անց արդեն հրատարակված նույն տեքստերը, այդ թվում՝ «*Յենի Շաֆաք*»-ի կայքում տեղադրված կոչի արաբերեն տարբերակը, ավելի հակիրճ են եղել ու ավելի մշակված[225]:

Հենրի Մորգենթաուն ասում է, որ «Սուլթանի հռչակագիրը պաշտոնական հանրային փաստաթուղթ էր և առաջարկվող «սրբազան պատերազմի» մասին խոսում էր միայն ընդհանուր գծերով...»[226]: Սակայն մեր կարծիքով հրապարակումներին հետևած տպագրված տարբերակները որոշակի փոփոխությունների ենթարկվեցին, քանի որ շեյխ ուլ-իսլամ Հայրի էֆենդիի հուշերից երևում է, որ հրապարակումից հետո հետագա մշակումներ են կատարվել տեքստի վրա: Նա պատմում է սուլթանի հայտարարագրի տպագրման նախապատրաստական աշխատանքների մասին. մասնավորապես հետևյալ հատվածից երևում է, որ ջիհադի հայտարարությանը մեծ կարևորություն է տրվել, ինչպես նաև՝ նոյեմբերի կեսերին հրապարակված հայտարարագրից հետո այն հավանաբար ենթարկվել է

[224] Մորգենթաու Հ., *նշվ. աշխ,* էջ 127:
[225] Այս մասին տե՛ս "Call for Holy War Issued to Moslems: Sultan and 28 Priests Sign Proclamation against the Triple Entente," *The Brooklyn Daily Eagle*, November 27, 1914, էջ 2, նաև՝ "Holy War Proclamation is Published in Turkey," *Buffalo Morning Express and Illustrated Buffalo Express*, November 28, 1914, էջ 1: Ամսաթվերի վերաբերյալ նմանատիպ բացատրություն ունի պատմաբան Մուստաֆա Աքսաքալը. Aksakal M., "'Holy War Made in Germany'? Ottoman Origins of the 1914 Jihad," *War in History 18 (2),* 2011, p.186.
[226] Մորգենթաու Հ., *նշվ. աշխ,* էջ 128:

հետագա մշակման. «Այսօր (նոյեմբերի 21-ին 1914) մի գիտական հավաք կազմակերպեցի. նախ՝ Մեշիխաթի կրոնավորներ Զիաէթին, Մուսա Քյազըմ և Էսադ էֆենդիներին հրավիրեցի, երեքն էլ եկան: Օսմանյան պատմության մեջ *Բյաբ-ի Ֆեթվայում* նմանատիպ հավաք առաջին անգամ եղավ: *Քազաակերներից*[227] և կայսերական *հոջաներից*[228] ներկայացուցիչներ կային: Հրավիրյալներից Թիք Վեշլի Յուսուֆ էֆենդին *(քազաակերներից)* ներկա չէր...»[229], որից հետո Հայրի էֆենդին պատմում է հայտարարագիրը սուլթանին ներկայացնելու որոշ մանրամասներ. «1914-ի նոյեմբերի 22-ին, երկուշաբթի օրը՝ կեսօրից հետո, կայսերական պալատ գնացի և հրամանագիրը Ալի ֆուադ բեյի միջնորդությամբ Փադիշահին ներկայացրեցինք: Վրան գրված՝ «Ահավասիկ՝ սույն հայտարարագիրը՝ ամբողջ իսլամական տիրույթում տարածելու և լսելի դարձնելու հրաման եմ տալիս, թվով 4 Մուհարրեմ 333 թվական (1914թ. նոյեմբերի 22)»[230]: Կայսերական հրամանագիրն իրենք իրենց իսկ ձեռքով են գրում՝ նշելով Մեհմեդ Ռեշադի անունը և ապա հաղորդվում է, որ «Բաշքաթիփ բեյի կողմից (Ալի ֆուադ բեյ) հայտարարագիրը գոհունակությամբ ընդունելուց հետո փադիշահն ինձ ընդունեց պատրաստակամությամբ: Փադիշահի առաջին խոսքն էր՝ «Հայտարարագիրը հրաշալի է ստացվել, հազա՛ր կեցցես»»[231]:

Հայրի էֆենդին իր հուշերում գրում է, որ այս հայտարարագրի համար սուլթանն իրեն՝ իբրև փադիշահի շնորհակալական նվիրատվություն՝ ուրիշներից ծածուկ, 1000 լիրաէ տալիս[232]:

***

Սուլթանի մյուս կոչը, ուղղված օսմանյան բանակին ու նավատորմին, ևս շատ կարևոր է, քանի որ այնտեղ կրոնական շեշտադրումները նույնպես մեծ նշանակություն ունեն: Կոչի տեքստում նշվում է հրապարակման թվականը՝ 330 թվականի հոկտեմբերի 29-ը, որը օսմանյան *մալի* թվականով համապատասխանում է 1914 թ. նոյեմբերի 11-ին: Այն

[227] ***Քազաակեր***՝ բարձրաստիճան կրոնավոր:
[228] ***Հոջա*** մուսուլմանուսուցիչ:
[229] *Şeyhülislam Ürgüplü Mustafa Hayri Efendi'nin Meşrutiyet, Büyük Harp ve Mütareke Günlükleri*. Istanbul, İş Bankası Kültür Yayınları, 2015, s. 361.
[230] *Նույն տեղում*, էջ 365:
[231] *Նույն տեղում:*
[232] Տե՛ս *նույն տեղում:*

արևմտահայերենով տպագրվել է «Ազատամարտ» օրաթերթում և ունի կարևոր կրոնական շեշտադրումներ[233]: Ամենասկզբում, ինչպես մյուս կոչերի դեպքում, խոսվում է մուսուլմանական խալիֆայության դեմ այլադավանների հարձակումների մասին, որոնք ըստ տեքստի, ուղղվում էին, խալիֆայության փառքի ու վեհապետական իրավունքների դեմ: Օսմանյան բանակին ու նավատորմին ուղղված այս կոչի հանգուցային միտքը հետևյալն է. «Դիւցազն զինուորնե՛ր, մեր նուիրական կրօնքին եւ մեր սիրելի հայրենիքին սպառնացող թշնամիներուն դէմ մեր բացած այս նուիրական ճիհատի ճանբուն վրայ ... ձեր յաղթանակէն կախուած է թէ՛ մեր պետութեան եւ թէ՛ ֆեթվայի շերիով իմ կողմէ գերագոյն ճիհատի հրաւիրուած երեք հարիւր միլիոն Իսլամներուն կեանքն ու ապագան[234]»:

Տեքստից երևում է, որ սուլթանի այս կոչը ևս ջիհադի կոչ է, օսմանյան զինվորների վրա այն նաև կրոնը պաշտպանելու պարտականություն է դնում, ընդ որում՝ հակամարտությունը ներկայացվում է որպես քաղաքակրթական պատերազմ, քանի որ ըստ կոչի՝ զինվորների վրադրվում է պարտականություն պաշտպանելու ոչ միայն Օսմանյան կայսրությունը, այլև ողջ աշխարհի իսլամադավաններին, քանի որ սուլթանի խոսքի մեջ նշվում է 300 միլիոն թիվը՝ XX դարասկզբի իսլամադավանների մոտավոր թիվն ամբողջ աշխարհում: Հակառակորդը ներկայացվում է որպես իսլամի թշնամի. «.... որպէս զի մեր կրօնքին եւ տէրութեան թշնամին չյանդգնի ոտնձգութիւն ընել մեր երկրին մէջ»: Նշվում է, որ ողջ աշխարհի մուսուլմաններին պաշտպանելու հնարավորությունն ու պարտականությունը եզակի է, քանի որ ոչ մի այլ բանակի չի վիճակվել կատարել նման գործ. սա, իհարկե, մեծագույն կարևորության, ոգևորիչ ու բորբոքիչ խոսք էր օսմանյան զինվորականների համար, քանի որ արտահայտվել էր սուլթան–խալիֆի կողմից:

[233] Ամբողջական թարգմանությունը տե՛ս Հավելված, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ 2, էջ iv-vi):
[234] Սույն կոչի այս և մյուս մեջբերումները հետևյալ օրաթերթից են. Խմբագրական, «*Ազատամարտ*» օրաթերթ, թիւ 1665, Կոստանդնուպոլիս, 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր, ուրբաթ, 1914թ., էջ 1:

Զինվորականներին իբրև աջակցող ուժեր են ներկայացվում մզկիթներում, աղոթատեղիներում և ուխտատեղիներում աղոթող ողջ աշխարհի մուսուլմանները, իսկ իբրև գերբնական զորություններ նրանց թիկունքում կանգնած են պատկերվում Ալլահը և Մուհամեդը. «.... այդ թշնամիները ոչնչացնելու համար Բարձեալն Աստուծոյ շնորհքն ու Մարգարէին բարոյական օգնութիւնը մեզի օժանդակ պիտի հանդիսանան»:

Եվ վերջում օրհնության ձևով խոսվում է անցյալում հանուն կրոնի նահատակվածների հետ հետմահու հավիտենական երանության արժանանալու վերաբերյալ. «Ձեր նահատակները թող յաղթութեան աւետիսը տանին նախորդ նահատակներուն....»:

բ. Օսմանյան շեյխուլ-իսլամի հինգ ֆեթվաները

1914 թվականի նոյեմբերի 14-ին, Կոստանդնուպոլսի Ֆաթիհ մզկիթի դիմաց՝ պետական պաշտոնյաների ներկայությամբ և հավաքված ժողովրդի առջև ընթերցվեցին Օսմանյան կայսրության սուննի հոգևոր առաջնորդ շեյխուլ-իսլամ Հայրի էֆենդիի և մի շարք հայտնի իսլամական աստվածաբանների կազմած 5 ֆեթվաները[235]: Ֆեթվաներով հաստատվում էր Մեհմեդ V-ի սրբազան պատերազմի հայտարարագիր-կոչը, ինչպես և կոչ էր արվում աշխարհի բոլոր մուսուլմաններին ջիհադի դուրս գալ ընդդեմ Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի և նրանց զինակիցների՝ սեփական հավատը և իսլամական «խալիֆայությունը» պաշտպանելու համար: 1914 թ. նոյեմբերի 14-ին թողարկված ֆեթվան գրվել էր հակիրճ՝ թվով 5 հարց ու պատասխանի տեսքով: Ֆեթվաների շեշտադրումը ևս կրոնականն էր, որտեղ արդեն բոլոր

[235] ***Ֆեթվա*** (արաբ. թարգմ.՝ «որոշում») – իսլամական կրոնաիրավական որոշում՝ կայացված բարձրագույն հոգևոր հեղինակություն ունեցող անձի (մուֆթիի, ղադիի, շեյխուլ-իսլամի) կողմից: (Ֆեթվայի օսմաներեն տեքստը՝ *ՀԱԱ*, ֆ. 57, ց. 5, գ. 80, պատճենը՝ *ՀՑԹՒ-ի ֆոնդեր*, Բ-10, ֆի 1103, տե՛ս նաև *Großer Bilder-Atlas des Weltkrieges*, München, Bruckmann, 1915, S. 369, որտեղ ֆեթվայի տեքստը գրված է 4 լեզուներով՝ օսմաներեն, արաբերեն, պարսկերեն և գերմաներեն, համմտ.՝ ֆրանսերեն թարգմանության հետ՝ http://www.imprescriptible.fr/documents/djihad.htm (դիտված 16.XI.2017 թ.): Ֆեթվայի արևմտահայերեն թարգմանության փորձ է ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 149, էջ 1-2 (պատճենը՝ *ՀՑԹՒ-ի ֆոնդեր*, Բ-10, ֆի 1097) համարի տակ՝ Մեհմեդ Ռեշադի վերը նշված կոչից առաջ գրված՝ միևնույն թարգմանչի կողմից թարգմանված 5 ֆեթվաների տեքստը:

իսլամադավաններին՝ անկախտարիքից ու պաշտոնական դիրքից իբրև պարտականություն կոչ էր արվում մասնակցել Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի ու նրանց զինակցող երկրների դեմ հայտարարվող սրբազան պատերազմին:

Ֆեթվաների բնագիրը ևս սկսվում է թշնամիներին զատորոշելով: Առաջին ֆեթվայում ներկայացվող թշնամիները միավորված են ընդդեմ իսլամի, այսինքն վերջիններիս ցանկացած քայլ ու գործողություն պետք է դիտարկվեր իբրև իսլամի դեմ ուղղված: Մուսուլման բնակչությունը, առաջին ֆեթվայի համաձայն, կոտորվում կամ գերեվարվում էր: Այս ամենը նշելուց հետո ձևակերպվում է ֆեթվաներին բնորոշ բանաձևը. բարձրացվում է առաջին հարցը, որին տրվում է դրական պատասխան: Առաջին ֆեթվայի հարցը հետևյալն էր. «.... արդյո՞ք բոլոր՝ թե՛ ծեր և երիտասարդ, թե՛ հեծելազորային և հետևակային մուսուլմանների մասնակցությունն այս պատերազմում պարտականություն է: Արդյո՞ք պետք է, որ իսլամական բոլոր երկրների մահմեդականները շտապեն՝ անձնապես և նյութապես ջաթի (Իմա՝ ջիհադ, սրբազան պատերազմ–Ծ. Խ.) մասնակցելու»[236]:

Երկրորդ ֆեթվայում կատարվում է կենտրոնացում թշնամու նպատակի վրա. Օսմանյան կայսրության թշնամիների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի նպատակը ներկայացվում է իսլամը ոչնչացնելու տեսքով: Այս ֆեթվայի հարցադրումն առնչվում է նշված երկրների իսլամադավան բնակչությանը՝ արդյո՞ք նրանք ևս պետք է մասնակցեն սրբազան պատերազմին՝ իրենց երկրների համապատասխան կառավարությունների դեմ: Պատասխանն ինչպես նախորդ, այնպես էլ հաջորդ ֆեթվաներում անփոփոխ «այո՛»-ն է:

Երրորդ ֆեթվան իր բնույթով նախազգուշական է և վերաբերում է այն բոլոր իսլամադավաններին, ովքեր չնայած հանուն իսլամի պայքարելուն կոչված լինելը, հրաժարվում են միանալ սրբազան

[236] Ֆեթվայի տեսքտի անգլերենից թարգմանությունը կատարվել է մեր կողմից՝ Peters R., *Jihad in Classical and Modern Islam: A Reader* (Princeton Series on the Middle East). Princeton: Markus Wiener Publishers, 1996, pp. 56-57 գրքից՝ համեմատելով գերմաներեն տեքստի հետ՝ տե՛ս *Großer Bilder-Atlas des Weltkrieges*, München, Bruckmann, 1915, S. 369: Հավել վածում ներկայացված են ֆեթվաների բնագիրը (տե՛ս ՊԱՏԿԵՐ 2, էջ vii), արևելահայերենով մեր թարգմանությունը (տե՛ս ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ 3, էջ viii-ix), սրբազան պատերազմի հայտարարման օրվա՝ 1914 թ. նոյեմբերի 14-ի մեկ լուսանկար (տե՛ս ՊԱՏԿԵՐ 3, էջ ix) և փոստային բացիկներ (տե՛ս ՊԱՏԿԵՐ 4, էջ x, ՊԱՏԿԵՐ 5, էջ xi):

պատերազմին: Բոլոր այդ իսլամադավանները, այս ֆեթվայի համաձայն, ենթակաեն Ալլահի խիստզայրույթինու պատժին:

Չորրորդ ֆեթվան երրորդի տրամաբանական շարունակությունն է, որով հաստատվում է, որ եթե վերը նշված երկրների մուսուլմանները զենք վերցնեն այլ իսլամադավանների դեմ, աներելի մեղք կգործեն:

Հինգերորդ՝ եզրափակիչ ֆեթվան նախորդ երկու՝ նախազգուշացնող ու պատիժների լեզվով խոսող ֆեթվաների շարունակությունն է: Վերը նշված 3 տերությունների կողքին ավելանում է Սերբիայի, Մոնտենեգրոյի և նրանց հարած երկրների սահմաններում բնակվող մուսուլմաններին ուղղված կրոնական սպառնալիքը: Այս ֆեթվայի համաձայն՝ նրանք կդիտարկվեն իբրև պատերազմի ընթացքում իսլամի կրած անհաջողությունների պատճառ:

Ըստ թուրքական աղբյուրների՝ ֆեթվաներն ընթերցողը Ալի Հայդար Էֆենդին[237] էր:

Տրապիզոնի թեմի հայ կաթողիկե առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Նազլյանը ֆեթվաների՝ մուսուլմանների վրա ունեցած ազդեցության վերաբերյալ համակարծիք է մյուս ականատեսների հետ առ այն, որ ջիհադի կոչերին լուրջ վերաբերվեցին միայն օսմանյան թուրքերը. «Այս պոռոտ «Այո՛»ները, թուրք բանակին եւ իրենց զինակիցներուն գրաւած սահմաններէն անդին չկրցան թափանցել եւ մի միայն Թուրքիոյ մէջ արձագանգ գտան....» [238]: Ըստ նրա՝ ջիհադի կոչերը ծառայեցին օսմանյան քրիստոնյաներին ոչնչացնելուն. «Այս ճիհատը, ընդհակառակն, ծառայեց կատաղութեան աստիճան գրգռելու իսլամ Թուրքերու ատելութիւնը՝ ընդդէմ իրենց հայրենակից քրիստոնեաներու, մասնաւորապէս Հայերու: Անոր համար է, որ եթէ

[237] **Ալի Հայդար Քյուչյուկ Էֆենդի** (1853-1935), եղել է սուֆի՝ հավանաբար նաքշբանդիների միաբանությունից: Ծնվել է 1853 թ. Բաթումում, հոգևորականի ընտանիքում: Հայտնի է եղել «գյուրջի»՝ վրացի, Ալի Հայդար Էֆենդի անունով: 1902 թվականից Ֆաթիհի մզկիթում հոջայի պարտականություններն է զբաղեցրել, նաև այս է պատճառը, որ ինքն է ընթերցել ֆեթվաների տեքստը. տե՛ս Իսլամի հանրագիտարանի հետևյալ կայքը. http://www.islamansiklopedisi.info/dia/ayrmetin.php?idno=020396&idno2=c020391 (դիտված 16.XI.2017 թ.), տե՛ս նաև Kasap M., *Osmanlı Gürcüleri*. İstanbul: Gürcistan Dostluk Derneği, 2010, էջ 276, 277:

[238] Նազլեան Յ. Եպս., *նշ վ. աշխ*, էջ 14:

այս զինաթափ եղած ցեղին բնաջնջման ծրագրին դրդապատճառները, սկիզբէն միմիայն քաղաքական էին, անոր գործադրութիւնը, սակայն, տոգորուած ու ոգեւորուած էր ճիհատի ոգեկոչած զուտ կրօնական շարժառիթներով»[239]:

Հայրի էֆենդին պատմում է այն մասին, որ հետագայում իր ջանքերով ֆեթվաները թարգմանվեցին այլ լեզուներով. 1914 թ. նոյեմբերի 20-ին, ուրբաթ օրը ինքն էլ գնում է *Բյաբ-ի ֆեթվայա* Էբուլուլու բեյին (նամակատար) է կանչում՝ ջիհադի ֆեթվաների թուրքերեն, արաբերեն, պարսկերեն, հնդկերեն և թաթարերեն լեզուներով հրատարակված օրինակը աչքի անցկացնելու համար[240]:

գ. Էնվեր փաշայի կոչն օսմանյան բանակին

Ջիհադի կայսերական հայտարարագիր-կոչերի ու 5 ֆեթվաների հետ միաժամանակ օսմանյան զորքին դիմելու անհրաժեշտություն զգաց նաև պատերազմական նախարար Էնվեր փաշան: Էնվերի կոչի մեջ նույնպես ակնառու է կրոնական ենթատեքստը: Նկատելի է, որ Էնվերի կոչի մեջ Ղուրանից մեջբերումներ չկան, սակայն 2 անգամ հղում է կատարվում Մուհամեդ մարգարեին, 1 անգամ գործածված է Աստված՝ Ալլահ բառը. «.... Օրհնութեամբ Բարձեալն Աստուծոյ, նուիրական օգնութեամբը Մարգարէին եւ բարի աղօթներովը մեր թագաւորին, մեր բանակը թշնամին պիտի ոչնչացնէ»[241]:

Ելնելով կոչի առաջին՝ «Մեր սիրելի ընդհանուր հրամանատար Ն. Խալիֆայական մեծափառութեան կայսերական իրատէն կը հաղորդեմ ձեզ» նախադասությունից՝ կարելի է անել հետևյալ երկու նախնական դիտարկումը. գուցե հենց Էնվերն է եղել Մեհմեդ Ռեշադի՝ օսմանյան բանակին ու նավատորմին ուղված հրովարտակն ընթերցողը զանգվածների համար:

Էնվերի այս կոչի մեջ հատկապես ընդգծված է կրոնի համար նահատակությունը «.... երանի՛ յառաջ ընթացողներուն, երանի՛

[239] *Նույն տեղում:*
[240] Տե՛ս *Şeyhülislam Ürgüplü Mustafa Hayri Efendi'nin Meşrutiyet,...,* էջ 360:
[241] Էնվերի կոչի այս և մյուս մեջբերումները արվում են ըստ հետևյալ օրաթերթի. Խմբագրական, «*Ազատամարտ*» օրաթերթ, թիւ 1665, Կոստանդնուպոլիս, 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր, ուրբաթ, 1914թ., էջ 1: Ամբողջական տեքստը տե՛ս Հավելված, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ 4, էջ xi-xii: Հայտարարության հրապարակման մասին տե՛ս հետևյալ հաղորդագրությունը "PROCLAMATION BY ENVER, Says Turks with Allah's Help Will Destroy Their Enemies," *The New York Times,* November 15, 1914, p. 5.

կրօնքի ու հայրենիքի սիրուն նահատակ եղողներուն...» և կրկին, ինչպես մյուս կոչերում, հատուկ նշվում են իսլամադավանին զորակցողները. «Ամենքս մտածելու ենք որ մեր գլուխներուն վրայ մարգարէին եւ անոր ընկերներուն հոգիները կը սավառնին»:

Չինվորականներին պատասխանատու պարտականության իրականացմանը մղելու համար Էնվերը հիշատակում է ողջ աշխարհի իսլամադավաններին՝ սուլթանի նշած թվով՝ երեք հարյուր միլիոն, ովքեր, ըստ նրա՝ հեծեծալով շղթաների տակ՝ օսմանյան զինվորների հաղթանակի համար մաղթանքներ են կարդում:

Փաստորեն, ինչպես մյուս կոչերը, ռազմական կոչերը ևս կառուցված էին կրոնական քարոզչությամբ. «Ողջ օսմանյան պատերազմական քարոզչությունն իրականացվեց կրոնական մոտիվներով: Մահացածները համարվում էին «մարտիրոսներ»»[242]:

դ. Ջիհադի պամֆլետ-պարսավագիր

Սովորաբար պետության հրահանգները՝ հայերի տեղահանությունները, կրոնափոխության ենթարկելը և այլ ցուցումներ, տրվում էին մզկիթներում[243]: Սակայն Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն խոսում է մի գաղտնի պարսավագրից, որը հավատացյալներին ավելի հստակ ցուցումներ էր տալիս: Ըստ Հ. Մորգենաթաուի՝ այն մզկիթներում չէր ընթերցվում և գաղտնի տարածվել էր մուսուլմանական բոլոր երկրներում՝ օրինակ՝ Եգիպտոսում, Մարոկկոյում, Սիրիայում և այլուր: Պարսավագիրը մանրակրկիտ ներկայացնում էր բոլոր քրիստոնյաների, բացառությամբ գերմանացիների, ֆիզիկական ոչնչացման ծրագիրը: Հ. Մորգենթաուն նաև ընդգծում է, որ այն արաբերեն՝ Ղուրանի լեզվով էր գրվել կանխամտածված կերպով: Դեսպան Մորգենթաուն նաև մեջբերումներ է անում այդ փաստաթղթից[244]:

---

[242] Rogan E., "A War to End Jihad," *The New York Times*, May 1, 2015 https://www.nytimes.com/2015/05/02/opinion/a-war-to-end-jihad.html (դիտված 20.I.2018 թ.):

[243] Տե՛ս օրինակ. «Այսօր բոլոր մզկիթներէն կը յայտարարուէր թէ բոլոր հայերը պիտի աքսորուէին: Հայերը չորս օր միայն ժամանակ ունէին իրենց ինչքերը ծախելու ....» (ճէյքըպըճն (Եագոպըճն) Մ., *նշվ. աշխ*, էջ 107):

[244] Տե՛ս Մորգենթաու Հ., *նշվ. աշխ*, էջ 128:

Համոզված կերպով կարող ենք ասել, որ այդ նույն պարսավագրի մասին է խոսում նաև Արամ Անտոնյանը: Անտոնյանի հաղորդած տեղեկության համաձայն՝ այն տպագրվել էր Գերմանիայում, բոլոր գերմանացիներն ու գերմանուհիները պարտավոր էին այն տարածել արաբների շրջանում[245]: Նա կարծում է, որ պամֆլետը հատուկ էր գրվել արաբերենով՝ ոչ թե իր շուրջ սակրալ դաշտ ստեղծելու նպատակով (Ղուրանի լեզվով գրված լինելու պատճառով), այլ որպեսզի տարածվեր արաբների շրջանում ու գրգռեր նրանց ընդդեմ անգլիացիների, քանի որ հենց վերջիններս էին այն քրիստոնյաները, որ ապրում էին արաբների մեջ, ու հենց նրանց դեմ էր ուղղված այդ պարսավագիր–պամֆլետի «առնվազն չորս քրիստոնյա սպանելու» բացառիկ հրահանգը: Ըստ Անտոնյանի՝ այդ գրքի 10-րդ էջի վերջին պարբերության համաձայն (էջը լուսանկարված տպագրվել է Անտոնյանի գրքում)[246], մուսուլմանը կարող է իր կրոնական պարտքը կատարել և հարթել փրկության ճամփան առնվազն չորս քրիստոնյայի (պամֆլետի արաբերեն տեքստում՝ անհավատի) սպանելով[247]: Սակայն կարծում ենք, որ Անտոնյանը ոչ թե անհավատ–քրիստոնյա միտումնավոր փոփոխություն է կատարել իր գրքում, այլ ճշգրիտ իմաստային թարգմանություն է տվել հրահանգի թիրախային հասցեատիրոջ. Երիտթուրքերի ծրագրած ջիհադն ուղղված էր քրիստոնյաների դեմ:

Պարսավագրից Արամ Անտոնյանն է օգտվել և, ինչպես վերը նշվեց, էջի լուսանկարը տեղադրել է իր գրքում: Պարսավագրի մասին մի հիշատակում տպագրված գտնում ենք Վոլֆգանգ Գուստի հավաքած փաստաթղթերի ժողովածուում՝ Հալեպի գերմանական նախկին հյուպատոս Վալտեր Ռյոսլերի՝ Յոհաննես Լեփսիուսին ուղղված նամակում. «Սրբազան կռվի կոչ անող արաբական գրքույկ իմ ձեռքով չի անցել, որից մի էջ լուսանկարված է Անտոնյանի գրքի

[245] Տե՛ս Անտոնեան Ա., *նշվ. աշխ*, էջ 75:
[246] Անտոնեան Ա., *նշվ. աշխ*, էջ 76-ում զետեղված է այդ բնագիրն արաբերենով, պատկեր թ. 9:
[247] Տե՛ս *նույն տեղում*, էջ 75-77: Արամ Անտոնյանը պատմում է, որ, անշուշտ, գերմանական այդ քայլը ուղղված էր հատուկ անգլիացիների դեմ, քանի որ արաբական միջավայրում գտնվող նրանց հակառակորդներն անգլիացիներն էին: Դրանից մեծ աղմուկ է բարձրանում, որի պատճառով թուրքական կառավարությունն առգրավում և ոչնչացնում է գրքի բոլոր օրինակները:

60–րդ էջում[248] (արևմտահայերեն տպագրված «Մեծ Ոճիրը» գրքի 76-րդ էջում–Ծ. Խ.): Բայց կարող էր պատահել, որ այստեղ գերմանական կողմն անշնորհքություն է դրսևորել, և կարող էր պատահել, որ Հյուսիսային Աֆրիկայի համար նախատեսված մի բրոշյուր հայտնվել է Հալեպում»[249]:

Մեր ստացած առաջին օրինակը պահվում է Վաշինգտոնի ազգային արխիվում՝ RG 59, No. 867.00/762 ֆոնդային համարի տակ[250]: Արաբերեն այդ պամֆլետ-գրքույկից բացի առկա է Հենրի Մորգենթաուի ստորագրած նամակ–բացատրագիրը՝ ուղղված ԱՄՆ-ի պետքարտուղարին՝ առ այն, որ ԱՄՆ-ի Հալեպի հյուպատոս Ջեսսի Բ. Ջեքսոնն[251] է իրեն ուղարկել այդ գրքույկը և ինքն էլ իր հերթին՝ պետքարտուղարին՝ նշելով, թե ինչ կտորներից է բաղկացած իր ուղարկած փաստաթղթային փաթեթը՝ 1) Միստր Ջեքսոնի նամակը Մորգենթաուին՝ ապրիլի 8, 1915 թ., 2) Պամֆլետը, 3) Պամֆլետի թարգմանությունը[252]:

Ջեսսի Ջեքսոնի կարծիքով պամֆլետը Հալեպում տարածվել էր գերմանացի տեր և տիկին Քոխերի[253] ու հնարավոր է նաև՝ Օսկար Ֆլեխսիգի կողմից: Մորգենթաուն նշում է, որ արաբերենից անգլերեն թարգմանությունը կատարել էր ոմն Dr. C. F. Gates-ն՝ իր խնդրանքով: Համոզված կերպով կարելի է ասել, որ խոսքը

---

[248] Նկատի ունի Արամ Անտոնյանի գրքի ֆրանսերեն թարգմանությունը:

[249] Գուստվ., *Հայերի ցեղասպանությունը 1915-1916…*, էջ 710-711:

[250] "A Universal Proclamation to All the People of Islam," published by the National Society of Defense, The Seat of the Caliphate, printed in the Mutba'at el-Haireyet (1333), *United States National Archives*, Washington D. C., Record Group 59, No. 867.00/762, Morgenthau to Secretary of State, May 11, 1915, encl., Jackson to Morgenthau, April 8, 1915. Պարսավագրի արաբերեն և անգլերեն տիտղոսաթերթերը տե՛ս Հավելված, ՊԱՏԿԵՐ 6, էջ xiii և ՊԱՏԿԵՐ 7, էջ xiv:

[251] **Ջեսսի Բենջամին Ջեքսոն** (1871-1947), 1908-1923 թթ. ԱՄՆ-ի հյուպատոսը Հալեպում, Հայոց ցեղասպանության օտարերկրյա կարևոր ականատեսներից, որը հազարավոր հայերի է փրկել մահվանից: Նրա հայանպաստ գործունեության մասին տե՛ս "SAVED BY AMERICAN CONSUL: Armenian Refugees Hope Others Will Be Saved from Slavery," *The New York Times*, January 18, 1916, էջ 4:

[252] Հենրի Մորգենթաուի այս նամակի պատճենը տե՛ս Հավելված, ՊԱՏԿԵՐ 8, էջ xv:

[253] Ջեսսի Ջեքսոնը կարծում է, որ Հալեպում պամֆլետի տարածման մեջ ավելի հավանական մեղավորը տիկին Քոխն էր, իսկ նրա ամուսինը՝ Հալեպում գերմանական "Luticke" առևտրական տան ներկայացուցիչը, գուցե և որևէ կապ ուներ այդ ամենի հետ: Արամ Անտոնյանը հաղորդում է, որ տիկին Քոխն սկզբում զարհուրելի ատելություն էր տածում հայերի նկատմամբ, սակայն Եղեռնի ժամանակ նա, ազդված հայերի հանդեպ կիրառվող դաժանություններից, փոխում է իր վերաբերմունքը. «… միջոց մը ձեռքը խարազան մը առած Հալէպի փողոցներուն մէջ կը ծեծէր հայ խոշտանգող ոստիկանները» (Անտոնեան Ա., *նշվ. աշխ*, էջ 75):

վերաբերում է դոկտոր Քալեբ Ֆրենկ Գեյթսին[254]՝ սկզբում Եփրատ քոլեջի և ապա՝ Ռոբերտ քոլեջի նախագահին: Պամֆլետին մեծ ուշադրություն է հատկացվել՝ հաշվի առնելով այն, թե ինչ ոդիսական է այն ունեցել մինչև ԱՄՆ հասնելը, ում ձեռքով է այն անցել. սկզբում Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոսի, ապա՝ Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպանի, միաժամանակ՝ պամֆլետի թարգմանչի՝ ամերիկյան կարևորագույն 2 քոլեջների նախագահի, և հասել է ԱՄՆ-ի պետքարտուղարություն:

Իր կցագիր նամակում Ջ. Ջեքսոնը գրեթե մարգարեական նախազգուշացում է անում՝ պամֆլետի հետագա հնարավոր կործանարար ազդեցության մասին հետևյալ խոսքերով. «Անպայման ինչ-որ բան պետք է արվի՝ կանխելու համար այսպիսի քարոզչությունների շարունակությունն ապագայում, այլապես մի օր հետապնդվող արդյունքը կիրականանա և այն կործանարար կլինի»[255]:

ԱՄՆ-ի հյուպատոսի նամակից երևում է, որ նա պամֆլետն ուղարկել է ապրիլի 8-ին, 1915 թ.: Մոտ մեկ ամիս անց՝ մայիսի 11-ին, Հ. Մորգենթաուն, արդեն իր գրած բացատրական նամակին կցելով հյուպատոսի նամակը, արաբերեն պամֆլետն ու դրա անգլերեն թարգմանությունը, այն ուղարկել է պետքարտուղարություն, վերջինն էլ այն ստացել կամ արխիվացրել է հունիսի սկզբին: Եվ հավանաբար հենց այդ թարգմանության հիման վրա էլ Հ. Մորգենթաուն արդեն իր հուշերում վերը նշված դիտարկումներին հավելում է. «Կանխամտածված այն տպագրված էր արաբերեն՝ Ղուրանի լեզվով: Դա մի երկարաշունչ փաստաթուղթ էր, որի անգլերեն տարբերակը պարունակում էր տասը հազար բառ: Տեքստն առատորեն համեմված էր Ղուրանից բերված մեջբերումներով, որոնց **ոճն ամբողջովին միտված էր ռասայական ու կրոնական**

[254] **Քալեբ Ֆրենկ Գեյթս** (1857-1946), ամերիկացի այս միսիոները ճանաչված էր թե՛ միսիոներների, թե՛ տեղացիների շրջանում, տիրապետում էր հայերենին, արաբերենին ու թուրքերենին, 1883-ին Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհուրդը (անգլ. American Board of Commissioners for Foreign Missions) նրան ուղարկում է Մարդին՝ միսիոներություն անելու, իսկ 1894-ին նա դառնում է Խարբերդ քաղաքի Եփրատքոլեջի նախագահը: 1903-1932 թթ. նաստանձնում է մեկ այլ՝ Կոնստանդնուպոլսում գործող հանրահայտ Ռոբերտքոլեջի նախագահի պաշտոնը: Լոզանի կոնֆերանսի ընթացքում նա եղել է ԱՄՆ-ի ներկայացուցչության խորհրդական. տե՛ս *An Appreciation: Dr. Caleb Frank Gates-President of Robert College 1903-1932*, Published by The Robert College, Herald Board of 1931-1932, Istanbul.

[255] "A Universal Proclamation to All the People of Islam…" Jackson to Morgenthau, April 8, 1915, p. 2.

ատելություն արթնացնելուն: Այն մանրակրկիտ ներկայացնում էր **համայն քրիստոնյաների, բացառությամբ գերմանացի ազգի, սպանության ֆիզիկական ոչնչացման ծրագիրը»**[256] (ընդգծումները մերն են–Ծ. Խ.):

Փաստաթուղթը գրվել է պաթետիկ կրոնական քարոզի ոճով, ներառում է կոչեր և ուղիղ հրամաններ:

Մուտքի անվերնագիր հատվածում մեջբերվում են 2 ղուրանյան այաթ՝ իսլամադավանների եղբայրության վերաբերյալ, հիշեցվում է, որ տարբեր լեզուներով խոսող ազգերը, որոնք միմյանց թշնամի էին մինչև իսլամի ի հայտգալը, միավորվեցին Ալլահի կամքով մեկ հավատի շուրջ և նրանց սրբազան պարտականությունն է ատել դժվարությունները՝ ողջ ուժով նպաստել եղբայրակիցների ազատագրմանը «անհավատների» իշխանությունից, որպեսզի նրանք ազատվեն ճնշումներից և ով որ խախտում է այդ պարտականությունը, մեծ անիրավության մեջ կմեղադրվի և Ալլահից ենթակա կլինի գեհենի պատիժներին: Ծեշտվում է խալիֆին (կոչելով Ալլահի առաքյալ) ու խալիֆաթի կենտրոնը, այսինքն՝ Ստամբուլը, պաշտպանելու պարտավորությունը, պատրաստ լինելու դիմակայել թշնամուն, դառնալու զինվոր՝ անհրաժեշտության դեպքում մասնակցելու սրբազան պատերազմի՝ ժամանակավորապես դադարեցնելով ամեն գործ՝ բացի Ալլահի կրոնը փրկելու և սրբազան պատերազմ մղելու գործից:

Երկրորդ հատվածը վերնագրված է «ԱՆԿՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ, ՈՐԻՆ ՀԱՍԵԼ Է ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ», որտեղ խոսվում է, թե ինչ ողբերգական աստիճանի է հասել, ինչ օրհասական դրության մեջ է մահմեդական աշխարհը՝ թվելով ժամանակի մուսուլման տերություններն ու այնտեղ ապրող մահմեդականների ծանր վիճակը՝ անհավատների լծի տակ, քանի որ դադարել էին հետևել Ղուրանի խոսքին՝ այդպիսով անցնելով մի տարաբախտությունից դեպի մյուսը: Վերջում կրկին ընդգծվում է ոտքի կանգնելու հրամայականը:

Երրորդ հատվածի վերնագիրն է «ԱՅՍՕՐ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՍՈՒՐԲ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է ԴԱՐՁԵԼ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԻ

[256] Մորգենթաու Հ., *նշ վ. աշխ*, էջ 128:

ՀԱՄԱՐ», որտեղ տրվում են այն հաջորդական քայլերը, որ իսլամադավանները պետք է անեն՝ հաջողության հասնելու համար. օրինակ՝ ստեղծեն գաղտնի միություններ՝ ընդդեմ այն կառավարությունների, որոնք դիմադրում են իսլամական աշխարհին: Այստեղ նշվում է, որ բացառություն են կազմում այն անհավատները, որոնք զինակցում են իսլամադավաններին՝ ի նկատի ունենալով Գերմանական և Ավստրոհունգարական կայսրությունները: Այս վերնագրի ներքո հրամայվում է սպանել առնվազն 3–4 անհավատի: Այս հատվածից մեջբերում է կատարում Հ. Մորգենթաուն. «.... իսլամի վրա հիշխող անհավատների սպանությունը դարձել է սրբազան պարտք՝ անկախ նրանից՝ դա կկատարվի բացահայտ, թե գաղտնի, ինչպես հրամայում է Ղուրանը. «Սպանե՛ք նրանց, որտեղ էլ գտնեք»: .... Աշխարհի ցանկացած վայրում գտնվող յուրաքանչյուր մահմեդական պիտի հանդիսավոր երդում տա, որ կսպանի առնվազն երեք կամ չորս անհավատի, ովքեր իշխում են իրենց վրա, քանզի այդպիսիք Ալլահի հավատքի թշնամիներն են .... Այդպես վարվող ամեն մի մահմեդական կազատվի Ահեղ դատաստանի սարսափներից, երբ արթնանան հանգուցյալները: Ո՞ր մի անհատը կարող է նման պարգևը մերժել այդպիսի չնչին արարքի դիմաց»[257]:

Չորրորդ հատվածը՝ «ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ» վերնագրով, շեշտադրում է «Պատերազմի տան»՝ դար ուլ-հարբի, ու «Իսլամի տան»՝ դար ուլ-իսլամի, գաղափարը՝ կապված ջիհադ մղելու պարտականության հետ:

Հինգերորդ հատվածը՝ «ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ», բաղկացած է հետևյալ մասերից՝

ա. **սրտի պատերազմ,** որի ժամանակ մուսուլմանը պետք է հավատա իր սրտով, որ անհավատներն իր և իր կրոնի թշնամիներն են, և ողջ սրտով պետք է ցանկանա նրանց անհետանալն ու նրանց ուժի ոչնչանալը,

բ. **պատերազմ խոսքով,** երբ խոսքի ու գրչի իսլամադավան վարպետները պետք է պախարակեն անհավատների խավարամտությունն ու անհավատությունը: Այս ենթակետում հղում է կատարվում Կովկասի ու Ռուսաստանի իսլամադավաններին, շեշտելով, որ

[257] Մորգենթաու Հ., *նշվ. աշխ*, էջ 127-128:

հատկապես նրանք պետք է մասնակցեն սրբազան պատերազմի այս ձևին:

գ. **իրական պատերազմ՝** փոքր՝ տեղական կամ ներքին, և մեծ՝ արտաքին, բաղկացուցիչներով:

Վեցերորդ հատվածը՝ «ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹՅՈՒՆ» վերնագրով, ընդգծում է, որ նկարագրված պատերազմում մահացած ցանկացած իսլամադավան մարտիրոս կլինի:

Իսկ յոթերորդ հատվածում նկարագրվում են «ՋԻՀԱԴԻ ՁԵՎԵՐԸ»՝ ա. անձնապես, բ. խմբերով, գ. արշավներով:

Այս պամֆլետի բովանդակությանը կատարված անդրադարձների հանդիպել ենք շատ քիչ տեքստերում. դրանց թվում են Առաքել Պատրիկի կազմած «Պատմագիրք յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան» Ա հատորը, Տրապիզոնի թեմի վիճակավոր Հովհաննես արքեպիսկոպոս Նազլյանի, Գառնիկ Ստեփանյանի և ինչպես նշեցինք, Հենրի Մորգենթաուի հուշերը:

Առաքել Պատրիկի կազմած «Պատմագիրք յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան» Ա հատորում կարելի է գտնել հետևյալ մեկնաբանություններն ու մեջբերումները, «1914 թուականի Հոկտեմբերին «արդէն պատրաստուած էր *Ճիհատը*, հայասպանութեան գլխաւոր գործիքներէն մին, 5,000 բառերէ բաղկացած արիւնոտ վաւերաթուղթ մը, որուն արաբերէն բնագրին մէջ կան բառ առ բառ հետեւեալ քանի մը տողերը.

«Մաքրել երկիրը անբաղձալիներէն: Ասիկա միակ առիթն է» (Լեպասանու ավտանի հիմմին: Ղայիլէթել զեւալ):

«Անհաւատներու արիւնը անարժէք է» (Վա էննէ տէմ էլքիֆար էսպահ հէտէրէն):

«Երդում տուէք սպաննելու առնուազն երեք կամ չորս անհատներ» (ֆէյէն պզգի էննահետքիւլլիւ):

«Ատկէ աւելի բարի գործ չկայ» (Վահի լէմիէքիւնլէհու մինն ամէլ էլ խայրը սիվահատա)»[258]:

Եվ հետագա կապ է արձանագրվում, թե ինչպես պատերազմի սկզբում հայտարարված ջիհադը 1914 թ. նոյեմբերից մինչև 1915 թ. գարունը պահեց իր նպատակայնությունն ու արտացոլում գտավ

[258] *Պատմագիրք յուշամատեան Սեբաստիոյ եւ Գաւառի հայութեան*, հատոր Ա, կազմեց Պատրիկ Ա. Ն., Պէյրութ, 1974, էջ 727:

հայերի դեմ իրականացված ցեղասպանության մեջ. «Նման արիւնռուշտ հրահանգներուն զուգահեռ է, Փետրուար 2/15, 1915 Թալէաթի տեսակցութիւնը գերման դեսպան Վանկենհայմի հետ, հայերը բնաջնջելու մասին, ուր Թալէաթ «Ճիհատի բառերով, հայկական խնդիրը վերջացնելու մասին կ'ըսէր. «Միակ յարմար առիթն է հիմա». Ֆրանսերէն՝ իր բառերով. «Սէ լը սէօլ մոման փռոփիս»: Էնվերի հեռագրին մէջ յիշուած *Ճիհատը* եւ Թալէաթի տեսակցութիւնը ֆրանսերէնով նոյն արիւնոտ բառերը կը պարունակեն»[259]:

Հովհաննես Նազլեանի հաղորդմամբ պամֆլետն իսկապես աղետալի նշանակություն ունեցավ օսմանյան քրիստոնյաների համար՝ հավելելով, որ այդ «տետրակով» երիտթուրքերը քրիստոնյաների հետ կապված իրենց գաղափարներն ու քաղաքական դիրքն էին արտահայտել. «Արաբերեն լեզուով գրուած եւ բովանդակ իսլամական աշխարհի մէջ ցրուած տետրակի մը մէջ, ջարդը եւ անոր հրամանակարգը սահմանող վարդապետութիւնը, բոլոր քրիստոնեաներու վրայ տարածուած էր, ուր մասնաւորապէս կ'ըսուէր «Թշուառականներուն (քրիստոնեայ) փճացումը, ըստ Գուրանի պատուէրին, նուիրական գործ մ'է՝ կատարուի այն գաղտնի կամ հրապարակաւ, ուր ալ որ գտնէք, զանոնք սպաննեցէք, բացարձակ իշխանութիւն կուտանք ձեզ»[260]:

Հավանաբար սուլթանի կոչի ու ֆեթվաների՝ դեղին թղթի մասին է նշել, ինչպես նաև այս պամֆլետի[261] մասին է գրել Գառնիկ Ստեփանյանը «Մղձավանջային օրեր» գրքում: Նա փոխանցում է մի վերապրողի պատմությունն այն մասին, որ օսմանյան բանակ զորակոչվելուց հետո Հասան անունով մի թուրք տասնապետ՝ Երզնկայից, Դաբաղխանայում նրան ցույց է տալիս մի «դեղին թուղթ»՝ իբրև շեյխուլ-իսլամի գաղտնի հրահանգ: Վերապրող հայն այն նկարագրում է իբրև մի ընդարձակ կոչ, որի սկզբում ներկայացվում էր, թե ինչպես են իսլամադավանները տառապում «անհավատների» իշխանության տակ, և այդ պատճառաբանությամբ

[259] *Նույն տեղում:*
[260] Նազլեան Յ. Եպս., *նշվ. աշխ,* էջ 15:
[261] Այս եզրակացությանն ենք հանգել նրա կողմից մեջբերված կոչի ստորև մեջբերված բովանդակությունից. այն համապատասխանում են միայն պամֆլետ-պարսավագրին, որը արաբերենով է:

հրահանգվում է անողոք լինել նրանք նկատմամբ. «.... Սոսկումով լսեցի հատկապես հետևյալ բառերը. – Այս սրբազան պատերազմը նվիրական պարտականություն է յուրաքանչյուր մահմեդականի վրա՝ սպանել, անխնա սպանել անհավատներին: Անհավատների արյունը կարող է թափվել առանց պատժի: Բռնեցեք նրանց և սպանեցեք, որտեղ որ հանդիպեք, գաղտնաբար, թե հայտնապես: Դուք անսահման իրավունք ունեք նրանց վրա: Նա ով գոնե մի անհավատ է սպանում, լիովին վարձատրվում է աստծուց: Ո՞վ կարող է մերժել այդպիսի մի չնչին գործ կատարել, այդպիսի մի մեծ վարձատրությունով»[262]:

Նրան հավելյալ զգուշացնում են նաև հետևյալը.

«–Արամ, լսե՞լ ես, հայերին կարող են սպանել:

-Ինչու:

-Շեյխուլ Իսլամը սրբազան պատերազմ է հայտարարել և կարգադրել է, որ ամեն մի հավատացյալ գոնե մի անհավատ սպանի»[263]:

Կարող ենք պնդել, որ պարսավագրի նշանակությունն իսկապես մեծ է եղել և՛ հրապարակումից ի վեր՝ ընդհուպ Հայոց ցեղասպանության ծրագրի իրագործումը՝ հաշվի առնելով դրա տարածվածությունը, գաղտնի փոխանցվելը, և՛ Թալեաթի կողմից հղումներ անելը պարսավագրին, ինչպես նաև այն հանգամանքը, որ արդեն 1915թ. գարնանը այն ԱՄՆ-ի Հալեպի հյուպատոսի կողմից ձեռք բերվելուց հետո ուղարկվել է Հ. Մորգենթաուին, որն իր հուշերում բառացի, մի քանի էջ զբաղեցնող մեջբերումներ է անում այդ պարսավագրից: Արամ Անտոնյանի կողմից պարսավագրին ուշադրություն դարձնելը ևս վկայում է փաստաթղթի կարևորության մասին:

ե. Օսմաներեն և ռուսերեն թռուցիկը[264]

Թռուցիկն սկսվում է Ռուսաստանի՝ Ավստրիայի ու Գերմանիայի դեմ պատերազմ հայտարարելու իրողությունը պատմելով և հիմնավորելով, թե ինչու Օսմանյան սուլթան Մեհմեդ

[262] Ստեփանյան Գ., *նշվ. աշխ*, էջ 20-21:
[263] *Նույն տեղում*, էջ 22:
[264] Ամբողջությամբ տե՛ս սույն ատենախոսության հավելվածում՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ 5, էջ xvi:

V-ն իր հերթին պատերազմ հայտարարեց Ռուսաստանին ու նրա դաշնակիցներին՝ Ֆրանսիային ու Անգլիային: Հետագա նախադասություններում շրջադարձ է կատարվում օսմանյան զորքերի հաջողություններին ու Սև ծովում ռուսական նավատորմի շրջափակմանը, Կովկասում մուսուլմանների հաղթական մուտքին և թե ինչպես են կովկասյան մուսուլմանները կռվում իրենց օսմանյան եղբայրների կողմից: Տեքստի հեղինակը, հղում կատարելով Մեհմեդ V-ի սրբազան պատերազմի ֆեթվային, որն ուղղված էր ընդդեմ ռուսների, անգլիացիների ու ֆրանսիացիների, ինչպես նաև՝ մեկ այլ սրբազան պատերազմի կոչի, որտեղ ասվում էր, որ չի կարելի շարժել Ալլահի զայրույթն ու մասնակցել իսլամի բարեկամ երկրների դեմ հայտարարված պատերազմին, ասում է. *«Հայտարարում եմ խալիֆի այդ հրամանը և ֆեթվայի բովանդակությունը ռուսական զորքերում գտնվող մուսուլման սպաներին ու զինվորներին»:*

Իբրև եզրափակիչ խոսք՝ նա հորամայում է իսլամադավաններին լքել ռուսական բանակի շարքերը: Նա Ռուսաստանը կոչում է իսլամի, խալիֆաթի և Օսմանյան կայսրության ամենատխերիմ և անհաշտ թշնամի ու հորդորում միանալ Ավստրիայի ու Գերմանիայի՝ օսմանյան «խալիֆի» բարեկամ երկրների զորքերին»[265]:

Օսմանյան ջիհադի կոչից ու ֆեթվաներից ազդեցություն կրած այս անստորագիր թռուցիկի բովանդակությունից պարզ է դառնում, որ այն գրվել է Առաջին աշխարհամարտի մեջ Օսմանյան կայսրության մտնելուց հետո, սակայն վկայությունների, հետազոտությունների բացակայության պատճառով մեզ դեռևս անհայտ է մնում թռուցիկի հեղինակը: Այնուամենայնիվ, կարող ենք պնդել, որ նաեղել է բարձր հեղինակություն վայելող մուսուլման առաջնորդ, իսկ թռուցիկի պատրաստման թվականը 1914 թ. աշունն է[266], հասցեատերերը ռուսական բանակում ծառայող իսլամադավաններն

[265] Հայերեն թարգմանությունը կատարել ենք թռուցիկի մի օրինակի ռուսերեն տեքստից, որի ֆոնդային համարը հետևյալն է՝ *ՀՑԹԻ-ի ֆոնդեր,* Բ-31, թղ 14, ֆի 26:

[266] Տե՛ս http://propagandahistory.ru/books/Aleksandr-Astashov_Propaganda-na-Russkom-fronte-v-gody-Pervoy-mirovoy-voyny/228 (դիտված 28.XI.2017 թ.) կայքը, որտեղ տեղադրված է Ալեքսանդր Աստաշովի ռուսերեն գիրքը (Асташов А. Б. *Пропаганда на Русском фронте в годы Первой мировой войны*. М., 2012). գրքում ներկայացված է թռուցիկի ռուսերեն տեքստը, իսկ արխիվային տվյալներից պարզ է դառնում թռուցիկի պատրաստման թվականը:

են: Հետաքրքիր է, որ թռուցիկի մի օրինակ[267] ինքնաթիռից դուրս է նետվել 1915 թ. փետրվարի 23-ին Սիբիրի 6-րդ բանակային կորպուսի 12-րդ հրետանային ջոկատի դիրքում: Նշված տարեթիվը խիստ կարևոր է հասկանալու համար, որ 1914 թ. նոյեմբերյան ջիհադի կոչերը չմնացին միայն 1914 թ. մեջ, այլ իրենց կիրառությունը շարունակեցին ունենալ 1915 թ.-ին ևս: Այսինքն, ջիհադի կոչերը կարևոր ռազմավարական նշանակություն ունեին, տվյալ դեպքում՝ ռուսական բանակի կազմում մարտնչող մուսուլմանների վրա ազդեցություն գործելու նպատակն էին հետապնդում[268]:

Ալեքսանդր Աստաշովի գրքի համաձայն՝ եղել են ևս երկու նմանատիպ թռուցիկներ՝ նույնպես կրոնական շեշտադրումներով, որոնցից մեկը ևս նետել են ինքնաթիռից[269]:

***

Գլուխը եզրափակենք հետևյալ դիտարկումներով. երիտթուրքերը միակցեցին հետևյալ երկու գաղափարական ուղղությունները՝ առաջադեմ համարվող արևմտյանն ու հետամնաց օսմանաթյուրքականը՝ արևմուտքից փոխառելով առաջադիմական գաղափարներ, սակայն դրանք համադրելով ազգայնամոլության ու բռնի ուժով «առաջընթաց» արձանագրելու թուրքական գործելաոճի հետ: Գաղափարական այդ մոտեցման արդյունքում թշնամի տարր ընկալվեց կայսրության քրիստոնյա բնակչությունը, և իթթիհադականության տված պտուղներն առաջին հերթին ուղղվեցին հայերի դեմ: Երիտթուրքերի գաղափարական ընթացքը եղավ հետևյալ հակաքրիստոնեական հանգրվաններով. հատուկ փիլիսոփայության յուրացման, քրիստոնյաների՝ որպես թշնամիների պիտակավորման, հակաքրիստոնեական քարոզչության, ջիհադի կոչերի մշակման ու հայտարարման (որպես զանգվածային մասնակցությունն ապահովող օղակ), տեղահանության և կոտորածների անհրաժեշտության գիտակցման պայմաններում, այլևայլ մոտիվացիոն ազդակների

[267] Ֆոնդային համարը՝ РГВИА. Ф. 2110. Оп. 1. Д. 1431. Л. 101 (տե՛ս *նույն կայքում*):
[268] Ռուսական կայսրության զորքերի զբաղեցրած դիրքերում հայտնաբերված են ևս 2 օրինակներ՝ երկուսն էլ 4-րդ բանակի (մեկը՝ Դաղստանի 21-րդ հետևակային) դիվիզիայի դիրքում՝ 1914 թ. դեկտեմբերի 30-ին). տե՛ս *նույն կայքում*:
[269] Տե՛ս http://propagandahistory.ru/books/Aleksandr-Astashov_Propaganda-na-Russkom-fronte-v-gody-Pervoy-mirovoy-voyny/230 (դիտված 28.XI.2017 թ.) և http://propagandahistory.ru/books/Aleksandr-Astashov_Propaganda-na-Russkom-fronte-v-gody-Pervoy-mirovoy-voyny/229 (դիտված 28.XI.2017 թ.):

կիրառմամբ, և այս ամենից բխող բռնություններն իրագործվեցին իսլամադավան բոլոր խավերի մասնակցությամբ: Ջիհադի տարբեր կոչերի տեքստերը մշակվեցին քրիստոնյա–«անհավատների» թիրախավորմամբ, նրանց դեմ պայքարն ու պատերազմը դիտարկվեց որպես սրբազան կրոնական պարտականություն: Այդ կոչերի տեքստերը միտված էին ապահովելու մուսուլմանների զանգվածային արշավն ընդդեմ թիրախավորված խմբերի:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Սույն եզրափակիչ գլխում տարբեր վկայությունների հիման վրա անդրադարձ կկատարվի այն հարցին, որ իթթիհադական ջիհադը, որպես ռազմավարական զենք, ներքին կիրառություն ու ահռելի ներգործություն ունեցավ Օսմանյան կայսրությունում՝ ասպարեզ նետելով կրոնական երանգ ունեցող բռնություններ ու սպանություններ:

3.1. Ջիհադի հետևանքները

1914 թ. նոյեմբերին Օսմանյան կայսրության ջիհադի հայտարարությունները և կոչերը լավագույնս իրագործվեցին հենց միայն Օսմանյան կայսրության ներսում և համախլամական արձագանք քիչ գտան: Այս առնչությամբ Ավետիս Թեքեյանն իր աշխատանքի մեջ գրում է. «Ճիհատի կոչը չկրցաւ խաբել իսլամական Աշխարհը: Որովհետեւ արաբ աշխարհ գիտէր՝ թէ Աշխարհամարտը կրօնական պատերազմ մը չէր: Միւս կողմէ, ո՛չ թէ Ռուսիա, Անգլիա եւ Ֆրանսա յարձակում գործած էին Թուրքիոյ վրայ, այլ Ժէոն-Թուրք վարիչները, իրենց ազատ կամքով մտած էին պատերազմի մէջ, քրիստոնեայ Գերմանիոյ կողքին, եւ Խալիֆէ սուլթանին բանակներն էին որ յարձակում գործած էին Դաշնակից Տէրութիւններուն վրայ, գերմանական զէնքերով»[270]: Նա ասում է, որ սրբազան պատերազմը հակառակ արդյունքի հանգեց, քանի որ եղան իսլամադավան ազգեր, որոնք ազատագրական բանակներ կազմելով, իբրև Անտանտի պետություններին դաշնակից, սկսեցին կռվել Օսմանյան կայսրության զորքերի դեմ. «Արաբական Աշխարհը, մանաւանդ Ճեմալ Փաշայի Պէյրութի, Դամասկոսի, Հալեպի, Երուսաղէմի եւ այլ կեդրոնական քաղաքներու մէջ հաստատած կախաղաններէն սարսափած, իրենց արեան գնով ազատագրուիլ

[270] Թէքէեան Ա., *Դրու ագներ ապրիլ եան Մեծ Եղեռնէն: Պեհեսնիհայութեան գողգոթան (1914-1918)*, Պէյրութ, 1956, էջ 18:

կ'ուզէին սուլթանի լուծէն, որ դարերէ ի վեր այնքան ողբերգական անդրադարձում մը ունեցած էր իրենց հին քաղաքակրթութեան, երկիրներուն եւ ժողովուրդներուն վրայ ...»[271]:

Օսմանյան կայսրության սահմաններից դուրս սրբազան պատերազմի կոչին միանալու արդյունք է օրինակ՝ Սալմաստի և Դիլմանի հայերի կոտորածը, որի ականատեսը պատմում է, թե ինչպես քրդերն իրենց շեյխի գլխավորությամբ, օսմանյան կանոնավոր զորքի ուղեկցությամբ մտնում են Դիլման, սրբազան պատերազմի դրոշակները ձեռքին՝ ջիհադի կոչերով դիմում ոչ միայն քրդերին, այլև պարսիկներին, թալանում հայկական բնակավայրերը, քրիստոնյաներին մեղադրում հակաիսլամական գործունեության մեջ, և այդ ամենն ի վերջո հանգեցնում է տեղի քրիստոնյաների կոտորածին[272]: Մշակ թերթում այս կոտորածների մասին հաղորդվում է, որ հայերի «... նահատակութիւնները սարսափելի ձևերով են կատարվել: Ողջ-ողջ մարդկանց ոտները կտրել են սղոցով, նոյն կերպով կտրել են դաստակները, մկրատով կտրատել են քթերը, այտերը, շրթները, դաղել են մարմնի այն բոլոր մասերը, որոնք աւելի դիւրագգաց են: Սարսափելի տանջանքներով սպանել են թէ ծերերին, թէ երիտասարդներին առանց սեռի խտրութեան: Մենք տեսանք և անծայր գազանութեան հետքեր. կարմրած շամփուրները անց են կացրել կանանց և տղամարդկանց սեռական գործարանները և այդպէս մեռցրել: Ակնյայտնի է, որ սահման չէ եղել այն գազանութիւնների համար, որոնք կատարվել են թիւրք և քիւրդ զինուորների ձեռքով, իրանց փաշաների աչքի առջև»[273]:

Հատկանշական է, որ 1914 թ. նոյեմբեր ամսին «Նյու Յորք Թայմս» թերթը ևս քանիցս հաղորդում է, որ ջիհադի հայտարարությանը չմիացան բազմաթիվ իսլամ հոգևոր առաջնորդներ, սակայն միաժամանակ տեղեկացնում է ճիշտ հակառակի մասին վկայող դեպքեր: Ժամանակագրորեն դիտելով՝ թերթի մեջ սկզբում կասկածի

---

[271] *Նույն տեղում,* էջ 19: Արաբական միջավայրում ջիհադի հայտարարությունը չընդունվելու վերաբերյալ տե՛ս Մարգարյան Ն., *Հայոց ցեղասպանության հետևանքով Սիրիայում հաստատված հայ տարագիրների կարգավիճակը և հայ-արաբական փոխհարաբերությունները (1915-1924 թթ.),* Երևան, 2013, էջ 46, 49:

[272] Տե՛ս Աւագեանց Ս., *Նշվ. աշխ*, էջ 9-24, տե՛ս նաև Labaree R. M. Rev., "The "Jihad" Rampant in Persia," *The Missionary Review of the World,* Vol. 38, New York-London, July, 1915, էջ 521-522:

[273] «Հայ կամավորի նամակից», *«Մշակ»* հասարակական-քաղաքական, գրական թերթ, No. 55, Թիֆլիս, 14 մարտի, 1915 թ., էջ 1, էլեկտրոնային պատճենը տե՛ս http://tert.nla.am/archive/HGG%20TERT/mshak%20tiflis/1915/1915(55).pdf (դիտված 25.XI.2017 թ.):

ենթակա է համարվում այն միտքը, որ ջիհադի հայտարարությանը կմիանային աշխարհի բոլոր մուսուլմանները, քանի որ արդեն մինչև նոյեմբերի 19-ը Հնդկաստանի մուսուլմանների առաջնորդ Աղա Խանն իր հավատարմությունն է հայտնում Մեծ Բրիտանիային[274]: Մյուս կողմից ընդամենը երկու օր անց նույն թերթը հաղորդում է. «Շեյխ ուլ-իսլամը կապ է հաստատել Ասիայի և Աֆրիկայի մահմեդական գրեթե բոլոր ղեկավարների հետ, որոնք հայտարարում են, որ նրանք կաջակցեն Թուրքիային՝ Անգլիայի դեմ պատերազմում: Այլ հաղորդագրություններ. «Հռոմից հաստատում են, որ Ալեքսանդրիայի սուդանցի բանվորների շրջանում լուրջ քարոզչություն է տարվում՝ իբրև Խալիֆի (սուլթանի) մանիֆեստի՝ սրբազան պատերազմի կոչի հետևանք»[275]: Թերթի հաջորդ անդրադարձի համաձայն՝ Կովկասի ռուսաստանցի մուսուլմանների հոգևոր առաջնորդ շեյխ ուլ-իսլամն ավելի խիստ խոսքեր է ուղղում օսմանյան շեյխուլ-իսլամի մտահղացման դեմ. «Դուռը (իմա՝ Բարձր դուռը–Ծ. Խ.) ոչ մի կանոնական իրավունք չունի՝ Սրբազան պատերազմ հայտարարելու: Նրա հրահանգները կապ չունեն տեղական ուլեմաների հետ, և մենք էլ նույնիսկ չգիտենք, թե ով է Կոստանդնուպոլսի շեյխ ուլ-իսլամը, կամ ինչ ցուցումներ է նա տալիս թուրքական ուլեմային»[276] և ապա մեջբերում է Ղուրանից մի հատված, համաձայն որի արգելվում է հակամարտել նրանց հետ, ովքեր հավատի (իմա՝ իսլամի–Ծ. Խ.) դեմ չեն գործում, մինչդեռ իրենց՝ Ռուսաստանի մուսուլմաններին, Ռուսական կայսրությունը կատարյալ ազատություն է տվել դավանելու իրենց կրոնը, հետևաբար՝ իրենք հանդես չեն գա Ռուսական կայսրության դեմ[277]: Նույնը հայտարարում են նաև Հյուսիսայի Աֆրիկայի ֆրանսիական գաղութների մուսուլմանները՝ արտահայտելով իրենց հավատարմությունը Ֆրանսիային[278]:

[274] Տե՛ս "KAISER INFORMS SON OF MOSLEM HOLY WAR,"*The New York Times*, November 19, 1914, էջ 1:
[275] "EGYPT'S ATTITUDE MENACING; Berlin Reports Manifestation in Favor of a Holy War," *The New York Times*, November 21, 1914, էջ 1:
[276] "CANNOT DECLARE "HOLY WAR": Sheikh-ul-Islam of Caucasus Denies Right of Turkish Confrere," *The New York Times*, November 26, 1914, p. 3.
[277] Տե՛ս *նույն տեղում:*
[278] Տե՛ս "TO IGNORE HOLY WAR ORDER: Moslems in North Africa Loyal to France, Says Bishop Anderson," *The New York Times*, November 26, 1914, էջ 3:

Ջիհադի կոչերի նպատակը քաղաքակրթական լայն բախում ստեղծելն էր, ինչը չկարողացավ իրականացվել, ըստ նախատեսվածի, համաշխարհային մակարդակով, քանի որ իսլամի ներքին հակասություններն այս պարագայում նպաստեցին նման ելքից խուսափելուն: Թուրք սուլթանին որպես խալիֆ ընդունում էին հիմնականում թուրքերը, մյուս մուսուլմանների շրջանում այդ հարցը տարատեսակ արձագանքներ էր ստանում. նույնիսկ սուլթանի խալիֆ լինելը համարում էին ինքնակոչություն[279]:

Փաստացի, ջիհադն իր ողջ ուժգնությամբ իրականացվեց միայն Օսմանյան կայսրության ներսում բնակվող քրիստոնյաների դեմ. «Ափսո՛ս որ արտաքին ճակատի վրայ ողբերգութեան վերածուած Ճիհատը, ներքին ճակատի վրայ մեծ ազդեցութիւն ունեցած էր Թուրքիոյ մոլեռանդ իսլամութեան վրայ: Մեր տաճիկ եւ քիւրտ հարեւանները, Ճիհատի յայտարարութենէն բորբոքած, իրենց մինչեւ այդ՝ «բարի կեավուր»ները սկսած էին անուանել «խնզըր կեավուր»ներ եւ լուռ խաչակրութիւն մը մղել անոնց դէմ: Անոնք կը ծեծէին եւ կը խոշտանգէին իրենց ձեռք անցուցած «կեավուր»ները, առանձնութեան մէջ: Մեր գոյութեան իսկ չէին ուզեր հանդուրժել»,–նշում է Ավետիս Թեքեյանը[280]: Այն Օսմանյան կայսրության սահմաններից ներս քրիստոնյաների քաղաքակրթության, մշակույթի դեմ ուղղված ավերիչ զենք եղավ: Պոլսի պատրիարք Զավեն արք. Եղիայանի գնահատմամբ ևս այդ «պանծացուած Ճիհատի» «արդիւնքը եղաւ շատ որոշ մահացումը քրիստոնեայ ժողովուրդի մը»[281]՝ այսինքն հայերի կոտորածը: Իսկ շվեդ միսիոներուհի Ալմա Յուհաննսոնը ջիհադի կոչի վերաբերյալ գրում է. «... Այնուհետև Սրբազան պատերազմ հայտարարվեց, և մենք բոլորս հասկացանք, որ ժողովրդի ճակատագիրը կանխորոշված է: Բարձրաստիճան անձինք և հոգևորականները գրգռիչ ճառեր էին արտասանում այն մասին, որ բոլոր քրիստոնյաները պետք է կոտորվեն: ...Թուրքերը հաճախ էին ասում, որ մինչև ռուսների

[279] Տե՛ս Առաքելյան Հ., «Նուիրական պատերազմը կամ ղազավատը», *«Մշակ»* հասարակական-քաղաքական, գրական թերթ, No. 254, Թիֆլիս, 9 նոյեմբերի, 1914, էջ 1, էլեկտրոնային պատճենը տե՛ս http://tert.nla.am/archive/HGG%20TERT/mshak%20tiflis/1914/1914(254).pdf (դիտված 25.XI.2017 թ.):
[280] Թէքէեան Ա., *նշվ. աշխ*, էջ 19:
[281] Զաւէն արքեպիսկոպոս, *նշվ. աշխ*, էջ 163:

ժամանումը նրանք կկոտորեն բոլոր քրիստոնյաներին. հետո ռուսները կարող են գալ»[282]: Խարբերդում ԱՄՆ-ի հյուպատոս Լեսլի Դևիսը արտահայտում է այդ մասին վկայող հետևյալ միտքը. «Կրոնական մոլագարությամբ համակված մահմեդականները, թվում էր որոշել են բնաջնջել ոչ միայն քրիստոնյա ազգաբնակչությանը, այլեւ վերացնել հավատի հետքերը, այն ամենը, ինչ քաղաքակրթությամբ էր ստեղծվել»[283]:

«Միություն և առաջադիմություն» կոմիտեի որոշ ժողովների մասնակցած լրագրող, ազգությամբ քուրդ Մեվլան Զադե Ռիֆաթը ջիհադի շուրջ հաղորդում է մի քանի տվյալներ ու կատարում բնորոշումներ: Նրա հեղինակած գրքի իսկության ու տվյալների հավաստիության շուրջ որոշակի տարակարծություններ կան, սակայն հարկ ենք համարում դրանք ևս ներկայացնել որպես լրացուցիչ նյութ. «Յայտարարուած Ս. Պատերազմը սպասուած ազդեցութիւնը չէր գործած: Իրականին մէջ կրօնական օրէնքներու տրամադրութեանց վրայ չհիմնուելով յայտարարուած այս Սբ. Պատերազմը, իր ազդեցութիւնը չունենալ է զատմիլիոնաւոր իսլամ հպատակ ունեցող մեծ տէրութիւնները Օսմանեան պետութեան դէմ լարած էր»[284], կամ՝ «Յայտարարուած Սբ. Պատերազմը կրօնական բնոյթ չունենալուն, չէր կրցած իր ազդեցութիւնը ունենալ ո՛չ միայն իսլամական շրջանակներու, այլ եւ Թուրքիոյ մէջ անգամ լաւ ընդունելութեան չէր արժանացած: Սուլթան Մուհամմէտ Ռէշատ Ե.-ին յայտարարել տուած Սուրբ պատերազմը կրօնական օրէնքներու բոլորովին հակառակ էր. խալիֆան քանի մը քրիստոնեայ պետութիւններու դէմ Սբ. Պատերազմ յայտարարելով, ուրիշ քանի մը քրիստոնեայ պետութիւններու հետ զինակցած, իսլամական աշխարհը այս զինակիցներուն հաշտյն եւ շահուն ոտքի հանել ուզած էր»[285]: Նա հավելում է, որ սովորաբար սրբազան պատերազմը հայտարարվում է այն ժամանակ, երբ իսլամին որևէ վտանգ է սպառնում կամ այլադավանների կողմից կրոնական ենթատեքստ ունեցող հալածանք է իրականացվում իսլամադավանների հանդեպ:

[282] Յուհաննսոն Ա., *նշվ. աշխ,* էջ 48:
[283] Դևիս Լ. Ա., *Սպանդի նահանգը,* Երևան, 2001, էջ 166:
[284] Մեվլան Զատե Ր., *Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ Իթթիհատի հայաջինջ ծրագիրները*, Երևան, 1990, էջ 70:
[285] *Նույն տեղում,* էջ 71:

Հետևաբար նշված դեպքերում ցանկացած իսլամադավան օրինաչափորեն դուրս է գալիս պայքարի, սակայն, 1914 թ. նոյեմբերի օսմանյան ջիհադը այդ հիմքերից ոչ մեկին չէր համապատասխանում և գործի էր դրվել Գերմանիայի հաշվարկով[286]: Ռիֆաթի գրքում նաև ներկայացված է Ռոստովի թերթերից մեկում «Օթրոյողա»-ում, տպված «Ապրիլի 6-ից 16-ը, տասը օր» վերնագրով հոդվածը, որտեղ հայերը ջիհադը մեկնաբանում են հետևյալ կերպ՝ «Ասոնք (իմա՝ թուրք բռնակալները–Ծ. Խ.) դուրսը Ս. Պատերազմ յայտարարելով՝ ներսը կիներու, փոքրիկներու, ծերերու, երիտասարդներու, հիւանդներու եւ անկարողներու ընդհ. ջարդ կազմակերպեցին»[287]:

«Նյու Յորք Թայմս» թերթը ջիհադի հայտարարության օրերին ու դրանից հետո՝ մի քանի շաբաթվա ընթացքում լուրեր է հաղորդում՝ հետևյալ վերնագրերով ու բովանդակությամբ. «**Հաղորդագրություն. Քրիստոնյաները վտանգի մեջ են».** «Ավազակություն, մարդասպանություն և վայրագություններ են կատարվում, հայերը գլխավոր զոհն են, բայց **բոլոր քրիստոնյաները** (ընդգծումը մերն է-Ծ. Խ.) և օտարերկրացիները մեծ վտանգի մեջ են»[288]: Հղում կատարելով Պետրոգրադի մի հաղորդագրության՝ 1914 թ. նոյեմբերի 29-ին տպագրվում է **«Էրզրումի ֆանատիկոսները կոտորում են քրիստոնյաների.** սրբազան պատերազմի հայտարարությանը հետևեց հայերի շինությունների ավերումը» վերնագրով մի լուր. «Այս թուրքական քաղաքից Օդեսա հասած հաղորդագրությունների համաձայն՝ մահմեդականներին սրբազան պատերազմի հրավիրող կոչից հետո բոլոր հայկական ակումբները, եկեղեցիները և դպրոցները ավերի են ենթարկվել ամբոխի ձեռքով: Չորս հայ, որոնց թվում՝ մեկ կին, սպանվել են փողոցներում»[289]: Նույն թերթը մեկ օր անց՝ նոյեմբերի 30-ին, հղում կատարելով Աթենքից ստացված մի հաղորդագրության, «**Մուսուլման հոգեվորականները հարկադրում են սպանել անհավատներին**» խորագրով, հայտնում է, որ Բեյրութում

[286] Տե՛ս նույն տեղում:
[287] *Նույն տեղում,* էջ 93:
[288] "REPORT CHRISTIANS IN PERIL IN TURKEY: Views of Refugees Now in Petrograd–All men Forced into the Army," *The New York Times*, November 12, 1914, p. 3.
[289] "ERZERUM FANATICS SLAY CHRISTIANS: Holy War Proclamation Followed by Destruction of Armenians' Buildings," *The New York Times*, November 29, 1914, p. 2.

անհավատներին սպանելու հրահանգներ տրվում էին մզկիթներում՝ «.... անխտիր կոտորել անհավատներին՝ թշնամական որևէ շարժի նշույլ իսկ տեսնելու դեպքում»[290]:

Ի թիվս այլ պատճառների՝ ջիհադի իրագործումը և դերակատարումը կայսրության քրիստոնյաների կոտորածների մեջ, բացատրվում է թուրքական իսլամի առանձնահատկությամբ. թուրքական իսլամն անջատչէ զինվորականությունից ու պետական համակարգից, և վերջիններս էլ իրենց հերթին՝ կրոնից. «Թուրքին իսլամությունը բոլորովին տարբեր է ուրիշ մահմետական ցեղերէ. կրօնքը միացուցած զինուորականութեան ու պետութեան հետ՝ միշտ եղած են վայրագ, ահասարսուռ ու բարբարոս...»[291]:

Մյուս կողմից, երիտթուրքերի և Կայզերական Գերմանիայի հաշվարկած լայն համաշխարհային արձագանքի բացակայությունը ջիհադ սկսելու հարցում որակել որպես ամբողջական ձախողում՝ սխալ է: Ջիհադի հրապարակված կոչերի շրջանառությունից օրինաչափորեն կարելի է հետևություն անել, որ երիտթուրքական ջիհադի ծրագիրը մանրամասն մշակված, տպագրված, տարբեր լեզուներով թարգմանված ու բաժանված էր մուսուլմանների շրջանում. այն կշռադատված ու պլանավորված էր, և հետևաբար երիտթուրքերի ծրագրերին համահունչ էր և անիմաստչէր կարող լինել: Սուլթան Մեհմեդ V Ռեշադը, որի անունն առկաէ այդ կոչերի մի մասի մեջ, երիտթուրքերին միանգամայն ենթարկվող անձ էր, իսկ շեյխուլ-իսլամ Հայրի էֆենդին հայտնի երիտթուրք գործիչներից էր[292]: Իսկ երիտթուրքերի գաղափարախոսության համահունչ էր քրիստոնեական քաղաքակրթությանը վնասելը, ինչը հետևողականորեն իրականացվեց հիմնականում Օսմանյան կայսրության տարածքում: Նման մտքեր բազմիցս են արտահայտվել այլազգի ականատեսների կողմից, մասնավորապես, Ցեղասպանությունը վերապրած Գրիգորիս ծ. վրդ. Պալաքյանի հաղորդմամբ Բեռլին-Բաղդադ երկաթուղու շինարարությամբ զբաղված ավստրիացի ճարտարապետ Լիցմայերը հետևյալ

[290] "MOSLEM PRIESTS URGE KILLING OF INFIDELS: Massacre at Beirut on the First Appearance of Hostile Warships Is Threatened," *The New York Times*, November 30, 1914, p. 1.
[291] Ճիզմէճեան Մ. Գ., *Խարբերդ եւ իր գաւառակները*, Ֆրեզնօ, 1955, էջ 558:
[292] Տե՛ս Гуайта Дж., *նշվ. աշխ*, էջ 53:

դիտարկումն է կատարում ջիհադի կոչի շուրջ. «...Եւրոպայի մեծ պետութեանց դէմ իրենց հռչակած կրօնական պատերազմը (ճիհատ) կը գործադրեն անպաշտպան մարդոց, կիներու եւ անմեղ մանուկներու վրայ ...»[293]:

Ջիհադի վերաբերյալ խոսելիս անհրաժեշտ է ընդգծել երկու հանգամանք, որոնք վերաբերում են ջիհադի շնորհիվ միսիոներություն իրականացնելու հեռանկարին: Առաջին՝ օսմանյան մուսուլմանների միջավայրում (հավանաբար կանխամտածված) լուրեր էին շրջանառել, որոնց համաձայն՝ խոստացվել էր, որ հաղթանակի դեպքում Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կայսրերը հրաժարվելու էին քրիստոնեությունից և պետականորեն ընդունելու էին իսլամ[294]. Վիլհելմ II-ն արդեն իսլամի պաշտպան էր հայտարարվել տարիներ առաջ[295]: Իբրև այս մասին փաստող օրինակ՝ բերենք ականատեսի հետևյալ վկայությունը. «Բոլոր երիտասարդ թուրքերը ոտքի վրայ էին, գիշեր–ցերեկ կ'աշխատէին քրտական ցեղապետերը, շէյխերը քաղաք (Մուշ–Ծ. Խ.) հրաւիրելու և համոզելու որ մեր խալիֆան *ճիհատ* (սուրբ պատերազմ) հռչակած է բոլոր *կեավուր*ներուն դէմ, բայց քանի որ Գերմանիոյ թագաւորը խոստացած է մեր Սուլթանին, որ յաղթութենէն ետք, իր ամբողջ ազգով և դաշնակիցներով պիտի ընդունի *հագ տին*ը (ճշմարիտ կրօնքը), այդ պատճառով ալ՝ մեր դաշնակիցներէն զատ միւս բոլոր *կեավուր* ազգերը պիտի ջնջենք աշխարհի երեսէն և կամ մեր *Գուրան*ը ընդունիլ պիտի տանք անոնց»[296]: Այս առնչությամբ խոսում է նաև Ավետիս Թեքեյանը. «Ճիհատի կոչին վրայ մեծ յոյսեր դրած էին ժէոն-Թուրք վարիչները, նոյնիսկ Հաջի Վիլհելմ կ'անուանէին անոնք Գերմանիոյ իրենց զինակից երիտասարդ կայսրը, կատարեալ դարձնելու համար կատակերգութիւնը...»[297]:

Եվ երկրորդ, մուսուլման, տարրական գրագիտություն ունից զուրկ թուրք և քուրդ ժողովրդի մեջ, հավանաբար, կանխամտածված

[293] Պալաքեան Գր. ծ. վրդ., *Հայ Գողգոթան. դրուագներ հայ մարտիրոսագրութենէն*, Բ հատոր, Պէյրութ, 1977, էջ 45:
[294] Այս մասին տե՛ս Արզումանյան Մ., *նշվ. աշխ*, էջ 161:
[295] Տե՛ս Кондакчян Р., *նշվ. աշխ*, էջ 34:
[296] Բդէեան Ս. եւ Մ., *Հարազատ պատմութիւն Տարոնոյ*, Գահիրէ, 1962, էջ 305:
[297] Թէքէեան Ա., *նշվ. աշխ*, էջ 18, 19:

ներարկվել էր այն մտայնությունը, որ պատերազմից հետո բոլորը մուսուլման են դառնալու[298] և դրան նպաստելը, բռնությամբ միսիոներություն անելով դրան մասնակցելը նրանց համար հետմահու *ջեննեթի*՝ դրախտի, երանության երաշխիք էր: Այս մասին, ինչպես պարզ դարձավ, ուղղակի կամ անուղղակի խոսվում է ջիհադի պամֆլետում, ֆեթվաներում, թերթոններում և ջիհադի բոլոր մյուս վավերագրերում:

Ջիհադի հայտարարության հասցեատերերը մուսուլման զանգվածներն էին, թիրախը՝ քրիստոնյաները: Ջիհադի հայտարարության ճարտարապետները երիտթուրք ղեկավարներն էին, ովքեր կոչերի մեջ օգտագործեցին կրոնական եզրաբանություն, մեջբերումներ կատարեցին Ղուրանից, որպեսզի ջիհադի կոչը զանգվածներին արտոնվի և իսլամական օրենքին համահունչ իրականացվի, օրինականության քողի տակ անցկացվի: Այս է պատճառը, որ ջիհադի հայտարարություններից անմիջապես հետո և հետագայում՝ Հայոց ցեղասպանության ընթացքում, ոճրագործները հայերի դեմ իրագործվող վայրագություններին տալիս էին ծիսական երանգավորում, որի մասին մենք խոսում ենք առանձին ենթագլխում:

Հետևենք ջիհադի կոչերի ունեցած ազդեցությանը: Առաջին հարվածներից մեկն ուղղվեց Օսմանյան կայսրության զինվորագրված քրիստոնյա տղամարդկանց դեմ՝ 1914 թվականին՝ անմիջապես ջիհադի հայտարարությունից հետո, և հետագա հիմնական կոտորածները ևս ընդհանուր տրամաբանությամբ հանգումեն ջիհադին ու կապված են ջիհադի հայտարարության հետ:

Ինչպես նշվեց, ջիհադի բացասական ազդեցությունն ընդդեմ քրիստոնյաների սկսվեց զինվորագրվածների նկատմամբ. Ավետիս Թեքեյանն իր կողմից գրառված Հայոց ցեղասպանության ականատեսների վկայությունների շարքում նշում է, որ ճակատից տուն դարձած, բարեկամներին հանդիպած զինվորների հաղորդմամբ՝ «Ճիհատի յայտարարութիւնը բոլորովին եղերական կացութիւն մը ստեղծած էր ճակատին վրայ եւ յառաջացուցած էր այնպիսի ահաւոր ողբերգութիւն մը, որմէ վերապրող զոհերն էին քաղաք հասնող

[298] Տե՛ս օրինակ Ճէյքըպսըն (Եագոպսըն) Մ., *նշվ. աշխ*, էջ 170:

փախստական զինուորները»[299]: Նա նաև ներկայացնում է ռազմաճակատում գտնվող մի հայ զինվորի խոսքերը, որը հաղորդում էր հայերի դրությունը մինչև ջիհադի հայտարարությունը և դրանից հետո. «Բանակի մէջ, ամբողջ ռազմաճակատի երկայնքին, կրակի առաջին գիծերուն վրայ կը գտնուէինք մենք, հայ զինուորներս: Ամենէն շատ մենք կը վիրաւորուէինք յառաջացած խրամատներու մէջ: Տաճիկ զինուորական պետերը միշտ առաջ կը քշէին մեզ: Բայց բացէ ի բաց թշնամական վերաբերմունք մը ցոյց չէին տար մեզի: Ճիհատի յայտարարութենէն ետք անոնց այս խտրական ոգին ատելութեան ոգիի փոխուեցաւ մեզի հանդէպ: Անոնք զինաթափ ըրին մեզ եւ վերածեցին անզէն աշխատաւորական գունդերու»[300]:

Գերմանացի լյութերական աստվածաբան, միսիոներ Յոհաննես Լեփսիուսը հաղորդում է ջիհադի հայտարարության վճռորոշ լինելու մասին վկայող մի քանի փաստեր. «Ճիհատի յայտարարութենէն յետոյ մոլլաները, շէյխերը և իրոսակները, իրենց գլուխը ունենալով նշանաւոր աւազակներ, սկսան շարժիլ: Մահմետականները զինուած էին, և մզկիթներու մէջ քրիստոնեաներու դէմ ատելութիւն կը քարոզուէր: Արդէն Դեկտեմբեր և Յունուար ամիսներուն, շատմը չարագործութիւններ կատարուած էին»[301], «Սուրբ պատերազմին» յայտարարութիւնը, ընդհանուր գրգռութիւն մը յառաջ բերաւ թուրք տարրին մէջ, ընդդէմ քրիստոնեայ տարրերուն. քրիստոնեայ ազգերը, շուտով պատճառներ ունեցան վախնալու թէ, մի գուցե թուրք ազգայնամոլութիւնը օգտուիլ ուզէ իսլամ մոլեռանդութենէն, իսլամ ժողովրդեան աչքին պատերազմը ժողովրդական դարձնելու համար»[302]:

Եվ իրապես, Կոստանդնուպոլսում ջիհադի ֆեթվաներն ընթերցելուց հետո հենց քաղաքի ներսում տեղի ունեցան վայրագություններ, որից առաջին տուժողը հայկական Թոքատլյան խանութն էր: Դեպքը ներկայացնող մի ականատես հայ՝ Սիմոն

[299] Թէքէեան Ա., *նշվ. աշխ,* էջ 20:
[300] *Նույն տեղում:*
[301] Լեփսիուս Յ., *Հայկական ջարդերը. Տոքթ. Յոհաննէս Լեփսիուսի տեղեկագիրը*..., էջ 140-141:
[302] *Նույն տեղում,* էջ 270:

Խորենը, պատմում է, թե ինչպիսի տրամադրություն էր տիրում այդ օրը. «Ֆաթիհի պատմ. Մզկիթին մէջ խռնուած ամբոխը Պօլսոյ առման 461րդ տարեդարձը տօնելով հանդերձ՝ պարզեց Ճիհատի դրօշը: Ճիհա՛տ, ի՛նչ կարմիր բառ. իսլամութեան կոչն էր ան որ նպատակ ունէր գրգռելու աշխարհիս բոլոր Միւսլիմանները: Մութը կոխեր էր. սոսկալի տեղատարափ մը կ'իջնէր: Թափօրը գերման դեսպանատունէն մեկնելով, Թօգաթլեանի ապակիները ջախջախել է վերջ՝ Եէնի Չարշըի կողմէն գոռում գոչումով կ'իջնէր աւստր. դեսպանատունը»[303]: Նույնի մասին հաղորդագրություն ունի «Մշակ» թերթը՝ որոշ հավելյալ մանրամասներով՝ «Բուխարէստից հաղորդում են «Рѣчь»-ին Կ. Պօլսում քրիստոնեաների դէմ տեղի ունեցած վերջին ցոյցի մանրամասնութիւնների մասին: ...Այդ օրվայ գիշերը Կ. Պօլսում տեղի են ունեցել լուրջ անկարգութիւններ, որոնց ղեկավարներն են եղել թիւրք պաշտօնեաներ: Ամբոխը ուղևորվել է քրիստոնէական թաղը: Ռուսահպատակ հայ Թոքաթլեանի հիւրանոցը բոլորովին քարուքանդ արված: Քարուքանդ են արված մի շարք կաֆէներ և ռեստորաններ, որոնք պատկանում էին ֆրանսիացիներին, յոյներին և հայերին: ...Քրիստոնյաների տրամադրութիւնը խիստ տխուր է»[304]: Այս առնչությամբ Հենրի Մորգենթաուն ևս ունի հետևյալ տեղեկությունը. «... ամբոխը կտրուկ շրջվեց և ուղղվեց դեպի Կոստանդնուպոլսի ամենանշանավոր «Թոքաթլյան» ռեստորան: Այն փաստը, որ ռեստորանը պատկանում էր հայի, դարձնում էր այն օրինական ավար: Երկար կեռիկավոր փայտերով զինված վեց տղամարդիկ կոտրել էին բոլոր պատուհանները ու հայելիները, մյուսները պոկել էին սեղանի մարմարյա մասերը և ջարդուփշուր արել: Մի քանի րոպեում ողջ ռեստորանն ավերվել էր: Հենց դա էր «սրբազան պատերազմը», ինչպես այն հասկացել էին Կոստանդնուպոլսում»[305]:

[303] Սիմոն Խորէն, «Յիշողութիւններ», *Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը*, 1916-1920, ժ.-ժԴ. Տարի, Բ. Հրատարակութիւն, Հալէպ, 2009, էջ 133:
[304] Տե՛ս «Կ. Պօլսում» (խմբագրական), *«Մշակ»* հասարակական-քաղաքական, գրական թերթ, No. 260, Թիֆլիս, 16 նոյեմբերի, 1914 թ., էջ 1, էլեկտրոնային պատճենը տե՛ս http://tert.nla.am/archive/HGG%20TERT/mshak%20tiflis/1914/1914(260).pdf (դիտված 25.XI.2017 թ.):
[305] Մորգենթաու Հ., *նշվ. աշխ*, էջ 133:

Վրացական «Սախալխո գազեթի» թերթի հաղորդմամբ Տրապիզոնում ևս սրբազան պատերազմի հայտարարության օրերին տեղի ունեցավ քրիստոնյաների խանութների կողոպուտև սպանվեց 3 քրիստոնյա[306]:

Ջիհադի հայտարարությունը մեր կարծիքով աստվածաբանական հիմքեր ուներ, և պետք է նշվի, որ թուրքական իսլամն աստվածաբանական մասնակցություն, մուսուլման ամբոխին արտոնություն տվեց քրիստոնյաներին ու հատկապես հայերին կոտորելու ուղղությամբ: Թուրք ու քուրդ մուսուլմանների պատկերացմամբ՝ արդեն 1915 թ. տարբեր վայրերում ինքնապաշպանության դիմած *դհիմմի (զիմմի)* հայերը հայտարվել էին իսլամական օրենքից դուրս, այսինքն՝ դավաճան, թշնամի[307]: Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Զավեն արք. Եղիայանն այս մասին ունի հետևյալ պնդումը. «Ճիհատը լիովին գործադրվեցաւ այս երկրին մէջ, որովհետև հայերը իբրև՛ օրենքէ դուրս ձգված և իսլամութեան թշնամի ժողովուրդ մը նկատվեցան և անոնց կյանքը, պատիվը և ինչքը հէլալ համարվեցան, սպանութիւնը, բռնաբարութիւնք և կողոպտում կրոնական պարտականութիւն մը եղան նոյնիսկ պաշտոնական անձանց համար»[308]:

Ականատես Կարապետ Գաբիկյանի վկայությամբ 1915 թ. հունիսի 18-ին Սեբաստիայի թուրք ոստիկանների և տեղի հայ մեծավորների հանդիպումն անցնում է մեղադրական ծանր խոսքերով՝ ուղղված հայերին, որի վերջում ոստիկանների կոմիսարը հավելում է, որ իրենք սուլթանից ու շեյխ ուլ-իսլամից ունեն գրավոր արտոնագրեր՝ հայերին «մշտնջենական տարագրումի» ենթարկելու համար. «Վերջապէս *խոյանէթ միլլէթմը, պօգ միլլէթ*մը ըլլալնուդ բոլոր ակներեւ ապացոյցները տուիք: Ուստի կայսերական բարձրագոյն հրամանով, եւ Շէյխիւլ-Իսլամի *շէրհական ֆէթվայով*ը

[306] Տե՛ս «ՍԱԽԱԼԽՈ ԳԱԶԵԹԻ», 1914. 11. 15 (No. 139), *Հայոց ցեղասպանության թեման վրացական պարբերականներում 1914-1918 թթ.*, Երևան, 2017, էջ 29:

[307] Տե՛ս Reid J. J, "Philosophy of State –Subject Relations, Ottoman Concepts of Tyranny, and the Demonization of Subjects: Conservative Ottomanism as a Source of Genocidal Behaviour, 1821-1918," *Studies in Comparative Genocide*…, էջ 62-65:

[308] Հատված Պատրիարք հոր մի նամակից՝ ուղղված Ամերիկահայոց հոգևոր առաջնորդ ծ. վրդ. Վեհունուն, Կ. Պոլիս, 28 դեկտեմբերի 1915, մեջբերումն ըստ հետևյալ գրքի՝ *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում*, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող՝ Ներսիսյան Մ., Սահակյան Ռ., Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 407, 408:

որոշուած է ձեր մշտնջենական (թէ՛ պիտ) տարագրումը Միջագետք, Արաբական անապատները, ոչ ոք չպիտի մնայ, *գօգու նու զ-աթգու նու զ պիլէ գալ մայ աճագ*. գնացէք ըսէք ձեր թաղի ժողովուրդին, մինչեւ Բշ. թող պատրաստուին...»[309]: Այս հատուածը մեզ հաղորդում է հատկապես երկու կարևոր հանգամանք: Նախ, երևում է, որ ոճրագործների ընկալման մեջ մեր կողմից նշված ջիհադի կոչերից գոնե երկուսը՝ սուլթանի կոչն ու շեյխուլ-իսլամի ֆեթվաները, կարևոր հիմք էին Հայոց ցեղասպանությունն իրագործելու համար: Եվ երկրորդ, 1914-ի նոյեմբերյան ջիհադի կոչերը, ինչպես վերը նշեցինք, չմնացին միայն 1914 թվականի մեջ, այլ իրենց կիրառումը և, որ ամենակարևորն է, իրենց կրոնահրավական գործադրումը գտան 1915-ի՝ եղեռնագործության առաջին և ամենամահաբեր տարվա ընթացքում:

Այսպիսի բացատրություններ հանդիպում են ընդհուպ Ցեղասպանության ավարտը բազմաթիվ վկայություններում: Ռուսական թերթերից մեկում՝ «День» թերթի 1915-ի սեպտեմբերի 6-ի համարում, ականատեսի հետևյալ վկայությունը կա՝ ջիհադի գործոնի բացատրությամբ. «Այդ սովահար, ուժասպառ մարդիկ միավորվել էին սոսկ «գազավաթի»՝ քրիստոնյաների դեմ սրբազան պատերազմի ընդհանուր գաղափարով, որն այստեղ՝ փոքրասիական այս խուլ վայրերում, դեռ ընդունակ է կրոնականորեն տրամադրված մահմեդականների գլուխները մշուշել և սրտերը բոցավառել»[310]:

Ջիհադի գնահատականը ժամանակի հայտնի մտավորականներից մեկը՝ Յոզեֆ Մարկվարտը տվեց հետևյալ բնորոշմամբ. «Ջիհադը՝ ի պատիվ ալլահի սպանությունն ու կողոպուտը, մեղմ անվանված «սրբազան պատերազմը», որը Թուրքիան հռչակեց գերմանական կառավարության հրահրմամբ կամ, առնվազն, հավանությամբ, այդ սրբազան պատերազմը, որի հետ այստեղ այնքան մեծ հույսեր էին կապում, ունեցավ այն մեն մի հետևանքը, որ թուրքերին օգնեց իրականացնելու սպանությունների իրենց ծրագրերը՝

[309] Գաբիկեան Կ., *նշ վ. աշխ*, էջ 92:
[310] Մեջբերումն ըստ *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում*..., էջ 429, 430 գրքի՝ *День*, No. 245 (1043), 6 сентября, 1915 г. Ն. Օգանովսկու թղթակցության թարգմանությունը. *День* թերթի Էլ. պատճենը տե՛ս https://vivaldi.nlr.ru/pn000156800/view#page=3 (դիտված 25.XI.2017 թ.):

կազմակերպելու Արևելքի քրիստոնյաների, գլխավորապես հայերի գրեթե լիակատար բնաջնջումը»[311]:

Այսպիսով, վերապրողների, ականատեսների ու ժամանակակիցների վկայությունների համաձայն երիտթուրքերի ջիհադի հայտարարության հասցեատերերը մուսուլման զանգվածներն էին, ջիհադի վերջնական թիրախն Օսմանյան կայսրության ներսում բնակվող քրիստոնյաները, առաջին հերթին՝ հայերը եղան[312], այն Օսմանյան կայսրության սահմաններից ներս քրիստոնյաների քաղաքակրթության, մշակույթի ու գոյության դեմ ուղղված ավերիչ զենք դարձավ[313]:

3.2. Բռնությունների և սպանությունների ծիսականացումը Մեծ եղեռնի ընթացքում

Հայոց ցեղասպանության իրագործման մեջ կրոնական գործոնի անհերքելի առկայության մասին է խոսում բռնությունների ընթացքում կրոնական ենթատեքստի դրսևորումը: Կրոնական տեքստերի գործածումը, իսլամադավան հոգևորականների կոչերի ազդեցությունը առավել ագուցնս հանգեցրին չպատերազմող, խաղաղ և անզեն բնակչության հանդեպ կրոնական երանգավորում ունեցող բռնությունների, որոնք վայրագություններն իրականացնողի աչքին բնավ բռություններ չէին, այլ կա՛մ միսիոներություն, կա՛մ ծառայություն սեփական աստծուն[314]:

---

[311] Մեջբերումն ըստ *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում*..., էջ 699, գերմաներեն բնօրինակը տե՛ս Professor Dr. Marquart. *Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation*. Berlin- Schöneberg, 1919, S. 46-47.

[312] Վերապրող հայերը հաճախ են ջիհադի հետ կապում Եղեռնի իրագործումը. այդպիսի մի բյուրեղացված մտածելակերպի օրինակ է «Արձագանգ Փարիզի» երկշաբաթաթերթում Մ. Ոսկյանի հեղինակությամբ տպված «Ճիհա՛տ...» բանաստեղծությունը, որտեղ մասնավորապես հետևյալ խոսուն մտքերն են տեղ գտել.

«....Ճիհատ, ճիհատ...»–
Տկարներու, անզէններու անպաշտպան
Եւ ծերերու, մանուկներու և յղի
Մայրերու դէմ, յայտարարուած. յաղթական
Անպարտելի Մարգարէին Սուրբ Պատերազմն է ատի» (տե՛ս Ոսկեան Մ., «Ճիհա՛տ...», *«Արձագանգ Փարիզի»* երկշաբաթաթերթ, թիւ 17-20, 10 յունվար 1917, էջ 15):

[313] Համմտ. Արզումանյան Մ., *նշվ. աշխ,* էջ 164, Готлиб В. В., *Тайная дипломатия во время Первой мировой войны,* Москва, 1960, էջ 153, 154:

[314] Հայերի կոտորածը իսլամական ֆատալիզմին բնորոշ՝ ներկայացվում է որպես ալլահի կամքը. «Տիկին Էմանը վալիին կնոջ քով գացած էր որպեսզի հետաձգէր քանի մը հիւանդներու մեկնիլը:

Հայոց ցեղասպանության ընթացքում սպանությունները կատարվում էին հատուկ դաժանությամբ՝ կտտանքների ուղեկցությամբ՝ դրանց հաղորդելով ծիսականություն, հաճախ կիրառելով «քրիստոնեական» ենթատեքստ՝ խաչելով, սպանելով եկեղեցիների խորանների վրա և այլն: Առանձնահատուկ դաժան բռնությունների էին ենթարկվում քրիստոնյա հոգևորականները: Այն դեպքերում, երբ հայերը մահվան սպառնալիքով կրոնափոխ էին լինում, թուրքերի համար դադարում էին *գյավուր* լինելուց, իսկ իսլամադավանին սպանելը մեղք է համարվում ըստ Ղուրանի, որը, չնայած, ոչ միշտ էր հաշվի առնվում կրոնափոխ եղածների պարագայում[315]:

Հայերի կոտորածներին ծիսականություն հաղորդելու միտումը երևում է այն վկայություններում, որտեղ հատուկ բառեր, կոչեր, կանչեր կամ ձայնարկություններ են օգտագործվում: Յակոբ Կյունցլերն իր հուշագրության մեջ ասում է. «Կրակոցների ընթացքում լսեցինք նաև արաբ կանանց ուժգին **«լիլիլիլի» գոչյունները....** Մուսուլման կանայք սովորություն ունեն այդպես ոգևորել իրենց ամուսիններին քրիստոնյաներին սպանելիս»[316]: Ծիսականացված սպանությունների ու բռնությունների մասին հաղորդվում է նաև մինչև Մեծ եղեռնը իրագործված կոտորածների ժամանակ, օրինակ՝ Համիդյան կոտորածների վերաբերյալ ականատեսների վկայություններում. ծիսականացված սպանության այդպիսի մի խոսուն դրվագ է ներկայացնում Լորդ Քինրոսը. «Երբ երիտասարդ հայերի մի մեծ խումբ բերվեց շեյխի առջև, նա հրամայեց նրանց գցել իրենց մեջքերի վրա և բռնել ձեռքերից և

Վալիին կինը պատասխանած էր.
-Երբ Ալլահը որոշած է որ անոնք մեկնին Շաբաթ օր, չկրնար փոխուիլ:
Վալիին կինը աւելցուցած էր նաեւ որ,
-**Ալլահը որոշած է նաեւ որ այս տարի ջուրի տեղ արիւն պիտի հոսի:**
Ուրեմն դիմումը անօգուտ էր» (ճէյքըպսըն (Եագոպսըն) Մ., *նշվ. աշխ*, էջ 113): Մեջբերումներում կատարված այս և տեքստում առկա մյուս ընդգծումները մերն են:

[315] Ասվածի վկայություն է հետևյալ օրինակը. «....ասկյարներն սպանեցին իմ փոքրիկներին՝ **նրանց գլուխներն իրար խփելով**: Նրանք բռնաբարեցին Շիրինին, հետո կտրեցին նրա կրծքերը: Նա տանջամահ լինելով հոգին ավանդեց իմ աչքի առջև, իսկ ինձ կենդանի թողեցին՝ ասելով. «**Դու կրոնափոխ ես եղել, դու մուսուլման ես**» (Մարդիգանյան Ա., *նշվ. աշխ*, էջ 69), հմմտ. Гуайта Дж., *նշվ. աշխ*, էջ 213-214):

[316] Կյունցլեր Յ., *Արյան և արցունքների երկրում: Իրադարձությունները Միջագետքում՝ Համաշխարհային պատերազմի ժամանակ*, Երևան, 2011, էջ 33:

ոտքերից: Ապա, ականատեսի բառերով, **նա սկսեց արտասանել Ղուրանից տողեր և կտրեց նրանց կոկորդները զոհաբերվող խոյի մասին մեքքայական ծեսից հետո»**[317]:

Հենրի Մորգենթաուն հաղորդում է, որ Մեծ եղեռնի գլխավոր ծրագրողներից մեկը՝ Թալեաթը, ատում էր կրոնները: Սակայն նրա հետևյալ երկու մտքերից պարզ է դառնում, որ ամենից շատ ատում էր քրիստոնյաների կրոնը. «Ես անձամբ կարող եմ հավաստել, որ իսլամը նրան բոլորովին չէր հուզում, քանզի իր կուսակցության բազում առաջնորդների նման նա էլ էր արհամարհանք տածում ցանկացած դավանանքի հանդեպ: Մի անգամ նա ասաց ինձ. «**Ատում եմ բոլոր քահանաներին, րաբբիներին ու խոջաներին**»[318], կամ՝ «Անգլիացիները ռմբահարել են Դարդանելը և սպանել երկու թուրքի,– հետո ավելացրեց,–**ամեն մի սպանված մահմեդականի դիմաց մենք երեք քրիստոնյա կսպանենք**»[319]: Իսկ հետևյալ հատվածից երևում է, որ Թալեաթն ատում է քրիստոնյաներին, իրեն հոգեհարազատ է զգում իսլամին և իր ինքնությունը ներկայացնում որպես իսլամական. «–Ինչո՞ւ եք այդքան հետաքրքրվում հայերով. դուք հրեա եք, այդ մարդիկ՝ քրիստոնյա: **Մահմեդականներն ու հրեաները միշտ լավ հարաբերություններ են ունեցել միմյանց հետ**: Հրեաներին **մենք** լավ ենք վերաբերվում: Ինչի՞ց եք բողոքում: Ինչո՞ւ եք **մեզ** խանգարում **այդ քրիստոնյաների** հետանել այն, ինչ ցանկանում ենք»[320]:

Թուրքերը և քրդերը կողոպտում էին քրիստոնեական եկեղեցիները, պղծում դրանք, կապկում էին եկեղեցական ծիսակատարությունները, ծաղրում քրիստոնյաներին. «.... ծեծում էին տերտերներին ու հասցնում անգիտակից վիճակի՝ ձևացնելով, թե իբր նրանք խռովության կազմակերպիչներն են»[321]:

Կրոնածիսական երանգավորում ունեցող բռնություններն ու սպանությունները Հայոց ցեղասպանության իրագործման մեջ կրոնական գործոնի առկայությունը ապացուցող փաստերի

---

[317] Kinross L., *The Ottoman Centuries, The rise and Fall of the Turkish Empire*. New York, Morrow Quill Paperbacks, 1977, p. 560.
[318] Մորգենթաու Հ., *նշվ. աշխ,* էջ 21:
[319] *Նույն տեղում*, էջ 114:
[320] *Նույն տեղում*, էջ 249:
[321] *Նույն տեղում,* էջ 229-230:

համախտումբ են՝ իրենց բաղկացուցիչ տարրերով: Ցեղասպանական գործողություններն սկսելուց առաջ ընդունված էր կրոնական օրհնություններ ստանալը: Հայերին տեղահանելու և ոչնչացնելու շատ որոշումներ տրվում էին մզկիթներում. «Այսօր բոլոր մզկիթներէն կը յայտարարուէր թէ բոլոր հայերը պիտի աքսորուէին: Հայերը չորս օր միայն ժամանակ ունէին իրենց ինչքերը ծախելու ....»[322]: Քրիստոնյաների կոտորածը համարվում էր Ալլահին մատուցվող հատուկ տուրք, զոհաբերություն, քանի որ ընդունված էր Ալլահին աղոթել և օրհնանք խնդրել՝ սպանդի գործը սկսելուց առաջ. Հենրի Մորգենթաուի ընկալմամբ այդ ամենը կրոնական ֆանատիզմ էր, որով իրենք ծառայում էին Ալլահին. «Եթե ավելի վաղ անցյալում կատարված բոլոր ջարդերը համեմատենք թուրքերի արածի հետ, ապա կնկատենք՝ դրանց հատուկ է մի հատկանիշ, որը կարելի է հիշատակել որպես գրեթե արդարացում. **դրանք կրոնական ֆանատիզմի հետևանք էին, և այն հրահրող կանանց ու տղամարդկանց մեծ մասն անկեղծորեն հավատում էր, որ իրենք այդպես ծառայում են Արարչին**»[323]: Նա կարծում է, որ կրոնական մոլեռանդությունը թուրք ու քուրդ ոճրագործների հիմնական մղիչ ուժն էր. նրանք հայերին սպանում էին իբրև Ալլահին մատուցվող ծառայություն, սակայն ցեղասպանությունը ծրագրողները, ըստ Մորգենթաուի, այդ շարժառիթը չունեին: Մորգենթաուն երիտթուրք ղեկավարներին ներկայացնում է իբրև աթեիստ, որոնք իսլամը հարգում էին ոչ ավելի, քան քրիստոնեությունը, իսկ նրանց մղիչ ուժը համարում է հաշվարկված պետական քաղաքականությունը[324]:

Ջեյմս Բրայսի Կապույտգրքի փաստաթղթերից մեկում ասվում է. «Կոտորածների նպատակը միայն հայերին բնաջնջելը չէր, այլ դա չարչարանաքով իրականացնելը»[325]:

Լեսլի Դևիսը պատմում է, թե ինչպես թուրքերը Խարբերդի հյուպատոսարանի դիմացի հրապարակում նամազի էին հավաքվում, և

---

[322] Ճէյքըպսըն (Եագոպսըն) Մ., *նշվ. աշխ*, էջ 107:
[323] Մորգենթաու Հ., *նշվ. աշխ*, էջ 241: Համմտ. Հայերի կոտորածը՝ որպես ծառայություն Ալլահին՝ Գաբիկեան Կ., *նշվ. աշխ*, էջ 524-525:
[324] Տե՛ս Մորգենթաու Հ., *նշվ. աշխ*, էջ 241:
[325] Բրայս Ջ., *Անգլիական կառավարության կապույտգիրքը հայոց Մեծ եղեռնի մասին (1915-1916)*, Հայոց ցեղասպանության հարիւրամեակի մատենաշար 2..., էջ 68:

լսվում էր, թե ինչպես են Ալլահին խնդրում օրհնել քրիստոնյաներին բնաջնջելու իրենց ջանքերը[326]:

Այն, որ հայերի կոտորածը իսլամադավան լայն զանգվածի կողմից ընկալվում էր կրոնական պարտք, բարեպաշտական արարողություն և, ավելին, զոհաբերություն, վկայում են հալածիչների խոսքերը[327]: Նրանք հայերին կոչում էին ղուրբան, ղուրբանացու, այսինքն՝ զոհաբերություն, և ուղարկում էին այլ իսլամադավանների՝ կրոնական էյֆորիա ապրելու համար. «Հայտէ՝... ձեզ ալ Արաբներուն ղուրպանցու կը ղըրկենք. քիչ մըն ալ անոնք թող զարնեն-ձգեն, առեւանգեն»[328]:

Դեսպան Մորգենթաուն մի հետաքրքիր ակնարկ ունի այն մասին, թե ինչպես էին հնարվում կտտանքները: Պատմում է, որ, երբ մի առիթով իրավիճակն էր քննարկում մի թուրք բարձրաստիճան պաշտոնյայի հետ, վերջինս չի թաքցրել այն հանգամանքը, որ սպանդն ու չարչարանքները կազմակերպված են եղել կառավարության կողմից, և մյուս օսմանյան պաշտոնյաների նման նա ևս եղել է կողմնակիցն այն բանի, որ հայերը՝ իբրև «անիծյալ ժողովուրդ», արժանի են եղել դրանց. «Այդ պաշտոնյան ինձ ասաց, որ ամեն ինչ՝ բոլոր մանրուքներով, քննարկվել է գիշերային խորհրդակցությունների ժամանակ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գլխավոր գրասենյակում: Տանջելու յուրաքանչյուր նոր մեթոդ թուրք պաշտոնյաները ողջունում էին որպես փայլուն հայտնություն, գիշերային

[326] Դևիս Լ. Ա., *նշվ. աշխ,* էջ 145:

[327] Եղեռնին նախորդող կոտորածների ընթացքում ևս քրիստոնյաներին սպանելը իբրև կրոնական պարտք ու բարեպաշտական արարողություն էր համարվում: Համիդյան ջարդերից ու Ադանայի ողջակիզումից հետո, ազդված լինելով կիրառված բռնություններից, Սիամանթոն գրում է «Կարմիր լուրեր բարեկամէս» շարքը: Այստեղ, մասնավորապես, «Կոյրը» պոեմում ներկայացնում է, որ քրիստոնյա հայերի սպանությամբ ալլահին ծառայելու ընդհանուր պարտականություն-ծիսակատարությանը կույր լինելու պատճառով չի կարողանում մասնակցել մի ութսունամյա ծերունի: Նա հավատակիցներին խնդրում է իրեն մոտեցնել մի «անհավատի» խարտյաշ աղջկա, որ ինքն էլ աղջկան սպանելով՝ հետմահու երանության արժանանալու հույսն ունենա: Հավատակիցները նրան օգնում են դաշունահարել աղջկան՝ բռնելով վերջինիս և կույրի ձեռքի դաշույնն ուղղորդելով դեպի աղջկա սիրտը (տե՛ս Եարճանեան Ա.–Սիամանթօ, *Ամբողջական գործը*, Հատոր Առաջին, Պօսթըն, 1910, էջ 174-179): Այսպիսի մի քանի դրվագներ՝ Ադանայի Ողջակիզումից մինչև Սուլթայհթի ջարդ հավաքել և համադրել է ազգագրագետ Հարությունն Մարությանը. տե՛ս Մարության Հ., *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը*, Հիշողության ազգագրություն 2, Երևան, 2009, էջ 177-179:

[328] Գաբիկեան Կ., *նշվ. աշխ,* էջ 168:

խորհրդակցությունների մասնակիցները մշտապես տքնում էին՝ կտտանքի նոր մեթոդներ հայտնագործելու համար: Նախտովանեց, որ **իրենք նույնիսկ խորացել են իսպանական ինկվիզիցիայի և պատմական այլ հաստատությունների՝ տանջափար միջոցներին վերաբերող արխիվների մեջ և որոշ մեթոդներ վերցրել այնտեղից**»[329]: Մորգենթաու հավելում է, որ այդ գազանային մրցակցության հաղթողն ըստհայերի՝ Ջևդեթ բեյը՝ Վանի վալին էր, որը հայտնի էր «Բաշկալեի պայտող» անունով՝ այդպես կոչվելով իր հնարած կտտանքի ձևի պատճառով[330]:

Կրոնական նրբերանգը և բռնություններին ծիսականացում հաղորդելու մի առանձնահատկություն է դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսենի վկայությունն այն մասին, որ տեղահանությունների համար միշտ ընտրվում էր կիրակի օրը՝ քրիստոնյաների սուրբ օրը. «Թուրքերը որպէսզի աւելի դժուարացնէին իրենց մտադրած սոսկալի գործը, միշտ Կիրակի օրերը կ'ընտրէին որովհետեւ անոնք գիտէին թէ քրիստոնեաները այդ օրը հանգիստկ'ընեն եւ սուրբ կը նկատեն»[331]:

Ադանայի Ողջակիզումը վերապրած և Եղեռնի սարսափներից երկրորդ անգամ տուժած որբը՝ Երվանդ Փոստալջյանը, իր հուշերում հաղորդում է Ադանայի նախկին ամերիկյան որբանոցի հայ սաներին բռնի կրոնափոխության ենթարկելու, մկրտության դրոշմը ջնջելու ծիսակատարության մասին. «Գալիս էին թուրք մարդիկ ու խանումներ, նախ և առաջ երեխաներին բաղնիք տանում **շան կեղտով լվանում, նրա համար, որ մեռոնից ու կրոնքից դուրս գան,** դառնան իսկական թուրք: Հետո կնքահայրը գրկում էր երեխային, և քիրվեն դհոլ-զուռնայի հնչյունների տակ *սուննէթ* էին անում (թլպատում): Ոմանց տանում էին հոգեզավակ»[332]:

Ծիսականացման տարրերից էր տարբեր երաժշտական գործիքների կամ երգերի կատարումը սպանությունների ժամանակ: Խարբերդում և Մեզրեում «Որպեսզի մարդիկ չլսեին ճիչերն ու չիմանային տանջանքների մասին, այս ամբողջն արվում էր գիշերը,

[329] Մորգենթաու Հ., *նշվ. աշխ*, էջ 231:
[330] Տե՛ս *նույն տեղում:*
[331] Ճէյքըպսըն (Եագոպսըն) Մ., *նշվ. աշխ*, էջ 117:
[332] Փոստալջյան-Ռամազյան Ա., *Հուշեր իմ հայրիկից (Երվանդ Փոստալջյանի մասին)*, ձեռագիր հուշ, *ՀՑԹԻ-ի ֆոնդեր*, Բ-8, թղ 93, ֆի 129, էջ 24:

բանտերի շուրջ կանգնած զինվորները թմբկահարում էին ու շեփոր փչում»[333]: Կարծում ենք, որ բողոքական միսիոներուհին՝ Ալմա Յուհաննսոնը, փոքր-ինչ կոնտեքստից դուրս է մեկնաբանում երաժշտությամբ ուղեկցվող բռնությունը. զինվորները թմբկահարում ու շեփոր էին փչում ոչ թե որպեսզի սքողեին արարքը, (ինչը բնորոշ չէր բացեիբաց գործող ոճրագործներին), այլ որպեսզի ծիսականացնեին այն:

Հաճախ քրիստոնեական սրբավայրերում էին կատարում սպանությունները. «Թուրք ժանդարմների համար ոչ մի սրբություն չկար. թաքնված զենք փնտրելու պատրվակով նրանք **կողոպտում էին եկեղեցիները, լկտիաբար պղծում խորանն ու սրբազան առարկաները, հայերին ծաղրելու համար նույնիսկ քրիստոնեական ծիսակատարություններ էին կատարում**»[334]:

Կրոնափոխության առաջարկը, ըստ վերապրողների հաղորդած տեղեկությունների, սովորաբար կատարվում էր մահվանից անմիջապես առաջ՝ դրանով նպատակ ունենալով հայերին կանգնեցնել դժվար ընտրության առջև. «Ձաբիթը սուրը քաշում է, մոլլան՝ ասում. «Քրիստոնյայի հավատքը թողնում եմ, մահմեդականություն եմ վերցնում»: Մեզ կրկնել կուտային այդ խոսքերը»[335]: «....որպէս դաւաճաններ Օսմանեան հայրենիքին, դուք բոլորդ կը դատապարտուիք մահուան: Սակայն եթէ ձեզմէ մէկը իսլամանայ, պատիւներով եւ ողջ առողջ Մարտին պիտի վերադարձնենք: Մեռնելու մէկ ժամ ժամանակ ունիք: Պատրաստուեցե՛ք, ձեր վերջին աղօթքները ըրէ՛ք»[336]: Կրոնափոխության առաջարկի մասին Ալմա Յուհաննսոնն ասում է. «Եվ երբ նստել ու լսում ես բազում փորձությունների մասին նրանց պատմածները, պարզ է դառնում, որ, իրոք, **բոլոր հայերն ընտրության առջև էին դրվել՝ մեռնել կամ ուրանալ Քրիստոսին,** և որ նրանցից շատերը կարող էին խուսափել սարսափելի տանջանքներից, եթե ուզեին մահմեդական դառնալ: Բայց նրանք հավատարիմ մնացին

[333] Յուհաննսոն Ա., *նշվ. աշխ*, էջ 43-44:
[334] Մորգենթաու Հ., *նշվ. աշխ*, էջ 229-230:
[335] Հակոբ Թերզյանի վկայությունը (թ. 100)՝ Սվազլյան Վ., *նշվ. աշխ*, էջ 245:
[336] Եղբայր Եսայեան Սիմոն, *նշվ. աշխ*, էջ 62:

իրենց Աստծուն մի այնպիսի նվիրվածությամբ, որը նրանց տվել էր իրենց աննկուն հավատը: Այդ հավատը նրանց ուժ էր տալիս»[337]:

Փաստորեն հայերին կոտորելը շատ հաճախկրոնական սխրանք էր համարվում և, հետևաբար, որքան ավելի դաժան կատարվեր այն, ավելի մեծ կլիներ մոլեռանդ ոճրագործի սխրանքը: Լեսլի Դևիսի հաղորդմամբ. «**Գիշերները թուրքերը երկինք աղոթք էին հղում**, իսկ ցերեկները իրականացնում էին իրենց արյունոտ գործը»[338]: Այս ամենը կատարվում էր «**Ղուրանի վրայ կատարած երդումով՝** քաղաքին միւս քրիստոնեաներէն գաղտնի պահել սպաննողներուն արարքները եւ սպաննուածներուն ճակատագիրը»[339]:

Հաճախ օտարերկրյա միսիոներները հայերի կրած տառապանքները համեմատում են Ներոն կայսեր ժամանակ տարածված քրիստոնյաների հալածանքների հետ. «... Մենք **կ'ապրինք Ներոնի ժամանակ երբ քրիստոնեաները կը հալածէր**...»[340]: Թուրքերն ու քրդերը նույնիսկ փորձում էին նմանակել Ներոնին. Էնվեր փաշայի պատվին իրականացված հայերի ողջակիզման թատերականացման մի տեսարան է նկարագրում վերապրող Մարի Գրիգորյանը, այս անգամ նաև հիշատակելով Ներոնի անունը. «Օր մըն ալ ահալուր տարածուեցաւ թէ պատերազմական նախարար՝ Էնվէր Փաշան Ռաս-Իւլ-Այնէն պիտի անցնի Պաղտատի ճակատը երթալու համար: Չեմ կրնար երեւակայել՝ թէ ո՞վ յղացաւ այդ դիւային ծրագիրը. **հաւաքել տալ բոլոր ջարդուածներու մարմինները եւ պարզել ներոնական տեսարան մը՝ այրել տալով զանոնք**, երբ Էնվէր Փաշան ժամանէր հոս: .... Ականատեսները ըսին որ՝ ան իր կառքին մէջ ոտքի կեցած անտարբերօրէն դիտած է հրկիզուող մարմինները»[341]:

Մարիա Յակոբսենը պատմում է մի դերվիշի մասին, որ տապարով 223 հայ էր սպանել, և դա ներկայացվում էր որպես կրոնական սխրանք[342]:

Թեոդիկը գրում է Գրգքեսելյան 3 եղբայրների ծիսական սպանության դեպքը, որոնց «.... կապեցին և **տարին մորթել Թուրքի մը**

[337] Յուհաննսոն Ա., *նշվ. աշխ,* էջ 30-31:
[338] Դևիս Լ. Ա., *նշվ. աշխ,* էջ 145:
[339] Եղբայր Եսայեան Սիմոն, *նշվ. աշխ,* էջ 40:
[340] Ճէյքըպսըն (Եագոպսըն) Մ., *նշվ. աշխ,* էջ 303:
[341] Գրիգորեան Մ., *Ատանայ էն Մարտինի թրքական որբանոցը 1909-1918,* խմբ. Բիւզանդ Եղիայեան, 1989, *ՀՅԹԻ-ի ֆոնդեր*, Բ-8, թղ 248, էջ 68:
[342] Ճէյքըպսըն (Եագոպսըն) Մ., *նշվ. աշխ,* էջ 353:

գերեզմանի վրայ»[343]: Ավելին՝ կան դեպքեր, երբ սպանում էին եկեղեցու խորանի վրա[344] կամ մզկիթների դիմաց[345]:

Հավատարժան համարելով վերը նշված՝ կտտանքները հնարելու վերաբերյալ Հ. Մորգենթաուի խոսքերը՝ պետք է նշենք, որ հնարավոր է՝ այսպիսի ծիսական սպանությունների նկարագրությունները գրականությունից և արխիվներից դուրս էին բերվել վերին օղակների կողմից ու հրահանգների թվում տրվել սպանություններն անմիջականորեն իրականացնողներին:

3.2.1. Հոգևորականների հանդեպբարբարոսության դրսևորումները

Առանձնահատուկ դաժանությամբ առաջին հերթին սպանվում էին քրիստոնյա հոգևորականները: Ձավեն պատրիարքը հոգևոր սպասավորներից «առաջին նահատակ» է դիտում Սահակ վրդ. Օդաբաշյանին, որը Սեբաստիայից դուրս գալուց երկու օր հետո սպանվում է Սուշեհիրիի մոտ՝ Սեբաստիայի կուսակալ Մուամմերի թիկնապահ չերքեզ Ջելալի ու նրա ընկերների կողմից[346]:

Հայ հոգևորականությանը ոչնչացնելու մի հատուկ հրահանգծածկագիր ենք գտնում Արամ Անտոնյանի «Մեծ ոճիրը» գրքում, որտեղ հրամայվում էր հատկապես ջանասիրությամբ աշխատել հոգևորականներին ոչնչացնելու ուղղությամբ. «Հակառակ անոր որ **ծանօթ անձնաւորութեանց *(հայերու)* կղերական դասակարգին գոյութիւնը ջնջելու համար ամենէն աւելի աշխատիլ պէտք է**, կ'իմանանք որ այդպիսիներ Սուրիոյ եւ Երուսաղէմի պէս կասկածելի տեղեր կը ղրկուին: Ասանկ թոյլտուութիւն մը աներեւելի յանցանք է: Այդ կարգի խռովարարներուն աքսորավայրը

---

[343] Թէոդիկ, *Գողգոթահայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին*, Բ տպագրութիւն, Թեհրան, 2014, էջ 638-639:
[344] Եղբայր Եսայեան Սիմոն, *նշվ. աշխ,* էջ 92-93:
[345] Քրիստոնեություն ընդունած մի թուրքի (մուսուլմանական անունը՝ Փաթլագզադե Մեհմեդ, քրիստոնեական անունը՝ Արամ Փաթլաջյան) Մեծ եղեռնի ժամանակ ևս ենթարկում են ծիսականացված սպանության՝ քարշ տալով նրան դեպի մզկիթ և մզկիթի դռան առջև անարգանքներով նրան կտոր-կտոր են անում. տե՛ս Գալուստեան [Կիլիկեցի] Գր. Հ., *Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Ձէյթուն*, Երկրորդ հրատարակութիւն յաւելուածով, «Մարաշի հայրենակցական միութիւն», Լոնկ Այլընտ Սիթի, Նիւ Եորք, 1988, էջ 784:
[346] Տե՛ս Ձաւէն արքեպիսկոպոս, *նշվ. աշխ*, էջ 82:

անէութիւնն է: Կը յանձնարարեմ որ ըստ այնմ գործողութիւններ կատարէք: 1 Դեկ. 915. «Ներքին Գործոց Նախարար» ԹԱԼԵԱԴ»[347]:

Արամ Անտոնյանը հոգևորականներին սպանելու այս հրամանի շուրջ հետևյալն է գրում. «Այս հեռագրին հետ կ'արժէ յիշատակել որ գաւառներու խմբական ջարդերու միջոցին ամէնէն զարհուրելի չարչարանքներով սպաննուողները եղան կրօնաւորները, առաջնորդ, վարդապետ, քահանայ, եւ այլն: Ընդհանրապէս կտոր կտոր ըրին զանոնք, օրերով բանտերու մէջ տանջելէ ետքը: Նոյն իսկ Պօլսոյ Պատրիարքը, երբ Պաղտատ աքսորեցին, պիտի սպաննէին միեւնոյն կերպով, բայց Անէի գայմաքամին պատասխանատուութեան վախը փրկեց զինքը»[348]:

Կաթոլիկ միաբան Եսայեան Սիմոնն սպանությունների առնչությամբ ասում է, որ ամեն ինչ կատարվելու էր որպես Ղուրանի հրահանգ[349]: Նա գրում է, որ իր տեսած բռնագաղթյալների քարավաններում «40 հոգիէ բաղկացող իւրաքանչիւր խմբակին մէջ քահանայ մը կար: Կը կարծէին այսպէս արատաւորել քահանային սքեմը, զայն խառնելով ոճրագործ սեպուած մարդոց մէջ...»[350]: Եսայեան Սիմոնի այս վկայությունը ավելի շատ ծիսականացման դրվագ է, քան քահանայի սքեմը արատավորելու ջանք. նպատակն էր «գյավուրների» խմբերի կազմը ձևավորել այնպես, որ ներկագտնվեն տվյալ կրոնի հոգևոր առաջնորդները, որոնք իրենց հոտի գլուխը լինելով՝ ընկալվում էին որպես գլխավոր հանցավորներ՝ ընդդեմ իսլամի: Իսլամադավանների կառավարական հովանու ներքո ապրող ոչ-իսլամադավանները դեռևս միջնադարից եկած մտայնության համաձայն ընկալվում էին որպես Իբլիսի՝ սատանայի խաբեություններին հեշտությամբ ենթարկվող խմբեր, և նրանց հանդեպ սպանդ իրականացնելու հրահանգները կարող էին ներկայացվել որպես Ալլահի պայքար Իբլիսի դեմ[351]:

---

[347] Անտոնեան Ա., *նշվ. աշխ*, էջ 102-103:
[348] Տե՛ս *նույն տեղում*, էջ 103, թ. 12 հղումը:
[349] Տե՛ս Եղբայր Եսայեան Սիմոն, *Մարտին. հերոս քաղաք: Խորան եւ Շիրիմ Հայ աստանի 1915ի Ջարդերուն ընթացքին*, Լիբանան, Ջունիե, 1991, էջ 40:
[350] Եղբայր Եսայեան Սիմոն, *նշվ. աշխ*, էջ 59:
[351] Տե՛ս ավելի մանրամասն James J. Reid, "Philosophy of State –Subject Relations, Ottoman Concepts of Tyranny, and the Demonization of Subjects: Conservative Ottomanism as a Source of Genocidal Behaviour, 1821-1918," *Studies in Comparative Genocide*..., էջ 62-65:

Ցեղասպանությունը վերապրած Վերոնիկա Բերբերյանի հուշերում ևս նկարագրվում է, թե ինչպես են Բողազլյան քաղաքում թուրքերը իր պապին՝ Հակոբ քահանային, եկեղեցի գնալու ճանապարհին ձերբակալում և ապա Քելլերի ձորում գլխատում ու կտրված գլուխը, որպես խաղի օբյեկտ, գլորում փողոցներով: Վերապրողը գրում է. «Մարմինը գցում են ձորը, իսկ գլուխը հանձնում են երիտասարդներին, որոնք ծաղրի համար փողոցներում գլուխը գլորում են մի քանի օր»[352]:

Հոգևոր սպասավորների հանդեպ իրականացրած խոշտանգումների թվում բազմիցս հիշատակվում է մորուքի մազերը հատ-հատ պոկելու կտտանքը, որին հետևում էր սպանությունը՝ այն դեպքում, երբ հոգևորականը հրաժարվում էր կրոնափոխ լինել[353]. «Ամբողջ երեք քառորդ ժամ, քահանան նշաւակ կը դարձնեն գազանային մոլուցքին հնարած տեսակ տեսակ լուտանքներուն, անպատուութիւններուն ու ծաղրին: **Մօրուքին թելերը մեկ մեկ կը փրցնեն ու գետին կը ծածկեն.-«քու Տիրոջդ պէս...»**: Աշակերտն ալ կը փորձէ իր Տիրոջ նմանիլ լռելով, աղօթելով, ներելով...»[354]: Մուշեղ քահանա Մուշեղյանի «**Մօրուքը կը փետեն**, եղունգները կ՚աքցանեն, բանտի բակը՝ ջուրի մէջ մերկ կը պառկեցնեն ժամերով, ափին մէջ հաւկիթ կը խաշեն՝ ձեռքին տակ կրակ վառելով, մինչ իր միսերը կ՚այրէին եւ մարմինը կը գալարուէր ցաւի նոպաներուն տակ, ուր ուրեմն աւանդելով հոգին՝ **Քրիստոսի պէս խաչուելով**»[355]: Թեոդիկը պատմում է Կ. Պոլսի կաթոլիկ առաջնորդի՝ Միքայել Խաչատուրյանի մահվան մասին. «... **նախանձոր մօրուքը կը փետեն**, յետոյ ձեռքերը ետեւ կը կապեն եւ նախատալից հրմշտուքներով գետափ կը տանին զինք: Երբ ակռաները խլելուն կուգայ կարգը, տարաբախտ եկեղեցականը կը փութայ հանել կեղծ ատամնաշարքը՝ ցանկանք մը պակաս կրելու յոյսով: Այդ յոյսն ալ ի դերեւ կ՚ելլէ սակայն, վասնզի բիրտ թաթեր սկսած էին արդէն անխնայ բզքտել լինտերը»[356]: Այնուհետև նրան մերկացնում են, լանջախաչն ու եպիսկոպոսական մատանին կորզելուց հետո ոտքերով հարվածներ հասցնում նրա

[352] *ՀՑԹԻ-ի ֆոնդեր,* Բ-8, թպ 242, ֆի 81(1), էջ 4:
[353] Տե՛ս Թաւուգճեան Տ. Ներսէս Աւագ քհնյ., *նշվ. աշխ*, էջ 123:
[354] Եղբայր Եսայեան Սիմոն, *նշվ. աշխ,* էջ 86:
[355] Թէոդիկ, *Գողգոթահայ հոգեւորականութեան ...*, էջ 340:
[356] *Նույն տեղում,* էջ 341:

մարմնին. «**Խար ու խռիւ կը ցանեն անոր ջախջախկուրծքին վրայ եւ բռնկցնելով՝ սուրճ կ՚եփեն հոն**, մինչ ուրիշ մը ականջները կը կտրէր եւ կրակը կը ձգէր զանոնք: Ծերունազարդ Գերապայծառին այլեւս անճանաչ դին կը փոխադրուի հուսկ ուրեմն աղբակառք, նետուելով մօտակայ գռիհի մը մէջ...»[357]: Գրեթե նոյն կտտանքները կատարվում են Տիգրանակերտի Մկրտիչ վարդապետ Չլաթյանի հետ. նրան պտտեցնում են փողոցից փողոց, թքում վրան, **մի խոջա առաջանում է և ասում, թող նրա Աստվածը փրկի իրեն,** որ իրենք տեսնեն, իսկ **ուլեմաները՝ իսլամ գրագետները, նվագելով խեղկատակ թատրոն են ցույց տալիս՝ շեյխերն ու դերվիշները թմբկահարելով նրան ետեն բերում մզկիթի բակը**, կառավարության ներկայացուցիչների ներկայությամբ **ոստիկանապետը մորուքն է փետում**, ատամները քաշում, հրաշեկ երկաթ դնում քունքին, մարմինը մորթազերծ է անում և արդեն դիակը պտտեցնում է և քարյուղով վառում[358]: Թեոդիկը նաև պատմում է քահանայի մորուքը արտաթորանքով պատելու մի արարքի մասին[359]:

Քրիստոնյա հոգևորականներին նաև հրամայվում էր կատարել նվաստացուցիչ աշխատանք. «.... կառավարութիւնը այս կղերականները բանտ նետելով, ուզեց նուաստացնել Քրիստոսի քահանայութիւնը: Քահանաները գործածուեցան որպէս ոստիկանատան ծառաներ. բակը աւլեցին, իրենց կռնակներուն վրայ աղբ շալկեցին, մէկ խօսքով՝ որպէս հանրային աւելածուներ ծառայեցին: Բայց անոնք ա՛յնքան յօժարութեամբ եւ զուարթամտութեամբ կատարեցին այն գործը, որ պետական պաշտօնեաներուն հիացումը խլեցին.-Էէրն անիծած, կը գոչէր անոնցմէ մին, զիրենք երբ խոնարհեցնէք, կարծէք թէ իրենց բարիք մը կ՚ընեք»[360]:

Քրիստոնեությունը նվաստացնելու համար երբեմն հոգևորականներին անարգանքի էին ենթարկում իրենց

[357] *Նույն տեղում:*
[358] Տե՛ս *նույն տեղում*, էջ 360, տե՛ս նաև Մկրտիչեան Թ., *Տիգրանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրտերու գազանութիւնները (ականատեսի պատմութիւն)*, Գահիրէ, 1919, էջ 55-56:
[359] Թէոդիկ, *Գողգոթահայ հոգեւորականութեան ...*, էջ 599:
[360] Եղբայր Եսայեան Սիմոն, *նշվ. աշխ*, էջ 71:

եկեղեցիներում, իսկ երեցկանանց բռնաբարում հենց սրբավայրերի մեջ[361], սպանում՝ նրանց սեփականությունը հափշտակելու համար:

Ներսես եպս. Դանիելյանը՝ Եոզղատի հայ առաքելական վերջին առաջնորդը, կացնահարվեց[362]: Մկրտիչ քահանա Գալեոնճյանին «...իրկիզելէ առաջ, դահիճները վերջընթեր հաճոյք մըն ալ ըմբոշխնածեն՝ աչուընները փորելով...[363]:

Մարտիրոսի պսակի է արժանանում նաև Մարդինի հայ կաթողիկե եպիսկոպոս Իգնատիոս Մալոյանը, որը 2001 թ. դասվեց Կաթողիկե եկեղեցու երանելիների շարքը՝ Հովհաննես Պողոս II պապի կողմից: Նրան քանիցս առաջարկում են կրոնափոխ լինել, սակայն նա հրաժարվում է[364]. «Մոլեռանդ մահմետական մը կ'ըսէ Մալոյեան Գերապայծառին մասին, թէ «**անոր եպիսկոպոսական մարմինը երկուքի պիտի բաժնէր**»[365]:

Կտտանքները հոգևորականների հանդեպ հիմնականում իրականացվում էին ստահոդի մեղադրանքների պատճառով. Լիբանանի կապուչին միսիոներ հայր Լեոնար Պասպտացին[366], որը Հիսուսի Թանկագին Արյուն եղբայրության վարիչն էր, ամբաստանվեց իր եղբայրության անվանման պատճառով. «Մամտուի պէյ «թանկագին արիւն» բառերուն մէջ ակնարկութիւն մը գտաւ մահմետական արիւնին, որուն առատհեղումին իբր թէ քաջալերողն ու հրահրիչն էր սոյն միսիոնարը: ... Ու Հայր Լէոնարը ծածկեցին անարգանքներով, նախատեցին, վրան թքին ու հարուածեցին: Բայց անիկա զվերջ անյողդողդ մնաց: Որքան քափուչինը ուժգնաբար կը դառնար, այնքան նահատակը կը հրճուէր անոր մէջ»[367]:

Այլ դեպքերում ծիսական բռնությունները կատարվում էին քրիստոնյա հոգևորականների հանդերձանքի շուրջ: Մի վկայության համաձայն՝ ատելության առարկա դարձավ ֆրանցիսկյան հոգևորականների գոտին՝ «Ֆրանցիսկոս» կոչվելու պատճառով. «Չարչարանքներուն յաջորդեց խոնարհեցումը: Ո՛չ ոք զերծ չմնաց

[361] Թէոդիկ, *Գողգոթահայ հոգեւորականութեան ...*, էջ 361:
[362] Դանիէլեան Ն. եպս., *Կաթիլ մը ջուր այրած սրտերու*, Հալէպ, 2010, էջ 21:
[363] Թէոդիկ, *Գողգոթահայ հոգեւորականութեան ...*,, էջ 192:
[364] Տե՛ս *Իգնատիոս արքեպ. Մալոյեան: Մարդը եւ նահատակը*, թարգմ. Յ. Թեյրուզեան, Ձմմառ, 2001, էջ 44:
[365] *Նոյն տեղում*, էջ 77:
[366] Հոգևորականի անունը պահպանել ենք արևմտահայերեն ուղագրությամբ:
[367] Եղբայր Եսայեան Սիմոն, *նշվ. աշխ*, էջ 59:

նուաստացումներէն, ո՛չ ոքի խնայեցին: Բանտարկեալներէն ոմանք իրենց մէջքին շուրջ Ս. Ֆրանսիսկոսի պարանը կապած ունէին: Մամտուի պէյի աչքին՝ այդ գօտին, «Ֆրանսիսկոս» անունը կրելուն պատճառով, խորհրդանիշ մըն էր Ֆրանսայի հետ գաղտնի կապի մը եւ նշան մը՝ յեղափոխական կուսակցութեան պատկանելիութեան»[368]: Մյուս վկայության համաձայն՝ ծիսական խաղի օբյեկտ է դառնում հայ հոգևորականի վեղարը. «Մի անգամ հանդիպեցի հայերի լքած իրերը թալանելու մեղադրանքով մեզ հետ մի քանի օր բանտարկված ժանդարմին: Նաճանաչումէր [իմ հայ] ընկերներին: Ես հետքրքրվեցի նրանց ճակատագրով: Ժանդարմն ասաց, թե ինքը ձեռամբ սպանել է Իսահակ քահանային: «Ժանդարմները գրազ էին եկել նրա վեղարի համար: Ես լավ դիպուկահար էի և առաջին կրակոցով նրա վեղարը վայր գցեցի, իսկ երկրորդով՝ սպանեցի նրան»,–ասաց ժանդարմը: Ես որոշեցի լռել, քանի որ նագտնումէր, թե հայ սպանելն անհրաժեշտ բան է, որովհետև այդպես էր հրամայել սուլթանը»[369]:

Անարգանքներից զերծ չեն մնում անգամ մահացած հոգևորականների դիակները: Զավեն պատրիարքը պատմում է Ներսես եպիսկոպոսի՝ Մշո Ս. Կարապետ վանքի միաբանի մասին, որը 1915-ին հիվանդանում է և վախճանվում Մուշում, «Մուշի իսլամները անոր մարմինը գերեզմանէն հանելով փողոցները կը քաշկռտեն բարբարոսաբար»[370]: Թեոդիկը պատմում է Հովհաննես ավագ քահանա Դերձակյանի մասին, որի դիակը հանում են գերեզմանից ու, որովայնը պատռելով, փորձում այնտեղ պայթուցիկ գտնել [371]:

3.2.2. Խաչի հանդեպանարգանքները, մարդկանց խաչելը և Հիսուս Քրիստոսին անվանարկելը

[368] *Նույն տեղում*, էջ 56:
[369] *Սիրիացի արաբ ականատես Ֆայեզ ալ-Ղուսեյնի հուշերը* ..., էջ 78:
[370] Զաւէն արքեպիսկոպոս, *նշվ. աշխ*, էջ 18: Տե՛ս նաև Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան* ..., էջ 104. «Աղէտի նախօրէին, իր թարմ գերեզմանը բացած եւ օծեալ մարմինը դուրս հանելով՝ խուժանը գետնէ գետին քաշկռտած է զայն, ոտքերուն չուան կապած, թունդ հայրենասէր նկատուող ու տարիներէ ի վեր ազգային իրաւանց դէմ ոտնձգութեանց առթիւ իր հօտին շահերը պաշտպանողի համբաւ վայելող հոգեւորականի դիակէն, իսկ վրէժ լուծած եւ Քրիստոնէութիւնը նախատած ըլլալու այն դիւային երանութեամբ, որ Միւսլիմանին յատուկ է սոսկ: Դիակը յետոյ նետուած է մօտակայ առուի մը, պատանքը պատառ պատառ ...»:
[371] Թէոդիկ, *Գողգոթահայ հոգեւորականութեան* ..., էջ 334:

Առանձնահատուկ ատելության նկարագրությունների կարելի է հանդիպել, երբ խոսքը վերաբերում է քրիստոնեական կարևորագույն խորհրդանշանին՝ խաչին: Կտտանքի տարածված ձևերից էր քրիստոնյաներին խաչելը: Թրքական որբանոցում դաստիարակող մի ուսուցիչ նույն որբանոցի հայ որբերին հաճույքով պատմում է, թե ինչպես է տեղի ունեցել հետևյալ խաչելությունը. «.... շատ յախտուռն էր եւ ինչ մեծ ախորժակով չէր պատմեր մեզի՝ **Տիգրանակերտցի հայ առաքնորդին խաչելութիւնը** եւ շնականօրէն կ'ըսէր թէ ոտքերուն եւ ձեռքերուն եղունգները աքցանով քաշելէ վերջ, միսերն ալ կտրտելով քիչ առ քիչ՝ մեռցուցած են»[372]: Կամ՝ «... պատ. Պետրոսը որ Չնքուշ կը գտնուէր, չարչարանքի ենթարկուած էր ու բանտին մէջ ալ մեռած էր: Ան շատ ազնիւ մարդ մըն էր:...Տեղ մը **թուրքերը 13 հոգի խաչեր են**: Անոնց ձեռքերէն, ոտքերէն ու կուրծքերէն գամ գամած են: **Սեւերեկի պատուելին ալ խաչած են**»[373]:

Խաչելու ընթացքում նաև հիշատակում էին Հիսուս Քրիստոսին. «Որոշ դեպքերում ժանդարմները նրանց **ձեռքերն ու ոտքերը մեխում էին փայտի կտորներին՝ ակնհայտորեն նմանակելով խաչելությանը,** իսկ երբ զոհը հոգեվարքի մեջ էր ընկնում, գոռում էին. «**Դե՛ հիմա քո Քրիստոսը թող գաու փրկի քեզ**»[374]: Ձարմանալով այն փաստի վրա, թե ինչու են հայերը քրիստոնյա, թե ինչու է նրանց Աստվածը բռնի մահվան ենթարկվել, ինչ պատճառ կա այդպիսի «անզոր» էակի հավատալու, թուրքերն ու քրդերը հայերին ենթարկում էին նույն չարչարանքին, ինչ Քրիստոսն էր կրել: Ծվեդ միսիոներուհի Ալմա Յուհանսոնը գրում է. «Սա իսլամի զարթոնքն է: Նրանք իրականացրեցին իրենց ծրագիրը դիվային հնարամտությամբ: Շատ անգամ նրանցից կարելի է լսել. «**Հիմաթող ձեր Հիսուսը ձեզ օգնի**», և այլն, և այլն: Հաճախ հայերին խաչում էին գյուղերում»[375], կամ՝ «Հազիւ ոտքի կանգնելու ուժ ունեցող տարաբախտ քահանան պատին կը կռթնեցնեն: Իւրաքանչիւր բազուկէն պարան մը կ'անցընեն, պարանն ալ պատին ագուցուած երկաթէ երկու օղակներու մէջ կը

[372] Գրիգորեան Մ., *Ատանայ էն Մարտինի թրքական որբանոցը ...*, էջ 77:
[373] Ճէյքըպսըն (Եագոպսըն) Մ., *նշվ. աշխ*, էջ 97:
[374] Մորգենթաու Հ., *նշվ. աշխ*, էջ 230-231:
[375] Յուհանսոն Ա., *նշվ. աշխ*, էջ 53-54:

սահեցնեն: Հազիւ պարանէն կը քաշեն, մեր ազնուասիրտ չարչարելը օդ կը բարձրանայ, գետնէն 10 սանթիմեթր եւ բազուկներէն կախուած կը մնայ: **Խաչելութեան չարչարանքն է այս**»[376]:

Կարապետ Գաբիկյանի հաղորդմամբ Քեմախի կիրճի մոտ ժանդարմները 6 տարեկան մի տղայի են խաչում. «**փայտէ խաչի մը վրայ գամեցին աչքերէն, ձեռքերէն ու ոտքերէն**. յետոյ ժողովուրդին ցուցադրելով պոռացին. **ահա՛ձեր Քրիստոսը եւ խաչը. թող ձեզ ազատէ**»[377]: Մեկ այլ՝ տարածված դրվագներից է հայ կանանց ու աղջիկներին մերկ խաչելը, որի մի օրինակ է հետևյալ վկայությունը. «Տեղ չհասած՝ սարսափելի տեսարանի մը հանդիպեցանք: Փոքր քարայրի մը մեջ երիտասարդուհի մը պատին խաչված էր՝ մորե մերկ, փարթամ մազերը ուսերուն թափած»[378]:

Վերապրած հայերի հուշերում կան նաև մահացածների դիակները խաչի ձևով իրար վրա շարելու նկարագրություններ. «1915 թվին, Զատկի կիրակի օրը մեզ տարին մեծ ձոր մը: Անտեղ շատ դիակներ կային, բոլորին ալ մերկացուցած վիճակում շարած էին իրար վրա՝ խաչի ձևով, կարծես փայտի գերաններ են իրար վրա շարած»[379]:

Բռնությունների ընթացքում Հիսուս Քրիստոսի անունը հիշատակելը և քրիստոնյաներին, նրանց կրոնն ու Աստծուն ծաղրելը դարձրել էին համատարած և սովորական երևույթ. դա նպատակ ուներ և՛ թուլացնել զոհերի կրոնական հաստատակամությունը, և՛ մյուս կողմից չհետապնդելով որևէ կոնկրետ նպատակ՝ ցուցադրում էր այն, որ քրիստոնյաների Աստվածը «անկարող» է փրկել, և քրիստոնեությունն էլ «անպիտան» կրոն է՝ ի տարբերություն իսլամի.

«Խարբերդի մէջ շատմը թուրքեր հայերուն կ'ըսեն.

-Եթէ ձեր Յիսուսը Աստուծոյ որդին է, ինչո՞ւ համար ձեզ չ'ազատեր մեր ձեռքէն, դուք որ Անոր կը հաւատաք:

[376] Եղբայր Եսայեան Սիմոն, *նշվ. աշխ,* էջ 86:
[377] Գաբիկեան Կ., *նշվ. աշխ,* էջ 507: Խաչելության դեպքեր՝ հատուկ դաժանությամբ կատարված տե՛ս *նույն տեղում,* էջ 521-522:
[378] Տե՛ս Ռոնյա Թերզյանի վկայությունը (թ. 348)՝ Սվազլյան Վ., *նշվ. աշխ,* էջ 543:
[379] Տե՛ս Հակոբ Թերզյանի վկայությունը (թ. 233)՝ Սվազլյան Վ., *նշվ. աշխ,* էջ 427:

-Ո՛չ, կը պատասխանեն հայրերը: Մեր կրօնքը ամենէն լաւն է: Չինքը ուրանալը աւելի դժուար է քան թէ մտրակուիլը»[380]:

Խոսուն դրվագ է, թե ինչպես են ոճրագործները պատասխանում մի հայ կնոջ այն հանդիմանանքին, թե ինչու են այդքան դաժանությամբ վարվում իրենց հետ. ոճրագործությունը կատարողների պատասխանը կապված է լինում այն հանգամանքի հետ, որ իրենք կրոնական իրավասություն էին ստացել հայերին կոտորելու համար. «*Գահպէ՛ սէնի*... կ՛ըմբերանեն. դեռ խօսելու լեզո՞ւ ալ ունիք. Ալլահն ալ, Մարգարէն ալ, Սուլթանն ալ ձեզի պէս *խղյանէթ միլլէթի* մը *դահր* ըրած են. ձեր նամուսն ալ, ձեր պատիւն ալ, ինչքու ստացուածք, ձեր կեանքն ալ մեր ձեռքը մատնած են. դուք այլեւս ձեր անձին տէրը չէք. Ալլահը մերն է, դուք Աստուած չունիք, մենք ենք ձեր ալլահը, ձեր Աստուածը, ձեր Քրիստոսը. եթէ անոնք ունին զօրութիւն մը, թող գան ազատեն զձեզ մեր *փէնչէներէն*...»[381]:

Անգամ միֆականացում էր կատարվում և սիմվոլիկ կերպով համեմատվում էին Մուհամեդի և Քրիստոսի կերպարները՝ որպես հայի ու իսլամադավանի պահապան զորություններ, ստեղծվում էին ապոկալիպտիկ լեգենդներ, ինչպիսին հետևյալն է. «...Ես միշտ կը պատմէի գալիք դատաստանի սոսկալի դէպքերու մասին, սակայն թուրքերը կ՛ըսէին թէ **ինչպէս որ Յիսուս չի փրկեց հայերը այս չարչարանքներու ժամանակ, նոյնը պիտի պատահի նաեւ դատաստանին օրը: Այդ օրը հայերը դուրսը պիտի մնան: Մուհամմէտ մեծ ծառի մը տակ պիտի կենայ եւ Մուհամմէտ զանոնք պիտի առաջնորդէ, երկինք պիտի մտնեն**: Անոնք կ՛ըսէին նաեւ թէ պատերազմէն ետք բոլորը մուհամմետական պիտի դառնային»[382]: Այս հատվածից պարզ երևում է, որ հայերի կոտորածը ապագայի երկու տեսիլ էր հետապնդում: Նախ, հայերին կոտորելով թուրքերը կարծում էին, որ մահմեդականությունը հաղթանակելու է քրիստոնեության նկատմամբ, մահմեդականները պատերազմը հաղթելու են և իրենց «միսիոներությունը» (հավանաբար ի նկատի ունենալով և՛ սպանությունները, և՛ կրոնափոխությունը) հասնելու էր իր

[380] Ճէյքըպսըն (Եագոպսըն) Մ., *նշվ. աշխ*, էջ 103:
[381] Գաբիկեան Կ., *նշվ. աշխ*, էջ 149:
[382] Ճէյքըպսըն (Եագոպսըն) Մ., *նշվ. աշխ*, էջ 170:

նպատակին: Երկրորդը կրոնական վախճանաբանության ոլորտից է, դատաստանի օրը հետմահու երանության արժանանալու համոզվածությամբ:

Խարբերդում և Մեզրեում մարդկանց խոշտանգելու ժամանակ թմբկահարում էին և ծնծղահարում. Ալմա Յուհանսոնը պատմում է. «Հարկ չկա կրկնել, որ շատ մարդիկ այդ խոշտանգումներից մահանում էին: Իսկ այդ ժամանակ զինվորները բղավում էին. «**Դե թող հիմաձեր Քրիստոսն օգնի ձեզ**»[383]:

Չեթեները իրենց սպանելու կարողությունը, մարդկանց ճակատագրեր որոշելը համարում էին ալլահից տրված մի երևույթ, իսկ իրենց զգում էին հայերի նկատմամբ որպես հայերի կյանքն ու մահը տնօրինողներ. «մենք ենք ձեր ալլահը. եթե ձեր Աստուածը ունի զօրութիւն մը թող գայ մեր ձեռքէն ազատէ»[384]: Նույնի մասին են վկայում Պոլսից Նիկոմիդիա ուղարկված Մեհմետ Ալի անունով մի իթթիհադականի խոսքերը. «**Դուք Աստուած չունիք. ես եմ ձեր Ալլահը, ձեր Աստուածը, ձեր Քրիստոսը եթէ ունի զօրութիւն մը թող գայ ազատէ ձեզ իմ ձեռքէս**»[385]: նա այս խոսքերով եկեղեցում հավաքված հայերի կոտորածն է կատարում:

3.2.3. Քրիստոնյաների և նրանց սրբությունների ու սրբավայրերի անպղծումը

Համատարած երևույթներից էր պիտակավորումը. «գյավուր», «շուն», «շուն քրիստոնյա» և այլն: Ահա մի քանի վկայություններ այս առնչությամբ. «Թուրքերը քրիստոնյաներին սովորաբար կոչում են մեկ բառով՝ «**շներ**», և դա նրանց համար զուտ այլաբանական հասկացություն չէ. նրանք իսկապես իրենց եվրոպացի հարևաններին ընկալում են որպես շատ ավելի անարժան արարածներ, քան ընտանի կենդանիներն են»[386]: Կոտորածները դեռ չսկսած՝ «Թուրք պաշտօնատարներ, անգամ երեսփոխաններ, սկսան շրջիլ քիւրտ ցեղախումբերու մօտ եւ, բանակին համար ուղտեր

[383] Յուհանսոն Ա., *նշվ. աշխ*, էջ 43-44:
[384] Գաբիկեան Կ., *նշվ. աշխ*, էջ 180:
[385] Գաբիկեան Կ., *նշվ. աշխ*, էջ 452-453:
[386] Մորգենթաու Հ., *նշվ. աշխ*, էջ 209:

հաւաքելու պատրուակին տակ, սկսան քարոզել անոնց միակ հասկցած լեզուն. **մա՛ հ կիավուրներուն**....»[387]:

Քիւրտեմլիք գյուղում «...նոյնիսկ իրենց պզտիկ տղաքը, ինքզինքնուն հասուն մարդու ձեւեր կու տային ու մեր ետեւէն կը պոռային.

-**Կեավո՛ւր, քրիստոնեայ շունն**...»[388]:

Կամ՝ «... Քահանան ետ կը կանգնեցնեն.-**Քրիստոնեայ շա՛ն լակոտ**, կը պոռան երեսին, հիմա ալ **քեզ քու Տիրո՛ջդ պէս պիտի ընենք**[389]:

Պիտակավորումը և թշնամանքը տարածված էր նաև մուսուլմանների երեխաների մեջ, որոնք ավագներից սովորել էին «գյավուր» ոչնչացնելը սեփական պարտքը համարել. «Հովհաննեսը մի դուռ ծեծեց՝ ողորմություն խնդրելու: Բաց արին դուռը, երկու թուրք տղաներ Հովհաննեսին քարշ տալով ներս տարան ու ծեծում էին ասելով. «**Գյավո՛ւր, քեզ պիտի սպանենք**»...»[390]:

Հետաքրքիր է, որ թրքական «մանկավարժությունն» արգելում էր թրքացման և իսլամացման ենթարկվող հայ երեխաներին կոչել գյավուր. «...մեզ կոչեցին **մէօհդէտի, բայց կեավուր** բառը խստիւ արգիլուած էր...»[391]:

Անարգանքը քրիստոնյաների սրբավայրերի հանդեպ երևում է այն դեպքերից, երբ եկեղեցիները նպատակադրված վերածում էին հասարակաց տների՝ աղջիկներին բռնությամբ ենթարկելով սեռական ստրկության[392]: Հայտնի են հայկական եկեղեցիները որպես հայերից խլված ապրանքը պահելու վայր գործածելու[393], եկեղեցիների վրա թուրքական դրոշակ պարզելու[394], եկեղեցիների զանգերի փոխարեն շներ կախելու մասին վկայություններ[395]: Եկեղեցիների մետաղներն օգտագործում էին փամփուշտներ

---

[387] Եղբայր Եսայեան Սիմոն, *նշվ. աշխ*, էջ 36:
[388] Ճէյքըպսըն (Եագոպսըն) Մ., *նշվ. աշխ*, էջ 171:
[389] Եղբայր Եսայեան Սիմոն, *նշվ. աշխ*, էջ 86: Մաթթաքրմո վարդապետին կոչումեն «շուն քրիստոնյա», կտտանքների ու ֆալախայի են ենթարկում (Եղբայր Եսայեան Սիմոն, *նշվ. աշխ*, էջ 84-85):
[390] Փոստալջյան-Ռամազյան Ա., *Հուշեր իմ հայրիկից* ..., էջ 24:
[391] Գրիգորեան Մ., *Ատանայ էն Մարտինի թրքական որբանոցը* ..., էջ 72:
[392] Անտոնեան Ա., *նշվ. աշխ*, էջ 111:
[393] Գաբիկեան Կ., *նշվ. աշխ*, էջ 563:
[394] Ճէյքըպսըն (Եագոպսըն) Մ., *նշվ. աշխ*, էջ 70
[395] Ակունի Ս., *նշվ. աշխ*, էջ 166:

պատրաստելու[396], իսկ քարերը՝ զինվորական շենքեր ու փողոցներ սալարկելու համար[397], վաճառում էին ծիսական թանկարժեք առարկաները, Ս. Սեղանի վրայի սպասքը, իրերն ու կտավներն օգտագործվում կենցաղային այլևայլ նպատակներով:

Թեոդիկը հաղորդում է բազմաթիվ դեպքեր սրբավայրերի, քրիստոնեական աստվածպաշտության պարագաների հանդեպ անարգանքի վերաբերյալ. «Մեր մենաստաններուն նահատակ եկեղեցականները ցուցակագրումի ընթացքին, աւելորդ չըլլայ յիշատակել նաեւ անոնց ծառայած սրբատեղիները, որոնք պղծուեցան ու թալանի մատնուեցան իրենց թանկարժէք հնութիւններով»[398]: Այնուհետև պատմում է Գլակավանքի թանկարժեք ձեռագրերի մասին, մասնատուփերի, սկիհների, խաչերի, սաղավարտների մասին, որոնք գոհարակուռ էին, ոսկեդիպակ շուրջառի և այլ հարստությունների մասին. «Ատոնք **բոլոր ապօրուեցան վանտալի ձեռքերով եւ մկրատուելով՝ ծառայեցին իբր շալվար եւ կեղտաշոր Քիւրտ գեղջկուհիներու: Մագաղաթեայ գրչագիր Աւետարաններու էջեր պատառ-պատառ նետուեցան կոյանոց** եւ խել մը անստգիտ հնութիւններ արժանագին խլուելով ձեռքէ ձեռք՝ լեցուեցան սնտուկներու մէջ, զորս Պալքանցուկը հեւիհեւ կրեց աւազակներու որջը՝ Գերմանիա, հայապատկան այդ գօղոններով պետական թանգարաններ ճոխացնելու համար... Ս. եկեղեցականաց շիրիմներ քակուեցան անխնայ եւ իրենց վրայի մեսրոպեան տառերը տաշուելով՝ գացին զարդարել «գօնագ»-ներու (ապարանքների–Ծ. Խ.) բակեր ու ճեմիշներ (զուգարաններ-Ծ. Խ.), միշտ իբր նախատինք Քրիստոնեութեան»[399]:

Երզրումցի ոճրագործները եկեղեցիների «.... խաչերուն ու Աւետարանին հանդէպ ցոյց տուած այն միեւնոյն անապայ ընթացքը՝ զոր այլուր ունեցեր էին ազգակիցներ, **հեթանոսաբար նախատած ըլլալու համար Քրիստոնէութիւնը**, այսինքն՝ կոտրտել, պատռտել ու կոխկոտել զանոնք եւ նետել աղբիւսքի մէջ՝ հայհոյալից

[396] Ճէյքըպսըն (Եագոպսըն) Մ., *նշվ. աշխ*, էջ 141:
[397] Գաբիկեան Կ., *նշվ. աշխ*, էջ 562:
[398] Թէոդիկ, *Գողգոթահայ հոգեւորականութեան ...*, էջ 143-144:
[399] *Նույն տեղում:*

բացագանչութիւններով, մահատագնապ անձկութեան մատնուած Հայութեան աչքին առջեւ»[400]:

Բազմաթիվ էին նաև քրիստոնեական գրականության հանդեպ անարգանքի դրսևորումները. «Դաշտին երեսը, աղիւսներու մէջ բազմաթիւ Հայերէն գրքեր ալ – մասնաւորապէս Աստուածաշունչ գիրք եւ Աւետարան. Ցանուցիր, բզըքտուած: Թուրք, քիւրտ լաճեր կեավուրի այդ **քիթապները կը զարնեն գետնոց-գետին, ցեխերու մէջ աղբիւսէ աղբիւս կը խոթեն, կ'ոտնահարեն, պատռբնծիկ ըրած՝ հովին կուտան:** Հայ քաղաքակրթութիւնը, Հայ միտքը, Հայ հանճարնէ, որ նախախինքներու, թուքի, մուրի կ՛ենթարկուի»[401]:

Այն ամենը, ինչ կապված էր քրիստոնյաների հետ, բնաջնջման ենթակաէր, անգամ նրանց պատկանող կենդանիները[402]:

3.2.4. Հայերի կրոնածիսական վարքի դրսևորումներ

Դժվարին իրավիճակում՝ թե՛ կրոնափոխության, և թե՛ մահվան սպառնալիքի ժամանակ հայերը ցուցաբերում էին յուրահատուկ կրոնահոգեբանական վարք, որոնց բացատրությունը պետք է գտնել ամենատարբեր գիտակարգերի օգնությամբ: Կան բազմաթիվ վկայված դեպքեր, երբ հայերը կյանքի սահմանային իրավիճակներում կրոնածիսական իմիտացիաներ էին անում: Մարդինի թրքական որբանոցի հայ որբերը իսլամացման պայմաններում էլ կարողանում են գտնել քրիստոնեական ծեսերի, սրբազան արարողությունների սիմվոլիկ փոխարինումը: Մասնավորապես, շատ խոսուն է նրանց կողմից Ս. Հաղորդության խորհրդի հետևյալ իմիտացիան՝ նմանակումը. «Ու տարօրինակ կերպմըն էր նաեւ մեր հաղորդութիւն առնելը: Ագապին, որ Խատիժէ կը կոչուէր, ելաւ մեր որբանոց-եկեղեցիի Ս. Խորանի պատէն ծեփի կտոր մը փրցուց, փշրեց, վրան

[400] *Նույն տեղում*, էջ 215:
[401] Գաբիկեան Կ., *նշվ. աշխ*, էջ 233:
[402] **«Կեավուրին հաւ կիթն ալ ջախջախեցէք, ոտնահարեցէք, կ՛ըսէին, չըլլայ որ մէջէն աքաղաղ ելլէ, որու արմատուրս գայ»** (*նույն տեղում*, էջ 248):

«Յանուն Հօր եւ Որդւոյ…» արտասանեց ու բաշխեց մեզի, ու **մենք այդ վրանք մաերով հաղորդուեցանք, զորացանք**»[403]:

Առանձնահատուկ ուշադրություն է գրավում հողը որպես վերջին հաղորդություն օգտագործելու ֆենոմենը՝ հոգևորականների կողմից. այս արարք-խորհուրդը հոգևորականները կատարում են գուցե միմյանցից օրինակ վերցնելով, գուցե անկախաբար: Ներսես եպս. Դանիելյանն իր «Կաթիլ մը ջուր այրած սրտերու» գրքի մեջ պատմում է Տ. Պետրոս քահանա Քեշիշյանի մասին, որին առաջարկում են իսլամ ընդունել, որ ազատվի մահից, սակայն 80 տարեկան ծերունին ասում է, որ «…. նախամեծար կը համարի այս զուլումի ու զալըմի երկրէն երկինք փոխադրուիլ մահուամբ, քան կրօնափոխ ըլլալ… ու հազիւ քահանան ծնրադրած, գետինէն **քչիկ մը հող առնելով բերանը՝ իբր հաղորդութիւն, վերջին աղօթքը կ՚արտասանէ**, արդէն մեր «հայրենասեր», բայց հակաահմանադրական գինուորները տեղն ու տեղը գնդակահար կ՚ընեն զայն ու ատով ալ չգոհանալով՝ կամ մոլեռանդ կրքերնին չյագեցնելով կը սկսին սուինով ծակծկել անոր անշնչացած մարմինը, որուն արիւնոտ ու սուինահար Մաշտոցը ինձ յանձնուեցաւ յետոյ»[404]: Նույնը պիտի աներ Ներսես եպիսկոպոս Դանիելյանը Եղեռնի ժամանակ. «…Ճանապարհին հէք առաջնորդը կը խնդրէ կարաւանը վարող թուրք ոստիկանէն, թոյլատրել վայրկեան մը կանգ առնել աղօթելու համար: **Գետինէն քիչ մը հող առնելով, իբր հաղորդութիւն բերանը կը դնէ ու իր վերջին աղօթքը կ՚ընէ**»[405] : Թեոդիկի հաղորդմամբ այս արարքը կատարում է նաև Աշոտ քահանա Ավետյանը[406]:

Իգնատիոս եպիսկոպոս Մալոյանի ու նրա հետ տեղահանության ենթարկվածների վերաբերյալ պատմվում է, որ ճանապարհին. «**Մալոեան Գերապայծառը կը սրբագործէ հացը, քահանաները սուրբ մաննիկները կը բաշխեն հաւատացեալներուն:** Այս երկնային արարողութեան դէպքին ականատես գինուորները կը պատմեն, թէ լոյսի թանձր ամպ մը ծածկեց Քրիստոսի մարտիկներու փաղանգը,

[403] Գրիգորեան Մ., *Ատանայ Էն Մարտինի թրքական որբանոցը …*, էջ 97:
[404] Ներսէս եպս. Դանիէլեան, *նշվ. աշխ*, էջ 58-59:
[405] Ներսէս եպս. Դանիէլեան, *նշվ. աշխ*, էջ 20:
[406] Թէոդիկ, *Գողգոթահայ հոգեւորականութեան …*, էջ 226:

զանոնք ամբողջովին թաքցնելով զինուրներուն աչքերէն: Անուշահոտ բուրմունք մը տարածուեցաւ բոլորին վրայ: Ամէնքը հիացան տեսնելով հրճուանքի, ուրախութեան եւ խաղաղութեան նշանները, նահատակութեան պատրաստ այս մարդոց դէմքերուն վրայ»[407]:

Հետևյալ դեպքը վերաբերում է ոչ թե հաղորդության, այլ խաչափայտի մասունքին, որ փոխարինում է Հաղորդության Հացին: Խոսքը Տէր Գաբրիէլ Քաթմարճեանի մասին է. «Ողբացեալը օր մ' առաջ, նախազգալով իր մօտալուտ վախճանը, **ս. Խաչի մասունքը**, զոր իր վրան կը կրէր, **մանր մանր ըրած էր եւ կուլ տուած էր**, ամէն սրբապղծութեան առաջքը առնելու համար»[408]:

Հողը որպես վերջին կերակուր գործածելու օրինակ է հայ ուսուցիչ Կարապետ Ավագյանի վերջին խնդրանքը. նախնդրում է ոչ թե իրեն հաց տալ, այլ մի պտղունց հող՝ իբրև սրբություն, քանի որ ինքը տեսավ հայի խաչելությունը, և ապա՝ երանի է տալիս նրանց, ովքեր կտեսնեն հայի հարությունը՝ ապագայում[409]:

Վերը ներկայացրածով բռնությունների ու սպանությունների կրոնական երանգավորում ունեցող վկայությունները չեն սահմանափակվում. Հայոց ցեղասպանության առնչվող հուշագրություններում, վավերագրերում ու փաստաթղթերում դրանք բազմաթիվ են: Հավաքվեցին և թեմատիկ դասակարգման ենթարկվեցին մի շարք խոսուն օրինակներ, որոնք ցույց տվեցին կրոնական գործոնի դերակատարությունը՝ որպես Եղեռնն իրագործող զանգվածների կարևոր մղիչ ուժ:

[407] *Հգնատիոս արքեպ. Մալոյեան: Մարդը եւ նահատակը...*, էջ 47:
[408] Եղբայր Եսայեան Սիմոն, *նշվ. աշխ*, էջ 73:
[409] Գալ ֆաեան Կ. աւագ քահանայ (Հովիւ Եդեմի), *նշվ. աշխ*, էջ 236:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ատենախոսությունը Հայոց ցեղասպանության մեջ կրոնի դերակատարության հարցի արծարծումն է, դրա հետ կապված օժանդակ գիտակարգային թեմաների ներկայացմամբ, համակարգմամբ և վերլուծմամբ, և թույլ է տալիս հանգել հետևյալ եզրադրույթներին.

1. Ցեղասպանությունն ընդհանրապես և, մասնավորապես, XX դարի առաջին ցեղասպանությունը՝ Հայոց եղեռնը, պետք է դառնա նաև աստվածաբանության և կրոնագիտության ուսումնասիրության նյութ, քանի որ ցեղասպանությունները կանգնած են ներկայիս մշակութային ու կրոնական ճգնաժամերի հիմքերում՝ մարտահրավեր նետելով մարդու գործունեության ցանկացած ոլորտի: Նշված երկու գիտակարգերը փոխկապակցված են. Հայոց ցեղասպանության աստվածաբանական վերլուծությունը կօգնի կրոնագիտության տարբեր ճյուղերում՝ ֆենոմենոլոգիական, բարոյաբանական, արժեքաբանական, անտրոպոլոգիական, ինչպես՝ այլ տիպի ուսումնասիրություններ կատարելուն:
2. Կրոնի գործոնը և կրոնը որպես գործիք օգտագործելու պետական քաղաքականությունը Հայոց ցեղասպանության ընթացքում դեռևս ամփոփ գիտական վերլուծությունների չեն արժանացել կրոնագետ-պատմագետների կողմից: Հայոց ցեղասպանությունն այս տեսանկյունից ուսումնասիրելու հրամայականը մեզ թելադրեց համակարգել խնդրո առարկայի՝ կրոնի դերակատարության այս կամ այն կողմի շուրջ մի շարք ուսումնասիրողների (Ռաֆայել Լեմկին, Լեո Կուպեր, Վահագն Դադրյան, Լեոնարդ Գլիկ, Ռիչարդ Լ. Ռուբենշտայն, Սթիվեն Լ. Ջեքոբս, Ռոնալդ Գ. Սյունի, Թաներ Աքչամ, Ջեյմս Ջ. Ռեյդ և Բեն Կիերնան) անդրադարձներն ու գնահատականները: Համակարգվածություն հաղորդվեց ինչպես խնդրառու հարցերին, այնպես էլ, տարբեր մասնագետների կողմից արված դիտարկումներին՝ առանց գիտակարգային

տարանջատվածության: Ընդգծվեց ատենախոսության կարևորագույն հարցերից մեկը՝ արդյո՞ք կրոնն առհասարակ և կրոնական տարբերությունը հատկապես գործիք էին Հայոց ցեղասպանության իրագործման ընթացքում, թե՞՝ գործոն, և կամ՝ արդյո՞ք երկուսը միասին՝ և՛ գործոն, և՛ գործիք՝ Հայոց ցեղասպանությունը ծրագրելու և իրագործելու համար:

3. Ներկայացնելով մեր կողմից առանձնացված երկու գիտակարգերի՝ կրոնագիտության և աստվածաբանության, որպես փոխկապակցված ոլորտների, ցեղասպանություններն ուսումնասիրելուն միտված թեմաները՝ առաջնային շեշտը դրեցինք պատմակրոնագիտական հարցերի լուսաբանման, և ոչ թե զուտ տեսական կրոնագիտական հարցերի արծարծման վրա: Այդպիսով, շարադրման առաջնահերթությունը տրվեց Հայոց ցեղասպանությունը ծրագրող կողմի՝ երիտթուրքական կառավարության և կոմիտեի գաղափարախոսության վերլուծմանը: Ցույց տվեցինք, որ երիտթուրքերը սոսնձեցին երկու գաղափարական սեկտորներ՝ առաջադեմ արևմտյանն ու հետամնաց օսմանականը՝ արևմուտքից փոխառելով առաջադիմելու, գիտելիքի ուժի, աշխարհիկացման իդեալները՝ պարադոքսալ կերպով փորձելով համադրել ազգայնամոլության, «թշնամիներից» ազատվելու և բռնի ուժի դիմելու թուրքական գործելաոճի հետ: Այդ միակցման արդյունքում թշնամի տարր դիտվեց կայսրության քրիստոնյա բնակչությունը, և այդ գաղափարի գործնական քայլերն առաջին հերթին ուղղվեցին հայերի դեմ: Հարացուցային իմաստով երիտթուրքական կրոնական քաղաքականությունն ընդդեմ քրիստոնյաների ընթացավ հակաքրիստոնեական (արևմտյան և թուրքական) փիլիսոփայության յուրացման, քրիստոնյաների՝ որպես թշնամիների պիտակավորման, հակաքրիստոնեական քարոզչության, ջիհադի հայտարարման (որպես զանգվածային մասնակցությունն ապահովող լծակ), տեղահանության և կոտորածների, այլևայլ մոտիվացիոն ազդակների կիրառման պայմաններում:

4. Երիտթուրքերի կողմից յուրացված եվրոպական համապատասխան գաղափարական տարրերի համախումբը կարելի է համարել ապակրոնական և հակակրոնական, իսկ թուրքական գաղափարախոսական տիրույթը պետք է դիտել իբրև ազգայնականության հստակ տարրերով համեմված: Ցույց տրվեց, որ երիտթուրքական գաղափարախոսությունն ընդհանուր առմամբ ու մասնավոր գծերով թշնամաբար էր տրամադրված քրիստոնեության հանդեպ: Քրիստոնեությունը դիտվում էր անհամատեղելի երիտթուրքական սոցիալական, քաղաքական, տնտեսական ու օսմանյան հանրույթի կրոնական իդեալների հետ, որի պատճառով թիրախավորվեց Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչությունը, առաջին հերթին հայերը:
5. Երիտթուրքերի ձեռքին կրոնը կարող գործիք դարձավ ոտքի հանելու օսմանյան իսլամադավան խավին, երբ վերջինիս կոչ արեցին մասնակցելու «անհավատ»-քրիստոնյաների դեմ ուղղված սրբազան պարտականության կատարմանը՝ ջիհադին կամ սրբազան պատերազմին: Այդ նպատակով գործադրվեցին կրոնական քարոզչության լծակներ՝ սրբազան պատերազմի, իսլամը «անհավատներից» պաշտպանելու հրատապության կոչեր՝ մշակված ու հրապարակված օսմանյան աշխարհիկ ու հոգևոր վերնախավի կողմից: Կիրառվեց հատուկ կրոնական եզրաբանություն ու ենթատեքստ, որի պատճառով անթաքույց կերպով՝ քրիստոնյաների, առաջին հերթին՝ հայերի, կոտորածներին մասնակցություն ունեցան կրոնասոցիալական բոլոր խավերը՝ և՛ մուսուլման հոգևորականները, և՛ զինուժը, և՛ շարքային քաղաքացիները: Ականատեսների ու ժամանակակիցների վկայությունների համաձայն՝ երիտթուրքերի ջիհադի հայտարարության հասցեատերերը մուսուլման զանգվածներն էին, ջիհադի վերջնական թիրախը՝ Օսմանյան կայսրության ներսում բնակվող քրիստոնյաները:
6. Հայոց ցեղասպանության իրագործման մեջ կրոնական գործոնի անհերքելի առկայության մասին է խոսում բռնությունների ընթացքում կրոնական ենթատեքստի լայն դրսևորումը:

Ցեղասպանական գործողություններն իրականացվեցին հատուկ կրոնական և կրոնածիսական երանգավորմամբ, որտեղ հստակ արտահայտվում է կրոնական տարբերության կարևոր գործոնը՝ ի շարս այլ գործոնների՝ Հայոց ցեղասպանության իրականացման մեջ:

7. Կրոնական տեքստերի գործածումը, իսլամադավան հոգևորականների կոչերի ազդեցությունն առավել ագույնս հանգեցրին չպատերազմող, խաղաղ և անզեն բնակչության հանդեպ կրոնական ու հատկապես կրոնածիսական երանգավորում ունեցող բռնությունների, որոնք վայրագություններն իրականացնողի տեսակետից օրինաչափ էին, բռնություններ չէին, այլ ընկալվում էին որպես միսիոներություն և ծառայություն սեփական աստծուն:
8. Ցեղասպանությունն ուղեկցվեց ոչ միայն քրիստոնյաների ֆիզիկական բնաջնջմամբ, այլև Օսմանյան կայսրության տարածքում քրիստոնեական քաղաքակրթության (մշակույթի, սեփականության և այլն) դեմ ուղղված հստակ քայքայիչ, ոչնչացման հանգեցնող քայլերով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

I. Սկզբնաղբյուրներ, տպխվայինություններ

ա. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

1. «Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվան», ֆ. 57, ց. 5, գ. 149:
2. «Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվան», ֆ. 57, ց. 5, գ. 80:

բ. Հայոց Ցեղասպանության Թանգարան-Ինստիտուտի գիտական ֆոնդեր (ՀՑԹԻ-ի ֆոնդեր)

3. «Ձեռագիր օրագրեր և հուշապատումներ», Բ-8, թղ 242, ֆի 81(1):
4. «Ձեռագիր օրագրեր և հուշապատումներ», Բ-8, թղ 248:
5. «Ձեռագիր օրագրեր և հուշապատումներ», Բ-8, թղ 93, ֆի 129:
6. «Հայկական հարցի, հայկական ջարդերի և Հայոց ցեղասպանության մասին փաստաթղթեր (1878-2003թթ.)», Բ-10, ֆի 1097-1098:
7. «Հայկական հարցի, հայկական ջարդերի և Հայոց ցեղասպանության մասին փաստաթղթեր (1878-2003թթ.)», Բ-10, ֆի 1103:
8. «Օսմանյան Թուրքիան, Հայկական հարցն ու Հայոց ցեղասպանությունը» Բ-31, թղ 14, ֆի 26:

գ. United States National Archives

9. “A Universal Proclamation to All the People of Islam,” published by the National Society of Defense, The Seat of the Caliphate, printed in the Mutba’at el-Haireyet (1333), *United States National Archives*, Washington D. C., Record Group 59, No.

867.00/762, Morgenthau to Secretary of State, May 11, 1915, encl., Jackson to Morgenthau, April 8, 1915.

II. Կրոնական սուրբ գրքեր

10. *Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանների*, Արեւելահայերեն նոր թարգմանութիւն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ Հայաստանի աստուածաշնչային ընկերութիւն, 2004, 352 էջ:
11. *Ղուրան*, թարգմ. արաբ. հայ.՝ Աբր. Ամիրխանյանց, Վառնա, 1909, 602+4+28 էջ:

III. Տպագիր սկզբնաղբյուրներ, փաստաթղթերի ժողովածուներ

ա Հայերեն

12. Անտոնեան Ա., *Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա*, Երևան, «Արևիկ» հրատ., 1990, 304 էջ:
13. Բրայս Ջ., *Անգլիական կառավարութեան կապոյտ գիրքը հայոց Մեծ եղեռնի մասին (1915-1916)*, Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի մատենաշար 2, թարգմ.՝ Պետրոսեան Բ., առաջաբանի վերածում՝ Վարդանեան Մ., Թեհրան, 2012, 105 էջ:
14. Գուստ Վ., *Հայերի ցեղասպանությունը 1915-1916, Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից*, թարգմանեց՝ Յորդանյան Ռ., Երևան, «Հայ ագիտակ» հրատ., 2008, 720 էջ:
15. *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում*: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող՝ Ներսիսյան Մ., Սահակյան Ռ., Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան» հրատ., 1991, 758 էջ:

16. Փափազյան Ա., *Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ-մահմեդական ժողովուրդների մասին [1839-1915թթ.],* Երևան, «Զանգակ-97» հրատ., 2002, 248 էջ:

բ. Օտար լեզուներով

17. Bryce J. and Toynbee A., *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916. Documents Presented to Viscont Grey of Falloden by Viscount Bryce*. Uncensored edition, edited and with an introduction by Ara Sarafian, Princeton, New Jersey: Gomidas Institute, 2000, xxi+667.
18. *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916,* edited by Gust W., Published in association with the Zoryan Institute, New York, Oxford: Berghahn Books, 2014, 786 pp.
19. *Raphael Lemkin's Dossier on the Armenian Genocide: Turkish Massacres of Armenians* (Manuscript from Raphael Lemkin's Collection, American Jewish Historical Society), with a foreword by prof. Michael J. Bazyler, Glendale: Center for Armenian Remembrance (CAR), 2008, 145 pp.
20. *United States Official Documents on the Armenian Genocide,* compiled and introduced by Ara Sarafian, Vol. I: The Lower Euphrates, Watertown, 1993, XXXi+186 pp.
21. *United States Official Documents on the Armenian Genocide,* compiled and introduced by Ara Sarafian, Vol. II: The Peripheries, Watertown, 1994, XXX+174 p.
22. *United States Official Documents on the Armenian Genocide,* compiled and introduced by Ara Sarafian, Vol. III: The Central Lands, Watertown, 1995, XXiV+157 pp.

IV. Հուշագրություններ, հուշերի հավաքածուներ, հուշամատյաններ, վկայագրություններ

ա. Հայերեն

23. Ակունի Ս., *Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը*, Կ. Պոլիս, տպագր. Յ. Աստուրեան եւ որդիք, 1920, 330 էջ:

24. Աւագեանց Ս., *Կոտրածը Սալմաստում (Ականատեսի Պատմուածք)*, Թիֆլիս, տպարան «Հերմէս», 1915, 24 էջ:
25. Բդէեան Ս. եւ Մ., *Յարազատ պատմութիւն Տարոնոյ*, խմբ.՝ Տարոնեցի Ա., Գահիրէ, տպարան «Սահակ-Մեսրոպ», 1962, Թ+676 էջ:
26. Գաբիկեան Կ., *Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ*, Պոսթըն, «Հայրենիք»ի տպարան, 1924, 604 էջ:
27. Գալուստեան [Կիլիկեցի] Գր. Հ., *Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Ժէյթուն*, Երկրորդ հրատարակութիւն յաւելուածով, «Մարաշի հայրենակցական միութիւն», Լոնկ Այլընտ Սիթի, Նիւ Եորք, «Կոչնակ» տպարան, 1988, ԺԵ+999 էջ, 2թ. նկ., քարտեզ:
28. Գալֆաեան Կ. աւագ քահանայ (Հովիւ Եդեմի), *Գիրք ելից հայոց: Յիշատակ անշիրիմ նահատակաց, հնուց եւ նորից, յայտից եւ անյայտից*, Պէյրութ, «Տօնիկեան» հրատ., 1955, 651 էջ:
29. Դանիէլեան Ն. եպս. (Սսական վարդ.), *Կաթիլ մը ջուր այրած սրտերու*, Բ հրատարակութիւն, Այգ մատենաշար 12, առաջ.՝ Սարգիսեան Ծ., Հալէպ, հրատ.՝ Բերիոյ հայոց Թեմի, տպարան «Ոսկետառ», 2010, 162 էջ:
30. Դևիս Լ. Ա., *Սպանդի նահանգը*, Երևան, «Դալլ» հրատ., 2001, 367 էջ:
31. Եղբայր Եսայեան Սիմոն, *Մարտին. հերոս քաղաք: Խորան եւ Շիրիմ Հայաստանի 1915ի Ջարդերուն ընթացքին*, Լիբանան, Ջունիե, Imp. St. Paul, 1991, 210 էջ:
32. Զաւէն Արքեպիսկոպոս, *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ*, հրատ. «Մտաւորական սպասարկութեանց գրասենեակ», Գահիրէ, «Նոր Աստղ» տպարան, 1947, 424 էջ:
33. Զոմմեր Է., *Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին*, Երևան, ԵՊՀ հրատ., 2002, 85 էջ:

34. Թաւուգճեան Տ. Ներսէս Աւագ քհնյ., *Տառապանքի օրագիր*, խմբ.՝ Թ. Թորանեան, Պէյրութ, «Թեքնոփրէս» հրատ., 1991, 406 էջ:
35. *Իգնատիոս արքեպ Մալոյեան: Մարդը եւ նահատակը*, առաջաբ.՝ Տ. Ներսէս-Պետրոս ԺԹ, թարգմ. Յ. Թեյրուզեան, Ջմմառ, 2001, 150 էջ:
36. Լեփսիուս Յ., *Հայկական ջարդերը. Տոքթ. Եոհաննէս Լեփսիուսի տեղեկագիրը*, Բ տպագր., Մատենաշար «Ազդակ» թիւ 98, Պէյրութ, «Ազդակ», 1965, 396 էջ:
37. Կյունցլեր Յ., *Արյան և արցունքների երկրում: Իրադարձությունները Միջագետքում՝ համաշխարհային պատերազմի ժամանակ,* թարգմանեցին՝ Հայրունի Ա., Մարտիրոսյան Հ., Միրզոյան Ա., Երևան, ՀՑԹԻ-ի հրատ., «Գասպրինտ» տպագրատուն, 2011, 152 էջ:
38. Ճէյքըպսըն (Եագոպսըն) Մ., *Օրագրութիւն:* 1907-1919: *Խմբերդ*, դանիերէն ձեռագիր բնագրէն թարգմանեցին՝ Բախտիկեան Ն. եպս., Սիմոնեան Մ., տպարան Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1979, ԼԱ+382+363 էջ, 34 էջ լուսանկար, 1 քարտեզ:
39. Մարդիգանյան Ա., *Հոշոտված Հայաստան*: Այս պատմությունը Մեծ եղեռնից հրաշքով փրկված մի հայ աղջկա մասին է, պատմ. գրի է առել Հարվի Լ. Գեյթսը, առաջաբ.՝ Նորա Վալնի, թարգմ. անգլ.՝ Գ. Սարգսյանի, խմբ. և սրբ.՝ Դանիելյան Ս., Երևան, ՀՑԹԻ-ի հրատ., «Տիգրան Մեծ» տպարան, 2015, 208 էջ:
40. Մէվլան Ջաւէ Ր., *Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ Իթթիհատի հայաջինջ ծրագիրները*, Երևան, ԿՓՀ, ֆաքսիմիլ հրատ., 1990, 327 էջ:
41. Մկրտիչեան Թ., *Տիգրանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրտերու գազանութիւնները (ականատեսի պատմութիւն)*, հրատ. ՀԲԸՄ, Գահիրէ, «Գրիգոր Ճիհանեան» տպարան, 1919, 125 էջ, 56 թ. նկ.:

42. Մորգենթաու Հ., *Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը,* անգլերենից թարգմ.՝ Լ. Թութխալյանի, Երևան, ՀՑԹԻ-ի հրատ., 2012, 310 էջ:
43. Յուհանսոն Ա., *Աքսորյալ ժողովուրդ: Մեկ տարի հայոց պատմությունից*, առաջ.՝ Դաուն Օ., շվեդ. թարգմ.՝ Դաուն Մինասյան Լ., խմբ.՝ Դեմոյան Հ., Երևան, ՀՑԹԻ-ի հրատ., 2008, 147 էջ:
44. Նազլեան Յ. Եպս., *Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը Մեծաւոր Արեւելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին,* Ա հատոր, թարգմ. ֆրանս.՝ Ստեփանեան Հ., Պէյրութ, «Հայ Կաթողիկէ» տպարան, 1960, ԺԶ+690 էջ, 1 թ. քարտեզ, նկար:
45. *Պատմագիրք յուշամատեան Սեբաստիոյ եւ Գաւառի հայութեան*, հատոր Ա, կազմեց Պատրիկ Ա. Ն., Պէյրութ, «Մշակ» հրատ., 1974, Ի+780 էջ:
46. Պալաքեան Գր. ծ. վրդ., *Հայ Գողգոթան: Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն*: Պեռլինէն դէպի Տէր Զօր. 1914-1920, Բ հատոր, Գ տպագրութիւն, Պէյրութ, Planeta Printing Press, 1977, 291 էջ:
47. *Սիրիացի արաբ ականատես Ֆայեզ ալ-Ղուսեյնի հուշերը հայոց ցեղասպանության մասին*, թարգմ. արաբ. բնագրից, առաջաբանը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Փոլադյանի և Լ. Սարգսյանի, Դամասկոս, հրատ.“Դար ալ-Շարկ”, 2017, էջ 156 (հայ.)+108 (արաբ.):
48. Սվազլյան Վ., *Հայոց ցեղասպանություն: Ականատես վերապրողների վկայություններ,* խմբ.՝ Հարությունյան Ս., թուրքերենի թարգմ.՝ Տեր Ողորմիաճյան Տ., Երկրորդ համալրված հրատարակություն, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 880 էջ+քարտեզ:
49. Ստեփանյան Գ., *Մղձավանջային օրեր,* Երևան, «Հայ պետհրատ», 1945, 214 էջ:

50. Քասունի Ե., *Քննական ակնարկ «Միշընըրի հերըլտ»ի 1915-1918 թթ. հայ ժողովուրդի ցեղասպանութեան եւ վերածնունդի մասին արձանագրած վկայագրութիւններուն*, բն. թարգմ.՝ Տօգուզլեան-Եագուպեան Ե., Պէյրութ, 2012, 608 էջ:
51. Քյունցլեր Յ., *Արյան և արցունքի երկրում: Տպավորություններ Միջագետքից՝ աշխարհամարտի տարիներին (1914-1918)*, թարգմ.՝ Սաքայան Դ., Մակարյան Է., Երևան, ԵՊՀ հրատ., 2011, 200 էջ +10 էջ ներդիր:

բ. Օտար լեզուներով

52. Гуайта Дж., *Шейх Файез эль-Гусейн о геноциде армян: "Ислам непричастен к их деяниям!"*, пер. с итал. и англ. А. Рыжевской, с араб. А. Муса, ред. Р. Адамянц, Москва, ФАМ, 2007, 360 с.
53. *Memoirs of Halidé Edib.* New York and London: The Century Co., 1926, vii+472 p.
54. Miller D., Miller L., *Survivors: Oral History of the Armenian Genocide*. Berkeley and Los Angeles: University of California Press, 1993, xii+242 pp.
55. Professor Dr. Marquart. *Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation*. Berlin- Schöneberg, 1919, 82 S.
56. *Şeyhülislam Ürgüplü Mustafa Hayri Efendi'nin Meşrutiyet, Büyük Harp ve Mütareke Günlükleri*. Istanbul, İş Bankası Kültür Yayınları, 2015, 974 s.
57. *Totally Unofficial: The Autobiography of Raphael Lemkin,* edited by Donna-Lee Frieze. New Haven & London: Yale University Press, xxvii+293 pp.
58. Vàmbèry H., *Der Islam im Neunzehnten Jahrhundert, Eine Culturgeschichtliche Studie*. Leipzig: F. A. Brockhaus, 1875, vi+321 S.

V. Աշխատություններ, գրքեր

ա. Հայերեն

59. Արզումանյան Մ., *Հայ աստան 1914-1917*, Երևան, «Հայ աստան» հրատ., 1969, 780 էջ:

60. Աքչամ Թ., *Հայերի բռնի իսլամացումը. լռություն, ժխտում և ուծացում*, թուրք. թարգմ.՝ Անումյան Մ., պատ. խմբ.՝ Ալվրցյան Հ., Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2016, 293 էջ:
61. Գրիգորյան Հ., *Ջանգվածները և զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը,* Հիշողության ազգագրություն 6, Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ.,2017, 244 էջ:
62. Եարճանեան Ա.–Սիամանթօ, *Ամբողջական գործը*, Հատոր Առաջին, Պօսթըն, Տպարան Հայրենիք, 1910, 245 էջ:
63. Զարեւանդ, *Միացեալ, անկախ Թուրանիա կամ ի՞նչ կը ծրագրեն թուրքերը,* «Յեղափոխական գրադարան» թիւ 2, Աթէնք, հրատ. «Հ. Յ. Դ. Բիւրո», 1907, 175 էջ:
64. Չէքիեան Հ. Պօղոս-Լեւոն, *Հոգիի եւ ինքնութեան հետքերով*, Երեւան, Գրականութեան եւ արուեստի թանգարանի հրատ., 2000, 200 էջ, դիմանկ.:
65.Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին*, Բ տպագրութիւն, Թեհրան, 2014, 842 էջ:
66. Թէքէեան Ա., *Դրուագներ ապրիլեան Մեծ Եղեռնէն: Պեհեսնիհայութեան գողգոթան (1914-1918)*, Պէյրութ, «Լա Ֆոդո-Բրէս» տպարան, 1956, 223 էջ:
67. Լեւոն Վարդան, *Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը* [քննական ակնարկ ըստ թրքական վաւերագիրներու], Պէյրութ, տպարան «Ատլաս», 1970, 343 էջ:
68. Կիրակոսյան Ջ., *Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.)*, Գիրք առաջին, Երևան, «Հայաստան» հրատ., 1982, 360 էջ:
69. Ճէրէճեան Ե. Տօքթ., *Փանթուրանիզմը*, Պէյրութ, 1998, 91 էջ:
70. Ճիզմէճեան Մ. Գ., *Խարբերդ եւ իր զաւակները,* Ֆրէզնօ, 1955, 752 էջ:

71. Մարգարյան Ն., *Հայոց ցեղասպանության հետևանքով Սիրիայում հաստատված հայ տարագիրների կարգավիճակը և հայ-արաբական փոխհարաբերությունները (1915-1924 թթ.)*, Երևան, ՀՑԹԻ-ի հրատ., «Կոլաժ» տպագրատուն, 2013, 180 էջ:
72. Մարության Հ., *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը*, Հիշողության ազգագրություն 2, պատ. խմբ. Լ. Հ. Աբրահամյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, 432 էջ:
73. Ռութվեն Մ., *Իսլամն աքխարհում*, Երկրորդ հրատ., խմբ.՝ Մկրտչյան Ս., Երևան, «Արեգ» հրատ., 2004, 479 էջ, քարտեզ:
74. Սիմոնյան Հր., *Թուրք ազգային բուժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը*, Երևան, «Հայ աստան» հրատ., 1986, 564 էջ:
75. Վերֆել Ֆ., *Մուսա Լերան Քառասուն Օրը (ՎԷպ)*, Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» հրատ., 2010, 892 էջ +10 էջ նկ.:

բ. Օտարլեզուներով

76. Авакян А., *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений*. Ереван, МИГА, 2013, 134 с.
77. Готлиб В. В., *Тайная дипломатия во время Первой мировой войны*. Перевод с английского В. А. Альтшулера и В. П. Готовицкой, Москва: Соцэкгиз, 1960, 604 с.
78. де Гобино Ж. А., *Опыт о неравенстве человеческих рас*. Москва: Изд. «Одиссей», 2000, 765 с.
79. Жирар Р., *Насилие и священное*. Перевод с французского Г. Дашевского, Москва: «Новое литературное обозрение», 2000, 400 с.
80. Кондакчян Р., *Турция: внутренняя политика и ислам.* Ереван: Изд. АН Армянской ССР, 1983, 238 с.
81. Лебон Г., *Психология народов и масс*. Москва: «Академический Проект», 2012, 240 с.
82. Миллер А. Ф., *Краткая история Турции.* ОГИЗ, Государственное издательство политической литературы, 1948, 304 с.

83. Пилкингтон С. М., *Иудаизм*, пер с. англ. Богдановой Е. Г., Москва, ФАИР-ПРЕСС, 2001, 400 с.
84. Тантлевский И. Р., *История Израиля и Иудеи до разрушения Первого Храма*, СПБ.: Изд. Санкт-Петербургского Университета, 2005, 402 с.
85. Akçam T., *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility*. New York: Henry Holt and Company, 2006, 483 pp.
86. Alp T., *The Turkish and Pan-Turkish Ideal*. London: Liberty Press, 1993, XI+86 pp.
87. Allport G. W., *ABC's of Scapegoating*. Freedom Pamphlets, Anti-Defamation League of B'nai B'rith, United States of America, 1948, 57 pp.
88. *An Appreciation: Dr. Caleb Frank Gates-President of Robert College 1903-1932*, Published by The Robert College, Herald Board of 1931-1932, Istanbul, 64 pp.
89. Dadrian V. N., *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*. Providence, RI: Barghahn Books, 1995, XXVII+446 pp.
90. Dadrian V. N., *Warrant for Genocide. Key Elements of Turko-Armenian Conflict.* New Brunswick, New Jersey: Transaction Publishers, 1999, 214 pp.
91. Eberhart C. A, *The Sacrifice of Jesus: Understanding Atonement Biblically.* Minneapolis: Augsburg Fortress, 2011, X+170 pp.
92. Ehrenreich B., *Blood Rites: Origins and History of the Passions of War.* New York: Henry Holt and Company, 1998, x+292 pp.
93. Ellwood R., *The Politics of Myth. A Study of C. G. Jung, Mircea Eliade and Joseph Campbell*. State University of New York Press, 1999, 213 pp.
94. Girard R., *Violence and the Sacred.* New York: Continuum, 2005, 352 pp.
95. Gökalp Z., *Turkish Nationalism and Western Civilization.* New York: Columbia University Press, 1959, 336 pp.
96. *Großer Bilder-Atlas des Weltkrieges,* München, Bruckmann, 1915, vii+ 407 S.
97. Guroian V., *How Shall We Remember? Reflections on the Armenian Genocide and Church Faith.* ԲԱՆ ԵՒ ԳԻՐ ՄԱՏԵՆԱԾԱՐ, ԹԻՒ 3), Sourp Hagop Armenian Apostolic Church, Montreal, 2005, XIII+65 pp.
98. Hanioğlu M. Ş., *The Young Turks in Opposition*. New York, Oxford: Oxford University Press, 1995, 390 pp.
99. Hurgronje C. S., *The Holy War Made in Germany*. New York & London: The Knickerbocker Press, 1915, vi+82 pp.

100. Jung C. G., *The Archetypes and the Collective Unconscious*. Bollingen Series XX, second edition, translated by B. F. C. Hull, Princeton University Press, 1990, 451 pp.
101. Kaiser H., *Imperialism, Racism, and Development Theories: The Construction of a Dominant Paradigm on Ottoman Armenians.* Ann Arbor, Michigan: Gomidas Institute, 1998, x+59 pp.
102. Kasap M., *Osmanlı Gürcüleri*. İstanbul: Gürcistan Dostluk Derneği, 2010, 480 s.
103. Keshgegian F. A., *Redeeming Memories: A Theology Of Healing And Transformation.* Nashville: Abingdon Press, 2000, 280 pp.
104. Kiernan B., *Blood and Soil: A World History of Genocide and Extermination from Sparta to Darfur.* New Haven & London:Yale University Press, 2007, x+724 pp.
105. Kimball Ch., *When Religion Becomes Evil: Five Warning Signs.* HarperCollins Publishers, 2009, viii+304 pp.
106. Kuper L., *Genocide: It's Political Use in the Twentieth Century*. New Haven, Conn.: Yale University Press, 1981, 255 pp.
107. Landau J. M., *Pan-Turkism: From Irredentism to Cooperation*. Bloomington and Indianapolis: Indiana University Press, 1995, vii+275 pp.
108. Kinross L., *The Ottoman Centuries: The rise and Fall of the Turkish Empire*. New York: Morrow Quill Paperbacks, 1977, 640 pp.
109. Lüdke T., *Jihad Made in Germany: Ottoman and German Propaganda and Intelligence Operations in the First World War,* (Studien zur Zeitgeschichte des Nahen Ostens und Nordafrikas, 12). Münster: LIT Verlag, 2005, 264 pp.
110. McDonough F., *Hitler and the Rise of the Nazi Party.* Second edition, New York: Routledge, 2012, xxii+144 pp.
111. Morgan M. L., *Beyond Auschwitz: Post-Holocaust Jewish Thought in America.* New York: Oxford University Press, 2001, ix+287 pp.
112. Payaslian S., *United States Policy Toward the Armenian Question and the Armenian Genocide*. New York: Palgrave Macmillan, 2005, xii+268 pp.
113. Peters R., *Jihad in Classical and Modern Islam: A Reader* (Princeton Series on the Middle East). Princeton: Markus Wiener Publishers, 1996, ix+204 pp.
114. Ramsaur E. E. Jr., *The Young Turks: Prelude to the Revolution of 1908*. New York: Russell & Russell, 1970, 180 pp.
115. Rubenstein R. L., *After Auschwitz: Radical Theology and Contemporary Judaism.* Indianapolis, New York, Kansas City: The Bobbs-Merrill Company, Inc., 1966, xii+287 pp.

116. Sciarrone R., *L'Impero ottomano e la Grande Guerra: Il carteggio dell'addetto militare italiano a Costantinopoli (1914-1915).* Collana Storia d'Europa, Sapienza Università di Roma, Roma: Edizioni Nuova Cultura, 2015, 470 pp.
117. Vahanian G., *The Death of God: The Culture of Our Post-Christian Era.* Wipf & Stock Publishers, 2009, xi+253 pp.
118. Zürcher E. J., *The Young Turk Legacy and Nation Building: From the Ottoman Empire to Atatürk's Turkey*. London, New York: I. B. Tauris and Co., 2010, xii+351 pp.

VI. Հանրագիտարաններ

119. *Ислам Классический (Энциклопедия),* сост., общ ред. и пред. К. Королева. Москва: «Эксмо», СПб.: «Мидгард», 2005, 416 с.
120. *Dictionary of Genocide*, by Totten S., Bartrop P. R., Greenwood Press, 2008, xxvi+534 pp.
121. *Encyclopædia Britannica,* Vol. 13, Chicago-London-Toronto, 1962, 1009 pp.
122. *Encyclopædia Britannica,* Vol. 22, Chicago-London-Toronto, 1962, 996 pp.

VII. Պարբերական մամուլ, տեղեկություններ

ա. Հայերեն

123. Առաքելյան Հ., «Նուիրական պատերազմը կամ ղազավատը», *«Մշակ»* հասարակական-քաղաքական, գրական թերթ, No. 254, Թիֆլիս, 9 նոյեմբերի, 1914, էջ 1:
124. Խմբագրական, «*Ազատամարտ*» օրաթերթ, թիւ 1665, Կոստանդնուպոլիս, 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր, ուրբաթ, 1914թ., էջ 1:
125. «Կ. Պոլսում» (խմբագրական), *«Մշակ»* հասարակական-քաղաքական, գրական թերթ, No. 260, Թիֆլիս, 16 նոյեմբերի, 1914 թ., էջ 1:

126. «Հայ կամավորի նամակից», *«Մշակ»* հասարակական-քաղաքական, գրական թերթ, No. 55, Թիֆլիս, 14 մարտի, 1915 թ., էջ 1:
127. Ոսկեան Մ., «Ճիհա՛տ...», *«Արձագանգ Փարիզի»* երկշաբաթաթերթ, թիւ 17-20, 10 յունվար 1917, էջ 15:
128. «ՍԱԽԱԼԽՈ ԳԱԶԵԹԻ», 1914. 11. 15 (No. 139), *Հայոց ցեղասպանության թեման վրացական պարբերականներում 1914-1918 թթ.*, վրացերենից թարգմ. Բայրամյան Հ., Երևան, ԵՊՀ հրատ., 2017, էջ 29:
129. Սահակյան Ա., «1915 թ. Հայոց ցեղասպանությունը և հայ մանկանց դաստիարակության խնդիրները» (հավելված), *«Դպրոց»* ՀՀ Լուսավորության Նախարարության պաշտոնաթերթ, թիվ 5, ապրիլի 25, 1995 թ.:
130. Սիմոն Խորէն, «Յիշողութիւններ», *Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը,* 1916-1920, Ժ.-ԺԴ. Տարի, Բ. Հրատարակութիւն, Հալէպ, 2009, էջ 132-136:

Բ. Օտար լեզուներով

131. Огановскій Н., „Изъ дневника турецкаго врача”, *День,* No. 245 (1043), 6 сентября, 1915 г., с. 3.
132. “Call for Holy War Issued to Moslems: Sultan and 28 Priests Sign Proclamation against the Triple Entente,” *The Brooklyn Daily Eagle,* November 27, 1914, p. 2.
133. “CANNOT DECLARE “HOLY WAR”: Sheikh-ul-Islam of Caucasus Denies Right of Turkish Confrere,” *The New York Times,* November 26, 1914, p. 3.
134. “EGYPT'S ATTITUDE MENACING; Berlin Reports Manifestation in Favor of a Holy War,” *The New York Times,* November 21, 1914, p. 1.
135. “ERZERUM FANATICS SLAY CHRISTIANS: Holy War Proclamation Followed by Destruction of Armenians’ Buildings,” *The New York Times,* November 29, 1914, p. 2.
136. “Holy War Proclamation is Published in Turkey,” *Buffalo Morning Express and Illustrated Buffalo Express,* November 28, 1914, p. 1.
137. “KAISER INFORMS SON OF MOSLEM HOLY WAR,” *The New York Times,* November 19, 1914, p. 1.

138. “MOSLEM PRIESTS URGE KILLING OF INFIDELS: Massacre at Beirut on the First Appearance of Hostile Warships Is Threatened,” *The New York Times*, November 30, 1914, p. 1.
139. “PROCLAMATION BY ENVER, Says Turks with Allah’s Help Will Destroy Their Enemies,” *The New York Times,* November 15, 1914, p. 5.
140. “REPORT CHRISTIANS IN PERIL IN TURKEY: Views of Refugees Now in Petrograd–All men Forced into the Army,” *The New York Times*, November 12, 1914, p. 3.
141. “SAVED BY AMERICAN CONSUL: Armenian Refugees Hope Others Will Be Saved from Slavery,” *The New York Times*, January 18, 1916, p. 4.
142. “TO IGNORE HOLY WAR ORDER: Moslems in North Africa Loyal to France, Says Bishop Anderson,” *The New York Times*, November 26, 1914, p. 3.

VIII. Հոդվածներ ամսագրերում, հանդեսներում ու ժողովածուներում, գրախոսություններ

ա. Հայերեն

143. Գլընճեան Հ. Համազասպ, «Աստուծոյ եզական յուղարկաւորը», *«Բազմավէպ»* հայագիտական-բանասիրական-գրական հանդես, թիւ 1-2, Վենետիկ – Ս. Ղազար, 1975, էջ 202-223:
144. Մանուկյան Ս., «Հայոց ցեղասպանության ժամանակ զանգվածային մասնակցության «մշակութային» նախադրյալները», *Ցեղասպանագիտական հանդես 4(1),* ՀՑԹԻ, Երևան, 2016, էջ 151-175:

բ. Օտար լեզուներով

145. Гилязов И. А., «Священная война–джихад» как инструмент военно-политической стратегии Германии в годы Первой мировой войны», *Сборник статей участников Международной конференции "Тюрко-мусульманский мир:*

идентичность, наследие и перспективы изучения" (Казань, 27-28 мая 2014г.), 2015, сс. 310-321.

146. "A "Jihad" Appeal to Moslems: Translation of a Recent Call Distributed to the Millions of Islams," *The Missionary Review of the World,* Vol. 38, New York-London, July, 1915, p. 520.
147. Aksakal M., "'Holy War Made in Germany'? Ottoman Origins of the 1914 Jihad," *War in History 18 (2),* 2011, pp.184-199.
148. Beşikçi M., "Domestic Aspects of Ottoman Jihad. The Role of Religious Motifs and Religious Agents in the Mobilization of the Ottoman Army," *Jihad and Islam in World War I. Studies on the Ottoman Jihad on the Centenary of Snouck Hurgronje's "Holy War Made in Germany,"* edited by Erik-Jan Zürcher, Leiden University Press, 2016, pp. 95-115.
149. Daly R. J., "New Developments in the Theology of Sacrifice," *Liturgical Ministry 18* (Spring 2009), Ohio, Institute for Liturgical Ministry at Maria Stein Center, pp. 49-58.
150. Fortier P. A., "Gobineau and German Racism," *Comparative Literature*, 1967, Vol. 19, No.4, pp. 341-350.
151. Gerlach Chr, "Extremely violent societies: an alternative to the concept of genocide," *Journal of Genocide Research 8(4),* December, 2006, pp. 455-471.
152. Glick L., "Religion and Genocide," *Confronting Genocide: Judaism, Christianity, Islam,* edited by Steven Leonard Jacobs, Lexington Books, 2009, pp. 95-118.
153. Guroian V., "Armenian Genocide and Christian Existence," *CrossCurrents,* Vol. 41, No. 3, 1991, pp. 322-342.
154. Jacobs S. L., "Genocidal Religion", *Journal of Hate Studies,* Vol. 9:22, Gonzaga University Institute for Hate Studies, 2011, pp. 221-235.
155. Kiernan B., "Twentieth-Century Genocides: Underlying Ideological Themes from Armenia to East Timor," *The Specter of Genocide: Mass Murder in Historical Perspective,* ed. by Robert Gellately & Ben Kiernan, Cambridge University Press, 2003, pp. 29-51.
156. Küng H., "Religion, violence and "holy wars," *International Review of the Red Cross,* Volume 87, No. 858, June 2005, pp. 253-268.
157. Kuper L., "Theological Warrants for Genocide: Judaism, Islam and Christianity," *Terrorism and Political Violence 1990, 2:3,* pp. 351-379.

158. Labaree R. M. Rev., "The "Jihad" Rampant in Persia," *The Missionary Review of the World*, Vol. 38, New York-London, July, 1915, pp. 521-522.
159. Manenti L. G., "Massoneria italiana, ebraismo e movimento dei Giovani Turchi," *La Rassegna Mensile di Israel*, vol. LXXVIII, N. 3, Unione delle Comunità Ebraiche Italiane, Settembre-Dicembre 2012, pp. 161-175.
160. Mardin Ş., "Ideology and Religion in the Turkish Revolution," *International Journal of Middle East Studies*, 2 1971, pp. 197-211.
161. Piven J. S., "Lord of the Flies as Parable of the Invention of Enemies, Violence and Sacrifice," *Jihad and sacred vengance: Psychological Undercurrents of History*, edited by Piven J. S., Boyd Chr., Lawton H. W., Bloomusalem Press, 2002, pp. 132-158.
162. Reid J. J, "Philosophy of State –Subject Relations, Ottoman Concepts of Tyranny, and the Demonization of Subjects: Conservative Ottomanism as a Source of Genocidal Behaviour, 1821-1918," *Studies in Comparative Genocide*, edited by Levon Chorbajian and George Shirinian, New York, 1999, pp. 60-91.
163. Roth J. K., "Easy to remember?: genocide and the philosophy of religion," *International Journal for Philosophy of Religion*, Vol. 68, No. 1/3, December 2010, pp. 31-42.
164. Rubenstein R. L., "Jihad and Genocide: The Case of the Armenians," *Confronting Genocide: Judaism, Christianity, Islam*, edited by Steven Leonard Jacobs, Lexington Books, 2009, pp. 119-137.
165. Siranian R., "Dov'era Dio? Una lettura spirituale del genocidio armeno," Il Regno, n. 4, 2007, pp. 121-137.
166. Streusand D. E., **"**What Does Jihad Mean?," *Middle East Quarterly*, September 1997, pp. 9-17.
167. Suny R. G., "Religion, Ethnicity, and Nationalism: Armenians, Turks, and the End of the Ottoman Empire," *In God's Name. Genocide and Religion in the Twentieth Century*, edited by Omer Bartov and Phyllis Mack, Barghahn Books, 2001, pp. 23-61.
168. *The Religious Responses to Mass Atrocity: Interdisciplinary Perspectives*, Edited by Thomas Brudholm and Thomas Cushman, Cambridge University Press, 2009, xiii+281 pp.
169. Ussher C. D., "The Armenian Atrocities and the Jihad," *The Moslem World*, Vol. 6, Issue 2, April, 1916, pp. 140-143.

170. Zekiyan B. L., “Metz yeghern, il genocidio armeno, Paradigma di sradicamento e di esilio irreversibile,” *Nel Suo Nome. Conflitti, riconoscimento, convivenza delle religioni*, EDB, Bologna 2005, pp. 213-224.
171. Zekiyan B. L., “Reflections on Genocide: The Armenian Case: A Radical Negativity and Polyvalent Dynamics,” *Annali di Ca’ Foscari, XXXVII, 3,* 1998 (Serie orientale 29), pp. 223-241.
172. Zekiyan B. L., “Riflessioni sulla trasposizione semantica del concetto di “giusto” nel contesto del “Metz Yeghern” armeno,” *Sì può sempre dire un sì o un no: I Giusti contro i Genocidi degli Armeni e degli Ebrei,* Convegno Internazionale, Padova, 30 novembre-2 dicembre 2000, pp. 216-243.

IX. Համացանցային կայքեր

ա. Հայերեն

173. Առաքելյան Հ., «Նուիրական պատերազմը կամ ղազավատը», *«Մշակ»* հասարակական-քաղաքական, գրական թերթ, No. 254, Թիֆլիս, 9 նոյեմբերի, 1914, , էջ 1,http://tert.nla.am/archive/HGG%20TERT/mshak%20tiflis/1914/1914(254).pdf (դիտված 25.XI. 2017 թ.):
174. Կ. Պոլսում» (խմբագրական), *«Մշակ»* հասարակական-քաղաքական, գրական թերթ, No. 260, Թիֆլիս, 16 նոյեմբերի, 1914 թ., էջ 1, էլեկտրոնային պատճենը տե՛ս http://tert.nla.am/archive/HGG%20TERT/mshak%20tiflis/1914/1914(260).pdf (դիտված 25.XI.2017 թ.):
175. «Հայ կամավորի նամակից», *«Մշակ»* հասարակական-քաղաքական, գրական թերթ, No. 55, Թիֆլիս, 14 մարտի, 1915 թ., էջ 1, էլեկտրոնային պատճենը տե՛ս http://tert.nla.am/archive/HGG%20TERT/mshak%20tiflis/1915/1915(55).pdf (դիտված 25.XI.2017 թ.):

բ. Օտար լեզուներով

176. Асташов А., „Пропаганда на Русском фронте в годы Первой мировой войны, №224” http://propagandahistory.ru/books/Aleksandr-Astashov_Propaganda-na-Russkom-fronte-v-gody-Pervoy-mirovoy-voyny/228 (դիտված 28.XI.2017 թ.):
177. Асташов А., „Пропаганда на Русском фронте в годы Первой мировой войны, №225. Русские солдаты!” http://propagandahistory.ru/books/Aleksandr-Astashov_Propaganda-na-Russkom-fronte-v-gody-Pervoy-mirovoy-voyny/229 (դիտված 28.XI.2017 թ.):
178. Асташов А., „Пропаганда на Русском фронте в годы Первой мировой войны №226” http://propagandahistory.ru/books/Aleksandr-Astashov_Propaganda-na-Russkom-fronte-v-gody-Pervoy-mirovoy-voyny/230 (դիտված 28.XI.2017 թ.):
179. Гилязов И. А., «Священная война–джихад» как инструмент военно-политической стратегии Германии в годы Первой мировой войны», *Сборник статей участников Международной конференции "Тюрко-мусульманский мир: идентичность, наследие и перспективы изучения"* (Казань, 27-28 мая 2014 г.), 2015, с. 317, http://dspace.kpfu.ru/xmlui/bitstream/handle/net/113189/_Holy_War__and_jihad_as_part2014_310_321.pdf?sequence=-1&isAllowed=y (դիտված 08.XII.2017 թ.):
180. Кураев А., „Как делают антисемитом” http://predanie.ru/kuraev-andrey-protodiakon/book/218537-kak-delayut-antisemitom/ (դիտված 26.I.2017 թ.):
181. Огановскій Н., „Изъ дневника турецкаго врача” https://vivaldi.nlr.ru/pn000156800/view#page=3 (դիտված 25.XI.2017 թ.):
182. “ALİ HAYDAR EFENDİ, Küçük”, İslâm Ansiklopedisi http://www.islamansiklopedisi.info/dia/ayrmetin.php?idno=020396&idno2=c020391 (դիտված 16.XI.2017 թ.):
183. “Bektashiyyah”, *Encyclopædia Britannica* http://www.britannica.com/topic/Bektashi (դիտված 05.I.2018 թ.):
184. “Berkovits Eliezer” http://www.jewishvirtuallibrary.org/jsource/judaica/ejud_0002_0003_0_02688.html (դիտված 05.I.2017 թ.):
185. Burkholder R., “Jihad -- 'Holy War', or Internal Spiritual Struggle?” http://www.gallup.com/poll/7333/jihad-holy-war-internal-spiritual-struggle.aspx (դիտված 19.XI.2017 թ.):

186. de Bellaigue Chr., "Turkey's Hidden Past", *The New York Review of Books* http://www.nybooks.com/articles/2001/03/08/turkeys-hidden-past/#fnr1 (դիտված 05.I.2018 թ.):
187. Guroian V., "How shall we remember?" http://web.archive.org/web/20050220164111/http:/sain.org/WINDOW/Genoci3.txt (դիտված 26.XI.2017 թ.):
188. "Namık Kemal", *Encyclopædia Britannica* http://www.britannica.com/biography/Namik-Kemal (դիտված 05.I.2018 թ.):
189. "Osmanlı'yı savaşa sokan fetva", *Yeni Şafak*, Istanbul, 22 Kasım 2014 http://www.yenisafak.com/gundem/osmanliyi-savasa-sokan-fetva-2027939 (դիտված 21.XI.2017 թ.):
190. "Proclamation de la Guerre Sainte (Djihad) à Constantinople le 14 (23) novembre 1914", IMPRESCRIPTIBLE, Base documentaire sur le génocide arménien http://www.imprescriptible.fr/documents/djihad.htm (դիտված 16.XI.2017 թ.):
191. Rogan E., "A War to End Jihad," *The New York Times,* May 1, 2015 https://www.nytimes.com/2015/05/02/opinion/a-war-to-end-jihad.html (դիտված 20.I.2018 թ.):